

ԷԶՄԻԱԾԻՆ




ԺԱ-ԺԲ
2002



ԾՆ ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾՆԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ



ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿԵՄԲԵՐ
2002

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԸՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

սոցալառ կոնդակը Գրիգոր Նարեկացու «Մարեան ողբերգութեան» Աղոթամաքայանի գրության 1000-ամյակի առիթով	3
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության երրորդ փաթեղարձը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	6

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԳԱՐԵԳԻՆ Բ ԸՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՆՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԻՆ

Տ. ԸՍՈՂԻԿ ԶԱՆԱՆԱ ԿԱՐԱԴԵՏԱՆ - «խոսքանամ և ուխտեմ»	7
ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական այցելությունը Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմ	10

ՆԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԸՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Սալի Թյուֆենքյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	45
ԳԱՐԵԳԻՆ Բ ԸՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Մերգեյ Կազարյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	47
Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Օրինության գիրը Մարտիրոս Մանիկյանին	49
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի ցավակցական գիրը Հրանտ Մաթևոսյանի մահվան կապակցությամբ	51
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի ցավակցական գիրը Տիգրան Նաղդալյանի մահվան առիթով	52
Մայր Աթոռ Ս. Էջմիածնում փեղի ունեցավ Քերական Հոգևոր Խորհրդի հերթական նիստը	53
Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում կապարվեց գոհարանական աղոթք	54

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՍԱԳՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՐԻԿԱՐՁՈՒԹՅՈՒՆԻՑ

Իսրայելի պետությունը համաձայնում է հրաժարի Պարոն Տեր կապուածը բռնագրաւելու մարտըութենէն	55
--	----

ՔԱՐՈՋԻՈՍԱԿԱՆ

S. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի քարոզը՝ խոսում Ե. Էջմիածնի Մայր Տաճարում	56
S. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի քարոզը՝ խոսված Ե. Էջմիածնի Մայր Տաճարում սարկավագական ձեռնադրության առիթով, Ս. Ստեփաննոս Նախավկայի փոնին	61
S. Արշեն արեղա Սանոսյանի քարոզը՝ խոսված Ե. Էջմիածնի Մայր Տաճարում	63
S. Իգնատիոս արեղա Մալխասյանի քարոզը՝ խոսված Ե. Էջմիածնի Մայր Տաճարում Սուրբ Աստվածածնի՝ Տաճարին ընծայման փոնին	66
S. Գնել արեղա Սողոմոնյանի քարոզը՝ խոսված Ե. Էջմիածնի Մայր Տաճարում	69
S. Դավիթ արեղա Ջարամյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ե. Էջմիածնի Մայր Տաճարում	72
S. Սողոմոն քահանա Ավետիսյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ե. Նոյիսիմն Տաճարում	74

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹ-ԱՐՅԱՆ - Գրիգոր Մազիսպրոս Պախլավունտ «Ողբ ի վերայ Արամեանս նահանգի» երկը	76
ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ - Մի էջ Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրադյանի հրապարակախոսական ժառանգությունից	80
ՄԵԼՍ ՄԱՆԹՈՅԱՆ - Ակսել Բակունցի գեղարվեստական քրոնիկոնը	84

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՏԱՆ ՄԱՂԱՅԱՆ - Կոթողային մի անտիպ աշխատանքի հրապարակությունը	89
ԿԱՐԵՆ ՄԱԹՎԱՍՅԱՆ - Վարդան Արևելցին Անիի պարմության մասին	92

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՅԻ

ՆԱՅԿ ԴԵՐՅԱՆ - Հոգևոր-մշակութային հարաբերությունների դերը ազգային անվտանգության ապահովման գործում	96
---	----

ՄԳՐԱԾՈՒՆԵՐ* ԾՆՎԱԾ ԽԱՅՐԱՎԵՐԱԿԻԱՆ ՈՒՆԼՈՐՈՒՅԱՆ ԸՆԹԱԳՔՈՒՄ

ՄԵՐԳԵՅ ՀԱՄԱՐԱՐՁՈՒԾՅԱՆ - 20 օր Ամենայն հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ի հետ	102
---	-----

ՄԱՅՐ ԱՅԹՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Ս. Թադևոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների փոխ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և Օշականում	109
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բանախոսությունը «Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին 21-րդ դարում» թեմայով	111
Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Մարմարաշենի նորակառույց Ս. Գևորգ եկեղեցին	112
ՄԵՐԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Բաժանայական ձեռնադրություն Մայր Աթոռում	113
Տ. Դավիթ արեղա-Քարամյան	115
Տ. Սողոմոն քահանա Ավերիկյան	116
Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ձեռնադրվեցին 12 նոր սարկավազներ	117
ՄԱՐԻՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ Համակարգչային դասասրահի բացում Շիրակի թեմում	121
Դպրոցի փնօրենների հավաք Շիրակի թեմի առաջնորդարանում	122
ՆԵՒՆԵ ՄԿՐՏՅԱՆ - «Վազգենյանցիներիս համար դպրանոցը մեր փունն է»	123
Վազգենյանցիների «Արևազալը Գեղարդում» լազերային սկավառակն արժանացել է «Անուշ» մրցանակի	127
ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ - Հայկական եկեղեցի Էստոնիայում	128

ՄԻՋԵԿԵՂԵՅԱԿԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱՆԵՋՄԱՆՅԱՆ

«Եկեղեցին և երիտասարդությունը Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրներում» խորհրդածրվելը Շաղկաձորում	130
Անգլիկան և Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև երկխոսության շրջանակում հանդիպում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	132
ՆԵՒՆԵ ՄԿՐՏՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ՍՐԿ. ԲԱՐՈՒԾՅԱՆ - Իրենց փալավորությունն են ներկայացնում Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների և Անգլիկան Եկեղեցու միջև երկխոսության մասնակիցները	133

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ - Ութերորդ բյուզանդագիտական սիմպոզիումը Սփրասբուրգում	137
Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Գ. Գրիգորեանի ծննդեան 70-ամեակի և Աստրիդ մեջ հովուական գործունեության 40-ամեակի յոթելեանները	141

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետ ը ընդունեց Ռուսաստանի Դաշնության կառավարության նախագահ Միխայիլ Կապալանովին	145
Վեհափառ Հայրապետ ը ընդունեց բարոնուհի Զերույան Զոքսի գլխավորած պատվիրակությանը	146
Վեհափառ Հայրապետ ը ընդունեց Մեծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության գլխավոր քարտուղարին	146
Հայաստանում պաշտոնավարությունն ավարտող Մեծ Բրիտանիայի դեսպանը հրաժեշտ տվեց Գարեգին Բ Կաթողիկոսին	147
Վեհափառ Հայրապետ ը ընդունեց ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահ Յուրի Յարովին	147
Հայաստանում պաշտոնավարությունն ավարտող Իտալիայի դեսպանը հրաժեշտ տվեց Գարեգին Բ Կաթողիկոսին	148

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄՆԴՐԱՆԻԿ ԶԵՅԹՈՒՆՅԱՆ - «Էջմիածին» ամսագրի մարենագիություն (1984-2000 թթ.)	149
Եկեղեցական բեմ, լուրեր	165
Ցանկ «Էջմիածին» ամսագրում 2002 թվականի ընթացքում տպագրված նյութերի	168

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата	188
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin	192
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine	196

ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ
«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԱՂՈԹԱՄԱՏՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅԱՆ 1000-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒԿԻ ԶՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՒՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ**

ԶՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԶՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՈՅ
ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԿԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՎԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԲԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ
ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ ՍԻՐԵՅԵԱՆ ՀԱՄԱՅՆ ՀԱԽԱՏԱՅԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՅ

*«Եւ սկզբնաւոր ռդբերգութեան այսր աղերսանաց՝
գիաւարոցն շինուած կառուցից» (Բան Ժ, Բ):*

Աստուծոյ ամենառար ռդորմութեամբ ազգային մեր կեանքը գալիք տարրում հոգեշաղախ է հաւատարաշէն մեծ ու պանծալի երկու յորելեաններով: Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամեայ եւ «Մապեան ռդբերգութեան» աղօթագրքի 1000-ամեայ խորհուրդներով կոչուած ենք շնորհանորդութեան քրիստոնէական մեր սուրբ հաւաքի մէջ եւ ղեպի Տէրը մեր ճանապարհին:

Նախախնամաբար, Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի՝ իբրեւ հայոց Մայր Աթոռ օծումից ուղիղ եօթ հարիւր տարի անց, Նարեկայ վանքի Սուրբ Գրիգոր Վանականի աղօթասաց գրիչը աւարտեց «յոգնաթախանձ բանից» անմահ «Մապեանը»:

Մեկ հազարամեակ «Ի խորոց սրբից խօսք ընդ Աստուծոյ» ծովացած հայցով Նարեկայ Սուրբը անվախճան զոյց է սկսել Աստուծոյ հետ: Մեկ հազարամեակ մարդկային հոգին բուրվառ դարձրած՝ աղօթում է զոջասրությունամբ, աստուածային սիրոյ ու ողորմութեան անհատկութեամբ, անհատկութեամբ, անհատկութեամբ: «Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղեղնաւանց՝ զհաւատոցն շինուած կառուցից» (Բան Ժ. Բ):

«Մարեանի» պողերից հաւատն է յառնում իբրեւ բարձրագոյն արժեք, առաքինութեան ակունք ու բարեմասնութեանց չափորոշիչ: Հաւատի Տաճարն է վերակառուցում Նարեկայ Մեծ Վառդապետը. Աստուածապետ Տաճարը հոգու, որի խորանից անմար ճառագում է փրկութեան յոյսի կանթերը՝ լուսատրելով մեղքը մերժելու ու դէպի Տէրը ընթանալու ճանապարհը. «Ի՜նչ կայ, աղղարեւ, անելի չքնաղ, խօսքից, մութից վեր... քան երկբայութեան թանձր խաւարից Աստուծոյ օգնութեամբ մաքրուած սիրտն այն մեղաւորի, որ խորասուզուել է կործանման վիճի անդունդն անյարակ, բայց ունի նաեւ փրկութեան նշխար... Կարող է յուսալ հասնելու նորէն նախապարգեւնալ փառազարդութեան» (Բան ԺԱ. ա):

Ապաւինած Աստուծոյ մեծագոյն ու անգերազանցելի մարդասիրութեանը, փառաւորելով մարդկութեան փրկութեան համար Աստուածորդու զոհաբերութեան ճշմարտութիւնը, հստակապէս՝ «դասակից ու պատուակից» սիրոյ եւ յոյսի, մեղքից ազատում, նորոգում ու վերանայնացնում է մարդկային հոգիները: Հաւատով սրբեալ ու զօրացեալ հոգին զիլւե բարձրանալ, երթ գայթեւ է ու ընկել, ի գորտ է շրջել ժամանակների սխալ ընթացքները, դէպի բարին վերափոխել կեանքը, ստեղծագործել յանուն խաղաղութեան ու արդարութեան, շինութեան ու վերածննդի, յանուն երջանկութեան ու կեանքի:

Այսօր, սիրելի ժողովուրդ հայոց, երբ Մայր Տաճարի 1700-ամեայ եւ «Ողբերգութեան Մարեանի» 1000-ամեայ աստուածապետ խորհուրդներով միաւորուել են բեղունութեամբ պսակազարդ 303 եւ 1003 թուականները հայ կեանքի եւ քրիստոնէական մեր ողջ անցեալն ու ներկան, հաւատի նոր ուխտով ի մի գանք Աստուծոյ առաջ իբրեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Հոգի ու մարմին ամոքող բուժարար աղօթքով Սուրբ Նարեկացու հետ նայենք հոգուց ներս ու տեսնենք այնպիսի անհասանելի Աստուծոյ անընդմիջելի մերձատրութիւնը: Հաւատով հաստատենք մեր ընթացքը դէպի ակունքը կեանքի, ակունքը ամենայն բարեաց ու շնորհաց, Աստուծոն ընտրենք մեր բոլոր գործերին զօրակից եւ Սուրբ Նարեկացու հետ բարձունքներն ի վեր աղօթք խնկարկելով՝ հաւատով հայցենք, որ Փրկիչ Տէրը Ամենախնամ ու Փրկագործ Իր Սուրբ Նշանը դրոշմի մեր բոլոր ճանապարհներին:

Թող մեր աղօթքը «փառաբանութեան վերընծայութեամբ» միախառնուի նարեկեան խօսքով մեկ հազարամեակի հայ հոգուց հնչած բիր աղօթքներին՝ վերաբերելու ու առմիշտ ճշմարտելով, որ աղեղնական ողբամարտնանի աղօթական ոգով հաւատի շենքը պիտի կառուցենք: Եւ թող մեր հաւատից ծնուած գործերը ուղղորդեն վերածննդի նոր ճանապարհը հայութեան կեանքի, մեր Հայրենիքի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Գոհութեան եւ փառաբանութեան աղօթքով առ Աստուած, որ օրինել է Հայկազեան ազգս հոգեւոր անմահ ու անհամար գանձերով, գալիս ենք հրաւիր կարդալու ի Հայաստան եւ ի Սփիւռս մեր ժողովրդին՝ հաւատարմոր հոգով եւ արժանիի մատուցմամբ 2003 թ. տօն-

լու Սուրբ Գրիգոր Նարեկացի Վարդապետի «Ողբերգության Մատենանի» 1000-ամեայ դարակազմիկ տարեդարձը:

Շնորհք, սէր և խաղաղություն Աստուծոյ եղիցին ընդ մեզ և ընդ ամենեւեւեան ամեն:

Օրինութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 30-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆՇԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 121

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱՎՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆՈՒՄ

Երեք տարի առաջ, նոյեմբերի 4-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Նորին Սուրբ Օծություն Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոսի օծման և զահակալության հանդիսավոր արարողությունը:

Հայոց Հայրապետի զահակալության տառնադարձը Մայրավանքում նշվեց կիրակի օրը, նոյեմբերի 3-ին, հընթացս Ս. Պապարագի՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Նվիրապետական Աթոռների ներկայացուցիչ բարձրաստիճան եկեղեցականների, Հայաստանի և Սփյուռքի թեմակալ առաջնորդների, Մայր Աթոռի միաբանների, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների և բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ: Պապարագիչն էր Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը: Տարեդարձի առիթով թեմակալ առաջնորդների և եպիսկոպոսաց դասի մասնակցությամբ Իջման Ս. Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք, ապա Խաժակ Սրբազանն անդրադարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի զահակալության երեք տարիների գործունեությանը՝ մասնավորապես կարևորելով եկեղեցաշինության և հոգևորականության նոր սերնդի պատրաստման ոլորտներում արձանագրված իրագործումները:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի զահակալության երրորդ տարեդարձի առիթով Նորին Սրբությանը շնորհավորական և բարեմաղթանքի իրենց զգացումներն են փոխանցել քույր Եկեղեցիների առաջնորդներ, Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների զահակալներ, Մայր Աթոռի միաբաններ, պաշտոնեությունը, ինչպես նաև գիտության և մշակույթի գործիչներ:

Նախորդ օրը, հընթացս Հայրապետական մաղթանքի, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակներ Ս. Պապի շնորհավորական գիրն Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնեց Անդրկովկասյան երկրներում պապական Նվիրակ եպիսկոպոս Կլաուդիո Գուջերոտի:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԳԱՐԵԳՐԻՆ Բ ԿՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՉԻՆ

«ԽՈՍՏԱՆԱՄ ԵՎ ՈՒՆՏԵՄ»

*«Ջանգի հասնլ է քո լույսը,
և Տիրոջ փառքը քեզ վրա է ծագելու»:
(Եսայի Կ 1)*

Ամենակալ Աստծո անհուն ողորմությամբ երեք տարի առաջ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ընդհանրական Հայրապետության գահին բազմեց մի Հովվապետ, Ով ժամանակի այս հապովածում կոչված է այնպիսի առաքելության, որով պայմանավորված է Հայոց Եկեղեցու գալիքը:

Այս Նոր՝ երրորդ հազարամյակը մարդկության, մասնավորաբար ազգերի ու ժողովուրդների համար մի ազատ ասպարեզ է, ուր մուտք գործող ամեն ոք Նախնառաջ ինքն իր համար պետք է պարզի, թե արդյոք հավատարի՞մ է մնում իր կերպին, թե՛ ոչ, որով էլ երրորդ հազարամյակում պիտի ճամփորդի կամ իբրև անդեմ ու անդիմազիծ մի ճամփորդ, կամ էլ՝ իր ուրույն, դարավոր ու հարազատ կերպի մեջ:

Անշուշտ, երբ ընտրությունը հանգում է առաջին տարբերակին, ապա այդպիսի ճանապարհորդի ուղին հարթ է ու ընդարձակ, առատ ուրախությամբ, հաճույքներով ու վայելքներով, որը, սակայն, «դեպի կորուստ է տանում» (Մատթ. Է 13): Իսկ երկրորդի պարագային՝ ճանապարհը նեղ է ու փշուր, լեցուն արգելքներով, փորձություններով, տառապանքներով ու կորուստներով, և որը, այդուհանդերձ, «տանում է դեպի կյանք» (Մատթ. Է 14):

Ահավասիկ երկու ճանապարհ. մեկը՝ մահվան և խավարի, մյուսը՝ կյանքի ու լույսի: Ծանապարհներ, որոնց ընտրության առջև կանգնում են ինչպես անհատներ, այնպես և հավաքական անհատականություններ՝ ազգեր: Արդ, եթե անհատի պարագային ընտրությունը կախված է տվյալ անձից, ապա ազգերի դեպքում նրանց առաջնորդներից, թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ:

Գոհաբանություն և փառաբանություն Ամենախնամ Տիրոջը, որ հայոց ազգը, Եկեղեցին Հայաստանյայց, հանձին իր հոգևոր առաջնորդ, Եպիսկոպոսապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տակավին Նոր հազարամյակի սեմին, Նախապատվությունը տվեց կյանքի ու լույսի ճանապարհին, որը նեղ է ու փշուր, լեցուն արգելքներով, փորձություններով, տառապանքներով ու կորուստներով...: Նախապատվությունը տրվեց այս ճանապարհին, քանի որ Ամենայն Հայոց Հայրապետը ոգու մարդ է, քաջարի, իմաստուն ու խորագետ: Ջանգի Նորին Սրբությունը խորապես ու աներկբա հավատում է, որ Բանն Աստծո խոսքը (Մատթ. Է 14) անսուր է, և երբ Իր հովվապետական առաջնորդությանն ու խնամքին հանձնված հայոց փոքր ածուխ ուղղավորի այդ ճանապարհով, ապա Եկեղեցին Հայաստանյայց իսկապես կարժանանա այն պարգևներին ու պսակներին, որոն-

ցով պարզևադրումն ու պսակումը դարեր ամառ՝ Տեր Ասրված Գեորգիներով հայրենց աստվածահաճո մեր սուրբ եպիսկոպոսաց:

Յնծա՛ր և ուրախ լեր. Եկեղեցի հայոց, որովհետև Տերը քեզ հեղ է, և Ասրված Ինքն է Իր ընդդյալ ու Օծյալ հովհաննիսյանի միջոցով քեզ առաջնորդում դեպի Ավետյաց երկիր, դեպի դալար վայրեր և հանդարտ ջրեր: Խնդա՛ր և ուրախ լեր, դուստր Վերին Սիոնի, «բանգի հասել է քո լույսը, և Տիրոջ փառքը քեզ վրա է ծագելու» (Եսայի Կ 1):

Տիրոջ անսահման ողորմությամբ Լուսավորչի գահին է բազմել մի հայրապետ, Ով գիշերուզոր խորհում ու գործում է ի պայծառությամբ և անսասանությամբ Առաքելական մեր Մայր Եկեղեցու, իսկ մենք, որ կոչված ենք լինելու մեր հոգևոր հոր գինակիցները, մի խավարապատ անկյուն ու խավարակալ հոգի ենք փնտրում և բամբասանքով մեր հոգին սպառնում: Եկեղեցու Քահանայապետը եկեղեցաշինություն է ծավալում, իսկ մենք մեր գայլակոչ վարքով և անարդարությամբ խարխում ու կործանում ենք «գիտարոցն շինուման»:

Ազգիս Վեհափառ հայրն Իր հորդորներով ու կանչով մեր Մայր Եկեղեցու հոգևոր Կառնոյ լուսն կամարների ներքո ժողովում է ուսումնասիրել և հավատալով պատանի հայտնիք, իսկ մենք մեր անխոհեմ խռովքով եկեղեցիներից ի բաց ենք հալածում հոգով սովալույսներին: Մեկը կառուցում է, մյուսը՝ քանդում, մեկը լույս ու հույս, սեր ու խնամք է սփռում, մյուսը՝ խավար ու հուսահատություն, արելություն ու անարդարություն...

Իսկ հանուրց հայության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ամենայն հայոց Վեհափառ հայրը հորդորական ծայնում է ի լուր ամենքի, մանավանդ ի լուր հոգևոր սպասավորների՝ «Եկայք շինեսցուք...» և եկեք կառուցենք մեր ժողովրդի հոգեշենքը, որպեսզի երրորդ հազարամյակում ազգս հայոց, Եկեղեցին հայաստանայաց իր ուրույն, դարավոր ու հարազատ կերպին հավաքարիմ այլևս հաղթական շարունակի իր երթը դեպի Երկնքի Արքայություն:

Արդ, որպես արձագանք մեր հայրապետի «Եկայք շինեսցուք»-ի, եկեք փշռենք մեր սրբի սառնագույն անզգամությունը, եպարությունը, վանենք մեզանից անհնազանդությունն ու անարդարությունը և խոնարհությամբ ու սիրով լծվենք հավաքակերպման մերօրյա կենաց ու մահու, մեր վաղվա օրը, գալիքը հարթող սուրբ առաքելությանը, քանի որ ժամանակի այս հաղվածում Աստուծո կամոք հայրապետ է օծվել այն Անձը, Ով ի գորու է Իր ծաղկյալ գավազանով ի մեջ եկեղեցվույս հրաշագործելու: Սակայն ազգային-եկեղեցական մեր կյանքի շրջադարձային ու վճռորոշ ժամանակահատվածում Ամենայն հայոց խոհեմազարդ ու իմաստուն Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ հայրապետը կարիք ունի նվիրյալ ու անձնագոհ գինակիցների, որպեսզի, ինչպես Ահարոնն ու Ուրը Մովսեսի (Ելք ԺԷ 12), այնպես էլ երանք ներկա շինարար ու մեծագործ 132-րդ Կաթողիկոսի ձեռքերը բռնեն ու բարձր պահեն:

Միայն այսպես մենք հավաքարիմ կմնանք մեր հարազատ կերպին, միայն այսպես մենք կարող ենք հաղթահարել ամեն արգելք ու փորձություն, զերծ մնալ կորստից ու տապալանից, միայն այսպես կարող ենք երրորդ հազարամյակի ազատ ասպարեզում մեր լույս հավաքը, մեր սրբազան ավանդություններն ու ավանդույթները, մեր ազգային արժեքներն ու աստվածընծա հայրենին պահպանել:

Վեհափառ հայրապետն Իր իմաստությամբ ու խորագիտությամբ, հավաքարիմ ազգի դարավոր փորձառությանը, դանդաղ է շփապում, որպեսզի այն, ինչ Նա արարում ու կեր-

տում է, լինի մնայուն: Հաճախ թվում է, թե որն է բան ուշացնում է, սակայն հետո կենսագործում է հենց ժամանակին:

Արդ, սթափվե՞նք, եղբայրներ, և շտապենք մեր բոլորանվեր ծառայությամբ մասնակից լինելու Նորին Սրբության հավատագործությանը, որպեսզի չլինի այնպես, որ Տերը գուցե երբեք մեզ էլ չխնայի:

Թող Երկնավոր Տերը հավիտյանս ծաղկուն պահի մեր Հովվապետի գավազանը և ի բարին կապարի Նրա աստվածահաճո բոլոր մտահղացումներն ու ձեռաց գործերը:

Թող հավիտյան շնորհագարող լինի Նորին Սրբության օծյալ Սուրբ Աջը, որպեսզի ազգովին միշտ վայելենք Հայրապետական հոգենորոգ օրհնությունը:

Թող Ամենակեցույց Տեր Աստված մեր հոգևոր Հորը շնորհի կենաց արեշատ օրեր, երկար տարիներ, որպեսզի վճռական այս ժամանակահատվածում Նորին Սրբությունը կարող լինի իր հաղթական ավարտին հասցնելու աստվածահաճո այն առաքելությունը, որն սկզբնավորվեց երեք տարի առաջ, երբ ոգու մարդ, քաջարի, իմաստուն ու խորագետ Անձը՝ Սրբություն Սրբոց Մայր Տաճարի Ավագ Խորանում Սուրբ Սեդակի առջև ուխտեց. «...Խոստանամ եւ ուխտեմ... առաջնորդել ազգիս Հայոց ըստ ուղղափառ վարդապետութեան Զրիստոսական կրօնից, ըստ մերոյս Եկեղեցւոյ դաւանութեան եւ ըստ Հայրապետական կարգաց ու կանոնաց աստուածայաշտութեան, անստերիւր եւ անխտոր ընթանալով յամենայնի ընդ յուսաշաւիղ հեւտ գնացից արժանաժառանգ յաջորդաց սրբոց առաքելոցն Թադեոսի եւ Բարթողիմէոսի եւ սրբոյ իօրն մերոյ Գրիգորի երկրորդ Լուսաւորչի զգուշատր պահպանութեամբ իրաւանց Մայր Աթոռոյս Հայաստանեայցս»:

Տ. ԱՄՈՂԻԿ ԶԱՎԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄՆԵԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱՏԱՐԱԽԱՅԻ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Սույն թվականի նոյեմբերի 10-ին, վաղ առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը հայրապետական այցելությամբ մեկնեց Ամստրադայի և Նոր Զելանդիայի հայոց թեմ ուղեկցությամբ Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի, գավազանակիր Տ. Գեղարդ աբղ. Վահունու, ինչպես նաև ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի և «Շողակաթ» հեռուստատուղիայի օպերատոր Սուրեն Տեր-Գրիգորյանի:

Նորին Սրբության այցելությունը սկսվեց Բանգկոկից: Տեղի օդանավակայանում Վնահափառ հայրապետի գլխավորած պատվիրակությանը դիմավորեցին Հնդկաստանի և Մայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ Ալան արքեպս. Պալիոզյանը, սինգապուրաբնակ ճանաչված բարերար Բոբ-Նորայր Գևորգյանը:

Օդանավակայանի շքասրահում բարոնոջույնի խոսքեր փոխանակելուց հետո, Նորին Սրբությունն առաջնորդվեց մի փոքր հանգիստ առնելու «Շերաթոն Գրանդ» հյուրանոցում, ուր, արդեն երեկոյան, հանդիպեց հայ համայնքի ներկայացուցիչների հետ՝ ի պատիվ Նորին Սրբությանը կազմակերպված ճաշկերույթի ժամանակ:

12 նոյեմբերի

Այցելության հաջորդ օրը, նոյեմբերի 12-ին, Նորին Սրբությունը քաղաքավարական այց կատարեց Թաիլանդի բուդդիստների հոգևոր առաջնորդին: Ծավալված անկեղծ գրույցի ընթացքում մեծապես կարևորվեցին կրոնների և կրոնական առաջնորդների միջև երկխոսությունների անհրաժեշտությունը՝ ի շահ աշխարհի ժողովուրդների խաղաղ համակեցության: Զրույցի ընթացքում Վեհափառ հայրապետը ներկայացրեց հայ ժողովրդի կյանքում հայոց եկեղեցու դերն ու նշանակությունը:

Հրաժեշտ փալով բուդդիստների հոգևոր առաջնորդին, Նորին Սրբությունը վերադաժավ էյուրանոց, ուր ի պատիվ Վեհափառ հայրապետի տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որին մասնակցեցին տարբեր պետությունների դիվանագիտական անձնակազմերի ներկայացուցիչներ: Վեհափառ հայրապետը ողջունելով նրանց՝ հաջողություններ մաղթեց իրենց առաքելության մեջ, ապա հանգամանորեն պատասխանեց ներկաների բոլոր հարցերին՝ պատմելով Մայր Աթոռի ծավալած գործունեության մասին:

Նորին Սրբությունը Բոբ-Նորայր Գևորգյանին, ի գնահատություն ծավալած ազգային գործունեության և կատարած բարերարությունների, նվիրեց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու պատկերով արծաթյա մի ափսն՝ հավաքվածներին եկեղեցու մանրակերպի վրա ցույց տալով բարերարի նվիրատվությամբ կառուցված Ս. Աշխեն մատուռը: Ամենայն հա-

յոց Կաթողիկոսն այնուհետև հանդիպեց Թախլանդի վարչապետին, ապա և կրոնի գործոց նախարարին:

Այս հանդիպումից հետո Նորին Սրբությունն առաջնորդվեց քաղաքի անգլիկան եկեղեցի, ուր իր պաշտամունքն ու արարողությունն է կատարում նաև տեղի հայ համայնքը: Նորին Սրբությունը «Տրաշափառ»-ի և «Էջ Միածինն ի Տօրէ» շարականների երգեցողության ներքո մուտք գործեց եկեղեցի: Աղան Սրբազանը բարիգալստյան իր խոսքում ասաց. «Այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոսն ինքն է որ ժողովուրդին կերթա՝ Ս. Էջմիածնին լույսը և հավատքը տանելուն համար. որովհետև Հայոց Կաթողիկոսը իր մեջ կմարմնավորե՛ն Հայ Եկեղեցին, Հայ Ժողովուրդը և չափազանցուցած պիտի չլլա՛ն եթե ըսեմ՝ հայրենի պետությունը: Այստեղ հավաքված հայորդիները անհամբեր կսպասեն այն պահուն, երբ Ամենայն Հայոց Հայրապետը իրենց այցելության պիտի գա, պիտի գա, պիտի օրհնե ու գորացնե գիրենք...»:

Ապա Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց ներկա հավաքագյալ հայորդիներին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀՎՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ
ԲԱՆԳԵՈՎԻ ԵՎԵՂԵՑՈՒՄ
 (12 նոյեմբերի 2002 թ.)

*Էջ Միածինն ի Տօրէ և լոյս փառաց ընդ նմա.
 Եկայք շինեսցուք սուրբ զիտրսն լուսոյ:*

Միեկի բարեպաշտ ու քրիստոսասեր հայորդիք.

Փառք և զոհություն ենք վերառաքում առ Աստված, որ առաջնորդեց Մեր քայլերը դեպի ձեզ՝ Հայրապետական Մեր սերը, պատգամը և օրհնությունը բերելու մեր ժողովրդի հավատարմոր ու եկեղեցասեր զավակներիդ. որ ապրում եք Հայրենիքից հեռու այս երկրում: Զիչ առաք, երբ հնչում էր «Էջ Միածինն ի Տօրէ» շարականը, և որից վերցրած տողերն են Մեր քարոզի բնաբանը, մերումս զծագրվեց պարկերը մեր հավատքի կենտրոնի՝ աստվածակառույց Ս. Էջմիածնի: Բնաբան ընդրելով շարականի տողերը, ցանկացանք ձեզ հետ միասին վերապրել Էջմիածնի խորհուրդը՝ Աստծո ներկայության և հավատքի զորության խորհուրդը աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում:

«Էջ Միածինն ի Տօրէ և լոյս փառաց ընդ նմա»:

Միածնի Իջման Սուրբ Սեդակից 17 դար ճառագող աստվածային լույսն ու օրհնությունն ենք բերել ձեզ, օրհնություն հայրենի հողից ու բոլոր սրբավայրերից: Բերել ենք ձեզ կարոտն ու սերը հայրենաբնակ մեր ժողովրդի՝ ձեր քույրերի և եղբայրների:

Մենք ուրախ և մխիթարված ենք այս պահին, որ դուք՝ հավատարմոր զավակունք մեր ժողովրդի, քերս ու անկեղծ զգացումով համախմբվել եք ձեր Հայրապետի շուրջ: Այդ նշանակում է որ խորհուրդը Ս. Էջմիածնի ապրում է ձեր հոգիներում, կանթեղը Ս. Էջմիածնի լուսավորում է ձեր ճանապարհը դեպի հայրենյաց

մեր սրբությունները, դեպի հայրենի տունը նվիրական. մեր հոգու ծննդավայրը՝ Եկեղեցին Հայկական՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պարկերով կնքված ամեն հայի հոգում:

Հայի համար Ս. Էջմիածինը Տաճար չէ միայն, այլ հայոց հավատի ու հայ ինքնության անկյունքական ոգեղեն մի ներկայություն. որին հաղորդ ենք դառնում միմյանց հանդիպելով: Ահա այսօր էլ դուք Էջմիածինն եք քննում Հայոց Հայրապետի մեք. Հայոց Հայրապետը՝ ձեզնով Էջմիածինը. որովհետև ուր մի հայորդի, այնպե՜ս Ս. Էջմիածին: Այս պատճառով է որ մեր պատմագիր Առաքել Դավթիսեցին ասում է «Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան»:

Ս. Էջմիածնով միավորված ու մեկ է ազգս հայոց. Ս. Էջմիածնի սիրով ու օրհնությամբ գործցյալ, և միաժամանակ՝ իր հավատով ու Մայր Աթոռի անդիպակիրումով Ս. Էջմիածինը շարունակ գործացնող: Երջանկախիշարալ, Առաքել Առաքին Հայրապետը խոսելով Ս. Էջմիածնի մասին, պարկերապոր ասում էր. որ դարերի մեք միշտ բաշխվել է միշտ լույս է տվել. ուսկայն երբեք չի սպառվել. բաշխվելով չի նվազել, այլ պայծառացել ու գործացել է որովհետև իր լուսնդին խորհրդով բազմապարկվել է հոգիներում հայորդյաց:


Այսօր էլ Մենք Բանգկոկ քաղաքում միավորված ու մեկ ամբողջություն ենք դարձած Էջմիածնի այդ անկյունքական խորհրդի ներքո, որ մեր հոգևոր լինելության խորհուրդն է մեր մշակույթի բաբախող սիրտը:

Լինել Էջմիածնի հեղ, ապրել Էջմիածնով՝ նշանակում է ապրել հայոց սրբություններով, մեր պատմությամբ, մեր Հայրենիքով: Այրեն Էջմիածնով՝ նշանակում է հավատարիմ լինել մեր դարավոր իղձերին ու երազներին. որոնք ողնկից են մեզ թե՛ Հայրենիքում և թե՛ ի սփյուռս աշխարհի: Այսօր բոլորիս երազն է տեսնել Հայրենիքը շեն ու բարգավաճ, իսկ հայությունը՝ համախումբ նրա շուրջ, համախումբ ազգային մշակույթով ու արժեքներով, ազգային նպատակներով, այնպես համախումբ, որ ամեն հայի մեք կարողանանք տեսնել պարկերը Սուրբ Էջմիածնի և պարկերը Մասայաց:

Ուրեմն, Մեր պարզամբ է հորդորն է ձեզ, սիրելի հայորդիներ, որ փարված մնաց նվիրական ու սուրբ այդ երկու խորհուրդներին՝ հայ հոգին ու հավատը մարմնավորող Ս. Էջմիածինն և Հայրենիքն ու հայոց պետականությունը խորհրդողանշող աստվածաշնչյան Մասայաց, որպեսզի հայության ընթացքը հավերժական լինի դեպի նոր հազարամյակներ, և Հայոց Հայրապետը միշտ կարողանա տեսնել իր զավակներին իր շուրջը համախումբ՝ միասնաբար աղոթք և փառաբանություն վերառաքելով առ Աստված:

Գոհություն ենք հայտնում, որ Տերը իր ողորմությունը միշտ փարածյալ է պահում մեր ժողովրդի զավակների վրա և տանում է մեզ մեր հայրենի ճանապարհով: Մեր հայցն ու աղոթքն է, որ Տերը միշտ ձեզ հեղ լինի, աննկուն պահի ձեզ կյանքի բոլոր փորձությունների առջև ու դժվարություններին հանդիման, պահի միշտ հույսով ու ամուր հավատով, քանզի մենք հարության ժողովուրդ ենք, հավատում ենք կյանքի հաղթանակին, հավատում ենք Տիրոջով մեր հաղթանակին:

ՏԳՂ ՎՏԱԳԱՆՈՇԱՆԻ ՎԵՂՆԵՐԻՆԹ ԶՈՒՍԱՎԵՂՈՒՄ ՎՏԱԳԱՆՈՇՆԵՐՆԵՐ ՍՈՓՈՂՅԱԻ ՅՂԿԵԱՍՈՒԹ



ՏԳՂ ԿԱՌԱՌԱՐՈՐ ԿԱՐՍԵՆ ԳՐԱԵՆԻ ԿԵՆՏՐԱԼ ՄԻՍՏԱԿԱՆՈՐ



Այսօր Մեր գնահատանքի խոսքն ենք քննում Մեր սիրելի Նորայր-Բոք Գևորգյանին՝ պարվական հայորդուն, որ գիրքի առ հայրենին իր սիրով համախմբել մեր ժողովրդի զավակաց և այսօր էլ Բանգկոկում մեր այս անմոռանալի հանդիպման նախանձախնդիր կազմակերպիչն է:

Մեր գնահատանքը նաև սիրելի Սրբազանին, որ հանապազ մարտուցում է ձեզ ձեր հոգու համար անհրաժեշտ կերակուրը՝ հայրց Ս. Պատարագի խորհուրդը: Ասործով զորացյալ միշտ միասին լինենք՝ միմյանցով ուժեղ, միմյանց կոթևած, միմյանց ապավինած՝ հասարարուն քայլերը կյանքի մեր ճանապարհով, հայության ճանապարհով:

Թող Ասրված պահի ու պահպանի ձեզ իր օրհնության ներքո և թող միշտ առաջնորդող լինի մեզ և մեր ժողովրդի զավակաց ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Շնորհ, սէր և խաղաղութիւն Տիառն մերոյ եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեւեւեւնս:

Երեկոյան Նորին Սրբությունը մասնակցեց հայ համայնքի կողմից Կինգ գետի վրա կազմակերպված նավագնացությանը:

13 նոյեմբերի

Այն հյուրանոցում, ուր իջևանել էր Վեհափառ Հայրապետը, ի պարիվ Նորին Սրբության կազմակերպվեց պաշտոնական հյուրասիրություն, որին ներկա էին Բանգկոկի կոռնական քաղաքի հարանվանությունների ներկայացուցիչները: Ծաղկերույթի ընթացքում խոսվեց Բանգկոկի կոռնական խճանկարի, քաղաքի Եկեղեցիների և հարանվանությունների ունեցած դերի մասին, իսկ Նորին Սրբությունը հանգամանորեն ներկայացրեց Հայ Եկեղեցու պարմությունն ու ներկան: Վեհափառ Հայրապետը եկեղեցական-համայնքային կյանքում ժողովրդին առավել սերտորեն ներգրավելու գործում առանձնակիորեն կարևորեց հատկապես եկեղեցուն կից կրթադաստիարակչական ու հոգևոր-մշակութային հասարակությունների և ժողովրդին աշխատանքով ապահովող արտադրական օժանդակ կառույցների դերը:

14 նոյեմբերի

Առավոտյան ժամը 6.00-ին Հայրապետական շքախմբին Սիդնեյ բերող ինքնաթիռը վայրէջք կատարեց քաղաքի միջազգային օդանավակայանում, ուր Հայոց Հայրապետին դիմավորելու էին եկել թեմի քահանայից դասը, թեմական խորհրդի արեւնապետ Արմեն Բաղդասարյանը, թեմական խորհրդի, փիկնանց միության, ինչպես նաև կալվածոց խորհրդի անդամներ, լրագրողներ և հայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ: Հավաքվածները մեծ ոգևորությամբ դիմավորեցին Հայոց Հայրապետին:

Աջեամբույրից հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց հյուրերի դիմավորման սրահ, ուր հավաքված հայորդիներին ներկայացրեց իր ջլախմբի անդամներին՝ պարմնելով նաև Թախանդ կապարած այցելության մասին:

Նորին Սրբությունն օրհնեց հավաքված հայորդիներին՝ ասելով. «Գոհություն և փառք եմ վերառաջում առ Աստված, որ հնարավորություն ընձեռեց այցելելու Ավստրալիայի հայկական գաղթօջախ, որ հազարավոր մղոնների հայրենիքից հեռու է: Եկել ենք, որպեսզի Մեր սերը փոխանցենք և օրհնությունը՝ ձեզ ամենքիդ, նաև ձեր սերունդն ու կարդուրն ընդունենք Մեր հոգուց ներս, որպեսզի Մենք էլ գործածանք ձեզ՝ նով և ավելի հալածի տեսնելով Մեր առաքելության ուշխարհապետ ճանապարհը՝ առաջիկա նախաձեռնախնդրորեն կապարենք Մեր՝ Հայոց Եկեղեցու առաջին սպասավորի պարտականությունը մեր ժողովրդի առջև՝ ձեր առջև:

Մեծ ուրախություն է և մեծ մխիթարություն Մեր հոգուն, հպարտության զգուցումի հետ խառն բերկրանք, որ այսպիսի առավուր կանուխ, երբ մարդիկ քաղցր երազներ են տեսնում, թողած ձեր բունը, եկել են օղանավակայան ձեր Հայրապետիկն ողջունելու, նրան բարի գալուստ մաղթելու ձեր հավատարմությունն առաջադրելու Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ, որտեղից գալիս ենք Մենք և բերում ենք ձեզ ձեր եղբայրների և քույրերի բարեմաղթանքը»:

Այս Հայոց Հայրապետը հարցազրույց րվեց մամուլի ներկայացուցիչներին՝ մանրամասն պատասխանելով լրագրողներին հետաքրքրող բոլոր հարցերին, այնուհետև հյուրանոցում համանման ասուլիս կազմակերպվեց արդեն րեղի հայկական ռադիո և հեռուստաժամերի համար:

Առավուրյան Նորին Սրբությունն առաջնորդվեց Մուրթ Հարություն առաջնորդանիստ եկեղեցի, ուր ծախողջույններով դիմավորվելով հավաքված հավաքագյալ հայորդիներին կողմից՝ «Հրաշափառ»-ի արարողությամբ մուրթ գործեց եկեղեցի: Այսպեղ «Օրհնյալ որ գաս յանուն Տեառն, օրհենալ որ գալոցն ես» բնաբանով բարիգալստյան ողջույնի խոսք ասաց Տ. Աղան արքեպս. Պալիոգյանը:

Մեր Տեղը՝ Գրուս Զրիստու, Ծաղկազարդի ժամանակ երբ Երուսաղեմ մտավ, ժողովրդի բացականչությունը երկնային օրհնություն էր, որ կաղաղակեր ու կրքեր՝ օրհնյալ ես որ գալիս ես Տիրոջ անունով, և այդ ձևով ժողովուրդը դիմավորեց մեր Տեղը:

Այսօր կարծեք պարկերը նույնն է կրկնվի մեր կյանքին մեք, երբ Հայ Եկեղեցւո հոգնոր պետը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հրաշափառ օրհնությամբ մուրթ կգործե այս տաճարեն ներս ու մեր ժողովուրդի օրհնությանն ու փառաբանությանը կարժանանա, ու վստահ եմ, որ բոլորդ միահամուտ նույն խոսքը կրկնեցիք, այն, ինչ որ բսին Գրուսի Երուսաղեմ մուրթին. «Օրհենալ, որ գաս յանուն Տեառն»:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածենն՝ մեր Սրբություն Սրբոց կենտրոնեն կուգա իր հայրական ու հայրապետական օրհնությունը բաշխելու իր գալակներին: Հեռավոր ճանապարհը վստահ եմ, որ հոգնեցուցի էր իրեն համար, սակայն մեր ժողովուրդին գալակներուն համար, իր ժողովուրդին, իր Եկե-

ղեկվող զավակներուն հանդիպելու համար՝ իր հոգևորությունը ուրախության և թեթևության վերածվեցավ: Վեհափառ Հայրապետը կուգա ձեզի բոլորիդ բերելու յույս հավատքը Ս. Էջմիածնի, ուր ամեն օր հայու հավատքի կանթնդը կընգվի այն ձեռքով, որ մեզմե ամեն մեկու հավատքով կկաթի անոր մեջ:

Այա Արքազան Հայրը Նորին Արքունիքը հրավիրեց իր հայրապետական պարգամն ու օրհնության խոսքն ասելու սիդնեյաբնակ հայորդիներին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՍԻՂՆԵՅԻ Ս. ՀԱՐՈՒԹ-ՅՈՒՆ ՀԱՅԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(14 նոյեմբերի 2002 թ.)

«Յանուն Տօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Արքոյ. ամեն»:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, սիրելի հարազատ զավակներ Առաքելական մեր Մայր Եկեղեցու:

Հայրապետիս հոգին փառաբանություն և գոհություն է խնկարկում դեպի երկինք այս պահին, որ Տերը մեզ շնորհաբեր այս այցը կատարելու առիթն ընծայեց, և հովվապետական զավագանը մեր ձեռքին՝ եկանք հեռավոր Ավստրալիա, աշխարհի հինգերորդ ցամաքամասը, ուր մեր ժողովրդի տարածքի զավակներ իրենց երկրորդ հայրենիքն են գտել և իրենց աստվածաժառանգ կյանքն են ապրում այս օրհնյալ երկրում:

Մեր հայցն ու աղոթքը դեպի երկինք ուղղվում է առաջին հերթին Ավստրալիո օրհնյալ երկրի համար, որ ապաստան է տվել, որ սիրով իր գիրկն է ընդունել մեր ժողովրդի զավակներին և հնարավորություն ընձեռել, որ նրանք ազգային իրենց կյանքն ապրեն, իրենց եկեղեցին կառուցեն, իրենց հայրերի սուրբ հավատքը կենդանի պահեն և երկնքից իրենց աղոթքներով օրհնություն իջեցնեն այս երկրի վրա: Մեր աղոթքն ու հայցը նաև Ավստրալիայում ապրող բոլոր ժողովուրդների համար է որպեսզի Տիրոջ օրհնության ներքո նրանք խաղաղ ապրեն եղբայրական սիրտ մեք՝ արևշող այս ցամաքամասում:

Սիրելի բարեպաշտ հայորդիք հուզիչ է պահը մեզ համար, երբ քայլում էինք փողոցով դեպի այս եկեղեցին ու անցնում էինք ձեր կազմած շարքի միջով, տեսանք արցունքներ ձեր աչքերում, արցունքներ, որ ուրախության արտահայտություն էին, որ ձեր սիրտ ու հավատարմության վկայությունն էին հանդեպ մեր Մայր Եկեղեցին ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, հանդեպ մեր նվիրական ու փառապանծ Մայր Հայրենիքը, որ ապրում է այսօր հարության շնչով, որ ապրում է իր զավակների արյամբ ու արիությամբ նվաճած անկախությամբ և հաստատուն քայլերով ընթանում է դեպի նոր հազարամյակը իր կյանքի, դեպի գալիքը մեր ժողովրդի:

Ես փառք և գոհություն ընծայելու բազում առիթներ ունեմ այսօր՝ կանգնած ձեր առջև: Փառք և գոհություն երկնավոր մեր Տիրոջը, որ մեր ժողովրդին պահեց ու պահպանեց ամենակույ դարեր ի փոթորկահույզ ժամանակների մեջ բազում փորձություններից, ահավոր ցեղասպանության մեծ ոճիրից: Փառք և գոհություն, որ այսօր մեր ժողովրդի զավակունք ապրում են հայու հավատքով, հայու ան-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՍՏՈԼԻԿԱԿԱՆ ԵԿԵՆԵՍԻԱՆ ԵՊԱՐԽՈՍԿՈՍՈՍ
ԵՄԻՆՈՍԿՈՍՈՍ

ՔԱՆՈՒՄ ԵՄԵՐՈՍԿՈՍՈՍ ԵՄԻՆՈՍԿՈՍՈՍ ԵՄԻՆՈՍԿՈՍՈՍ ԵՄԻՆՈՍԿՈՍՈՍ
ԵՄԻՆՈՍԿՈՍՈՍ ԵՄԻՆՈՍԿՈՍՈՍ ԵՄԻՆՈՍԿՈՍՈՍ ԵՄԻՆՈՍԿՈՍՈՍ



ՏԳՀ ԿԱԳՐԱԾԱՆԻՆ ԶԱՐԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԳՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴՆԱԾՈՒՄԻ ՇԵՂԵՎԱԾՈՒՄԻ ՄԱՓՈԽՉԻ

Միրելիներ, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմ Մեր անդրանիկ այս այցը առիթ է ընձեռնում Մեզ գնահատանքի Մեր խոսքը անձամբ բերելու ձեզ՝ ձեր նվիրումի ու նախանձախնդրության համար, որով այս հողի վրա պահպանում եք հայության ոգին, անաղարտ եք պահում հայրենական սրբությունները, մաշրոտյան լեզուն՝ ձեր զավակների շուրթերին:

Մեր գնահատանքն ենք բերում ձեզ նաև մեր հայրենական կյանքում ունեցած ձեր ազնիվ մասնակցության համար: Հայաստանում երկրաշարժի աղետն ու ցավը դուք դարձրեցիք ձերը և օգնության ձեռք մեկնեցիք ձեր եղբայրներին ու քույրերին: Մեր գնահատանքը ձեզ՝ Արցախյան պատերազմին ձեր գորակցության համար և անկախության փառք փառիկների հայրենաշինության գործում ունեցած ավանդի համար:

Եւրոպայի մեր հոգիներին փոխանցելով հայրենաբնակ մեր քույրերի ու եղբայրների սերն ու ողջույնը՝ Մենք աղոթք ենք բարձրացնում առ Աստված և հայցում Տիրոջ գորակցությունը Հեղկաստանի և Ծայրագույն Արևելքի Հայրապետական Պատվիրակի՝ Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանի համար, որպեսզի նախանձախնդրությամբ ու սիրով շարունակի իր հոգևոր առաջնորդությունը մեր բարեպաշտ, հարազատ ու հավատարիմ զավակների կյանքում:

Մեր գնահատանքն ենք բերում մեր Եկեղեցու հեռավորաբնակյալ այս կենսունակ թեմի ազգային-եկեղեցական կառույցների պատվարժան անդամներին, հոգևոր բարեջան սպասավորներին և առ Տեղի աղոթք բարձրացնում նրանց համար:


Միրելիներ, հայցենք Տիրոջից, որ գորացնի մեր մեք հավատքը մեր հայրերի, որ ամրացնի մեր ընթացքը հայության ճանապարհների վրա, գորացնի մեզ մեր բարի գործերի մեջ, և մենք փառք հավելենք հայոց փառքին, օրհնություն՝ մեր ժամանակներին: Հայցենք նաև խաղաղություն աշխարհի համար, Աստծո խնամքը այս բարեկամասեր երկրին և նրա բարի ժողովրդին: Տեղի թող անշարժ ու հաստատուն պահի Իր սուրբ Եկեղեցին, և թող Տիրոջ Աստվածային Սուրբ Հոգու շնորհները հեղվեն մեզ վրա, զարդարեն մեր կյանքը ու խնկելի դարձնեն մեր ընթացքը զայիք սերունդների համար, որ նրանք էլ, գորացած մեր գործերով, կարողանան փստախությամբ քայլել դեպի նոր ժամանակները:

Շնորհք, սէր և խաղաղություն եղիցի ընդ ձեզ. ամէն:

Այնուհետև Կրեդի ունեցավ աջամբույրի արարողություն, որի ընթացքում Նորին Սրբությունն օրհնեց ներկա հայորդիներին, նաև նվերներ բաժանեց փոքրիկներին:

15 նոյեմբերի

Վեհափառ Հայրապետը Առաջնորդարանում մի շարք հանդիպումներ ունեցավ հայ կաթողիկե համայնքի, հայկական ավանդական կուսակցությունների Ավստրալիայի մասնաճյուղի ներկայացուցիչների, ինչպես նաև հայկական տարբեր կազմակերպությունների պատասխանատուների հետ:



16 նոյնքերի

Նորին Սրբությունն այցելեց համայնքի հայկական դպրոցներ՝ այցելությունների այս շարքը սկսելով Համազգայինի Թարգմանչաց վարժարանով: Այսպեղ Նորին Սրբությանը աշակերտները դիմավորեցին հայոց եռագույնը ձեռքներին՝ ազգային հիմնով ու հայրապետական մաղթանքով, և իրենց մանկան հայրենակարո՞ւր շուրթերով համբարեցին Հայոց Հայրապետի մյուտանած աջը՝ նրա հայրական օրհնությունը ստանալով:

Վեհափառ Հայրը դիպեց նաև աշակերտների պարտաստած գրական-գեղարվեստական հանդեսները՝ օրհնելով նրանց: Վեհափառ Հայրապետը մասնավորաբար բարձր գնահատեց ուսուցիչների օրհնաբեր աշխատանքը՝ ասելով. «*Ամեն ինչ որ անում եմք մեր կյանքում, պիտի ինքնիրա մեզ հաշիվ տանք, թե ինչ անդրադարձ է ունենում մեր երեխաների վրա՝ նրանց բարությանն է մղում, նրանց քայլերը ուղղում է և հետևանքում խոսքոր ճանապարհներից, թե՛ հակառակը: Եվ ես այսօր շատ ուրախ եմ՝ համոզվելով, որ այս հեռավոր երկրում մեր զավակների ազգային-հոգևոր դաստիարակությունը հոգալուար և խնամածու ձեռքերում է գտնվում*»:

Համազգայինի վարժարանից Նորին Սրբության շքախումբն ուղևորվեց ՀԲԸՄ Մանուկյան շաբաթօրյա վարժարան և ապա՝ Թումանյան դպրոց՝ ամեն տեղ մեծ ոգևորությամբ, ավանդական հայկական աղուհացով, ազգային երգ ու պարով դիմավորվելով: Նորին Սրբությունն ամեն տեղ իր օրհնությունը բաշխելով հայ դպրոցների ուսուցիչներին ու դպրոցականներին՝ դպրոցներից յուրաքանչյուրում թողեց Ս. Էջմիածինը պատկերող մի հուշանվեր:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը վերադառնալով առաջնորդարան՝ նախագահեց թեմական խորհրդի կողմից հրավիրված նիստին, որին ներկա էին թեմական խորհրդի անդամները, թեմի քահանայից դասը, ինչպես նաև եկեղեցու կալվածոց խորհրդի անդամները: Նիստի ընթացքում Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը ներկայացրեց Մայր Աթոռի գործունեությունը հայրենական կյանքից ներս՝ թե՛ Հայրենիքում և թե՛ Սփյուռքում: Ապա ներկաներն իրենց հարցերն ուղղեցին Նորին Սրբությանը՝ ստանալով տրված հարցերի հանգամանալի պատասխանը:


17 նոյնքերի

Առավոտյան Նորին Սրբությունը Հայրապետական Ս. Պատարագ մատուցեց կաթոլիկ Our Lady of Dolours փաճարում: Այսպեղ, բացի հավաքված ավելի քան 1500 հայորդիներից, ներկա էին նաև քույր եկեղեցիների եերկայացուցիչներ, պիտական պաշտոնյաներ և խորհրդարանի անդամներ:

Արարողության սկզբում Վեհափառ Հայրապետին ողջունեցին նախ Միդսեյի քաղաքապետը, ապա Ավստրալիայի կաթոլիկ առաջնորդը:

«Հայր մեր»-ից առաջ Նորին Սրբությունը հայրապետական իր պատգամը տվեց ներկաներին:

ՀԱՅԿԱՐԱՏԱԳԻՏՈՇՈՒ ՎԱԳԱՆՈՒՄԻԺՄԻՐՈՒ ԴՈՒՄԻՏԻՆԵՐՆԻ ՎՐԱՄԱՐԺԵՐԴԻ ԷՊԻՍԿՈՍՆԵՐՆԻ ԴՐՈՒՄԻՏԻՆԵՐՆԻ ՄԻՓՈԽԴԻ



«ԼՍՈՒՆՓԱՓԱՆ»-ՈՎ ՄԱՐԻՏԻ ՄԻԿԱԵԼԻԱՆԻ ԿԱՅԿԱՄԱՆ ԵՆԵՆԵԻ



**ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՏԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ
ՄԻԴՆԵՅԻ ԿԱԹՈՒԻԿ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ
(17 նոյեմբերի 2002 թ.)**

**«Նորոգող հնութեանց նորոգեա և զիս,
Նորոգ զարդարեա»:
Վնությանց նորոգող, նորոգիր և ինձ՝
Նորաշինար, նորովի զարդարիր:**

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, սիրելի հավատավոր հայրդիներ
Աստվածային անճառելի գործոյաւք յեզուն այս սուրբ տաճարում, խորա-
խորհուրդ ու նվիրական այս պահիւ, երբ հոս ու հովիվ, Հայրապետ ու ժողո-
վուրդ կանգնած ենք Տիրոջ առջև, զոհաբանական աղոթք է մեր շուրթերին. որ
Աստված մեր սուրբ հայրերի շնորհը պարզենց մեզ, որպէս Հայրապետ Հայոց
անդրանիկ հովվապետական մեր այցը կատարելու Ավստրալիա, օրհնյալ այս
երկիր, հավատավոր ու բարեպաշտ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու զաւակ-
ներիդ՝ օրհնություն բերելու ու բաշխելու Միաճնաէջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից և
Հայոց աշխարհի սրբություններից:

Եկել ենք Հայրենի երկրից, եկել ենք մեր հավատքի նվիրական սուրբ կենտրոն
Ամենայն Հայոց Կաթողիկոսոյան Աստվայր՝ աստվածակառույց Սուրբ Էջ-
միածնից, որը մեր ժողովրդի կյանքի մեջ եղել է հայոց Բեթղեհեմը, պայծառա-
կերպութեան այն Թաւրոս լեռը, ուր 1700 տարիներ շարունակ մեր հայրերը զոհա-
բանական աղոթք են ձայնել առ Աստված և ասել, «Տէր, բարոք է մեզ աստ լինել»
(Մարկ. Թ 4) ու անդադրում, անհոգնաբնկ հայցել Տիրոջից՝ «Նորոգող հնութեանց
նորոգեա և զիս, նորոգ զարդարեա», որպէսզի Տիրոջ բարի հայացքի առջև,
Տիրոջ հովանավոր աչի ներքո ապրի ազգս հայոց որպէս ազգ սուրբ և ժողո-
վուրդ սեփական:

Այս նույն հայցն ու աղոթքը վերսնորոգելով, սիրելի բարեպաշտ հայրդիներ,
զոհունակ հոգով ողջունում ենք ձեզ՝ հավատավոր Մեր զաւակներիդ, ի գլուխ բա-
րեքան ձեր առաջնորդի՝ Գերաշնորհ Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանի, և
նրան աջակից հոգևոր հայրերին և բերում ենք Մեր գնահատանքը, որ հավատա-
րիւմ ու համախումբ եք Առաքելական մեր Մայր Եկեղեցու շուրջ և նախանձախըն-
դիր՝ ազգային ձեր կյանքը հոգևոր արժեքներով ներշնչախելու նվիրական գոր-
ծում:

Ուրախ սրտով ողջունում ենք այստեղ ներկայությունն Ավստրալիո բարե-
պաշտ պետութեան ներկայացուցիչների, պետական և տեղական իշխանութեանց
անդամների, ինչպէս նաև քույր Եկեղեցիների Մեր հոգևոր եղբայրներին, ովքեր
եկել են ուրախակից լինելու մեզ՝ քրիստոնէությունը 1700 տարիներ առաջ առաջի-
նը պետական կրոն հռչակած հայրդիներին, իրենց աղոթքը միախառնելու առ
Աստված մեր հայցին՝ աշխարհի խաղաղութեան և ժողովուրդների անասան եղ-

բայրության համար, որպեսզի հենոս վանվեն պարերսզւմ, հղեմն ու աղեպ, վիշտ ու ցավ, որպեսզի երբեք չթագանան աչքերը մայրերի ու երբեք չորբանան մանուկներ, այլ Տիրոջ սիրո մեջ ծաղկի կյանքը երկրի դրսւ և երկրից մշտապիս փառաբանություն հնչի առ Բարձրյալ Տերն Ամենակալ:

Միրելի հավատացյալներ, չպիտի դադարեմ կրկնել, որ նպար է և ցնծում է հոգիս Հայրապետի, քանզի դո՞ւ՝ զավակներդ իմ, հարսզւար և արժանի հետնորդներն եք մեր հայրերի, ովքեր տասնյակ տարիներ սուսք իջեանհոջն օրհնելով, հյորընկալ այս ափերում և բազում տրեանքով ու քրտնաջան աշխատանքով կազմակերպեցին իրենց կյանքը, կանգնեցրին եկեղեցիներ, հիմնեցին դպրոցներ, կրթական ու ազգային հաստատություններ և սիրո ու հոգածության մեջ Ամստրալիո աստվածասեր ժողովրդի հետ կյանքի կոչեցին գրության և հիշատակության արժանի բազում իրադրություններ՝ վաստակելով Ամստրալիայի արժանապարտաբացիներ լինելու պատիվն ու իրավունքը:

Հայրապետիս հորդորն ու կոչն է մեզ՝ շարունակեցե՛ք մեր հայրերի բարի ընթացքը՝ ազգապահպան, հայրենամոլեր ու եկեղեցաշեն նախանձախնդիր ոգին, հայրենակերպումի վնն ու բարձր գիտակցությունը, որպեսզի հավերժ օրհնվի մեր հայրերի պանծալի համբավը և սուրբ լինի ու լույս լինի նրանց պայծառ հիշատակը:

Միրելի զավակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Երկհազարամյա քրիստոնեական մեր պատմությունը կերպած հարության հավատքով գիտենք, որ կյանքը նորոգողը Տերն է Տերը, որ և պարզեողն է կյանքի, և ամեն անգամ, երբ տկարացել է մեր հավատքն առ Տերը, չարն է թագաւորն/ մեր կյանքին, ծառը պտուղ ու բարիք չի տվել, գետը արյուն է հոսել, հողը, երկիրը մահ ու ավեր է սփռել:

Փառք Երկնավորին, բոլոր հազար փառք ողորմության դռները վերստին բացվել են հայոց երկրի վրա, նոր և փառավոր էք է բացվել հայոց տարեգրության մեջ, թոթափել ենք անհավատության ծանր լուծը, ազատ ու անկախ է Հայաստանը, ազատագրված է նաև հերոսական Արցախը, աշխույժ ու կենսահորդ կյանքով է ապրում Հայոց Միյությունը: Աշխարհասփյուռ ժողովրդով, նորոգ հավատով այսօր մենք կերպում ենք հայոց հզոր, անպարտելի անկախ պետականության՝ մեր տան վաղվա գալիքը:

Արդարև, «Փառք քեզ, Աստուած, փառք քեզ, յադագս ամենայնի փառք քեզ»: Անտարակույս հայրենակերպումի ընթացքը սահուն չէ, սակայն բազում դժվարությունների, անցումային շրջանին բնորոշ ընկերային, տնտեսական ու բազմապիսի այլ հիմնախնդիրների առջև մենք չպիտի ընկճվենք ու ծնկենք: Անընկճելի է մեր ժողովրդի լավատեսությունը, ապրելու և հաղթանակելու նրա կամքը, քանզի գիտենք, որ քաջների հետևորդները քաջերն են:

Մայր Հայրենիքի վերանկախացումով այսօր վերագարթների ու վերանորոգության հրաշագործ շունչը տարածվել է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Հանուր հայության հոգևոր կենտրոնն իր դարավոր առաքելությունը կյանքի է կոչում նոր գործությամբ, վերածնյալ ու հարուցյալ հավատով ու կյանքով:

Մեր ժողովրդի բարեգործ զավակների առաքաններն նվիրատվություններով այսօր վերաշինվում են խոնարհված վանքերը հայրենի մեր երկրի, կառուցվում նորերը և տասնամյակներով փակված վանքերի ու տաճարների, եկեղեցիների ու մատուռների, աղոթարանների դռները լայնորեն բացվում են մեր ժողովրդի զավակների առջև՝ առ Մարված աղոթք ու փառաբանություն բարձրացնելու:

Այո, սիրելիներ, մեր ժողովրդի և Մայր Եկեղեցու Հայաստանի անկախացումով սկզբնավորված հոգեկոտորության շարունակական ընթացքը անկասելի է: Այսօր, երբ մեր հայացքն ուղղված է դեպ ազատ ու անկախ մեր երկիրը Հայաստան, դեպ հայ քաջորդյաց աշխույժ ազատագրված Արցախ աշխարհ, մեկ անգամ ևս մեր հոգու և մարդի ունկնդրությանը հնչեցնենք հայոց մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի խոսքերը.

«Ո՛վ հայ ժողովուրդ, քո փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Հավաքական ուժ, որով միայն կարող ենք խուսափել դժվարություններից, կորուստներից, կոտորածներից ու եղեռներից: Բավական է միայն հեղադարձ մի հայացք ներքին դեպի մեր պարմությանն ու անցյալին, և մեզ համար կհաստատվի ճշմարտությունը՝ մեկ Ազգի, մեկ Հայրենիքի ու մեկ Եկեղեցու անպարտելիության, անհաղթելիության ճշմարտությունը, իսկ հավաքական այդ ուժը գոյանում է ոչ այլ կերպ, քան ողջ ազգի՝ հավատալով մեր ժողովրդի զավակների ամբողջության նկատմամբ յուրաքանչյուրիս ունեցած սիրաշաղախ պատասխանատվությունից ու պարտավորություններից:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ.

Այսօր, առավել քան որևէ ժամանակ, ի Հայաստան և ի Սփյուռս ապրող հայորդու համար սրբազան պարտք է՝ հոգածու լինել վասն շինության ու բարգավաճության հայրենյաց, վասն անարարության ու անասանության հայոց այն բերդի, որ մեր անկախ ու ազատ Հայաստանի Հանրապետությունն է:

Մեր ձեռքում է մեր պետականության վաղվա օրը, մեր ձեռքում է ճակատագիրը մեր ժողովրդի: Որքան որ գուրգուրանք ու սեր տածենք Հայրենյաց նկատմամբ, այնքան Հայրենիքի սերը կտարածվի հայրորդյաց վրա ու կլինի նրանց վահան ամրության և հաղթության: Որքան զորացնենք մեր Հայրենիքն, այնքան պիտի զորանանք որպես ազգ ու ժողովուրդ, որպես երկիր ու որպես պետություն:

Հայոց Մայր Հայրենիքի նոր կյանքի տեսիլքը պիտի պայծառ պահենք, մեր սիրելիներ, ու կարողանանք կյանքի կոչել, որպեսզի հրաշագործենք նոր հազարամյակում՝ կերտելով հայոց հզոր պետականությունը, որ ազգս հայոց այլևս չրենսնի եղեռն, չդառնա աստանդական, չլինի որք ու պանդուխտ, ապաստան չփնտրի հեռավոր օդեր ափերում:

Հայրապետիս աղոթքն ու մաղթանքն է՝ որ ձեզանից յուրաքանչյուրը լայն բացի իր հոգու, սրտի ու մարմնի դռները, որպեսզի Մայր Հայրենիքի նոր կյանքի գարնանային շունչը մուրճ գործի ամենևուր հայոց կյանքից ներս, և մենք նորոգյալ ու գոհունակ հոգով, զվարթ, լուսավոր, հուսառատ ու խնդագին մարդով ու սրտով հրեշտակաց՝ ու նրկնառատ սրբոց դասին ձայնակցելով, որպես մեկ ազգ, ժողովուրդ սուրբ և ազգ սեփական՝ փառավորենք բարձրյալ մեր Տիրոջը և անդադ-

րում հայցենք «Նորոգող փինզերաց. նորոգեաւ եւ զիւ. նորոգ զարդարեա»։ Բան-
զի նորոգված, նոր հազարամյակի մեջ այս համարքն է. որ պիտի հրաշխավորի
մեր ընթացքը դեպի մեր կյանքի նոր դարեր ու հազարամյակներ։

Նորոգված հավատով հայորդին է. որ պիտի գա իր բազկի ուժով շենագնելու
երկիր հայրենին և ինքն իրեն առաջնորդելու դեպի ազատ ու անկախ Հայաստան
երկիրը մեր։ Ահա այս աղոթքով ու մաղթանքով ենք Մեր հայացքը դեպի երկիրը
բարձրացնում և հայցում Երկնավորից. որ Իր աջը հովանի դարձնի. որ Իր աջը
բարավիզ ու նեցուկ դարձնի աշխարհապետ մեր Ժողովրդի զավակներին. հայ-
րենաբնակ ձեր քույրերին ու եղբայրներին. Արցախում իրենց ազատության իրա-
վունքի համար պայքարող հայորդյաց. որ ապրեն խաղաղ երկրի ներքո և ազգե-
րի հետ եղբայր՝ իրենց ավանդը բերեն աշխարհի շենագնա՛նն ու բուսադիմութ-
յանը. մարդկության երջանկությանը և գոհաբանություն ստացնե՛րքն առ Աստ-
ված թե՛ Բարի և վայելուչ է. որ եղբայրները բնակվում են միասին. թե՛ նորաստա-
կան սիրտ մեջ օրհնվում է Աստված. օրհնվում են մարդիկ. օրհնվում են ազգեր ու
պետություններ. և կյանքը դառնում է օրհնյալ. և մարդիկ վերակենդանում են սուր-
վածաստեղծ անաղարտ պատկերը իրենց։

Տիրոջ օրհնությունը, ողորմությունը, խաղաղությունը և սերն են հայցում մեր
Ժողովրդի և աշխարհի բոլոր Ժողովուրդների համար. որպեսզի ապրեն սրեղծա-
գործ կյանքով և խաղաղությամբ վայելեն արդար քրդիների իրենց վաստակը։

Փառաբանություն և օրհնություն Երկնավոր մեր Տիրոջը. այժմ և միշտ և հա-
վիտյանս հավիտենից. ամեն։

Պատարագի ընթացքում Նորին Սրբությունը փռչի կաթոլիկ Եկեղեցու առաջնորդին
նվիրեց փայտյա մի փորագրանկար, ապա՝ երկարամյա ծառայության համար Տ. Ադան
աղբեպա. Պալիոզյանի կուրծքը զարդարեց հոբելանական պանակեով, Տ. Նորայր քեն.
Բաթանյանին և Տ. Պարթև քեն. Գարագաշյանին՝ ձեռաց խաչերով, իսկ Սիդնեյի Ս. Հա-
րություն եկեղեցու նվիրեց Պատարագի սկիի։

Երեկոյան Վենափառ Հայրը «Հիլթոն» հյուրանոցում մասնակցեց պաշտոնական ընդո-
նեության, որին ներկա էին 400 հրավիրյալներ, որոնց թվում՝ պետական պաշտոնավար
անձինք, պարգամավորներ, դիվանագետներ և քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգե-
վորականներ։

Այս հանդիպման ընթացքում Ավստրալիայի վարչապետի ներկայացուցիչ, գաղթակա-
նական և համակեցության հարցերով նախարար պրոֆ. Ֆիլիպ Ռաֆորդը, ողջունելով Նորին
Սրբության գալուստը, բարձր գնահատեց Ավստրալիայի հայ համայնքի բերած նպաստը։
Բարիգալստյան խոսք ասաց նաև Նյու Մաուր Ուելս նահանգի վարչապետի ներկայացու-
ցիչ Ջոն Ուոթքինսը, որն անդրադարձավ հայ գաղութի փարած քրտնաջան աշխատանքին,
որի շնորհիվ այդ նահանգի խորհրդարանը 1997 թ. ապրիլի 17-ին ճանաչեց Հայոց ցեղաս-
պանությունը։

Հանդիպման ընթացքում ցուցադրվեց եան Ս. Էջմիածնի և Մայր Աթոռի ծավալած գիւրաուսումնական և բարեսիրական գործունեության, ինչպես նաև եկեղեցիների նորոգության և եկեղեցաշինության մասին պատմող մի տեսաներից:

Օրվա գլխավոր բանախոս, Ավստրալիայի Եկեղեցիների ազգային խորհրդի ընդհանուր քարտուղար Վերապատվելի Զոն Նևերտը մեծապես գնահատեց Հնդկաստանի և Շայրա-գույն Արևելքի հայրապետական պատվիրակ Տ. Ադան արքեպս. Պալիոզյանի ունեցած կարևոր դերը Եկեղեցիների Համաշխարհային խորհրդում:

Այնուհետև Նորին Սրբությունն իր օրհնության խոսքն ուղղեց ներկաներին՝ մասնավորապես նշելով, որ Արքայի անկախության նվաճումը կենսական կարևորություն ունի ողջ հայ ժողովրդի համար, և կոչ արեց ավստրալահայ զաղութին՝ միասնական ուժերով մասնակցելու Արքայի Հյուսիս-Հարավ ճանապարհի շինարարությանը: Նորին Սրբությունը նաև կոչ արեց Ավստրալիայի Դաշնային կառավարությանը՝ հետևելու Նյու Սաութ Ուելս նահանգի խորհրդարանին և պաշտոնապես ճանաչելու Հայոց ցեղասպանությունը:

18 նոյեմբերի

Առավոտյան Նորին Սրբությունն իր շքախմբով այցելեց ՀԲԸՄ-ի հովանավորությամբ գործող դպրոցը, ուր մեծ ոգևորությամբ դիմավորվեց դպրոցի աշակերտության կողմից և ծափոջողյունների ներքո մուտք գործեց դպրոց, ուր «Հոգւոց» ասաց դպրոցի քարերար Ալեք Մանուկյանի անունը հավերժացնող հուշատախտակի մոտ՝ հանգուցյալ քարերարի հոգու հանգստյան համար: Վեհափառ Հայրը ներկա եղավ մանուկների կողմից ներկայացված գրական-գեղարվեստական հանդեսին, որից հետո օրհնեց մանուկներին, նվերներ բաժանեց նրանց՝ ասելով. «Այս երեխաներն են մեր կյանքի արևը, նրանք են մեր կյանքին շողեր հաղորդում և եթե չլինեն նրանք, հավանաբար կխամրի մեր կյանքի արևը, և դպրոցն է, որ այս երեխաներին հայկական շունչ, ոգի, նկարագիր ու դիմագիծ է պարգևում»:

Նորին Սրբությունը ծանոթացավ դպրոցի հարմարություններին, գրուցեց ուսուցիչների հետ, իր հայրական պատգամներով ոգևորելով նրանց՝ հաստատուն մնալ իրենց առաքելության դժվարին ու պատասխանատու ճանապարհին:

Այսպեղից Վեհափառ Հայրը մեկնեց Համագգայինի Արշակ և Սոֆի Գալստյան դպրոց, ուր սովորում են 350 աշակերտներ, որոնք մեծ ոգևորությամբ Վեհափառին ընդունեցին դպրոցի մուտքի մոտ: Այսպեղ Վեհափառ Հայրը, նշխարելով ավանդական հայկական աղուհացը, ծափոջողյունների ներքո մուտք գործեց դպրոց՝ մասնակցելով ի պատիվ իրեն աշակերտության կողմից պատրաստած գեղարվեստական հայտագրին: Վեհափառ Հայրապետը, իր օրհնության խոսքն ուղղելով ներկաներին, ասաց. «Սաղմոսերգուս ասում է. կրթեք ձեր գավակներին, որպեսզի նախանձը շարժեք ձեր թշնամիների և բարեկամների առջև նրանցով պարծենաք»:

Տեղեկանալով, որ ծրագրված է դպրոցի կողքին կառուցել հայկական եկեղեցի, Նորին Սրբությունը օրհնեց այս ձեռնարկը և հորդորեց, որ եկեղեցին, ի նշանավորումն Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնման 1700-ամյակի, կոչվի Ս. Էջմիածին, դառնալով Ս. Էջմիածնի ներկայությունն Ավստրալիայի հայ համայնքի մեջ, ինչպես նաև խոստացավ, հուրախությամբ

յուն Ավստրալիայի հայ համայնքի, իր ձեռքով կատարել օժտոնց այդ եկեղեցու: Նորին Սրբությունը շրջեց դպրոցում, ծանոթացավ երապալմաններին, ինչպես նաև ջերմ ու անմիջական գրույց ունեցավ աշակերտներին և ուսուցչական կազմի հետ:

Վեհափառ Հայրապետի ջրախմբն ապա մեկնեց հայ կաթողիկե համայնքի Ս. Գրիգոր դպրոց՝ իր օրհնությունն ու բարեմաղթանքը բերելով այսպիսի ուսանող հայորդիներին և դասավանդող ուսուցիչներին, իսկ երեկոյան՝ Ս. Թերեզա կաթողիկե եկեղեցի, ուր տեղի ունեցավ էկումենիկ հանդիսավոր ժամերգություն, ապա՝ աջիամբույր:

19 նոյեմբերի

Առավոտյան Վեհափառ Հայրապետը Ս. Հարություն եկեղեցում եանդիպեց Եկեղեցասիրաց եղբայրակցության միության «Աղոթող կանայք» խմբին՝ մասնակցելով նրանց կազմակերպած էյուրասիությունը:

Կեսօրին Նորին Սրբությունը հանդիպեց Նոր Հարավային Ուելսի նահանգապետ տիկ. Մերի Բաշիրի հետ: Հանդիպման ժամանակ Նորին Սրբությունը ողջունելով նահանգապետին՝ ասաց. «Մա առիթ է, որպեսզի մենք, ի դեմս ձեզ, շնորհակալություն հայտենեք այն ուշադրության համար, որ դրսևորում եք ավստրալաբնակ մեր ժողովրդի հանդեպ: Մենք մի քանի օր է, ինչ գտնվում ենք Սիդնեյ քաղաքում, և համոզվեցինք, որ մեր ժողովրդի զավակունք ոչ միայն ազնիվ քաղաքացիներն են այս երկրի, այլև կարելի են ներդրում են գործունեության փարբեր բնագավառներում, որի համար անհափ ուրախ ենք»:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը, ընկերակցությամբ նահանգապետի, շրջեց նահանգապետարանի փարածքում՝ ի հիշատակ այս հանդիպման նահանգապետին նվիրելով հայկական մանրանկարչության հետևողությամբ կատարված փայտյա մի զարդապատկեր: Նահանգապետն իր հերթին նվիրեց Ավստրալիան խորհրդանշող մի հուշամեդալ:

Նահանգապետարանից Նորին Սրբությունն իր ջրախմբով մեկնեց Նոր Հարավային Ուելսի արվեստի թանգարան, որտեղ ի մտքո ծանոթացավ արվեստի ներկայացված բարձրարժեք նմուշներին:

Երեկոյան Նորին Սրբությունը մասնակցեց էկումենիկ արարողության անգլիկան Ս. Անդրեաս Կառնարում: Արարողության երաժշտական մասը կատարեց թեմի «Լուսավորիչ» երգչախումբը: «Կրաչափառ»-ի երգեցողությամբ Նորին Սրբությունը և քույր Եկեղեցիների առաջնորդները մուրց գործեցին եկեղեցի, ուր Վեհափառ Հայրապետին ողջունեցին Ավստրալիայի Եկեղեցիների խորհրդի նախագահն ու եկեղեցու հոգևոր հովիվը:

Այնուհետև տեղի ունեցավ միասնական աղոթք, որի ընթացքում հավաքվածները աղոթեցին աշխարհի խաղաղության և ժողովուրդների համերաշխության համար: Այնուհետև Նորին Սրբությունն իր օրհնության խոսքն ասաց ներկաներին՝ բնաբան ընտրելով «Զի բարի կամ զի վայելուց, զի բնակեն եղբարք ի միասին» (Սաղմ. ԺԼԲ 1) փողերը:

Մաղմուսեղոսի այս խոսքերով Մենք ողջունում ենք Մեր հոգևոր եղբայրներին և ձեզ, սիրելի բարեպաշտ հավատացյալներ: Ուրախ է Մեր հոգին, որ միա-

սին կանգնած ենք աղոթքի այս սուրբ տաճարի կամարների ներքո: Մատվածաշնչյան Արարարի երկրից և հայոց հավաքի նվիրական սուրբ կենտրոն 1700-ամյա Մայր Աթոռ Ս. Էջմիածնից եղբայրական Մեր ողջույնն ու սերն ենք բերում ձեզ՝ հրապիրելով միաժամանակ Մեր մտածումները և Մեր զգացումները փոխանցելու հավաքական այս աղոթքի Մեր եղբայրներին ու քույրերին:

Մենք աղոթում ենք նաև, որպեսզի Տերն անշարժ ու հաստատուն պահի իր Սուրբ Եկեղեցին, որպեսզի կարողանանք այս աշխարհում իրականացնել մեր առաքելությունը՝ ի փառս մեր երկնավոր Հոր և ի հաճություն ազգաց և պետությունների: Տիրոջ շնորհը, սերը և խաղաղությունը թող լինի միշտ մեզ հետ, այժմ և հավիտյանս ամեն:

Ապա Ադան Սրբազանն անգլերենով ողջույնի խոսք ասաց հավաքվածներին, իսկ Նորին Սրբությունը, ի հիշատակ այս արարողության, Ս. Անդրեաս եկեղեցու համայնքին նվիրեց փայտի վրա դրվագված հայկական մանրանկարչության մի պատկեր՝ ի վկայություն սիրո և համագործակցության Հայ և Անգլիկան եկեղեցիների միջև:

20 Լույսնբերի

Առավոտյան Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ թեմական համագումարի անդամների հետ, որից հետո մեկնեց հանդիպելու Նոր Հարավային Ուելսի վարչապետ Բոր Ջարրի հետ: Հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում, որից հետո Նորին Սրբությունն ու վարչապետը դուրս եկան կառավարության պալատի դիմաց, ուր հավաքված էին փառքեր լրարվամիջոցների բազմաթիվ ներկայացուցիչներ ու հյուրեր: Այսպիսով վարչապետը ողջույնեց Նորին Սրբությանը՝ ասելով.

«Նոր Հարավային Ուելսի նահանգի ժողովրդի կողմից ինձ համար մեծ պատիվ է Ձերդ Սրբություն Ամենայն Հայոց Հայրապետին ողջունել: Սիդնեյ քաղաքում, Ավստրալիա Ձեր հովվապետական առաջին այցի առիթով:

Շատ պարզ հիշում եմ, երբ 1997-ին ողջունեցի Ձեր Երջանկահիշատակ նախորդին: Ես հիշում եմ նրա՝ ինձ ուղղված պատգամը, «Հոգ տարե՛ք իմ ժողովրդիս համար»: Ձերդ Սրբություն, այս ժողովրդի հետ աշխատելը միմիայն հաճույք է, իսկ հոգ տանելը նրանց մասին՝ պատիվ:

Նրանք օրենքը հարգող ժողովուրդ են, ունեն քառի ընտանիքներ, լավ քաղաքացիներ են Ավստրալիայի, շատ հպարտ՝ իրենց Ավստրալիայի քաղաքացի լինելով:

Նրանք հարգում են իրենց ազգությունը՝ միաժամանակ մնալով Ավստրալիայի հասարակության մի մասը:

Ձեր երջանկահիշատակ նախորդին իմ կատարած խոստմանս ոգով մենք հատուկ հոգ ենք տանում նրանց նկատմամբ: Օրինակ՝ Նոր Հարավային Ուելսի

խորհրդարանը միաձայն 1997-ին ճանաչեց և դադարեցրեց Հայոց ցեղասպանությունը:

Մենք համոզված ենք, որ ամեն մի նոր խորհրդարան երբ ճանաչի այս ողբերգությունը, այդ ճանաչումն ավելի հեշտ ու ավելի դյուրին կդառնա մյուսների հագործումը, այդ ճանաչումն ավելի հեշտ ու ավելի դյուրին կդառնա մյուսների հագործումը: Նոր Հարավային Ուելսի խորհրդարանի փարաժքում գրելով՝ մի հուշարձան, որը նվիրված է այդ սարսափելի ողբերգությանը՝ Հայոց ցեղասպանությանը: Այն խորհրդանիշն է նաև 20-րդ դարի բոլոր ցեղասպանությունների»:

Վարչապետի ողջույնից հետո Նորին Սրբությունն իր օրհնության խոսքն ասաց ներկաներին.

ՎԵՆՔՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

«Միծաղող պրն Բոք Զարր՝ վարչապետ Նոր Հարավային Ուելս նահանգի.

Փառք և գոհություն ենք այս պահին վերստին վերառաքում առ Աստված, որ առիթը, հնարավորությունն ու շնորհը պարզենց Մեզ Հայաստանում քրիստոնեության պնդակնորեն ընդունման 1700-ամյակի հոբելյանական տոնակատարությանը ծիրից ներս այցելելու Ավստրալիա. մեր հավատարմոր ժողովրդի զավակաց բերելու Մեր օրհնությունը հայոց հավաքի նվիրական կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

Մենք ուրախությամբ համոզվեցինք, որ մեր ժողովրդի զավակունք Ավստրալիայի այս օրհնյալ երկրում բոլոր հնարավորություններն ունեն ապրելու իրենց ազգային կյանքով ու ազգային արժեքներով, ինչպես նաև իրենց ազնիվ ներդրումը բերելու այս երկրի առաքրնթացին ու զարգացմանը:

Հոգածությամբ Ավստրալիայի կառավարության, մասնավորապես Նոր Հարավային Ուելս նահանգի՝ հայորդիք ունեն իրենց եկեղեցին, դպրոցները և մշակութային ու հայրենակցական ազգային փառքեր կառույցները և ապրում են իրենց հայրենական արժեքներով՝ գոհաբանությունն իրենց շուրթերին և աղոթքն ու բարեմաղթանքը՝ Ավստրալիո աստվածասեր այս երկրի համար:

Որպես Հայրապետ Հայոց, Մենք ուրախ ենք ու մխթարված՝ հաստատելու, որ Մեր զավակունք իրենց վաստակով արժանավոր քաղաքացիներն են այս երկրի, սիրված ու հարգված քաղաքացիներն են այս նահանգի, և այդ Մենք զգացինք Ավստրալիա մուրք գործելու առաքին խսկ պահից: Դրա վառ վկայությունն են այս ընդունելությունը և այսօր Մեր անձի հանդեպ մատուցված հարգանքը, որը գնահատությունն է Մեր զավակների, ուրբն, ահա, այսպեղ են գրվում:

Ես վստահ եմ, որ այս պահին բերկրանքի, ուրախության ու ցնծության մեջ է նաև երջանկահիշատակ մեր նախորդ Հայրապետի հոգին՝ փեսանելով, որ իր պարզամեղ լավագույնս իրականացվում է և դուր հոգատարությամբ խնամք երթանում մեր ժողովրդի զավակաց նկատմամբ:

Մենք Մեր օրհնությունն ենք բերում ձեզ ձեր ազնվության ու հոգածության համար: Մենք նաև բերում ենք ձեզ նրախորագեղ զգացումները մեր ժողովրդի՝ Հա-

յոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման և մեկ ու կես միլիոն նահապետական հայոցիների հիշատակին խաչքար կանգնեցնելու համար: Դիտելով այս ամենը, որպես հոգածության և սիրո արտահայտություն Մեր զավակաց նկարումս՝ նրանց ավելի սիրտի պարտավորեցնեմ իրենց պարտքն ավելի ամբողջականորեն կատարելու ձեր երկրի և այս նահանգի նկարումս:

Մեծարգո Վարչապետ,

Դուք շատ զեղեցիկ անդրադարձ կատարեցիք Հայ ժողովրդի պատմությանը, և Մենք զարմացած մնացինք Ձեր գիտելիքների առթև: Այսօր մեր ժողովուրդն ապրում է վերանվաճած իր երկրի անկախությունը: Ունենալով այսքան մեծ թվով հայություն, Մենք լիահույս ենք, որ թեև հազարավոր մղոններով հեռու Հայաստան մեր երկրից, այդուհանդերձ Ավստրալիո օրենյալ երկրի հեղ պիտի զարգացնենք դիվանագիտական սերտ կապեր ու հարաբերություններ, որոնք առավել ևս պիտի զան գորացնելու այն ջերմությունը, որ առկա է հայ ժողովրդի և Ավստրալիո ժողովրդի ու պետության միջև:

Մեր խոսքի վերջում որպես շնորհակալություն և նրախաղաղություն այն հոգածության, որ տաժում է այս նահանգը իր իշխանավորների միջոցով և պետությունը Ավստրալիո ընդհանրապես՝ դեպի մեր զավակունք, Մենք սրտի ուրախությամբ ուզում ենք հրավիրել Ձեզ Հայաստան, որպեսզի ավելի գործնական լինենք մեր երկու երկրների միջև սերտ կապերի ամրացման գործում՝ պետական մակարդակի վրա:

Մենք մեր աղոթքով Աստծո սերրը և խաղաղությունն ենք հայցում աշխարհին համայն, ձեր երկրին և Մեր մաղթանքն ենք բերում Ձեզ՝ առողջ կյանքի և օրենյալ գործի՝ ի շինություն և ի բարգավաճում այս նահանգի և Ավստրալիո ժողովրդի»:

Նորին Սրբությունը, որպես սիրո և գնահատանքի արտահայտություն, Մայր Աթոռ պալատներով 1700-ամյակի առիթով պարտաստված մի հուշանվեր նվիրեց վարչապետին:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը մասնակցեց ի պարիվ այս այցելության համայնքի երիտասարդության կողմից կազմակերպված հայկական մշակույթի երեկոյին, որը հաճելի, անմոռաց պահեր պարգևեց ներկաներին իր հայաշունչ կատարումներով և գեղարվեստական բազմաոճ հայրագրով: Նորին Սրբությունը պարասխանեց ներկաների՝ իրեն ուղղված բազմաբնույթ հարցերին:

21 նոյեմբերի

Օրվա առաջին այցելությունը Հայկական հանգստի տունն էր, ուր մտերմիկ հանդիպումներ տեղի ունեցան այստեղ իրենց կյանքի մայրամուտն անցկացնող հայ փառեցների հետ: Մանրամասն ծանոթանալով այս հաստատության պայմաններին և այստեղ ապրողներին, Նորին Սրբությունն օրհնեց հայ մեծահասակներին՝ ուժ և կորով մաղթելով նրանց և հայկական մի խաչքար նվիրեց Հանգստյան տանը՝ ի հիշատակ իր այս այցելության:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը և իրեն ընկերակցող ջրախմբի անդամները հանդիպեցին Ավստրալիայի վարչապետ Ջոն Հովարդի հետ: Հանդիպումն անցավ ջերմ մթնոլոր-

տում: Զրույց ծավալվեց Հայ Եկեղեցու և հայ համայնքի, վերջինիս վերաբերող խնդիրների փոխարեն: Զրույց ծավալվեց Հայ Եկեղեցու և հայ համայնքի, վերջինիս վերաբերող խնդիրների փոխարեն: Զրույց ծավալվեց Հայ Եկեղեցու և հայ համայնքի, վերջինիս վերաբերող խնդիրների փոխարեն:

Հանդիպման ավարտից հետո Հայոց Հայրապետը այցելեց Նոր Հարավային Ուելսի խորհրդարան, որի փորձառու փոխարտիվ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին կանգնեցված խաչքարի մոտ հարգանքներ հայտնեց և, ծաղկեպսակ զետեղելով նրա առաջ՝ «Նոգվոց» ասաց հայոց բյուրավոր նահապետական հոգիների հանգստության համար:

Նորին Սրբությունն այնուհետև Ավստրալիայի խորհրդարանում հանդիպեց Նոր Հարավային Ուելսի խորհրդարանի նախագահի հետ՝ վերջինիս փոխանցելով Հայաստանի խորհրդարանի նախագահ Արմեն Խաչատրյանի ողջույնները: Ի հիշատակ այս հանդիպման, Վեհափառը նվիրեց Ավստրալիայի պառլամենտի մեծահարուստ հայկական մանրանկար, իսկ խորհրդարանի նախագահը Վեհափառ Հորը նվիրեց նախորդ դարասկզբին Ավստրալիայի խորհրդարանը պառլամենտի մի նկար:

Պաշտոնական ընդունելությունն ավարտվեց կազմակերպված հյուրասիրությամբ, որից հետո վարչապետը Նորին Սրբությանը ճանապարհեց մինչև խորհրդարանի մուտքը: Այնուհետև Նորին Սրբությունը քաղաքապետարանում հանդիպեց քաղաքապետ Փեթ Ռեյլին, ապա դիմեց այսպիսի կազմակերպված ցուցահանդեսը և վերջինիս հայ մշակույթը ներկայացնող բաժինը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետին տրվեց այս քաղաքի պառլամենտ քաղաքացու կոչում, ինչպես նաև հանձնվեց քաղաքի խորհրդանշական բանալին:

Նորին Սրբությունը, շնորհակալության և օրհնության խոսք ասելով, իր հերթին քաղաքապետարանին նվիրեց փայտյա դրվագագարդ մի սափոր և Ս. Էջմիածինը պառլամենտի պառլամենտի մի ալյուր: Հանդիպումն ավարտվեց Նորին Սրբության «Պահպանիչ»-ով:

Երեկոյան կազմակերպվեց հյուրասիրություն, որին մասնակցում էին Սիդնեյի եկեղեցու և ավստրալահայ առևտրական գրասենյակի անդամները և բազմաթիվ հրավիրյալներ:

22 նոյեմբերի


Օրվա ընթացքում Նորին Սրբությունը մի շարք ոչ պաշտոնական հանդիպումներ ունեցավ, իսկ երեկոյան, Ավստրալիայի Ընկերակցության կենտրոնում կազմակերպված ընթրիքի ժամանակ, հանդիպեց տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Ողջերթի այս երեկոյին ներկա էին թեմի քահանաներ, թեմականներ, Եկեղեցու և կալվածոց խորհրդի անդամներ, հայկական մի շարք կազմակերպությունների և միությունների ներկայացուցիչներ:

Նորին Սրբությունը, իր օրհնության ու բարեմաղթանքի խոսքն ուղղելով հավաքվածներին, ասաց.

«Մերնի բարեպաշտ զավակներ Սուրբիական մեր Մայր Եկեղեցու, սիրելի հայորդիներ»

ՏԳՂ ԿԱԳԱՐԱՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԳԱՐԱՏԱԳՐԱՍՏՈՒՄ ՃԱՊԱՆԱԳ ԿՈՒ ԿԱԳԱՐԱՏԱՄԱՆ ԼՈՒԿՈՒԹԵՐՆԵՐԻ ՎԵՐՈՆԵՎՈՒ



Այցով եկել ենք Ավստրալիա, եկել ենք Միդենյ քաղաք և վաղը մեկնում ենք Մելբուռն, Մինգապուր, այնպիսի դժբաղդալալու ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Մեր մեկնումը բաժանում չէ երբեք Հայրապետը չի բաժանվում իր զավակներից, հայրը չի բաժանվում իր որդիներից, ոչ ժամանակը և ոչ էլ տարածությունը չի կարող բաժանել ծնողին զավակից: Այսպես եղել է դարեր շարունակ, աշխարհագրիկ հայոց զավակների հոգիներում ապրել է Հայոց Հայրապետը, և տարագիր իր զավակները ապրել են իրենց Հայրապետի հոգում ու մեկը մյուսով միմյալի վել են, մեկը մյուսով քաջայերվել ու գոյեպնդվել, մեկը մյուսով լուսավորել կյանքի իրենց ուղին ու ճանապարհը և զծագրել տեսիլքը, որի կյանքի կոչման առաքելությանը լծվել են միասնաբար՝ հաղթահարելով և՛ ժամանակ, և՛ տարածություն:

Այդ առաքելության ճանապարհն այսօր մենք ձեզ հետ միասին ենք անցնում վստահ, որ պիտի անցնենք այդ ճանապարհը փառքով՝ նոր հաղթանակներ արձանագրելով մեր կյանքում:

Թող Աստված օրինի առաքելության մեր ճանապարհը»:

23 նոյեմբերի

Վաղ առավոտյան Նորին Սրբությունը Սիդեյից մեկնեց Մելբուռն:

Վեհափառ Հայրապետին Մելբուռնի օդանավակայանում դիմավորելու էին եկել Տ. Հակոբ քահանան, թեմական խորհրդի և եկեղեցական վարչությունների անդամներ և մեծաթիվ հայ հավաքացյալներ, որոնք մեծ ոգևորությամբ և ծափողջույններով դիմավորեցին Նորին Սրբությանը և ջջախմբի մյուս անդամներին:

Նյութանցում մի փոքր հանգստից հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Մելբուռնի հայոց Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցի՝ իր հայրական օրհնությունը բաշխելով ներկա բազմաթիվ հայորդիներին: Նորին Սրբությունը «Հրաշափառ»-ի երգեցողության հնչյունների ներքո մուտք գործեց եկեղեցի, ուր բարիգալստյան ողջույնի խոսք ասաց Ադան Սրբազանը:

«Վեհափառ Տեր, աստվածաշնչյան խոսքը մեզ կապարզանե ու կըսե՝ «Ահա գորդիք իմ գոր եր ինձ Աստուած»: Ահա մեր զավակները, որոնք Աստված մեզի պարգևած է և կանգնած են Ձերդ Սրբության առաջ: Վստահ եմ, ամեն մեկուն զգացումներուն արտահայտիչը պիտի ըլլամ Ձերդ Սրբության բարի գալուստը մաղթելու Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցի մեջ: Եկեղեցական ու հավատացյալ տարիներ շարունակ հովվապետական այս ալյցելության կապասեին, որպեսզի Ձերդ Սրբութենեն ստանան հավատքի կենտրոն Ս. Էջմիածնեն լույսի օրհնությունը, լսեն Ձեր հայրապետական խոսքը և պարզանը: Ձեզմե լսեն մեր հայրենի ժողովրդի խոսքը, մեր հայրենի երկրի կանչը...»:

Ապա Նորին Սրբությունն իր հայրական խոսքն ուղղեց ներկաներին.

ՊԱՐԳԻՆ Բ ՎԵՆՈՓԱՌՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ
ՄԵԼԲՈՒՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ
 (23 նոյեմբերի 2002 թ.)

«Փառք Քեզ, Տէր. փառք Քեզ, յաղագս ամենայնի փառք Քեզ»:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, սիրելի զավակներ Մեր Երեք տարիներ առաջ ազգի և Աստուծո կամոք Մենք Մեր անձը խոնարհեցրեցինք՝ Հայրապետական ծանր լուծը Մեր ունեւին վերցնելու: Այդ քայլը կատարելիս, ամենին Մեր անձի նկատմամբ ունեցած վստահությունը չէր, որ առաջնորդեց Մեզ նման համեմատության այլ առավել այն սերը, այն հավատը, որ ~~ռեւան~~ մեր ժողովրդի զավակունք հանդէպ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին ու Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հանդիպ մեր հայրերի սրբազան հավատքը և նրանց հոգևոր ժառանգությունը:

Երեք տարիներ են անցել, և Մենք, ականջալուր մեր հայրուր երեսունմեկ Հայրապետներին, ականջալուր Երկնավոր մեր Հայր Աստծո կոչին, Հովվապետի զավագանը Մեր ձեռքին՝ սյցելեցինք Սփյուռքի Մեր զավակներին: Այցելեցինք հայ գաղթօջախներ՝ Նյուսիսային Ամերիկայից սկսյալ մինչև Աֆրիկա ու Հնոսվոր Արևելք, որպեսզի հազցեցնենք պապակը կարոտաբաղձ Մեր զավակաց հոգիներին, որպեսզի գորացնենք նրանց մեջ հավատքը և վստենք քաղը հույսի ու լավատեսության դեպի մեր ժողովրդի պայծառ գալիքը:

Մենք նրանց տարանք անկախության և ազատության շունչը հայրենյաց, հերոսական ոգին Արցախի, որպեսզի Մեր զավակունք գորանան իրենց ջանքերի ու նախանձախնդրության մեջ և իրենց նպաստն առավել բերին հայրենակերպման նվիրական գործին:

Այսօր, դեպի ձեզ գալով 1700-ամյա Ս. Էջմիածնից, մեր հավատի նվիրական կենտրոնից, նույն զգացումներն է որ աղոթքի թներով բերում ենք ձեզ: Նույն հորդորն ու պատգամն է որ եկել ենք ձեզ փոխանցելու, որպեսզի անվառան կերպով պահեք ձեր ընթացքը Տիրոջ շավիղներում, որպեսզի քրիստոնեական ազգային մեր արժեքներով գորացյալ լինենք Ավստրալիո հեռավոր, բայց օրինյալ այս երկրում, որ հյուրընկալել է ձեզ և ամեն հնարավորություն ու ազատություն ընձենել՝ հայրենի մեր ավանդներով ու սրբություններով ապրելու:

Հավատարիմ մնացեք Տիրոջ շավիղներին, որովհետև Աստծո հնր պիտի գրվենք կյանքը մեր ազգի, Աստծո մեջ պիտի հանդիպեք ու հաղորդություն ունենաք ձեր սրբազան հայրերի հնր, պիտի լսեք նրանց պատգամը ու պիտի նաև բավարարեք կարոտը ձեր հոգիների դեպի քաղցր Հայրենին մեր՝ ազատ, անկախ Հայաստանը և հերոսաբար իր նոր կյանքը կերպող Արցախ աշխարհը:

Սիրելի հայորդիք

Ահա տասն օր է որ գտնվում ենք Ավստրալիայում, տասն օր է որ նայում ենք կարտուրալի աջերին մեր ժողովրդի զավակների, տասն օր է որ մխիթարվում ենք մեր ժողովրդի հայացքներում ճառագող ուրախության արտահայտությամբ, տասն օր է որ նաև Մենք ենք գտնեալովում որպես Հայրապետ Հայոց՝ հանդիպելով հավատարմոր մեր ժողովրդի զավակաց և այցելելով հավարքի րներ, դպրոցներ, ազգային հայրենակցական, կրթական ու մշակութային օջախներ, աղոթքի կանգնելով Մեր սիրեցյալ ու հարազատ զավակների հետ:

Բազում հանդիպումներ ունեցանք Սիդնեյի մեր եղբայրների ու քույրերի հետ և զգացինք ու ապրեցինք փոխադարձաբար նորոգության շունչը, որ Տերը մեզ, որպես պարզ մեր բարի ընթացքի, հավատարմոր կյանքի ու հավատարմության, շնորհեց մեզ՝ առադրեն երկնքից հեղելով մեզ վրա: Այսօր Մեր առաջին հանդիպումն է մեզ հետ: Մենք հավատում ենք, որ Տերը Ա. Նոգու շնորհներով պիտի դարձյալ փոթորկի մեր հոգիները, պիտի լայնկոծի մեր զգացումները, որպեսզի առավել խանդավառ մենք լծվենք մեր ազգային կյանքի շինության սուրբ ու նվիրական գործին:

Ահա այս է պարճառը, որ մեր Հայրապետն առաջին իր աղոթքը Ա. Աստվածածին եկեղեցու խորանից դեպի երկինք է վերառաքում, փառք և գոհություն մատուցանելով Տիրոջը՝ սաղմոսերգուի խոսքերով ասելով. «Փառք Զեզ, Աստուած, փառք Զեզ, յաղագս ամենայնի փառք Զեզ»:

Մեր ժողովուրդը փառք և գոհություն է մատուցել Երկնավոր մեր Նորը բոլոր ժամանակներում մեր կյանքի, նաև՝ երբ ավեր ու արցունք, երբ բազում փորձություններ են բաժին ընկել մեզ: Ուստի որքան առավել ևս փառք և գոհություն պիտի վերառաքենք Աստծուն, երբ Տիրոջ ողորմության դռներն են բացվել մեր առջև, երբ մենք թե՛ հայրենի երկրում և թե՛ օրար երկրների խաղաղ ու օրհնյալ երկինքների ներքո վերակերպում ենք մեր երջանիկ կյանքը, մեր ազգային կյանքը, երբ մեր մանուկ զավակունք առանց երկյուղի ու վախի առաքնորդվում են դեպի Հայ Եկեղեցի և հայ դպրոց, որպեսզի սովորեն այնպեղ լեզուն մեր մեարտպաշունչ որպեսզի աղոթեն Նարեկացու աղոթքներով, Շնորհալու շարականներով:

Արդարև, փառք և գոհություն Երկնավորին, և հավատում ենք, որ օրհնությունը երկնային պիտի հեղվի մեզ վրա ավելիով, որքան ժամանակ մենք մեր ընթացքը կշարունակենք պահել մեր հայրերի ուղենշած ճանապարհների վրա:

Սիրելիներ, եկեք գոհաբանական աղոթքով մեր հայցը վերառաքենք առ Աստված և խնդրենք Երկնավորից՝ պահելու աշխարհը համայն խաղաղության մեջ, եղբայրության ու համագործակցության մեջ:

Այա րեղի ունեցավ աջամբույր, որին հաջորդեց այցելությունն Ալիկյան Ազգային դպրոց, որի սաներին միացել էին նաև Համազգայինի Մեսրոպ Մաշտոց դպրոցի աշակերտները: Վեհափառը ներկա եղավ նրանց կազմակերպած գրական-մշակութային հանդեսին՝ օրհույան իր խոսքն ուղղելով ներկաներին.

«Մեծ բերկրանք ապրեցինք միասին՝ քիչ առաջ եկեղեցում մեկտեղ աղոթք բարձրացնելով առ Աստված, և ահա այժմ էլ գտնվում ենք հայկական դպրոցում

հայոց մերթի ու հոգու դարբնացում: Պատրաստված չէ, որ մեր ազգի զավակներ ուր էլ որ լինեն, կառուցում են եկեղեցի և նրա կողքին՝ դպրոց, որովհետև գիտեն, որ հայի անառիկ ամրոցն այդ երկու սրբազան հաստատություններն են, հային հայ պահողն այդ երկու հրաշագործ գործություններն են, և միայն այդ երկու կովանենքին, հզոր, անասան հիմներին հաստատված՝ մենք կարող ենք հարստանալ և վստահությամբ մեր հայազգն ուղղել դեպի հազարամյակների խորքը և դեպի հավերժություն:

Այս դպրոցում, որ կրում է լուսահոգի Ակինյանի անունը, դուք ոչ միայն լեզու եք ուսուցանում, ոչ միայն հայախոս եք դարձնում ձեր զավակներին, ոչ միայն Մաշտոցի գրքերն եք ձանաչելի դարձնում նրանց և հաղորդ՝ Հայոց պատմությանը, դուք այսօրեղ Հայաստան եք կիրառում յուրաքանչյուր հայորդի մեկ Հայաստան է Հայրապետիս համար, և պիտի ուզեմ, որ այդ զգացումն ու գիտակցությունը ունենաք նաև դուք...»:

Ապա Նորին Սրբությունը դպրոցին նվիրեց հայկական մանրանկարչության հեղինությունը փայտի վրա կադավրված մի սրբանկար:

Այնուհետև Հայոց Հայրապետը մասնակցեց հայկական տարբեր կազմակերպությունների և եկեղեցական կառույցների ներկայացուցիչների կազմակերպած ընդունելությանը՝ հորդորելով հավատարիմ մնալ Ս. Էջմիածնին. «Հայ ինքնություն և Ս. Էջմիածին հասկացությունները վաղուց արդեն նույնական են իրենց ընկալման մեջ: Էջմիածինը գորեղ է որովհետև հաստատված է նաև Արարարի փեշերին: Արարարը մեր ժողովրդի հավերժության խորհուրդն ունի իր մեջ, Արարարը Նոյան Տապանն է կրում: Նոյան Տապանը եկավ-կանգնեց Արարարի վրա, ուր հիմնվեց և Ս. Էջմիածինը, որպեսզի փրկության իր խորհրդով, Աստծո ներկայության գործությամբ նույնանա Նոյան Տապանի առաքելության հետ: Նոյան Տապանը մարդկության փրկության տապանը եղավ, իսկ Էջմիածինը՝ հայության փրկության տապանը»:

24 նոյեմբերի

Առավոտյան Նորին Սրբությունը Ս. Դմիտրի կաթոլիկ տաճարում հայրապետական Ս. Պատարագ մատուցեց, որին ներկա էին բազմաթիվ ելուրներ ինչպես քույր Եկեղեցիներից, այնպես էլ պետական պաշտոնատար անձինք և բազմաթիվ հայ հավատացյալներ: «Հայր մեր»-ից առաջ բարիգալստյան խոսք ասաց Աղան Սրբազանը: Ապա Նորին Սրբությունն իր հայրական պարգամը տվեց ներկաներին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՆՍՓԱՌ ՆԱԶԲԱՊԵՏԻ ԽՈԱԲԸ ՄԵԼԲՈՒՆԻ

Ս. ԴՈՄԻՆԻԿ ԿԱԹՈՒԿ ՏԱՃԱՐՈՒՄ

(24 նոյեմբերի 2002 թ.)

«Էջ Միածինն ի Տօրն եւ լոյս փառաց ընդ նմա.

Եկայք շինեացուք սուրբ զիտրանն լուսոյ»:

«Ասործո Որդին իջալ մեր Տիրոջ մտրից

Եվ Իր հեղ փառքի լույսն իջեցրեց:

Եկեք միասնաբար կառուցենք սուրբ խորանը լույսի»:

Այս խոսքերով, սիրելի բարեպաշտ հավատացյալներ, 1700 տարիներ առաջ Նայաստան մեր երկրում քրիստոնեությունը պնդական կրոն հռչակելուց հետո, որպես փառաբանություն առ Աստված և հրավեր ու կոչ առ հայորդիս արտասահեց մեր հավատո հայրը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ՝ հրավիրելով հայորդյաց հավատ իրենց տունը կառուցելու:

Այդ նույն խոսքերն այսօր մեր հոգում ծրարած՝ եկել ենք նույն կոչը և հորդորն ուղղելու ձեզ, սիրելիներ, որ կայք եք հաստատել Ավստրալիո հեռավոր այս ափերում, որպեսզի շարունակեք եկեղեցաշինության գործը, ըստ պատգամի մեր երկրորդ լուսավորիչ Ս. Գրիգորի, «Եկայք շինեացուք սուրբ զիտրանն լուսոյ» (Եկեք կառուցենք լույսի սուրբ խորանը):

Աստվածային անճառելի զորությամբ առնեցուն այս սուրբ տաճարում, խորախորհուրդ այս պահին, երբ հովիվ և հոգ, Նայրապետ և ժողովուրդ կանգնած ենք երկնավոր մեր Տիրոջ առջև, Մենք գոհաբանական օրհնություն ենք առ Աստված բարձրացնում, որ Տեղը պարգևեց Մեզ այս շնորհը՝ հովվապետական Մեր այցելությունը կատարելու հեռավոր Ավստրալիո երկրում ապրող Մեր սիրեցյալ զավակներին՝ ձեզ, սիրելի բարեպաշտ հայորդիք Մելբուռն քաղաքում ապրող:

Մենք, որպես Նայրապետ Նայոց, բերել ենք ձեզ, սիրելիներ, ողջույն հայրենաբնակ մեր ժողովրդից, եղբայրական սեր և կարող, բերել ենք ձեզ հայոց Նայրենիքի կարողը և հայրենյաց մեր սրբավայրերի օրհնությունը, բերել ենք հաղթական ոգի Ծիծեռնակաբերդից ու Եռաբլուրի սրբազան բարձունքներից, ուր հավերժության անմար կրակն է բոցկլվում և հանգչում են իրենց հայազոր մեր ժողովրդի անպազային հառած մեր մարտիրոս ու նահապետ հայորդիք:

Մենք ողջույն ենք բերել ձեզ հայրենյաց մեր բանակի քաջարի զինվորներից, որոնք ահա տասը տարիներ իրենց զենքի արդար զարկով, իրենց սլիկների ծայրով գրում են մեր ժողովրդի այսօրվա պատմությունը: Բերել ենք և պարգամը և խորհուրդը Նայոց Մեծ Դարձի 1700-ամյակի, որպես նոր հրավեր աշխարհասփյուռ բնակվող Մեր զավակաց, թե՛ եկեք կառուցենք սուրբ խորանը լույսի:

Դարեր շարունակ, սիրելիներ մեր հայրերը, ակամքալուր Գրիգոր Լուսավորիչ մեր հայրապետի այս հրավերին կատուցեցին հայ Եկեղեցին, կառուցեցին աշխարհներով տրևությամբ ու պայքարով, կառուցեցին հայոց գրերի տարածումը, Աստվածաշնչի թարգմանությամբ, հայոց Եկեղեցին կառուցեցին մեր զավակաց հոգիների մեջ Ավարայրի դաշտում՝ հավատը հայոց դարձրած իրենց ինքնության ու լինելության նշանաբանը:

Լուսո խորանը հայ Եկեղեցու մեր հայրերը կառուցեցին նաև Նարեկյան տոհմըներում և Շնորհալու շարականներում, Եկեղեցին կառուցվեց և ազատագրական պայքարներում մեր ժողովրդի ու հայոց սակախ պետականության րեւիտում ու նրազում, որ մեր պատմության մեջ հաճախ քաջարի մեր զավակաց կյանքի և աշյան գնով իրականություն դարձավ, սակայն, ապաղ, նաև հաճախ անմիաբանության հետևանքով հայոց թագավորությունները կործանում ապրեցին: Մեր ժողովուրդը անցավ տառապանքի, գոյարևումի ու մաքստումի ճանապարհներով, տեսավ ցեղասպանություն, սակայն վերապրեց ու շրկեց եղեռնահար մեջքը:

Միեւելի բարեպաշտ հայրորդիներ

Մենք փառք ու գոհություն ենք այսօր Մեր շուրթերից դնալի երկինք վերառաքում, որ մեր ժողովրդի զավակունք հեռավոր Ավարայրի ափերին՝ Միդենյ, Մելքուն և այլ քաղաքներում, քրիստոնեական մեր սուրբ հավատքի գոյությամբ, քրիստոնեական բարոյականի վեհ զաղափարներով կերտել են իրենց նորոյա կյանքը՝ արժանանալով գնահատանքին, վարաստությանն ու սիրուն Ավարայրի ժողովրդի և պետության, դառնալով այս երկրի լիիրավ քաղաքացիներ, իրենց ազնիվ ներդրումը բերելով այս երկրի կյանքին:

Այսօր մեր առջև կանգնած՝ Մենք հայարտության զգացումով ենք համակված, որ ի հավելումն այս ամենի դուր նաև կերպում եք մեր ազգային կյանքը բազում քանքերով, բազում հանձնառությունների գնով: Դուք կառուցել եք այստեղ մեր Եկեղեցին, հիմնել եք դպրոցներ, ազգային, կրթական միություններ և հասարակություններ, աշխարհներներ ու իրազործումներ, որոնք արդարև, պիտի արձանագրվեն մեր ժողովրդի այս զաղութի պատմության մեջ:

Մենք ահա տասն օրերից ի վեր գրելվում ենք Ավարայրի եզերքներում, Եղանք Միդենյ քաղաքում, հանդիպեցինք մեր եղբայրներին ու քույրերին, ականապես ու հաղորդ դարձանք նրանց եկեղեցաշինական ու հայրենակերպումի ձեռքբերումներին: Երկու օր է ինչ գրելվում ենք նաև Մելքուն քաղաքում և եղանք նաև այստեղի դպրոցներում ու եկեղեցում, հանդիպեցինք զանազան միությանց ներկայացուցիչներին հետ:

Անուր է մեր հավատը և վարաստությունը, սիրելիներ, որ աննկուն կերպով, սիրով ու նոր հանձնառությամբ պիտի շարունակեք զորացնել համայնքային մեր կյանքը, մեր հոգևոր արժեքների վրա բարձրացող ազգային ոգին՝ հարկապես մեր զավակների սրտերում, որ ապագան են մեր: Հավատում ենք հայոց միաբա-

նությանը, հայոց պայծառ գալիքին, հաժարում ենք առաջել, քանզի ազատ է մեր Հայրենիքը և լծված պետականության կերպման նվիրական գործին:

Խանդավառ ու քաջալեր ենք, քանզի մեր զավակաց արյամբ ազատագրվել է նաև Արցախ աշխարհը: Ուրախության ու ոգեշնչման հեղեղն այս ձեռքբերումները նաև պարտավորություն են ծանրացնում Մեր ուսերին: Մենք այստեղ ենք նաև, որ Միկուդի Մեր զավակաց հաժարքը շաղախվի հայրենապետական մեր ժողովրդի հաժարքին, և մենք՝ մեկ ու միասնական, համարեալ ամուր հիմքեր դնենք հայրենի գործի պետականության:

Միրելի բարեպաշտ հայորդիներ

Հայրապետիս հորդորն ու կոչն է ձեզ, որ հաժարաբանորեն շարունակեք քայլել մեր հայրերի ուղենշած ճանապարհով, ունկնդիր այն պարզամիտ, որ հենց 1700 տարիներ առաջ՝ կառուցելու Եկեղեցի, կառուցելու Եկեղեցու լույս խորանը մեր հոգիներում, որովհետև այդ Եկեղեցով մենք ապրել ու հարստանել ենք դարեր շարունակ, այդ Եկեղեցով մենք հաղթահարել ենք մեր սուրբ ծառացած բոլոր դժվարությունները, այդ Եկեղեցով մենք հաղթել ենք մահը և կյանքը որդեգրել մեզ որպես ուղեճամփա նոր հազարամյակների:

Երեկ դարոցում, պարանիների հեղեղ հանդիպման ժամանակ, Մենք սասցիք, որ Եկեղեցին եղել է փրկության տապանը մեր ժողովրդի, ինչպես քրիստոնեի ժամանակ Նոյան Տապանը եղավ մարդկության փրկության տապանը: Ուստի ամուր պետք է կառնենք մեր Եկեղեցուց, պիտի հոգ տանենք, որ չտկարանա գործությունը մեր Եկեղեցու և շարունակի հրաշագործել մեր կյանքում, շարունակի առաջնորդել մեր ժողովրդին դեպի Աստված, Ում մուր որ միայն կարող ենք գտնել մեր բոլոր իղձերի իրականացումը, և այդ շնորհացքում կարող ենք գտնել այնքան բաղձալի երջանիկ կյանքը մեր ժողովրդի:

Մենք փառք ենք վերառաքում Երկնավորին, սիրելիներ, որ բացվել են Տիրոջ ողորմության դռները հայոց ազգիս համար: Մեր աղոթքով, Տիրոջը մեր հաժարաբանությամբ և մեր նախնյաց հաժարավոր շնորհացքով պիտի քանակեք միշտ բաց պահել երկրի դռները, որպեսզի երկնային օրհնությունը միշտ իջնի հայ կյանքին, միշտ լույս ճառագի մեր մարմին ու հոգուն, որպեսզի մեր բարի գործերով, սիրով ու միաբանությամբ լայնահուն ու անսայթաք լինեն հայ կյանքի ճանապարհները ի սփյուռս աշխարհի:

Միրելի բարեպաշտ հայորդիներ

Այս պահին, երբ միասին աղոթքի ենք կանգնած, Մենք ուզում ենք վերադառնալ մեր հոգում հենցնել շարենցյան խոսքերը, թե հայ ժողովրդի, գիտցիր, որ քո փրկությունը քո հավաքական ուժի մեջ է հավաքական ուժ, որով միայն կարող ենք խուսափել պարտություններից, կորուստներից, եղեռներից ու ողբերգություններից: Հավաքական այդ ուժը, բոլորս էլ գիտակցում ենք, սիրելիներ, որ գոյանում է ոչ այլ կերպ, եթե ոչ ընկերոջ, ազգակցի ու բարեկամի նկատմամբ ունեցած ամենօրյա պարտախանապարտությունից ու պարտավորությունից:

Տնտեսական այսօր առավել քան երբևէ հարկ է ու պարտք է ծառացած մեզ վրա ի հայաստան և ի սփյուռն աշխարհի ապրող յուրաքանչյուր հայրենի համար հոգածել վասն շինության և բարգավաճման հայրենյաց որպեսզի միշտ անառիկ ու անաբարության լինի ոգին հայոց, որի վրա բարձրացած է մեր հարստության և գոյության երաշխիքը հանդիսացող հայոց անկախ պետականությունը, որի վրա խառնիված են նաև ազգապահպան բոլոր կառուցները Սփյուռքի հայ կյանքի:

Միևնի բարեպաշտ գավակունք Միր.

Հայրասպետիս բարի ցանկությունն ու մաղթանքն է որ ձեզանից յուրաքանչյուրը լայն բանա իր հոգու դռները և իր հայացքը հասած դեպի Մայր Հայրենիքը, ընդունի մեր նոր կյանքի զարնանային շունչը, որ վստահաբար սկսի նորոգի ազգասեր ոգին ձեր մեջ ու սփռի հրաշագործի Ավարապիայի հայ կյանքում:

Հայցենք մեր Տիրոջից, որ գորագնի մեր մեջ մեր հայրերի հավատն ու հավատարմությունը, որպեսզի մեր հոգում անլույսի հնչի լուսավորչականը պարզամբ.
«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ», և մենք մեր ձեռաց գործերով ու մեր կյանքով արժանի լինենք երկնավոր մեր Տիրոջ օրհնությանը, մեր հայրերի օրհնությանը: Այս հայցով Մենք սողոթք ենք վերառացում առ Բարձրյալն Աստված, որ միաբանության ու սիրտ մեջ պահի ազգս հայոց և երկիրը Հայաստան, որպեսզի մեր ընթացքը՝ միշտ հաղթական, մշտապես լինի գոհաբանություն ու փառաբանություն Տիրոջը:

Ս. Պարարագի ընթացքում Նորին Սրբությունը Մելլուտի հայ համայնքին նվիրեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մանրակերպը, իսկ կաթոլիկ Եկեղեցու առաջնորդին՝ Հարության մանրանկար: Պարարագի ավարտին տեղի ունեցավ աջհամբույր:

Երեսույան Նորին Սրբությունը մասնակցեց տեղի հայ համայնքի կողմից կազմակերպված պաշտոնական ընդունելություն-ընթրիքին, որին ներկա էին բոլոր Եկեղեցիների ներկայացուցիչներ, պետական պաշտոնավար անձինք, ներկայացուցիչներ հայկական կազմակերպություններից և մեծ թվով մելլուտահայեր: Ընդունելությունը տեղի ունեցավ Princess Court Reception-ում (Իշխանների պալատ):

Ավարապիայում բնակվող մեր հայրենակից, ճանաչված մարզիկ Յուրի Մարգարյանը այս հանդիպման ժամանակ Նորին Սրբությանը նվիրեց ծանրամարտի աշխարհի առաջնության իր նվաճած ոսկե մեդալը՝ նշելով, որ իրեն երկրորդ անգամ է բախտ վիճակվում այսպիսի նվեր հանձնել, բանի որ առաջինը նվիրել էր երջանկալիշարակ Վազգեն Ա Կաթողիկոսին՝ Էջմիածնում:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրն իր օրհնության խոսքն ուղղեց ներկաներին, նախ անգլերեն ողջունելով բոլոր Եկեղեցիների ներկայացուցիչներին և պետական այրերին, ապա հայերենով շարունակեց. «Յանկևում եմ իմ գնահատանքը հայրենի Յուրի Մարգարյանին, որ իր նվաճած ոսկե մեդալը փոխանցեց Մեզ՝ որպես վկայություն սիրտ ու նվիրումի հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ինչպես նաև՝ հանդեպ Էջմիածին քաղաքը, որի բնակիչն է եղել նա, այնպեղ հասակ առել, մեծացել ու զարգացրել աստվածապարզն իր ընտրիները:

Մենք ուզում ենք Մեր գնահատանքի խոսքն ուղղել՝ եկեղեցական վարչությանը անդամներին, որոնք որ նախանձախնդրորեն կազմակերպեցին Մեր ընդունելությունը և Մեկրուտուն Մեր գրեմիայի օրերին ամեն ինչ ի գործ դրեցին, որպեսզի հաճելի ժամեր պարգևեն Մեզ այս քաղաքում և հայ համայնքի հարկից ներս: Մենք Մեր օրհնությունն ենք բերում և Մեր բարեմադթանքները, որ արգասաբեր դառնան իրենց ջանքերը եկեղեցական կյանքից ներս՝ այս համայնքի զավակների համախմբման և նրանց ընթացքը դեպի Եկեղեցի առաջնորդելու նվիրական գործում: Մենք աղոթքով հայցում ենք Տիրոջ գորակցությունը ձեզ՝ Սփյուռքի պալմաններում ոչ լյուրին այդ առաքելությունն իրականացնելու համար: Տերը ձեզ օգնական:

Մեր գնահատանքը կուզենայինք հայտնել տիկնանց համախմբումի անդամներին և եկեղեցական, ազգային, մշակութային, կրթական, մարզական ոլորտում իրենց ներդրումն ու ծառայությունը բերած բոլոր անձանց, որոնց ջանքերի շնորհիվ աշխույժ է այս համայնքը, շարունակում է ապրել հայաբույր կյանքով, շարունակում է պահպանել հայկական, ազգային իր դիմագիծը և ակնառու ներկայություն լինել այս քաղաքի մեջ՝ որպես հայ ազգությունը ներկայացնող մի ամբողջություն:

Թող Տերը օրհնի ձեզ և արդյունավորի, պողաբեր դարձնի ձեր ջանքերը, ինչպես նաև իրականություն դարձնի այն բոլոր ծրագրերը, որ ունեք և պիտի կյանքի կոչեք վարահաբար՝ սիրով ու նվիրումով, ազգային միաբանության հոգով: Տերն օրհնի ձեզ:

Մեր գնահատանքը Մեր սիրելի Սրբազանին և նրան աջակից բոլորաբան հոգևոր սպասավորներին, որոնք որ վառ են պահում ձեր հոգիներում հավատը, որպեսզի անսայթաք անցնեք կյանքի ձեր ուղին, որպեսզի Տիրոջ միախառնությունը միշտ ուղեկից լինի ձեզ, գոհության զգացումը միշտ ձեր հոգում լինի և նաև նրախությունը նրկնքում լինի՝ ձեր հայրերի մոտ, որ վերևից նայում են ձեզ՝ իրենց զավակներին, թե ինչպես են ապրում, ինչպես են գործում, ինչ նախանձախնդրություն են դրսևորում այն արժեքների նկատմամբ, որ կյանքով, որ քրտիկնքով ու արցունքով կերտել են նրանք և սրբազան ավանդ ու ժառանգություն թողել ձեզ՝ ներկա և գալիք սերնդի զավակներին: Տա՛ Սևրված, որ արժանի լինենք մշտապես ձեր հայրերի օրհնությանը:

Միդելի բարեպաշտ հայրդդինք:

Մեր անդրանիկ հովվապետական այցն է Մվսարալիայում հանգրվանած մեր ժողովրդի հարազատ զավակներին: Եղանք Միդելիում, ահա երկու օր է գրեմում ենք Մեկրուտն քաղաքում: Կորեցիներ հեռավոր այս ճանապարհը, որպեսզի Մայր Աթոռ Ս. Էջմիածնից օրհնություն բերենք և Նայրապետական Մեր պատգամը փոխանցենք ձեզ, որ շարունակեք ձեր բարի ընթացքը ազգային մեր արժեքների մեջ հարակալելով, այդ արժեքներով ապրելով, այդ արժեքները ձեր կյանքի ուղեկից դարձնելով:

Եկանք, որպեսզի նաև խանդավառենք, ուրախացնենք ձեզ՝ վկայություն բերելով մեր մայր երկրից, որ անկախ է ու ազատ, որ թոքափել է խորհրդային փարի-նների ծանր բեռը անհավատության և կաշկանդումի, հաճախ նաև՝ սարսափի ու մեջ ապշում էին ձեզանից շարերի հայրերը, որի մեջ ապրում էր Հայաստանի մեր ժողովուրդը, և որի պատմառով շատ հայրողիկներ զկարողացան փունդարմի ճանապարհն ընկերել, այլ իրենց հայացքն ու իրենց քայլերն ուղղեցին դեպի փայ-բեր երկրներ, այդ թվում նաև՝ Ավստրալիա:

Փառք և գոհություն Աստուծո, որ ամեն փեղ, ուր հայրողիկները մեկնեցին, հյուրընկալվեցին այդ երկրի ժողովուրդների ու պետությանց կողմից, և նրանց հնարավորություն ընձեռնեց ապրելու ազգային կյանքով՝ կառուցելու դպրոցներ, եկեղեցիներ, սրբեղծելու զանազան մշակութային կազմակերպություններ, ուղե-ցով հալ կյանքը շարունակվում է Սփյուռքում: Սակայն Սփյուռքը կենսունակ կի-նի, երբ մշտապես ունենա դեպի իրեն եկող ուժը՝ Հայրենիքի, ազատ ու անկախ ու-ժը մեր պետականության:

Նայում եմ ձեզ, և սիրտս ուռում է ուրախությունից: Այսօր հայոց պետական դրոշմ ծածանվում է Ավստրալիո պետական դրոշի կողքին: Որքան քանքեր են թափել մեր նախնիք, զրկանքներ կրել, աշյուն հեղել հայոց պետականության վե-րահասարակման ու պահպանության համար:

Եռարյուրն է վկան այն թանկ գնի, որ վճարեցինք մենք: Հազարավոր հայրող-յաց շիրիմներ են հանգում այդ բարձունքի վրա, յուրաքանչյուր շիրիմ Հայրենիքի մի ափ հող է որ պաշտպանվեց նրանց կյանքով, մի գյուղ է մի քաղաք, մի շեն: Այսօր նրանց կյանքով նվաճված այդ շենի, գյուղի պահպանությունը փրված է մեզ, մեզ՝ Հայաստանում ապրող հայրողիկներն ու Սփյուռքում ապրող հայրողիկնե-րիս, որովհետև ասացի և նորից եմ կրկնում՝ զկա Սփյուռքի հաղթանակությունն ս-ռանց Հայրենիքի: Հայ ապրեք մեկ սերունդ, երկու սերունդ, բայց նպատակ պետք է լինի ապրելու համար, տեսիլք պետք է լինի հայ մեալու համար:

Դարեր շարունակ մեր ժողովուրդը ապրել է կեղեքումների ու հալածանքի մեջ, բայց գոյատևել է շնորհիվ ազատ ու անկախ Հայրենիքի տեսիլքի, որը մեր ժո-ղովրդի հոգում ու նրա գիտակցության մեջ վառ է պահել Հայաստանյայց Առաքե-լական Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր Հայրապետներով: Այսօր մեր սերնդի ուսերին է ծանրացել պարտքը ազատ մեր Հայրենիքը նոր հազա-րամյակում դարձնելու հզոր, բարգավաճ ու բարօր: Արդյոք կլինեն այդքան զո-րեղ մեր ուսերը՝ կրելու այդ պարտքը:

Հայրենիքն այսօր տարբեր դժվարություններ ունի, ինչպես որ գիտեք ամենքդ: Չեզանից շարերն այսօր շարունակում են օգնել հայրենաբնակ իրենց քույրերին և եղբայրներին, ոմանք որբերին են հովանավորում, ուրիշներ տարբեր ծրա-գրներ են իրականացնում, ոմանք իրենց ազգականներին են կյութական օգնու-թյուն փոխանցում, որպեսզի կարողանան հոգսերը հոգալ, չհեռանան Հայաստա-նից, ապրեն նվիրական մեր սուրբ հողի վրա: Բայց ամենիս հանձնառու պիտի լինենք՝ հայրենակերպումի և ազգապահպանության մեր ուխտին հավատարիմ:

1997-1998 წლის აგვისტო-სექტემბერში, საქართველოს საგარეო საზღვრების დაცვის
 სამსახურის მეთაურის, გენერალ-ლეიტენანტის, პეტრე მელიქიძის ხელმძღვანელობით
 საქართველოს საგარეო საზღვრების დაცვის სამსახურის მეთაურის, გენერალ-ლეიტენანტის,



საქართველოს საგარეო საზღვრების დაცვის
 სამსახურის მეთაურის, გენერალ-ლეიტენანტის,



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԳԱՊՈՒՐՈՒՄ

Հայրենիքը կարիքն ունի յուրաքանչյուրիս աջակցության: Մեծ չէ մեր գոհողությունը համեմատած այն արյան հեղ, որ թափեցին մեր արի ներխուսաարդ զավակունք, համեմատած մեր ազատամարտիկների կյանքերի, որ ամփոփվեցին հայոց հողում, Արցախի հայոց սահմանների վրա: Նրանց տված կյանքի փոխարենն այսօր մենք մեր հնարավորությունները, մեր կարողությունները պիտի բերենք մեր Հայրենիքին՝ պահելու այն, հաևուն ինչի նրանք նահապետակվեցին, տեր լինելու իրականություն դարձած դարավոր նրազին մեր նախնյաց: Պիտի կարողանանք այս ոչ դյուրին, բայց պարտավոր ու փառավոր պարտավորությունը կրել մեր ուսերին ու տանել դեպի հաղթություն:

Մենք, որպես Հայրապետ Հայոց, տարակույս չունենք, որ արի ոգով, որ առ հայրենին սիրով, հավատով ու միաբանությամբ հաղթանակների նոր էջեր պիտի գրենք՝ արժանի ինչպես մեր նախնյաց, այնպես էլ զայիք սերունդների օրհնությանը: Չգրկեք մեր զավակներին մեզանով հպարտանալու զգացումից, ինչպես այսօր մենք ենք հպարտանում մեր հայրերի վաստակով, անձնագոհ կյանքով ու նվիրումով:

Եվս մեկ երկու օր, և պիտի մեկնենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին ու պիտի մշտապես աղոթենք ձեզ համար և Սփյուռքի Մեր բոլոր զավակների համար:

25 նոյեմբերի

Առավոտյան Նորին Սրբությունը հյուրանոցում հարցազրույց տվեց Ավստրալիայի ազգային ռադիոյի թղթակից Լին Կալլաքերին, որից հետո շքախմբով մեկնեց հանդիպման Վիկտորիայի նահանգապետ Իրիկին Սուրեյիի հետ: Վերջինիս ողբկցությամբ Նորին Սրբությունը շրջեց նահանգապետարանում: Վերջում, ի հիշատակ այս հանդիպման, փոխանակվեցին նվերներ:

Երեկոյան Նորին Սրբությունը հանդիպեց այդ օրերին նույնպես հովվապետական այցով Ավստրալիայում գտնվող Ղապի Եկեղեցու Շենուղա Գ Պատրիարքի հետ: Հանդիպելով Ս. Միքայել Եկեղեցու կամարների մտր, երկու Պատրիարքները շարականների հնչյունների ներքո մուտք գործեցին փաճար, ուր միասնական աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ երկու քույր Եկեղեցիների բարեկամական կապերի հաստատությունության և բարգավաճման համար:

Այա Նորին Սրբություն Շենուղա Պատրիարքը բարիգալստյան ողջույնի խոսք ասաց Վեհափառ Հայրապետին, որին հաջորդեց Նորին Սրբության անգլերենով ասված ողջույնի խոսքը:

«Ձերդ Սրբություն

Մենք ցանկանում ենք Մեր շնորհակալության խոսքն ուղղել Ձեզ և գոհաբանություն վերադառել առ Աստված, որ միևնույն ժամանակ միասնաբար, համանման առաքելությամբ գտնվում ենք Ավստրալիայում և Աստծո օրհնությամբ հանդիպեցինք միմյանց այստեղ: Մենք շատ ուրախ ենք, տեսնելով այստեղ Ղապի

Եկեղեցու բարձաստիճան հոգևորականությանը՝ Պարոյիարքի գլխավորությամբ: Այս պահին, կանգնած այստեղ, Ձերդ Սրբության կողքին, Մենք հիշում ենք այն գեղեցիկ օրերը, որ միասին անցկացրեցինք Կոստիրնում՝ այցելելով Ղափի եկեղեցիներ և վանքեր, տեսնելով հավատքը ձեր ժողովրդի զավակների, և նույնը տեսնում ենք այստեղ, թե Ձեր զավակներն ինչպես են կապված եկեղեցուն, և գոհությամբ ենք հայտնում Աստուծուն այս ամենի համար:

Աղոթում ենք Ձերդ Սրբության քաջատոգորության համար: Դուք մեծ առաջնորդ եք ձեր Եկեղեցու առաջնորդ, որ նվաճել է իր ժողովրդի սերն ու նվիրումը, և այդ սերն ու նվիրումը Ձեզ ուժ են տալիս շարունակ հովվապետական այցելել կաթարելու և բերելու Ձեր օրհնությունը Ձեր զավակներին, ուր էլ որ նրանք բնակվելիս լինեն: Ինչպես Դուք Ձեր ողջույնի խոսքում նշեցիք, մենք քույր Եկեղեցիներ ենք՝ մեկ հավատքով, և սա նշանակում է որ մենք ունենք նույն առաքելությունը: Ձեր կողքին այս պահին Մենք այն զգացումն ենք ապրում, որ կանգնած ենք մեր հավատալով ժողովրդի առջև: Մենք վստահ ենք, որ մեր ղափի քույրերն ու եղբայրները երջանիկ են՝ տեսնելով երկու եղբայր առաջնորդներին իրար հետ աղոթքի միասնականության մեջ:

Եվ վստահ ենք նաև, որ Աստված պիտի պարգևի Ձեզ հեռավորությունը՝ Զրիստոսավանդ ողջունով այցելելու մեր երկիր: Հայ հավատալովներն ուրախ պետք է լինեն ողջունելու Ձեզ ոչ միայն Ավստրալիայում կամ այլ երկրում, այլ հենց Հայաստանում: Բոլորս գիտենք, որ Ձերդ Սրբությունը մեծ փափագ ուներ մասնակցելու 1700-ամյակի տոնակատարություններին, բայց Միացյալ Նահանգներում սեպտեմբերի 11-ի ահաբեկության հանգամանքների բերումով Նորին Սրբությունը չկարողացավ լինել Հայաստանում և իր ներկայությամբ կիսել մեր մեծ տոնախմբության ուրախությունը:

Մենք միշտ սպասում ենք Ձեզ Հայաստանում: Այս պահին ցանկությունն ունենք այստեղից Ձեզ միանգամից Հայաստան տանելու, բայց գիտենք, որ առաքելություն ունենք այստեղ՝ Ավստրալիայում: Սակայն լիառիշտ է, որ Աստված պիտի հեռավորությունը տա մեզ հանդիպելու Հայաստան սուրբ երկրում:

Կրկին ու միշտ աղոթք ենք բարձրացնում առ Աստված Ձերդ Սրբության քաջատոգորության և կենաց արեւադարձության համար»:

Այս Հայրապետները նվերներ փոխանակեցին:

Հրաժեշտ տալով Շենտլա Պարոյիարքին, Նորին Սրբությունը մասնակցեց Էկումենիկ աղոթքի, օրին ներկա էին քույր Եկեղեցիների Մելքոնի համայնքների ներկայացուցիչները: Էկումենիկ արարողության ավարտին Նորին Սրբությունն իր օրհնության խոսքն օղբեց ներկաներին՝ ասելով.

«Միտելի բարեպաշտ հավատալովներ.

Մենք փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում այս պարգևի համար, որ հավաքել է մեզ միասին աղոթքի, զորացնելու մեր սերը միմյանց նկատ

մամբ և անդրադառնալու մեր սուրբ առաքելությանը, որը կարող է պտղաբեր ու արդյունավետ լինել միայն շնորհիվ այն ամուր եղբայրության, որ հաստատել է մեր մեզ մեր Տեղ Մուսու Զրիսպուս Իր Հայրությանը: Մենք Մեր գնահատանքն ենք բերում միջնկեղեցական կազմակերպությանը ղեկավար անձանց, պաշտոնեյությունը, որ մեզ համար կազմակերպեցին այս էկումենիկ աղոթքը»:

Այա Վեհափառ Հայրապետը կաթոլիկ այս եկեղեցուն եվրոպեց մի հայկական խաչքար: Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը ժողով գումարեց թեմական և եկեղեցական վարչությունների անդամների հետ, որի ընթացքում ծանոթացավ մեկուտեհայության առաջ ծառացած խնդիրներին, ինչպես նաև ակնկալվող ծրագրերին:

26 նոյեմբերի

Առավոտյան Նորին Սրբությունը, շքախմբի անդամների հետ և ընկերակցությամբ եկեղեցական խորհրդի անդամների, եղավ Մեղրուծի Կոնստանտին վայրերում, որից հետո մեկնեց Խանդիալու Վիկտորիա նահանգի վարչապետ դոկտ. Պիտեր Նոլինգվորդի հետ:

Երեկոյան Նորին Սրբությունն այցելեց Հայ Արվեստի թանգարան, ուր ծանոթացավ ներկայացվող գործերին, մասնակցեց հրաժեշտի երեկոյին և իր օրհնության խոսքն ուղղեց ներկաներին:

«Փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում այս պարզևի համար, որին արժանի եղանք որպես Հայրապետ Հայոց, հովվապետական Մեր անդրադարձնելի այցը կատարելու Ավստրալիա: Մենք շատ կարևորում ենք այս այցելությունը և հավատում ենք՝ նաև դուք, քանզի միմյանց ի մուրտ ճանաչելու առիթն ունեցանք: Դուք գիտե՞ք, որ Գարեգին Երկրորդ անունով Կաթողիկոս է ընտրվել, և ես էլ գիտե՞ի, որ Ավստրալիայում մեծ գաղութ ունենք: Եվ ահա, Աստծո կամքով և Աստծո շնորհով, եկանք ճանաչեցի՞ք մեզ, ճանաչեցի՞ք հայ գաղութը Սիդնեյում, Բանգկոկում, իսկ վաղը Սինգապուրում կլինենք:

Դուք էլ ճանաչեցի՞ք մեր Հովվապետին, հաղորդ դարձաք նրա մտածումներին, նրա իդանքին ու տեսիլքներին: Եվ այս ամենի համար վերստին և վերստին փառք Աստծո, գոհություն և փառք, որ առաքնորդում է մեզ դեպի միմյանց և հեռավորություն ընձեռնում հովվապետ և հոգի իրարու հետ լինելու, միմյանցով գոտեպնդվելու ու գործակալու:

Մենք քաջալեր ենք մեկնում Ավստրալիայից, ուժ առած այն գիտակցությամբ, որ այստեղ մեր Ժողովրդի զավակունք նախանձախնդիր են ազգային-եկեղեցական կյանքով ապրելու իրենց ձգտումի մեջ, հայրենական մեր ավանդներն ու ժառանգությունը պահպանելու համեմատության մեջ և, վստահ ենք, հայ գաղութը պիտի շարունակի այդպես ապրել:

Մի պարզամ ունենք մեզ փոխանցելու: Գիտենք, որ ամեն գաղութի մեջ լինում են տարածայնություններ, լինում են դժգոհություններ, նրկփնդկումներ: Այսօր

Մեզ համար մեծ ուրախություն էր, կողք կողքի նստած փեսանկի նկնդեցական վարչությունը, համայնքային կյանքի մեջ գործող մյուս բոլոր ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ որպես մեկ ընտանեքի անդամներ: Մնում է որ այս համախումբ լինելը իրական առոյունքներ բերի:

Համայնքը մի մարմին է մի ամբողջություն, որի անդամներն են վարչությունները: Աստվածաշնչյան ճշմարտությունն ասում է որ երբ Քարմնի Քր անդամը ցավում է այդ ցավը տարածվում է ողջ մարմնի մեջ: Երբ սաքը ցավում է մարդը միայն սաքի ցավը չէ որ զգում է այլ մարմնի բոլոր անդամները դառնում են կրողն այդ ցավի: Նույնը և ուրախությունը: Ուրեմն գաղութի մեջ մեկի ուրախությունը պետք է համակի բոլորին, և ցավը նույնպես՝ ամբողջ գաղութի ցավը պիտի դառնա:

Չկա իմ և ջո հաջողություն, կա միայն գաղութի հաջողություն: Եթե իմ և ջո հասկացությունը գոյություն ունի գաղութի մեջ, ապա այն երկար գոյություն ունենալ չի կարող: Ժամանակները ավերներ շատ են գործել ազգային մեր կյանքի մեջ, պետք է ձեռքազատվենք, պետք է սրբագրենք, պետք է կարողանանք վեր կանգնել հատվածական շահերից և ապրել մեր միասնության շահերով:

Այսօր ազատ ու անկախ Հայրենիք ունենք, փոխված են իրավիճակները, և հստակ է մեր ընդհանուր նպատակը՝ Հայրենիքը գորացնել և դարձնել շեն ու բարձր տունը յուրաքանչյուր հայրենի: Այսօր ավելի մեծ գերխնդիր չկա ոչ Եկեղեցու, ոչ յուրաքանչյուր հայի համար, որտեղ էլ ապրելիս լինի, եթե ինքն իրեն ընկալում է որպես անդամ հայ հավաքականության:

Ուրեմն այս գերնպատակի շուրջ համախմբված պիտի ապրենք ու գործենք՝ միշտ հիշելով, որ հաջողություն չի կարող լինել հատվածականության մեջ, միշտ հիշելով, որ եթե մարմնի մի հատվածը տկարացավ, տկար է մարմինն ամբողջությամբ: Այդպես է նաև համայնքային կյանքում, և իմ հորդորն ու պատգամն է որ աշխարհը համախումբ, աշխարհը միաբան ու միասնական, որ գաղութը ծաղկի իր բոլոր դրսևորումների մեջ:


27-28 նոյեմբերի

Նոյեմբերի 27-ի վաղ առավոտյան Նորին Սրբությունն ու նրան ուղեկցող շքախումբը, հայրապետական պատվիրակ Ադան արքեպս, Պալիոզյանի հետ, Մելիուտի միջազգային օդանավակայանից մեկնեցին Սինգապուր, ուր, երեկոյան, բարիգալստյան ընդունելություն կազմակերպվեց տեղի հայ համայնքի կողմից:

Նոյեմբերի 28-ին Նորին Սրբությունը Հայրապետական թափորով մուտք գործեց Սինգապուրի հայկական Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Օրվա պատարագիցն էր Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Միթագախանյանը: «Հայր մեր»-ից առաջ, ի գնահատություն համայնքային կյանքին իրենց բերած նպաստի և եկեղեցաշեն գործունեության, Վեհափառ Հայրապետը 1700-ամյակի պատվո շքանշանով պարգե-



ՀԱՅԿԱՊԵՏՈՍԱՆԵՐԸ 1700-ԱՄՈՑԱԿԻ ՊԱՏԵՄԸ ԸՔՐԱՆԱԾՈՒՄԻ ՆԱԽԵՐԱՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ ՏԻԿԻՆ ՍՈՐՈՑԱՆԻ ՓՈՐՈՑԻՆ



Գրող Նուբարյանը ընկալում է Մեծ Եղեռնի հիշատակը և Երևանի Կաթողիկոսի համար 1700-1701 թվականին խմբագրված «Երևանի Կաթողիկոսի համար» գիրքը:



վարդեց բանգկոկաբևակ Բոք Գևորգյանին և Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի հոգաբարձու Կիկին Սոնյա Զոնին:

Պատարագի ավարտին Նորին Սրբությունը անգլիերենով իր հայրապետական պատգամը Կվեգ Մինգապուրի հայությանը:

Երեկոյան Նորին Սրբությունը հրաժեշտի հանդիպում ունեցավ Կեղի հայ համայնքի ներս, որին ներկա էին նաև դիվանագիտական անձնակազմի ներկայացուցիչներ:

Հանդիպմանը Վեհափառ Հայրն իր օրհնության խոսքում ներկաներին ասաց.

«Գրքերի էջերից գիտե՛հե՛նք Ծայրագույն Արևելքում մեր նախնիների ձեռքեր-
բուռնների մասին, այն մեծ իրագործումների մասին, որ նրանք կատարել են այս
տարածաշրջանի տարրեր երկրներում և անուն, պատիվ ու փառք հասկնել մեր
ժողովրդին: Մենք եկանք, ականալուս եղանք մեր հայրերի կողմից կերտված
այդ փառավոր անցյալի հիշատակներին: Մխիթարությունը Մեր հոգում տեսանք
նաև, որ այդ հիշատակները տերեր ունեն, մեր ժողովրդի զավակները շարունակ-
կում են ապրել հոգևոր և ազգային կյանքով, հպարտանալ հայրենի ավանդնե-
րով:

Բանգկոկում Մեր առաջին հանդիպումներն իսկ հայրությանց հետ ոգևորեցին
Մեզ ու խանդավառեցին: Ավստրալիայում նույնպես տեսանք աշխույժով ապրող
հայ գաղթօջախներ, տեսանք սեր և նվիրում հանդես մեր Սուրբ Եկեղեցին, մեր
Հայրենիքն ու հայրենականը, տեսանք կարող Հայաստանի ու Մայր Աթոռ Ս. Էջ-
միածնի հանդես: Զաքարյուկեցիք տեսնելով հայոց հավատն ու նախանձա-
խնդրությունը, որով ապրում են և պիտի շարունակեն ապրեցնել հայությանը
Ծայրագույն Արևելքի երկրներում:

Մեր այս համոզումի վառ վկայությունն են հայկական եկեղեցիներն ու դպրոց-
ները: Հայրերավոր հայ մանուկներ իրենց մայրենի լեզուն են սովորում, իրենց
ազգային պատմությանը հաղորդ դառնում, ազգային իդեալին ու տեսիլքներին,
որ պիտի դառնան նրանց կյանքի մասը:

Առանձնակի մխիթարություն և ուրախություն է Մեզ համար գրելել Մինգա-
պուր քաղաքում, որը պեւրք է ասել, որ անցնող տարում բավականին անընդ-
յուն է պարմառել Մեզ, քանզի մերափախություն ունե՛հե՛նք, որ մեր հայրերի ազնիվ
վաստակով ու զոհողությամբ կառուցված այս եկեղեցին կարող ենք կորցնել՝ մե-
ղակնելով նրանց հիշատակի առջև:

Փառք Աստծո, որ գրելվեցին ազնիվ հայրորդիներ, որոնց շնորհիվ շարունակ-
վում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով օծված Մինգապուրի հայոց եկեղեցու
պատմությունը: Փառք բոլոր այն անձանց, ովքեր գիտեն սուրբ նշխարի պես պա-
հել ժառանգությունը մեր հայրերի: Այսօր հավատում ենք, որ կանգնած ենք մեր
հայրերի օրհնության ներքո:

Արդարև, շատ սիրելի Բոք-Նորայր Գևորգյանի գլխավորությամբ Մինգապու-
րի հայությունը մեր նախկյաց օրհնությանն արժանի ծառայություն է մատուցել
Հայ Եկեղեցուն ու ժողովրդին: Գիտենք, որ Տիար Գևորգյանին այսպեղ օժանդա-
կել են շատ ու շատ անձեր թող Աստված օրհնի ձեզ: Եվ թող որ բոլորս կարողա-

նանք մեր կյանքը օրինյալ դարձնել Աստուծոյ համար գործնելով. հիշատակության արժանի գործերով:

«Անրապին իմ գնահատականն ու իմ օրհնությունը ձեզ ամենքիդ»:

Նորին Սրբությունը հանդիպման ավարտին նվերներ հանձնեց ներկաներին, ինչպես նաև եկեղեցուն նվիրեց Մայր Աթոռի պատկերով մարմարյա մի քանդակ. որպեսզի այն ազուցվի և կենդեցու որմին:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը տեղական եեռուստապոստոսության համար եարցազրույց տվեց մամուլ ներկայացուցիչներին, որի ընթացքում հանգամանորեն մանրամասնեց իր կատարած հովվապետական այցելությունը:

Այնուհետև հայրապետական շքախումբն ուղևորվեց օդանավակայան՝ վերադառնալու Մայր Հայրենիք, Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Որպես վերջաբան հայրապետական ուղևորության մեր այս նկարագրության, ուզում ենք մեջքերել ավստրալահայ մամուլում տեղ գտած և գաղթօջախի, կարծում ենք, յուրաքանչյուր անդամի մտածումն ու Նորին Սրբությունից ստացած տպավորությունը արտահայտող բազմաթիվ հոդվածներից հետևյալ հատվածը. «Վեհափառ Հայրապետն իր վեհութեամբ խոնարհ է ու սիրալիր: Ամենուն հետ կը խօսեր ու ամենուն կը ժպտեր: Դեմքին վրայ ժպիտը անպակաս է: Իր նայուածքին ու իր ժպիտին մէջ «գաղտնի ճամբա մը ունի», որ քեզ դէպի Աստուած կը տանի: Ու իր ժպիտին մէջէն Աստուած կը տեսնես իր լիութեանը մէջ: Դիւրահաղորդ եւ հեզահամբոյր: Ամենազաւի ու հասակի հետ հաղորդակից: Մանուկին հետ կը մանկանայ, երիտասարդին հետ կ'երիտասարդանայ ու մեծերուն հետ իր վեհութեանը մէջ կը մնայ, բայց միշտ պահելով հեզամտութիւնը: Այս է մեր Սիրելի Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Հայրապետը՝ Ամենայն Հայոցը: Այդպէս է ան, ու այդպէս ալ կը մնայ:

Պահը հնչեց մեկնումի: Եկաւ Հայրապետը մեր մէջ, եկաւ ու իրեն հետ բերաւ մեր գուարթ երգը մեր շրթներուն: Ու նայուածքները մեր արդ, մեկնումի պահուն, դարձած են մշմէկ աղօթքի մոմ մը լուսաւոր, որ կ'արցունքուի խառն զգացումներով: Երանութեան զգացումներով, որովհետեւ Աստրալահայութիւնը տեսաւ իր Օծնալ Ամենայն Հայոց Հայրապետը, ու իրեն հետ ապրեցաւ երանութիւնով մը անսահման, ու իր աչքերուն մէջ պահեց իր սիրելի պատկերը: Իսկ յուզումի արցունքները, որովհետեւ կը մեկնի մեր Հայրապետը՝ Վաղարշապատի Ամենայն Հայոցը, բայց մեզի կը թողու իր խաղաղութիւնը Նորին Սրբութեան:

ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՍԱՎԻ ԹՅՈՒՖԵՆ-ՔՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՄԵԾԱԶՆԻՒՄ ՏԻԿԻՆ ՍԱՎԻ ԹԻՖԵՆ-ՔԵԱՆ,
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ**

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանից տեղեկացանք, որ ԱՄՆ Կառավարութեան կողմից արժանացել էք պետական բարձր գնահատանքի՝ Էլիս Այլընտի պարգևի: Ուրախալի այս առիթով Հայրական սիրոյ ջերմ զգացումներով ողջունում ենք Ձեզ եւ համագգային մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ բարեմաղթանքները:

Միրելի Տիկին Սավի Թիֆեքեան, անձնապէս ճանաչում ենք Ձեզ եւ արդէն իսկ բազում անգամներ առիթ ենք ունեցել դրուարանքով անդրադառնալու հայրենանուէր Ձեր ընթացքին, որ պատուարժան հայուհուդ ճանաչում ու բարի անուն է բերում ինչպէս Միացեալ Նահագնեւորում, այնպէս եւ Մայր Հայրենիքում:

Արդարեւ, քաջալերութիւն է Ձեզ պէս հայորդիներ ունենալ Միածնաւէջ Մայր Աթոռի կողքին, միշտ պատրաստակամ՝ առաքածնոն ազնիւ ներդրումներով օգտաշատ ու աստուածախաճոյ ծառայութիւններ մատուցելու եւ աջակցելու Հայ Եկեղեցու տիրաւանդ առաքելութեան իրականացմանը: Ձեր եւ Ձեր ամուսնու անունները արժանիօրէն քանդակուած են Վեհարանի սիւներին արձանագրուած Մայր Եկեղեցու բարերարների անուանաշարքում, որով սերունդներ պիտի յիշեն Ձեր բարի գործերը եւ խաեղավառուեն ազգասիրական, հայրենասիրական ու բարեգործական Ձեր ոգով:

Միրելի Տիկին Սավի Թիֆլեցեան, ամենաբարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմադիր ծառայութիւնները մեր Մույր Եկեղեցուն, հայրապետական սյուտ Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ արժանիօրէն վաստակեալ խորին յարգանքով ու հեղինակութեամբ Հօռք պիտի շարունակէք Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը մեր Սուրբ Եկեղեցուն, հայրենիքին ու ժողովրդին:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւադարձութիւն, զործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լնդուք ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրինեալ ի Մենջ ամէն:

Օրինութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուտ Կոնդակս ի 6-ն Նոյեմբերի

յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 120

**ՓԱՐԵՔԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՐ ՍԵՐՓԵՅ ԿԱԶԱՐՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐՔԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵՄՆ ԵՒ ՔՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍԵՐՓԵՅ ԿԱԶԱՐԵՄՆ,
ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ,
ՌՈՒՄԱՍՏԱՄԵՆԻ ԴԱՇՆՈՒԹԻՒՆ**

Մեծարգոյ պրն Կազարեան,

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով ողջունում ենք Ձեզ եւ բերում Հայրապետական Մեր օրհնութիւնը՝ գոհութեան աղօթք բարձրացնելով առ Աստուած, որ հնարաւորութիւն է պարգեւում Մեզ բարձր գնահատանքի արժանացնելու Առաքելական մեր Մայր Եկեղեցու ու հարազատ ժողովրդի հանդէպ տաճած սէրը գործերով վկայած յարգարժան հայորդուդ:

Ուրախ ենք հասարակական կեանքում արձանագրած Ձեր յաջողութիւններով եւ գոհունակութեամբ ականատես Ձեր որդիական սիրտին ու ծառայասիրական պատրաստականութեանը՝ հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը:

Ահաւասիկ, փառաբանական աղօթքը Մեր շուրթերին, կատարեցինք օծումը Ձեր բարիբաղնայեանք ծնունդ առած Սուրբ Գևորգ շքեղակառոյց եկեղեցու, որը այսուհետ իր դռները պիտի բացի Մարմարաշէն գիւղի բարեպաշտ մեր զաւակների առջեւ՝ սքանչելի սուրբ զօրավարի բարեխօսութեամբ աստուածային օրհնութիւն սփռելով նուիրական մեր հողին: Արդարեւ, երանելալ էք Դուք, քակի Ձեր անուան դիմաց այլեւս արձանագրուած է եկեղեցաշէն բարեգործի պատուաւոր կոչումը, եւ սերունդները պիտի յիշեն Ձեր աստուածահաճոյ գործերն ու աղօթեն Ձեզ համար:

Մեծարգոյ պրն Կազարեան, եկեղեցանուէր Ձեր գործունէութեան ու վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պատրույ բարձրագոյն շքանշանը:

Մրդաբուխ աղօթքով հայցում ենք, որ Ամենակալ Աստուած Իր հանապազ օրհնութեան ներքոյ պսակի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը եւ գորավիզ լինի Ձեզ բարի ու հայրենաւուէր բոլոր իրագործումներում պարգեւելով երկնաւոր բիր բարիքներ եւ յարանորոգ յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի Սուրբ Գեորգ եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առաքապէս շնորհազարդի Եկեղեցու նուիրեալներին ու բոլոր հաւաքացեալներին:

Շնորհք Տառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեւեալ ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուալ Կոնդակս ի 4-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 119

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՆԻԿԵԱՆԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱԲԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՒՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՆԻԿԵԱՆ, ՈՐ ՅԱԹԷՆՔ, ՅՈՒՆԱՍՏԱՆ

Համայն հայութեան սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ տածած Ձեր անկեղծ սիրոյ ու նուիրումի համար, որոնց մասին գոհունակութեամբ տեղեկացանք Յունաստանի հայոց թեմի առաջնորդ եւ Հայրապետական Պատուիրակ Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքեանից:

Յարգարժան պրն Մանիկեան, ուրախութիւն է Մեզ համար, որ անձնական նախաձեռնութեամբ ու հովանաւորութեամբ Ձեր հողատարածքում եկեղեցի կառուցելու ազնիւ ու աստուածահաճոյ քայլ էք իրականացրել, որը, ընդ իշխանութեան Յունաստանի հայոց թեմի, պիտի ծառայի յունահայ բարեպաշտ գաղութին:

Արդարեւ, ինչն է առաել վսեմ եւ առաքինի, քան եկեղեցու կառուցումը, որի սրբազան կամարների ներքոյ սերունդներ պիտի մէկտեղեն իրենց աղօթքն առ Աստուած, պիտի հաղորդուն սրբազան խորհուրդներին եւ արժանանան երկնապարգեւ բիր շնորհների եւ պիտի զօրացեն հաւատարմութիւնը հայրենեաց աւանդներին, սերը առ Առաքելական մեր Մայր Եկեղեցին եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն եւ սիրով ընդառաջելով բարեջան ձեր առաջնորդ Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքեանի ազնիւ խնդրանքին, շնորհում ենք Ձեզ

Գ Ի Ր Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն:

Վստահ ենք, որ Մայր Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի հանդէպ Ձեր որդիական զգացումները պիտի շարունակուեն արդիւնատուել աստուածահաճոյ ձեռնարկներով՝ ի զօրացումն համազգային մեր կեանքի:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լիարժեք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգոյն եւ յաւեր օրինեալ ի Մենջ ամէն:

Օրենութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուալ Գիրս Օրենութեան ի 16-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 312

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՆԱՓԱՌ ՆԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՆՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄԱՆՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Խոր ցավով փնդեկացանք մեր ժողովրդի արժանավոր զավակ, մեծանուն գրող Նրանք Մաթևոսյանի անժամանակ մահվան մասին:

Նանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի, ծանր կորստի այս պահին վշտացյալ Մեր հոգու անկեղծ ցավակցություններն ենք բերում Մաթևոսյան սգակիր ընտանիքին, ննջեցյալի բոլոր հարազատներին և մեր ժողովրդի բարեպաշտ զավակներին:

Վաստակյալ մտավորական և հայրենասեր հայորդի Նրանք Մաթևոսյանը գրական իր վաստակով հավելեց փառքը մեր ժողովրդի՝ անթառամ հիշատակ թողնելով հայորդյաց հոգիներում:

Աղոթում ենք, որ Ամենողորմ Տերն Իր բարեգթությամբ նրկևային լուսեղեն հարկերում հանգստություն պարգևի ննջեցյալի հոգուն և մխիթարության ու սփոփանքի բյուր շնորհներ՝ ննջեցյալի այրուն, զավակներին ու մերձավորներին:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամէն»:

Վշտակից և աղոթարար՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ**

Ս. Էջմիածին,
19 դեկտեմբերի 2002 թ.

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՆՔԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՏԻԳՐԱՆ ՆԱՂԴԱՅԱՆԻ ՄԱՆՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՍԳԱԿԻՐ ՆԱՂԴԱՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Խոր ցավ և վրդովմունք ապրեցինք՝ տեղեկանալով Հայաստանի Հանրային Հնոստարա-
նադիտընկերության խորհրդի նախագահ, եռանդաշատ ու կարող լրագրող Տիգրան Նաղ-
դայանի եղբրական մահվան մասին: Ահավոր ոճրագործությամբ խռովված է մեր ժողո-
վրդի հոգին:

Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնի միաբանության և բարեպաշտ հավատացելոց՝ Մեր անկեղծ ցավակցու-
թյունն ենք բերում հանգուցյալի սգազյալ ընտանիքին, հարազատներին ու գործընկերներին
և դադապարտում չարագործ այս բռնաբարքը:

Հայրապետիս աղոթքն է առ Բարձրյալն Աստված, որ Տերը խաղաղության ու սիրո մեջ
պահի ժողովրդին և Իր գթառար ողորմածությամբ երկեային երանական բարձունքներում
լույսերի մեջ ընդունի ննջեցյալի հոգին: Թող Աստվածային Սուրբ Հոգին մխիթարիչ շնորհ-
ներով սփռի Նաղդայան վշտակիր ընտանիքի անդամներին:

«Յիշեսցէ Տէր զեղի նորոգ հանգուցելոյն եւ հանգուցէ զնա ի լոյս երեսաց Աստուածու-
թեան Իրոյ, ամէն»:

Աղոթքով և վշտակցությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

29 դեկտեմբերի 2002 թ.

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Նոյեմբերի 1-2-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

Մասնավոր ուշադրությամբ քննության ամսվեց Սուրբ Էջմիածնի 1700-ամյակի տոնակատարությունների ծրագիրը: Ժողովի անդամները բարձր գնահատեցին խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի ավելնապետությամբ գործող 1700-ամյակի տոնակատարության կազմակերպման հանձնախմբի գործունեությունը՝ թելադրելով ծրագրված հանդիսությունների ու միջոցառումների ժամանակացույցը ներկայացնել ԳՀԽ հաջորդ նիստին: Տոնակատարությունների շրջանակներում նախատեսված են ուխտագնացություններ, երիտասարդական և թեմական ներկայացուցչական հավաքներ, Ս. Էջմիածնին նվիրված գիտաժողովներ, հրապարակություններ և այլն:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը քննարկեց նաև եկեղեցական կյանքի վերակազմակերպմանը վերաբերող հարցեր: Խորհրդի անդամները Մայր Աթոռի առաքելության արդյունավետության բարձրացման համարեքստում կարևորեցին ընդլայնումն ու վերաշխուժացումը իրականացվող աշխատանքների՝ ծխական համայնքների կազմավորման, եկեղեցական նոր սերնդի պատրաստության, համայնքներում հայորդյաց տների համակարգի ստեղծման, եկեղեցական շինարարության, սոցիալական ծրագրերի իրականացման և այլ ոլորտներում:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ լսեց նաև նիստին հրավիրված «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրեն պրն Վահան Տեր-Ղևոնդյանի զեկույցը, որում հանգամանալից ներկայացվեց հիմնադրամի գործունեությունը: Ժողովականները մեծապես գնահատելով կարևորեցին իրականացվող աշխատանքները և վերահաստատեցին հիմնադրամի հայրենաշեն առաքելությանը աջակցելու իրենց պարտականությունը:

Ժողովում քննարկվեցին նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վարչակազմակերպական կյանքին առնչվող խնդիրներ: Տեղեկացվեց նաև Նորին Սրբությանն յեմբերի 10-28-ը Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմ կաթարելիք հովվապետական այցի մասին:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները նիստի ավարտին կանխավ իրենց շնորհավորանքներն ու բարեմաղթանքները հղեցին Նորին Սրբությանը՝ գահակալության երրորդ տարեդարձի առիթով:

Նիստը փակվեց գոհաբանական աղոթքով:

**ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՄՄԿԱՐԳ**

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ԳՈՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՈՒՔ

Դեկտեմբերի 9-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հանդիսապետությամբ, կատարվեց գոհաբանական աղոթք՝ մասնակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան հայրերի: Արարողությանը ներկա էին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու բարերարներն փարք Նորայր Տեր-Պետրոսյանը և Սարգսյան Խոսեֆյանը:

Արարողության ավարտից հետո Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց ազգային բարերարներին հավատարմորեն ժողովրդի անունից՝ ի մասնավորի նշելով. «Վերջսփին ձեր սիրտ, գնահատանքի թարգմանը ուզում եմ դառնալ և ձեր սրտի երախտագիտության անկեղծ զգացումները փոխանցել մեր բարերարներին՝ աղոթքով հանդերձ իրենց կյանքի արևադարձային և իրենց գործող հաջողության համար: Թող Աստված առաջնորդի նրանց դեպի Բարին, գեղեցիկը, դեպի ազնիվն ու ճշմարիտը, որպեսզի այս արժեքներով ծաղկի կյանքը իրենց ընտանեկան, գործնական կյանքը մեր հայրենական և պայծառանա եկեղեցին Հայաստանյայց»:

Արարողությունից հետո եկեղեցական թափոնն ուղղվեց դեպի Ս. Աշխեն թագուհու մատուցված տներ և տիկին Տեր-Պետրոսյանների բարերարությամբ: Մատուցում կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ազգային բարերարների ընտանիքների ննջեցյալների հոգիների հանգստության համար:

**ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՄԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

ՀԱՂՈՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹՅՈՒՆԻՑ

ԻՍՐԱՅԷԼԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԶԱՅՆ ԱԾ Է ՀՐԱԺԱՐԻՆ ՊԱՐՈՆ ՏԷՐ ԿԱԼՈՒԱԾԸ ԲՈՒՆԱԳՐԱԲԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹԵՆԷՆ

Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի և Իսրայելի Պաշտպանության նախարարության միջև պնդի ունեցած երկար բանակցությունները յեկոյ, Իսրայելի Պաշտպանության նախարարությունը համաձայնած է հրաժարի Պարոն ՏԷՐի Կալուածը բռնագրաւելու իր մտադրութենէն, Երուսաղեմի և Բեթղեհեմի միջև ապահովութեան պայտ մը շինելու նպատակին համար:

Պարոն ՏԷՐի կալուածը ունի մօտ 143 րունում (36 acres) հնագիտական հողատարածք, որու մէջ կան 1600 ձիթենիի ծառեր և սրտերկրեայ հին աղօթարաններ և գերեզմաններ: Պարոն ՏԷՐի կալուածը դարեր շարունակ Հայոց Պատրիարքարանին համար եղած է բարեպաշտական և ճգնողական բնոյթի կեդրոն մը:

Մայիս 2002-ին, Իսրայելի պետութիւնը յայտարարեց, թէ կը ծրագրէ կառուցել ապահովութեան պատ մը Երուսաղեմի և Այդա գաղթականայանի միջև, որ կը զտնուի Բեթղեհեմ քաղաքի հիւսիսը, ապահովութեան համար զանազան արգելքներէ բաղկացող պատ մը որ պիտի բաժնէ Պարոն ՏԷՐի կալուածը երկուքի, վերածելով այն անպէտ հողամասերու:

Երկար բանակցութիւններէ ետք, Իսրայելի պետութիւնը համաձայնեցաւ պնդափոխել ապահովութեան պատի ուղղութիւնը, և Պարոն ՏԷՐի կալուածը ետ տրուեցաւ Հայոց Պատրիարքարանին, բացի նեղ հողաշերտէ մը որ պիտի անցնի Պարոն ՏԷՐի կալուածին հարաւային պարսպի եզերքէն, ապահովութեան և պաշտպանութեան նպատակներու ժամանակաւոր գործածութեան համար:

Իսրայելի պետութիւնը ճանչցած է Հայ Պատրիարքարանի բացարձակ իրաւունքը Պարոն ՏԷՐի կալուածէն ներս ունենալու ազատ մուտք: Պատրիարքարանը իրաւաստու է բնակութիւն հաստատել, հողը մշակել, ձիթենիի ծառերը յօտել, ուխտագնացութիւն և կրօնական արարողութիւններ կազմակերպել առանց արգելքի:

Իսրայելի պետութիւնը նաև համաձայնած է Հայ Պատրիարքարանը հատուցել կաւարուած բոլոր վնասներուն համար:

Պատրիարքարանս իր գնահատանքը և շնորհակալութիւնը կը յայտնէ, ի մասնաւորի Հայրենի պետութեան Արտաքին գործոց նախարարութեան, Նուիրապետական Աթոռներու գահակալներուն, թեմակալ առաջնորդներուն, և հայ և ոչ-հայ կազմակերպութեանց, ինչպէս նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի թելադրանքով իրենց ներդրումը բերած Հռոմի Սրբազան Քահանայապետ Թովհաննէս-Պօղոս Բ. Պապին, Ընդհանուր Ռուսիոյ Ալեքսի Բ. Սրբազան Պատրիարքին և կրօնապետներուն Պարոն ՏԷՐի հարցին հետ կապուած օժանդակութեան համար:

**ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ
ԿԱԼՈՒԱԾՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

ՔԱՐՈՉ ԽՈՍՄԱԿԱՆ

Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՊԱՐՄԱՄԵԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՕՍՈՒՄԾ Ս. ԷԶՄԻԱՄԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (3 Նոյեմբերի 2002 թ.)

*«Չկայ ծածուկ բան մը, որ չյայտնուի եւ ոչ ալ գաղտնի բան մը,
որ չգիտցուի եւ ի յայտ չգայ» (Ղուկ. ԺԲ. 2):*

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի այս խօսքը, ամուսնացած աշխարհային ճաշու Ամբարշտանէն, անգամ մը եւս կու գայ մեզի յիշեցնելու աստուածային գոյութեան, իրականութեան եւ ճշմարտութեան այդ հասկացողութիւնը մեր կեանքէն ներս իբրեւ մարդ արարածներ:

Հաւաքացեալին համար Աստուած վարագոյրին ելլելու ծածկուած էութիւն մը չէ եւ ճշմարիտ ըլլալը գաղտնի բան մը չէ: Մինչ անաստուածը կը մերժէ ընդունիլ Աստուածութեան իրականութիւնը, իսկ գնոսորդը կ'ուրանա զԱյն՝ փաստելով, որ չի գիտեր, հաւաքացեալը, ճշմարիտ հաւաքացեալը կ'ընդունի Անոր բացարձակապէս ճշմարիտ եւ իրական ըլլալը:

Քրիստոս՝ մեր Տէրը, կը նմանցնէ Աստուածութեան իրականութիւնը աշխարհակի վրայ դրուած վառուղ մոմի մը եւ բոլորին համար վառուղ այդ մոմը տեսանելի է: Մարդ կամ պէտք է կոյր ըլլայ եւ կամ ալ միանգամայն իրականութիւնը եւ ճշմարտութիւնը մերժող անձ մը պէտք է ըլլայ՝ ըսելու համար, թէ ինքը աշխարհակի վրայ վառուած մոմը չի տեսներ եւ այդ մոմը իրեն համար անտեսանելի է:

Մարդկութեան պարմութեան ընթացքին Աստուած մէկէ աւելի անգամներ պատեհութիւն տուած է մարդկութեան, որպէսզի մարդ արարածը տեսնէ, զգայ Աստուծոյ ներկայութիւնը իր կեանքէն ներս, ինչպէս աշխարհակի վրայ վառուղ մոմը կը տեսնուի կոյր չեղող անձի մը կամ անհատի մը կողմէ: Տիեզերքի Արարիչը մարդկութեան նախահայրերուն՝ Նահապետներուն եւ Հին Կտակարանի սրբազան անձնատուութիւններուն, ինչպէս նաեւ մարգարէներուն միջոցաւ յաճախ յայտնած է ինքզինքը, բայց երբեմն մարդ արարածը աստուածային այդ յայտնութիւնը իր ազատ կամքի միջոցաւ չէ կրցած ընդունիլ կամ չէ կրցած տեսնել:

2000 տարիներ առաջ Աստուած Ինքը Իր Միածին Որդիին՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ յայտնուեցաւ, եղաւ մեզ հետ, ապրեցաւ մեզ հետ՝ ցոյց տալու համար անգամ մը եւս, թէ Աստուած մեզ հետ է, թէ մեզմէ ամէն մէկը աստուածային պարկերի նման ստեղծուած է եւ այդ պարկերը մեզմէ կը սպասուի իբրեւ անհատներ, իբրեւ մարդ արարածներ պահել եւ պաշտպանել կամ աւելի ճիշդը՝ Աստուծոյ ներկայութիւնը, Աստուծոյ պարկերը մեր մէջը վերականգնանալով: Լոյսը, ճրագը տեսանելի դարձնել մեր կեանքէն ներս, մեր առօրեայ կեանքէն ներս:

Աստուածային յայտնութեան այդ ճշմարտութիւնը դարեր շարունակ մարդը փնտրած է եւ ահաւասիկ Քրիստոսի ներկայութեամբ կը զգար եւ կը տեսնէր, թէ Աստուած հեռու ապրող, հեռուն գնալով վարագոյրիկն ելրեւ պահուած ճշմարտութիւն չէ, Աստուած այստեղ է, այս պահուն մեզ հետ է, միշտ մեզ հետ է, երբ մենք մարդ տարածներս կը զգանք Իր ներկայութիւնը, կ'ապրինք Իր ներկայութիւնը մեր կեանքէն ներս իբրեւ անհատներ, իբրեւ հաւաքականութիւն, իբրեւ ազգ, իբրեւ ժողովուրդ:

Ղեպի լոյս շարժեցան մեր հայրերը, հայ ժողովուրդի գաւակները: 1700 տարիներ առաջ երբ մեր ժողովուրդի գաւակները ընտրեցին լոյսի ճանապարհը եւ, փառք Աստուծոյ, 1700 տարիներ շարունակ հայ ժողովուրդը, հայը այդ լոյսի ճանապարհին վրայ շարունակեց իր երթը՝ հակառակ մեր պարսութեան ելեւեջներուն, հակառակ դժուարութիւններուն, հակառակ խաչելութիւններուն եւ գողգոթաներուն, եղեռներուն:

Մեր ժողովուրդը՝ հայ ժողովուրդը, միշտ լոյսի ճանապարհի վրայ քայելով, դէպի լոյսը, դէպի Աստուած եւ դէպի յաւիտեականութիւն քայլեց: Այդ ճանապարհը՝ դէպի լոյս տանող մեր հայրերու ճանապարհը, դէպի կեանք տանող, քայլեցին նաեւ կարգ մը հայրենաբնակ երիտասարդներ եւ ի մասնաւորի անցնող այն օրերուն, երբ մեր Հայրենիքի մէջ կրօնքը եթէ ոչ հալածանքի, գէշ արհամարհանքի առարկա էր մեր կեանքէն ներս:

Այդ երիտասարդներէն ոմանք արժանի գտնուեցան հասկնալու Եկեղեցու վերաբնօշտութեան պաշտօնը եւ երեք տարիներ առաջ անոնցմէն՝ այդ երիտասարդներէն լոյսը տեսնող, լոյսի ճանապարհին վրայ հաւաքարիմ ընթացող այդ երիտասարդներէն ամենէն արժանաւորը բարձրացաւ Լուսատուքի գահին վրայ, երբ աշխարհի ամեն կողմերէ հաւաքուած Հայաստանեայց Եկեղեցոյ պատգամատուներ ազգային-եկեղեցական ժողովի ընթացքին իրենց ծայններով ընտրեցին ազգիս Ամենայն Հայոց Հայրապետը, Հովվապետը ազգիս հայոց:

Եւ այսօր, սիրելիներ, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, ի Հայաստան եւ ի Սփիւս աշխարհի, կը փոխախմբէ Մուրք Գրիգոր Լուսատուքի 132-րդ յաջորդի գահակալութեան երրորդ տարեդարձը: Այո՛, ճիշդ երեք տարիներ առաջ նորընտրի Հայրապետը Ամենայն Հայոց Իջման այս Սեղանի առջեւ Իր ուխտը դէպի Աստուած, դէպի Լոյս, դէպի ճշմարտութիւն, դէպի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Սրբազան Աւանդութիւն եւ հայ ժողովուրդի բոլոր նւիրական արժեքները՝ իր ուխտը վերանորոգեց իբրեւ ամենաբարձր սպասաւորը՝ Հայրապետը Ամենայն Հայոց: Եւ, ահաւասիկ, այդ շատ կարճ ժամանակամիջոցին արդեն մեր երիտասարդ եւ կորովի Հայրապետը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ, Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոսը Ամենայն Հայոց, իր ժրաջան գործունեութեամբ հանդէս կու գայ հարուստ արդիւնքներով: Որոնք զարմանալի են մանաւանդ այս օրերուն, երբ մեր Հայրենիքը նիւթական տնտեսական նոր սկսած է ոտքի կենալ:

Մենք կ'ուզենք այստեղ անդրադառնալ միայն մի քանի օրինակների այդ շատ երկարատեւ շարքէն, որ Վեհափառ Հայրապետը անցնող երեք տարիներու ընթացքին իր առաջնորդութեամբ, իր հայրապետութեամբ կարողացաւ իրագործել հայ ժողովուրդի, Հայ Եկեղեցոյ կեանքէն ներս: Այդ գործունեութիւնները կը կատարուին առանց թմբկի եւ շեփորի, հանդարտութեամբ եւ յաճախ առանց շոնդալից յայտարարութիւններու:

Անցնող երեք տարիներու ընթացքին արտասահմանի զանազան երկիրներէն, Հայրենիքի զանազան շրջաններէն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եկող ուխտաւորներ ականաւորես կ'ըլլան բազում շինարարական աշխատանքներու, որոնք կը կատարուին Մայր Աթոռէն ներս, Մայր Աթոռի շուրջ եւ ամբողջ Հայաստանի տարածքին:

Վեհափառ Հայրապետը արդեն քանի տարածարներ, տար եկեղեցիներ օծեց եւ դեռ քանի՜ ու քանի՜ տար տաճարներ պիտի օծէ եւ կամ հին՝ վերաբացուող տաճարներու իր օրհնութիւնը պիտի շնորհէ: Այս ամբողջը ցոյց կ'ուրայ վերանորոգումը Հայ Եկեղեցւոյ կեանքէն ներս:

Անցնող դարը՝ 20-րդ դարը, ընդհանրապէս աշխարհի եւ ի մասնաւորի հայ ժողովուրդի համար եղաւ դժուարին դար մը եւ կամ եղանիսկ, կրնանք ըսել, սեւ ամպերով ծածկուող, եղիտներով եւ փառապանքներով լեցուն դար մը, եւ մենք գիտենք, թէ 20-րդ դարու ընթացքին մեր Հայ Եկեղեցւոյ հոգեւորականութեան 100-էն աւելի քան 98-ը նահապետկութեան, նահապետկութեան եղեռնի ընթացքին, նահապետկութեան սովեւորական օրերուն անաստորածներու ծնոցերով: Եւ այսպէս, աւելի քան 6000 հայ հոգեւորականներ իրենց կեանքը զոհեցին հայոց հաւաքին համար, Հայ Եկեղեցիին համար եւ Հայ Եկեղեցւոյ Մայրը հանդիսացող այս սքանչելի հաստատութեան՝ Սուրբ Էջմիածնայ համար:

Եւ ահաւասիկ մեր ժողովուրդը Հայաստանի զանազան շրջաններու մէջ, արտասահմանի ամբողջ տարածքին կարօքը ունի եւ կարօքը ունի հոգեւոր առաջնորդութեան: Վեհափառ Հայրապետի գլխատրութեամբ, իր իմաստուն առաջնորդութեամբ մենք կը տեսնենք, թէ անցնող երեք տարիներու ընթացքին երիտասարդներու հոյ մը կու գայ ուխտելու եւ դառնալու գինուորեալ միաբաններ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ եւ այս Սուրբ Աթոռին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Ահաւասիկ բազում թիւով հայ երիտասարդներ այս անցնող երեք տարիներու ընթացքին ծնունդաւորեցան, եւ ժառանգաւորներ եւ աւելի ճիշդ՝ անոնք, որոնք ընծայացուներ են ապագային ծնունդաւորելու, անոնք թիւը օրէ օր կ'աճի, օրէ օր կը բազմանայ: Արդեն Գետրգեան Հոգևոր Ծննդարանի աշակերտներու թիւը գրեթէ քառասուկուած եւ աւելի մեծ թիւով աշակերտներ կը սպասեն գալու եւ միանալու: Մեծանի Դպրանոցի համբաւը կը տարածուի ամեն կողմ՝ ուրախութիւն եւ յոյս ներշնչելով մեր ժողովուրդի գաւակներուն ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի:

Այս բոլորը կը կատարուին, որովհետեւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ունի իմաստուն եւ տեսիլք ունեցող ղեկավար մը՝ Հայրապետ մը, որ գիտէ իր տեսիլքը գործի վերածել: Եւ մենք՝ Հայ Եկեղեցւոյ գաւակներս եւ սպասաւորներս, ուրախութեամբ եւ Աստուծոյ փառք տալով այդ արդիւնքը կը վայելենք եւ այդ արդիւնքի համար Աստուծոյ փառք կուրանք: Եւ նաեւ այս անցնող երեք տարիներու ընթացքին Վեհափառ Հայրապետը առանց հոգնելու իր հայրապետական գաւազանը ձեռին կ'այցելէ ամեն տեղ, ամեն թեմեր, ամեն շրջաններ Հայաստան, Արցախ եւ ի Սփիւռս աշխարհի:

Ուր որ կ'երթայ Վեհափառ Հայրապետը, ոչ թէ միայն Էջմիածնի օրհնութիւնը կը բաշխէ, այլ իր խօսքով, իր ներկայութեամբ, իր կեանքով կը խանդավառէ մեր ժողովուրդի գաւակները, որպեսզի անոնք իրենց խանդավառութեան մէջ տեսնեն վառուող աշտանակի վրայ ճրագը, հասկնան եւ ըմբռնեն կեանքի ճշմարտութիւնները: Թէ մենք՝ մարդ արարած-

ներս կեանքի մէջ ինչ կը փնտրենք, մեզ համար կեանքը ինչ արժէք ունի, այսինքն՝ աստուածային ներկայութիւնը:

Սուրբ Էջմիածնայ խորհուրդով Վեհափառ Հայրապետը կը ներշնչէ աստուածային ներկայութիւնը մեր ժողովուրդի կեանքէն ներս՝ ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի: Անցնող կարճապէս ժամանակաշրջանին Վեհափառ Հայրապետը նաեւ յաջողեցաւ հաստատելու կարեւոր կապեր միջազգային շրջանակներէն ներս եւ ստեղծեց սերտ գործակցութիւն դաւանակից եւ ոչ դաւանակից, հին ու նոր Եկեղեցիներու պէպրեւորս հետ:

Ուր որ Վեհափառը կ'երթայ, կը հանդիպի ոչ միայն այդ երկիրներու հոգեւոր ղեկավարներու հետ, այլ նաեւ կը հանդիպի այդ երկիրներու նախագահներու եւ վարչապետներու հետ, եւ Վեհափառ Հայրապետը իր անձով այդ ղեկավարներու միտքին մէջ կը տրամադրէ, թէ ինչ է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, ինչ է Հայաստանը եւ ինչ է հայ ժողովուրդը:

Ես կը յիշեմ Վեհափառ Հայրապետի այցելութիւնը Ամերիկա, ես կը յիշեմ Վեհափառ Հայրապետի այցելութիւնը Ամերիկայի նախագահ Բուշին եւ կը յիշեմ, թէ հանդիպումը, որ միայն հիկզ վայրկեան պիտի տեւեր, տեւեց աւելի քան 35-40 վայրկեաններ եւ կամ, ինչպէս Հայաստանում դուք կ'ըսէք, ռոպէսներ, ուր նախագահ Բուշը աւելի լաւ հասկցաւ, թէ Հայաստան ո՞ր է, ինչ է հայ ժողովուրդի պատմութիւնը եւ ինչ է Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Վեհափառ Հայրապետի տարբեր Եկեղեցիներու պէպրեւորս հետ իր յարաբերութիւնները մենք տեսանք եւ վայելեցինք անցեալ տարի, 1700-ամեակի առիթով, երբ աշխարհի զանազան շրջաններէն եկեղեցական պէպրեւորս եկան-այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, այդ թվում եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ Պատրիարքը:

Առաջին անգամ ըլլալով Հռոմեական Եկեղեցւոյ Պապը եւս եկաւ-այցելեց Հայոց աշխարհ եւ հիւրը եղաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, մնաց Վեհափառի մէջ: Եւ այս ան-նախընթաց մէկ երեւոյթ մըն էր, քանի որ բոլորս ալ գիտենք, թէ իրր Սրբազան Պապը երկիրներ եւ տարբեր աշխարհներ կ'այցելէ, կը մնայ տեղւոյն Կաթողիկ Եկեղեցւոյ ներկայացուցչին եւ կամ կարդինալին մօտ: Առաջին անգամն էր, որ Պապը կը մնար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին իբրեւ հիւրը Վեհափառ Հայրապետին:

Այս բոլորը պատահեցան եւ կը պատահին, որովհետեւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ունի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նման իմաստուն, գիտակից եւ աշխոյժ հոգեւոր Հայր մը: Վեհափառ Հայրապետը, հետեւելով մեր երանամեն Հայրապետներու օրինակին, երեք տարիներէ ի վեր ննցուկ կանգնած է մեր Հայրենի պետութեան եւ վերածած է Հայաստանեայց Եկեղեցին իսկական բարոյական ուժի թէ՛ Հայրենիքէ ներս եւ թէ՛ Հայրենիքէ դուրս:

Մենք բոլորս՝ Հայ Եկեղեցւոյ սպասաւորներ, Հայ Եկեղեցւոյ զաւակներ, համոզուած ենք, որ Վեհափառ Հայրապետը իր դաւանած սկզբունքներու համաձայն մեր հաւատարեցեալ ժողովուրդը իմաստութեամբ պիտի առաջնորդէ դէպի աղբիւրը Լոյսի, որպէսզի իւրաքանչիւր հայ քրիստոնեայի համար չլինի ծածուկ բան, որ ցայտնուի, եւ ոչ ալ զաղտնի բան, որ չգիտցուի եւ ի յայտ չգայ եւ իւրաքանչիւր հայ դէմ Բրիստոսի ճրագը բարձր պատուան-

դանի, ծակեայ աշտանակին վրայ, փեսեւ այդ Լոյսը, հաւարայ այդ Լոյսին եւ քալէ այդ Լոյսի ճանապարհի վրայէն, ինչպէս քալեցինք 1700 փարիներ շարունակ:

Այս ուրախ, երջանիկ առիթով մենք կը շնորհատրենք մեր Հայրը Հայոց՝ մեր Հայրապետը Հայոց: Վեհափառ Հայրապետին կը մաղթենք առաւել բեղմնաւոր փարիներ, եւ մենք՝ Հայ Եկեղեցւոյ սպասաւորներ՝ եպիսկոպոս, քահանայ, սարկաւազ եւ կամ հաւաքացեալ ժողովուրդ, կ'ուզենք եւտաստփացնել, թէ՛ Վեհափառ Տէր, մենք բոլորս ալ Ձեզ հետ եկք, Ձեզ հետ պիտի շարունակենք մեր երթը՝ քալելով Ձեր եփին, հեփեւելով Ձեզի, որովհետեւ գիտենք, թէ Դուք առաջնորդած եք եւ կ'առաջնորդէք մեզի դէպի Լոյս եւ ճշմարտութիւն:

Կ'աղօթենք Ձեզի համար, Վեհափառ Տեր, կ'աղօթենք Ձեր առողջութեան համար՝ ըսելով, թէ՛ Տէր, երկար կեանք փոքր Հայրապետին՝ Հայոց Հոր, որպեսզի Հայոց Հայրապետի գլխատրութեամբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին շարունակէ ապրիլ իր քրիստոնէական հաւաքը եւ այդ հաւաքը միշտ եւ միշտ դարձնէ իր առօրեայ կեանքին մասը եւ բաժինը:

Մենք ուրախ ենք, որ այս առիթով շատ մը փեղեբեւ, աշխարհի շատ մը երկիրներէ ահագին մեծ թիւով շնորհատրական մաղթանքներ եկած է Վեհափառ Հայրապետին: Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ թեմակալ առաջնորդներ, Նուիրապետական Աթոռներու գահակալներ իրենց մաղթանքները, իրենց շնորհատրութիւնները կը հղեն ազգիս Վեհափառ Հայրապետին: Ուրախ ենք նաեւ, որ այս երջանիկ առիթով, Վեհափառ Հայրապետի գահակալութեան երրորդ փարեղարծի առիթով, Հոռմի Կաթողիկէ Եկեղեցւոյ Սրբազան Քահանայապետը եւս իր շնորհատրական գիրը կը դրկէ իր ներկայացուցիչին՝ Գերաշնորհ Կլաուդիոյ եպիսկոպոս Գուջերոսփոյի միջոցաւ: Այս պահուն պիտի խնդրենք Կլաուդիոյ արքեպիսկոպոսէն՝ պապական նուիրակէն, որպեսզի գայ եւ կարգայ Նորին Սուրբ Օծութիւն Ս. Տ. Յովհաննէս-Պօղոս Բ. Կաթողիկէ Եկեղեցւոյ Հայրապետի օրհնութեան եւ շնորհատրական գիրը՝ ուղղուած այս ուրախ առիթով:

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ, Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԱԿԱՅԻ ՏՈՆԻՆ

(24 դեկտեմբերի 2002 թ.)

*«Առաքել և նախապկա Զրիստոսի
Ս. Սրբփաննոս, որ զքարկոծումն յանձն
առեր և անմահից քնակարանս վերակոչեցաք»:
(Շարակնոց)*

Այսօր, սիրելի հավատացյալներ, հավաքվել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Սրբփաննոսի եկեղեցիում այս Խորանի առջև և կատարում ենք հիշատակը այն սարկավագի, ով առաջին վկան և նահատակը եղավ վասն Հիսուսի:

Ի նշան քրիստոնեական սիրո, քրիստոնեության առաջին համայնքների անդամները որպես մեկ ընտանիք ի մի էին հավաքվում մեկ ընդհանուր՝ Ազգայն՝ սիրո ճաշ անվանվող սեղանի շուրջ: Մկրտապետ այդ սեղաններին սպասավորում էին առաքյալները: Այնուհետ, սակայն, դժգոհություն է առաջ գալիս, թե որոշ սեղանների ծառայությունը ժամանակին չի լինում:

Այդ իսկ պարճառով առաքյալները համախմբվեցին և բոլոր աշակերները, Հիսուսի հավատացյալները հավաքվեցին և իրենց միջից ընտրեցին յոթ հոգիներ, որոնք պիտի սպասարկեին Ս. Սեղանին սիրո ճաշի ժամանակ: Նրանց մեջ էր նաև Սրբփաննոսը:

«Գործք առաքելոց»-ը նրա համար ասում է՝ «այդ լի հաւատով Եւ Սուրբ Ղոգուով» (հմմտ. Գործք Զ 5): Եվ նա ծառայության հետ միասին քարոզում էր ժողովրդին: Ոչ քրիստոնյաները, լսելով նրան, բողոքեցին դավիթների և քահանաների առաջ, որ այսպիսի մի մարդ կա՝ Սրբփաննոս անունով, որ հայեղում է Աստծուն: Այսպես բողոքեցին, որովհետև չէին կարողանում նրան լռեցնել, և Սրբփաննոսի խոսքերը իսկապես այնպես համոզիչ էին, որ դիմացիները չէին կարողանում ոչ մի կերպ պատասխան տալ: Ուստի խմբով հավաքվեցին և փարան քաղաքից դուրս մի անկյուն և այնտեղ դատապարտեցին նրան՝ ասելով, որ Մովսեսին, Նապոթին, Աբրահամին և ընդհանրապես Աստծուն հակառակ կերպով է արտահայտվում, ինչպես նաև ասում է, որ Հիսուս Նազովրեցին կարող էր երեք օրվա մեջ երուտաղեմի փաճարը քանդել և նորը կառուցել:

Սխալ էին հասկանում Հիսուսի այդ խոսքը, որը խորհրդանշում էր, թե Տերը երեք օր գերեզմանի մեջ մնալուց հետո պետք է հարություն առնեք և իր հողեղեն փաճարը այդպիսով պիտի քանդեք և հարության նոր փաճարը հաստատեք մարդոց մեջ, հավատացյալների մեջ և իր հետևորդների մեջ: Այս սխալ հասկացողության պարճառով էլ քարկոծեցին Ս. Սրբփաննոսին, և երբ քարկոծման պահին հոգին պիտի ավանդեր, նա իր աչքերը դարձրեց դեպի երկինք և ասաց. «Տեր, սա մեղք մի՛ համարիր դրանց» (Գործք Է 59):

Մյուս կողմից, սակայն, Ստդոսը՝ հեղափոխության ղեկավար, գիտե՞ք, որ ինքն էլ մասնակից է դառնում այդ ահապուր ահապարկության կատարմանը:

Միրելի հավատարմագրվածներ, Պալոստոսի կյանքը մեզ ծանոթ է. թե ինչպես նա երուսաղեմի ճանապարհին աստվածային լույսը փնտրում էր, և միայն Դամասկոսի մեջ Անանիա անունով քրիստոնյան կարողացավ նրա աչքերը բացել, և ես քրիստոնեության ջարդագուրդ դարձավ այդ պահից սկսյալ՝ հավանաբար անդրադառնալով իր կարգադրած խժժություններին, սխալներին, որ գործել էր քրիստոնյաներին հալածելով:

Ա. Ստեփանոսն իր աչքերը փակեց, ինչպես շարականագիրն է ասում, երթալու և երկընթու միանալու սուրբերի դասին: Միրելի հավատարմագրվածներ, շուրջ 2000 փարիսեյներ հեղուկ Ս. Էջմիածնի այս Սուրբ Տաճարում մենք օրհնությամբ և հրամանավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ Հայրապետի փառանքներով և սարկավագներ ձեռնադրեցինք այս պահին, ասելով նրանց՝ սարկավագություն արեք, ծառայեցեք այս Սուրբ Եկեղեցուն, և Աստված թող ժամանակի ընթացքում ձեզ արժանի դարձնի ավելի բարձր հոգևոր աստիճանների և այդպիսով ձեր կյանքը բոլորանկր կերպով ի սպաս դրվի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Այս պահին հիշում եմ, թե ինչպես քառասունհինգ տարի առաջ, ես՝ Հակոբ սարկավագս, այսպեղ Հայկագուն արքեպիսկոպոսի ձեռամբ սարկավագ ձեռնադրվեցի: Ճիշդ քառասունհինգ տարի առաջ, այս օրը, և փառք եմ փալիս Աստծուն, որ ես էլ իմ հերթին քառասունհինգ տարի հեղուկ փառանքներով սարկավագների ձեռնադրությունն եմ կատարում Ս. Ստեփանոսի Մեղանի առջև:

Միրելի՝ սարկավագներ, հոգևոր աստիճանը փառքի աստիճանն է, հոգևոր աստիճանը ինչքեր հավաքելու աստիճանն է, հոգևոր աստիճանը հայրապետալու աստիճանն է, այլ խոնարհության, ծառայության աստիճան, նվիրումի աստիճան, և հոգևոր սարկավագական աստիճանը այսօր ևս ըմբռնվում է ոչ միայն Սուրբ Մեղանի ծառայություն մատուցելը, այլ նաև առաքելական շնորհը փարածելը հավատարմագրվածների մեջ՝ Դիակոնիա:

Ծառայություն՝ հավատարմագրվածների շարքում, ծառայություն՝ անհավատները եկեղեցի դարձնելու և բերելու գործում, ծառայություն՝ փոքրերը, մանուկները եկեղեցի բերելու, և ծառայություն՝ այցելելու հիվանդներին, հաշմանդներին, տառապողներին, բանտարկյալներին և բոլոր նրանց, ովքեր Աստծո խոսքի կարոտն ունեն իրենց մեջ:

Այս գիտակցությամբ եկեք միասին ուխտ անենք այս պահին՝ բոլորանկր կերպով ծառայելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և հերկելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրահանգներին:

Ահա այս մտածումներով և այս խոհերով, աղոթքով և Սուրբ Հոգուն ուղղված պաղտաբանությամբ ձեր ձեռնադրությունը կատարեցինք՝ մաղթելով ձեզ քաջառողջ երկար կյանք և ծառայության երկար ուղի: Այս առթիվ շնորհավորում եմ Մայր Աթոռի միաբանությանը, սարկավագական դասին, որ իրենց եղբայրներ բերինք ևս փառանքներով հոգի՝ առաքյալների թվով, նաև շնորհավորում եմ Ամենայն Հայոց Հայրապետին, որ միաբանության շարքերը այսպիսով համալրում է նոր ձեռնադրվածներով:

Թող Տերը պահապան և առաջնորդ լինի մեզ բոլորիս այժմ և հավիտյանս հավիտեբից, ամեն:

Տ. ԱՐՇԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (10 նոյեմբերի 2002 թ.)

«Մի՛ նրկեցիր, բայց միայն հաւատայ»:

«Մի՛ վախեցիր, այլ միայն հավատա»:

(Մաթթ. Ե 36)

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, այս խոսքերը վերցված է այսօրվա ավետարանական ընթերցվածից, որում ներկայացվում է հավատով փրկվելու ճանապարհը, և մեր Տիրոջ՝ Տիտուս Զրիստոսի խոսքերն են՝ ուղղված Հայրոս անունով մեկին, որ մեծահարուստ էր և ուներ մահամերձ մի դուստր:

Ավետարանը և ընդհանրապես Աստվածաշունչ Մաքյանը գրվել է մեր հավատքը գորացնելու նպատակով, մեր մեջ հավատքը արծարծելու համար: Եվ ահա ավետարանական այս դրվագը ևս մեկ անգամ գալիս է նորից ու նորից հավաքի կարևորությունը մեր կյանքում ապացուցելու, ցույց տալու հավաքի դերը մեր կյանքում: Տիտուս Զրիստոս տարբեր բժշկումներ էր կատարում Հրեաստանի տարբեր շրջաններում և նրանց հոգիներում արծարծում հավաքը առ Աստված:

Ահա այդ շրջագայություններից մեկի ժամանակ, երբ Նա գտնվում էր Կափառնայում քաղաքում, Տիտուսին շրջապատել էր ողջ ժողովուրդը և, լսելով Նրա փառքը, գալիս էին տարբեր հիվանդություններ և մարմնական ու հոգևոր արարքներ ունեցող մարդիկ և, Տիտուսից բժշկություն խնդրելով, բուժում էին գտնում: Եվ ահա Նրա կատարած հրաշագործությունների մասին լսելով՝ Հայրոսը, որ մեծահարուստ էր, և որի 12-ամյա աղջիկը մահամերձ վիճակում էր, գալիս և Տիտուսին խնդրում է, որ այցելի իր տուն և գտնե Իր ձեռքը դնի իր աղջկա վրա, և աղջիկը կառողջանա:

Տիտուս, անշուշտ, չի մերժում և գնում է Հայրոսի տուն: Սակայն, մինչ այդ բազմություն է հավաքվում Նրա շուրջը, և մի հրաշք ևս տեղի է ունենում այս ընթացքում, որ նույնպես գալիս է լրացնելու այս պատմության իմաստը, այն է՝ որ հավաքով գորացողը, հավատքով դիմողը, հավաքով փնտրողը կգտնի իր ուզածը և իր նպատակին կհասնի: Միայն թե վստահի Տիրոջը, և իր անելիքը Տիրոջով կօրհնվի:

Շուրջ 12 տարիներ արյունահոսությամբ տառապող մի կին, ժողովրդի միջից անցնելով, մարդկության բազմության միջից հասնում է Տիտուսին և, թեթև իր հիվանդությունը չուզելալով բուժողին ներկայացնել, բարձրաձայն ասել, նա մտածում է, որ թեկուզև կաչեմ, դիպչեմ Աստծո Որդու հագուստներին, իմ հիվանդությունը կբժշկվի: Եվ նա այդ հավատքով, այդ վստահությամբ մտքներում է և դիպչում Տիտուս Զրիստոսին, Նրա հագուստներին և անմիջապես իր մեջ խաղաղություն և հանգստություն է զգում, զգում է իր բժշկվելը: Այդ զգում է նաև Տիտուս և դիմում է Իր աշակերտներին, թե՛ ո՛վ դիպավ ինձ:

Առաքյալները փարապետում հն, թե այդ ամբողջի միջից շարերը կարող էին դիպչել, ինչու է այդ հարցը փալիս Բրիտոս: Սակայն Տիտուս փնտրում է ամբողջի միջից այն մարդուն, ով հավատարեով էր դիպել Իրեն, այդ փասկայն-հարյուրավոր մարդկանցից այն մեկին էր փնտրում, ով հավատարեով, վստահությամբ էր դիպել: Շարերն էին դիպել Տիրոջը, բայց ամեն մեկի համար չէ, որ գորություն էր ելնում Բրիտոսից, որովհետև բոլորը չէ, որ հավատարեով էին մերձենում: Եվ ահա այդ կիևը, վախենալով, որ Բրիտոս կհանդիմանի ի-րեն, ծունկի է գալիս և ի լուր ամենքի հայտարարում իր հետ կատարված հրաշքը, և Բրիտոս ոչ թե հանդիմանում, այլ քաջալերում է, գտնակնդում նրան՝ ասելով. «Քաջալերվիր, դուստր իմ, քո հավատքը քեզ փրկեց»:

Այնուհետև Տիտուս շարունակում է Իր ճանապարհը դեպի Հայրոսի տուն: Այդ պահին Հայրոսին ընդառաջ են գալիս և ասում, որ՝ զուր են չարչարում Վարդապետին, որովհետև քո աղջիկն արդեն մահացել է, հոգին ավանդել: Եվ մեծ լացուկոժ է սկսվում: Բոլորը ողբում են, լաց լինում, միայն Բրիտոս է, որ հուսադրող խոսքերով դիմում է նրանց. «Ինչո՞ւ եք խռովված ու լաց եք լինում, մանուկը մեռած չէ, այլ ննջում է» (Մարկ. Ե 39):

Տիտուս հաստատականորեն շարունակում է Իր քայլերը դեպի Հայրոսի տուն և այնտեղ երեք առաքյալների և աղջկա ծնողների ներկայությամբ բռնելով մահվան մահճում գտնվող աղջկա ձեռքից, ասում է. «Տալիթա, կումի», որ նշանակում է՝ աղջիկ, դո՛ւ, քե՞զ եմ ասում, վեր կաց» (Մարկ. Ե 41): Եվ աղջիկը նորից կենդանանում է: Տիտուս պատվիրում է, որ չասեն որևէ տեղ, ուրիշների մոտ և չպարմեն այս հրաշքները:

Անշուշտ, հնարավոր չէր այդ մեծագործ հրաշքները թաքցնել, և ամենուրեք փարածվում է Տիտուս Բրիտոսի փառքը, Նրա անունը:

Միտելի բույրեր և եղբայրներ, այս պատմությունը հավատարի և հավատարեով ապրելու մասին է: Սակայն հավատքը ինքնանպատակ չի կարող լինել, հավատքը պահանջում է նաև գործեր և հավատքը առանց գործերի, ինչպես Հակոբոս առաքյալն է ասում, ընդունայն է: Զուր է մեր հավատքը, եթե մեր հավատքից բխող արդյունքը բարիքը չէ, եթե մեր գործերը բարիքի չեն հանգեցնում: Թեև շարերը կարծում են, թե միայն հավատը ունենալով կարող են փրկություն և արդարություն գտնել, սակայն Աստվածաշունչը վկայում է, որ հավատքն առանց գործերի զուր է և ունայն:

Հավատք ունենալով Աքելը բերեց իր ընծան: Հավատքով, հավատքից բխած գործերով Աբրահամը արժանացավ Տիրոջ ուշադրությանը և նույնիսկ իր գավալին բերեց-մատուցեց գոհասեղանին, հավատքով էր, որ Մովսեսը առաջնորդեց իր ժողովրդին, հրեա ժողովրդին՝ հանելով եգիպտական գերությունից:

Տրեանները, սակայն, այդ ժամանակ երկմտեցին, թերահավատություն դրսևորեցին, և այն ժողովուրդը, որ գերության մեջ էր եգիպտոսում, պատժվեց Աստծո կողմից, որպեսզի չկարողանա տեսնել խոստացված երկիրը, և այն նեղություններն ու դժվարությունները, որ հանդիպում էին, խոչընդոտ դառնում նրանց ճանապարհին, ամեն անգամ ժողովրդի անհավատության կամ թերահավատության պատճառ էին հանդիսանում, և ժողովուրդն ամեն անգամ դուրս էր գալիս և ընդվզում էր Մովսեսի դեմ փնտրելով միայն մարմնավոր կերակուրը: Եվ այդ սերունդը պատժվեց և չտեսավ խոստացված երկիրը:

Այսօր՝ այս վերջին տասնամյակը շատ նմանություններ ունի եգիպտական գերությունից հրեաների դուրս գալու հետ։ Մենք էլ անկախություն ու ազատություն ենք ձեռք բերել, սակայն բազմաթիվ խոչընդոտներ ու դժվարություններ են պատում մեր ժողովրդին՝ էլ երկրաշարժ, էլ պատերազմ, փոփոխական ու սոցիալական տարբեր աղետներ ու նեղություններ, և շատ-շատերն ասում են, թե երանի՛ այն օրերին, այն 70-80 տարիներին, երբ կուշտ էինք ապրում։

Մոռանում են սակայն, որ այդ օրերին իրենց ազատությունն ու անկախությունը կաշկանդված էր։ Ինչ ունենք այսօր, չունենք անցյալ տարիներին։ Ու եթե հավատքով, եթե Տիրոջ հանդեպ ունեցած վստահությամբ շարունակենք մեր կյանքը, ապա վստահաբար մեր գալիքը, մեր ապագան էլ ավելի արդյունավոր պետք է լինի, քան երեկ էր, քան այսօր է։

Ներկաբար, սիրելի հավատացյալ թույրեր և եղբայրներ, ավետարանական պատգամը մեր մտքերում ունենալով, եկեք գորացնենք մեր հավատքը՝ մշտապես ազդեցով Աստծո ներկայությունը մեր մեջ ունենալով, բարին արարելով, նեղլալին օգնելով, նեղվածին վըշտակեցելով և մխթաբերելով, կարողալին ձեռք մեկնելով և անհույսին հուսադրելով։ Մեր գործերը միշտ հիմնենք մեր հավատքի վրա, մեր հավատքի Նոր՝ մեր Տիրոջ վրա, և վստահություն կունենանք, որ Տերը երբեք մեզ մենակ չի թողնի, երբեք հիվանդ չի թողնի Իրեն հուսացողին, Իրեն դիմողին, հավատքով Իրեն դիպչողին։ Աղոթենք միասին, որ Աստված էլ ավելի գորացնի մեզ մեր հավատքի մեջ, ապագայի նկատմամբ ունեցած վստահության մեջ և մեր հավատավոր ժողովրդին էլ առավել հզորություն պարգևի։

Թող Աստված օրինի բոլորիս և Իր շնորհները բերի համայն հայ ժողովրդին, ամեն։

Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱԲԵՂԱ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ՝ ՏԱՃԱՐԻՆ ԸՆԾԱՅՄԱՆ ՏՈՆԻՆ (21 նոյեմբերի 2002 թ.)

*«Բարեխօսեաւ. խնդրեաւ, աղաչեաւ, զի ըստ
անճատելի մարքութեանդ՝ եւ ահա
զբանիդ հասարամ զընդունելութիւն»:
(Ս. Գրիգոր Նարեկացի)*

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացյալներ, այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբում է Ս. Աստվածածնին նվիրված տոներից 3-ամյա Ս. Կույսի տաճարին ընծայման հիշարարկը:

Եկեղեցական սրբազան ավանդությունը վկայում է, որ Ս. Աստվածածինն ուխտի զավակ էր: Նրա ծնողները՝ Հովակիմը և Աննան, երեխա ունենալու շնորհից զրկված էին և շատ էին տառապում անզավակ մնալու համար, սակայն Աստված արձագանքելով նրանց թախանձանքներին՝ Իր անհուն ողորմությամբ Հովակիմին ու Աննային մի զավակ է պարգևավորում, մի դուստր է շնորհում, ով մարդկության կյանքում կոչված էր դառնալու մայրը Բանն Աստծո, Աստծո Որդու մարդեղության տաճարը:

Ահավասիկ հրեշտակային ծանուցումն սրանալով, Հովակիմն ու Աննան ուխտում են իրենց մանկանը ընծայել Աստծուն, ընծայել Տիրոջ տաճարին, որպեսզի Աստծո պարգևն իր վայելույց տեղը գտնի աստվածային ներկայությամբ առեցնուն Աստծո տանը, որպեսզի աստվածային ընծա մանուկ Մարիամն իր կոչումը ճանաչի ու գտնի՝ հասակ առնելով Տիրոջ տանը:

Ընծայումը ժամանակային առումով երրորդ տոնն է՝ նվիրված ամենօրեկյալ Ս. Կույս Մարիամին: Ս. Կույսի հղացումը եթե մի անթառամ և քանցելի ծաղիկ էր՝ գեղեցիկ և անառար, և ծնունդը՝ որպես քաղցր պտուղ՝ արժանի Տիրոջ սեղանին, ընծայումն էլ՝ իր ծնողների ձեռքով այդ պտուղի նվիրումն էր այդ պտուղը ընծայած Տիրոջը՝ Նրա իսկ տաճարում: Եվ ավելի պանծայի, գերագույն ու հրաշալի է, որ Մարիամը Աստծո կողմից Աստծուն է ընծայվում, իբրև արժանավոր աստվածամայրության, իր Միածին Որդու ծննդյամբ մեղավոր մարդկությանը Աստծո հետ հաշտեցնելու համար:

Մարիամը երեք անգամ Աստծուն նվիրվեց իր ծնողների կողմից, նախ՝ ուխտակալարությամբ, իրենց սրտի թելադրանքով, քանի որ նրան ուխտով ունեցան իրենց ձեռքության ու ամուսնության մեջ և իրենց որովայնի պտուղը նվիրեցին Աստծուն: Երկրորդ, երբ Մարիամը 3 տարեկան էր, նրա մայրը՝ Աննան, տաճար տանելով՝ Աստծուն նվիրեց ուխտի իր զավակին: Եվ տուն բերելով՝ նրան սնում էր իբրև Աստծո ավանդ, մինչև յոթերորդ տարին: Այնուհետև կատարվում է երրորդ ընծայումը՝ և Սրբուհի Կույսը հանձնվում է տաճարի կուսարանին,

որ մնում է նս յոթ տարի, Աննա մարգարետիկո հոգածության տակ, մինչև արքունքի հասնելը:

Ամենասրբոտի Կույսը նս ինքն իրեն 3 ձևով ընծայեց Աստծուն: Նախ ինքն իր անձը նվիրեց, երբ ճանաչեց իրեն և իր Արարչին: Առանց վարանելու հավատում ենք, թե նա իր գոյացության առաջին իսկ վայրկյաններից, այսինքն՝ բանական գոյության հետ նա իրեն ամբողջովին նվիրեց Արարչին հոգով և ճշմարտությամբ: Թեպետ այս խորհուրդը մեզ համար գաղտնի և անհաս է, սակայն երբեք չպետք է կասկածի ենթարկենք այդ հանգամանքը:

Երկրորդ անգամ Մարիամն իրեն բոլորակվոր Աստծուն ընծայեց, երբ խելահաս դարձավ: Անշուշտ Եվայի զավակներից ավելի վաղ ընդունեց բանական մտքի կայծը և ինչ որ ուրիշները 7 կամ 6 կամ 5 տարեկանում են գիտակցում, ինքը գիտակցում էր տակավին 3 տարեկանում, երբ նրա միտքը լուսանշույլ ճաճանչներով զարդարված էր արդեն:

Երրորդ՝ երբ ծնողները երան փաճարին նվիրեցին՝ իմաստուն և անարար Կույսն ինքն էլ իրեն Աստծուն ընծայեց, որպես բանավոր պատարագ ծնողների ընծայումից առավել: Այս ընծայաբերությամբ այնուհետև Ս. Կույսը բարձրանում է գերագույն աստճանին, մտքից և խորհուրդներից վեր: Քանի որ նյութական ողորմությունը Աստծուն փոխ տալ է նշանակում, ուրեմն եթե մեկն իր անձն Աստծուն է տալիս, ոչ թե որպես փոխ է, այլ իբրև անդարձ ընծա պիտի ընդունի Աստծուն ամբողջապես: Նույնը եղավ նաև Ս. Կույսի հետ, քանի որ նա եղավ ոչ միայն Աստվածընկալ, այլև Աստվածածին: Որովհետև Մարիամն ընտրվեց աստվածամայրության պաշտոնի համար, ապա դիմեց ավելի վեր, քան երկրավորները ու երկնավորներն են: Ավելի վեր, քան մարգարեներն ու առաքյալները, ճգնավորներն ու կույսերը:

Նա գերազանցապես աճեց նաև մարմնական կառարելությամբ՝ օրեցօր և տարեց-տարի, այնպես որ երբ 7 տարեկան եղավ, գերազանցեց ամենակառարելալ մարդկանց և իմաստնագույն կանանց: Իսկ երբ եղավ 14 տարեկան, արդեն ավելի կառարելագույնն էր բոլոր հոգածին արարածներից, նույնիսկ ավելի քան աննյութական հոգեղենները՝ մեկը մյուսից գերափայլ:

Նա, որ նախապես անտեսաբար էր ընդունում հրեշտակների սպասավորությունը որպես քույր, այնուհետև արդեն Աստծո կողմից ուղղակի պատգամավորներ էր ընդունում, որոնց շարքն իր լուսնին հասավ Քաջբիշ հրեշտակապետով: Ս. Կույսը հրավիրվում էր այլևս ոչ թե հրեշտակային պատվի, այլ գերագույն մի շնորհի, որպես Աստծո դուստր՝ արժանանալով Աստվածորդու մայրության պարգևին:

Եթե չլինեք Մարիամի առաջին ընծայումը, չէր լինի երկրորդը, և ոչ էլ ավետումը գարիելյան և խորհուրդը աստվածամայրության: Հիմքի համեմատ պետք է լինի կառույցը, և կառույցի համեմատ էլ՝ հիմքը, որն է՝ խոնարհություն, կուսություն, արդարություն, աստվածապաշտություն և լրումն ու զագաթը, որ մինչև երրորդ երկինք է հասնում և անցնում: Եվ դա աստվածամայրությունն է:

Միտքի քույրեր և եղբայրներ, Աստվածամայրը մեր բոլորիս մայրն է: Ինչպես ամեն մեկը կարող է իր մորն անկաշկանդ ու համարձակ մոտենալ ու որն է խնդրանքով դիմել, նմանապես յուրաքանչյուր քրիստոնյա համարձակ կերպով ու անվարան կարող է և պետք է մոտենալ և իր խնդրանքը, իր ցավը, իր տառապանքը ներկայացնել Ս. Աստվածամորը, ով

հանապազ միջևորդ ու բարեխոս է մեր՝ մողավոր մարդկանց համար իր Միածին Որդու մոտ:

Ներկայումս, մեր կյանքի փորձություններով լեցուն օրերի ուրախությունն ու երջանկությունը թող լինեն մեր անկեղծ ու սրտանց գրույցները Միածին Որդու Մոր հետ: Իսկապես, այդ գրույցները մեզ համար հրաշալի միջոցներ են՝ հոգու քաջությամբ ու արիությամբ լցվելու, որպեսզի Աստվածամոր բարեխոսությամբ Աստված մեզ ողորմություն անելով արժանացնի Իր առջև կանգնելու և մեր խնդրանքներն ու խնդիրները Իրեն ներկայացնելու համար: Աստվածածինը մեր կյանքում Բեթղեհեմի մատրն է. ինչպես Բեթղեհեմում՝ երկինքը ողջագործվեց երկրին, նմանապես և Աստվածածնի միջոցով մենք մեր կյանքում զգվում ենք և փարվում մեջ Տիրոջը:

Անավասիկ, սիրելիներ, նմանվեք մեր մորը: Նայենք նրա ընծայման եղանակին և մենք մեզ նվիրենք Տիրոջն ամենայն խոնարհությամբ: Նվիրվենք Տիրոջն ամբողջապես: Ընծայենք մենք մեզ Աստծուն և մենք մեր քրիստոնեավայել կյանքով դառնանք Աստծո բնակության տաճար: Թող մեզանից, Տիրոջ ողորմությամբ, արմատախիլ լինեն ամբարտապանության և հպարտության չար տունկերը:

Միերիներ, այսօրվա Կոնի խորհրդով եկեք մեր հոգու խոսքը, աղոթքը միախառնենք Նարեկա վանքի մեծ սրբի՝ Գրիգոր Նարեկացու աղոթական խոսքերին և դիմենք Ս. Աստվածածնին. «Ով մարդ հրեշտակ ու մարմնատեսիլ անբիծ քերովբե, երկնի թագուհի, անխառն ինչպես օդ, մաքուր՝ ինչպես լույս... ընդունիր մաղթանքն այս աղերսական՝ քեզ դավանողիս, օգնիր թևավոր քո աղոթքներով, խնդրիր, աղաչիր ու բարեխոսիր, քանզի անպատում մաքրությանդ համար, հավատացած եմ, խոսքդ կընդունվի»:

Շնորհք Տեսնո մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեւեանդ ամեն:

Տ. ԳՆԵԼ ԱՐԵՂԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(22 դեկտեմբերի 2002 թ.)

*«Որ բարձրացուցանե՞
զանձն՝ խոնարհեցի, և որ խոնար-
հեցուցանե՞ զանձն՝ բարձրացի»:*

*«Ով որ բարձրացնում է իր անձը,
պիտի խոնարհվի, և ով խոնարհեցնում է
իր անձը՝ պիտի բարձրանա»:*
(Մատթ. ԻԳ 12)

Ավերարանը մեզ ավանդում է մի շարք օրինակներ, որոնք մեր առջև հավերժացնում են խոնարհության հաղթանակը:

Անմոռանալի է Նովիանենս Մկրտչի օրինակը, որն ինքն իրեն անարժան էր համարում Քրիստոսի կոշիկները կապելու, և փառավոր վարձարությամբ Տիտուսի կողմից ասվեց, թե մարդկանց որդիների մեջ երբեք չի ծնվել ավելի մեծը, քան Նովիանենս Մկրտիչը: Նույն խոնարհությունն ուներ նաև Կափառնայումի հարյուրապետը, որը դիմեց Փրկչին՝ ասելով. «Տե՛ր, ես արժանի չեմ, որ դու իմ հարկի տակ մտնես» (Մատթ. Ը 8): Եվ Տիտուս հեռվից նրա ծառային բռնեց:

Իսկ այսօր, Սուրբ Պատարագի ընթացքին, Ղուկասի Ավերարանից ընթերցված փարիսեցու և մաքսավորի առակում Տիտուս մեզ ուսուցանում է մարդկային գոռոզության և խոնարհության մասին, թե Տերը պիտի խոնարհեցնի նրան, ով որ հպարտացած էր, և կբարձրացնի մյուսին, ով որ ինքն իրեն խոնարհեցնում էր և նվաստացնում Աստծո առջև:

Տաճարում աղոթքի ժամանակ, որտեղ հավաքված էին փարեբր խավերի մարդիկ, առանձնանում էին երկու հոգի, որոնք նույնպես կանգնած էին աղոթքի, բայց նրանց աղոթքները ակնհայտորեն տարբեր էին: Նրանցից մեկը փարիսեցի էր, որը հրեական հասարակության այն շերտին էր պատկանում, որին հարգում էին, որովհետև մեծ զգուշությամբ և ծայրահեղ նախանձախնդրությամբ էին պահում օրենքը:

Նա համարվում էր օրինավոր և պարկավոր մի անձ, որն Աստծուն մոտ կանգնած ինքն իր մասին մեծ կարծիք ուներ և, պայմանավորված այդ համարմամբ, հպարտությամբ աղոթում էր՝ ակնկալելով, թե Աստված պարտավոր էր իրեն շնորհներ տալ, որովհետև ինքը բոլորից արժանավոր էր. «Փա՛ղք Քեզ, Աստված,- ասում էր,- փառք Քո Սուրբ Անվանը, ամբողջ աշխարհը լեցուն է անիրավ, հափշտակող և շնացող մարդկանցով, փա՛ղք Քեզ, որ ես նրանց նման չեմ»:

Այսպես գոռոզությունից և ինքնավստահությունից դրդված նա՝ հայացքն ուղղում է ոչ այնքան հեռու կանգնած մաքսավորին՝ ասելով. «Ահա այն մաքսավորն էլ նրանցից մեկն է,

որդ ան հավիշտություններ է արել, ես դրանցից ոչ մեկը չեմ գործել: Այլ հակառակն՝ օրենքի պահանջած բարեկաշխությունները հոժարությամբ եմ կատարել, և եթե մյուսները պարզապես մեծ միայն մեծ քաղաքյան ծոմն են պահում, ես շաբաթը երկու օր ծոմ պահելու սովորությունը չեմ խախտել, ըստ օրենքի փաստաբանները ճշտությամբ եմ վճարել, եռյակի անանուխի և փեզենայի հարկ եմ տվել: Փանդ Ջեզ, Աստված, որ ինձ սրբության մեջ ես պահել և շնորհներիդ արժանի արել»:

Այսպիսով փարիսեցին ինքնագովության վերջացնում է իր աղոթքը: Օրինապահ, արդար, ըստ իրեն՝ ոչ մեղավոր փարիսեցին որևիցե այլ բան չունեի Աստծուց խնդրելու, որովհետև կարծում էր, թե ինքը կատարյալ է: Ներկաբար վերջին անգամ արհամարհական հայացքով նայում է մաքսավորին և դուրս գալիս փաճարից:

Ի հակադրություն փարիսեցու, անհամեմատելիորեն պարբեր էր մաքսավորի աղոթքը: Այս առակում մենք տեսնում ենք մի խոնարհ անձնավորություն, որ Աստծո Սուրբ Տաճարի մեջ չէր համարձակվում գլուխ բարձրացնել, որպեսզի չհանդիպի Ողորմած Աստծո հայացքին, այլ գետին ընկած, աչքերը խոնարհած, ձեռքերով ուժգին խփում էր կրծքին՝ հիշելով, թե քանի անգամ անիրավ գործեր է արել, զգում էր, որ մեղանչել է Աստծո առջև, Նրա շնորհների անարժան է գտնվել, բայց անկեղծ սրտով զղջում էր՝ սպառնալով, որ Բազում-Ողորմ և Երկայնամիտ Տերը չի ցանկանում մեղավորի դատապարտությունը, այլ սպասում զղջման. «Աստուած, քառեա զիս զմեղաւորս»:

Ահա այս էր նրա ամբողջ աղոթքը, բայց ի՞նչ խոնարհ խոստովանություն և ի՞նչ գեղեցիկ աղերսանք: Ճիշտ է, կարճ էր նրա աղոթքը, բայց այնքան կրկնված և հավաքողով լեցուն:

Անշուշտ հեծվից դիտողի համար պիտի այն կարծիքը ձևավորվեր, որ Աստված պիտի գոհ լիներ օրինապահ փարիսեցուց և երես դարձներ գողացող, անիրավ մաքսավորից: Սակայն Տիտուսի դատողությունը բոլորովին հակառակն է:

«Աստծո առաջ,- ասում է,- մաքսավորն արդարացավ և Աստծուց թողություն ստանալով, դուրս եկավ փաճարից ներված ու սրբված, իսկ արդար, բարեկաշխ երևացողը նոր մեղքի տեր եղավ և փաճարից դուրս եկավ ավելի մեղավոր»:

Միեւիներ, փարիսեությունն աղոթքում արտահայտված հոգու դրսևորման մեջ է: Ինքն իրենով գոհ եղողը զղջում չունի, մարդկանց խաբելով, կարծում է, թե Աստծուն էլ հնարավոր է խաբել: Միայն ուրիշներին երեսալու համար օրինապահությունը առաքելություն չէ, բուն առաքելության ոգին գոյություն չունի նրա մեջ, միայն կեղևն է փայլուն, իսկ միջուկը՝ փտած է:

Միեւի բույրեր և եղբայրներ, եթե մենք այսօր զգում ենք մեր հոգում և մտքում, որ մենք էլ ենք այս փարիսեցու պես, ապա պիտի ազատվենք նրանից, կանգնենք խոնարհության ճիշտ ճանապարհին, որը տանում է դեպի կատարյալ զղջում, դեպի մաքրագործում և, ի վերջո, դեպի Ջրիստոս, որովհետև մեր Տերը չի խաբվում արտաքին երևույթներից, այլ մեր սրտերն է քննում: Եվ մեղավորի աղոթքը կընդունվի Աստծո կողմից կատարյալ զղջումով, որ պարունակում է անկեղծ ցավ, հարուցման պարրաստականություն և չմեղանչելու ձգտում:

Սիրելի ժողովուրդ, եկեք փորձենք յուրացնել մաքսավորի խոսարն պատկերը և մեր սրտից բխած աղերսանքը նրա հետ միասին կրկնելով՝ ասենք. «Աստուած քաւեա զիս զմեղաւորս, Աստուած քաւեա զիս զմեղաւորս, եւ կեցո»:

Անկասկած, անուշաբոյր խնկի նման պիտի վեր բարձրանա մեր աղոթքը, և մենք ևս մաքսավորի պես, եթե ոչ բոլորովին սրբված, բայց սրբության և արդարության կյանքն ապրելու մեծագոյն բաղձանքով, մեծագոյն որոշմամբ գորացած՝ այսօր և մեր բոլոր ապրած օրերին դուրս կգանք աստվածակերպ այս կամարներից ու խաղաղ հոգով կվերադառնանք մեր տները:

Ահա այսպես Տիտոս եզրակացնում է, թե «ով ամբարտաւանությամբ բարձրացնում է իրեն, ընկնում է Աստծո երեսից, զածրանում ու ստորանում է, իսկ ով որ ճշմարիտ խոնարհությամբ է ինքն իրեն ստորադասում, նա վստահաբար կհանդիպի Աստծո գթությանը և իրապես կբարձրանա»:

Շնորհք, սէր և աւարտածային սրբադար գոյութիւնն հղիցի ընդ ձեզ և ընդ ամենեւեաւն ամէն:

Տ. ԴԱՎԻԹ ԱՔԵՂԱՍ ՔԱՐԱՄՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(29 դեկտեմբերի 2002 թ.)

*«Տէր, գրէն գոհանամ հանապազ, որ զանց արարեիր
զիմով անարժանութեամբս, այսպիսի ահաւոր եւ
անպարտում խորհրդոյ կարգեցիր սպասաւորս,
ոչ յաղագս իմոյ ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ
թափուր եմ, այլ ի քո բազմազեղ ներողութիւնդ ցանկ
սպասինեալ՝ համարձակեմ կալ ի սպասաւորութիւն քո»:*
(խորհրդարան)

Տիրավի, անչափ է ողորմութեամբ, Տեր... Անհաղորդ էի Քո խոսքին, սակայն ծագեցիր
եռզուս մեջ աստվածգիրութեանդ լույսը, պարտիցիւր էութեանս Քո ջերմ սիրով ու կոչեցիր՝
խոսքիդ սպասավորը լինելու: Վարանցի մի պահ աստվածութեանդ կանչին ի պարաս-
խան: Թույլ էին ուսերս, Տեր, կենարար խաչդ կրելու համար, սակայն հայտնվեցիր ժպտուն
երեսով, ու կարծես շուրթերիդ կարդացի երբեմն Պեպրոսոսին ասված խոսքը:

Միրեն գիտ:

Այո՛, Տեր, սիրեմ եւ գիտես զի սիրեմ գ-Ջեզ (Նմմր, Նովի, ԻԱ 15):

Այս հավատումով ձեկի եկա խորանիդ առջև և սիրո ուխտս կնքեցի Ջեզ հետ: Դու ինձ
եռվիվ կարգեցիր Քո հոգին, իսկ ես խոստացա անձս դնել նրա համար...

Ու հիմա, դարձյալ կանգնած ուխտի նույն խորանին, մտածում եմ, թե՛

«Ջի՛նչ քոց քրիստոս Տեառն, ընդ ամենայնի զոր եւ եր ինձ»:

«Ի՛նչ հատուցում պիտի անեմ Տիրոջն այն ամենի համար, որ ինձ տվեց»:

(Սաղմոս ԸԺԴ 12)

Միրելի հավաքացյալներ, այս ապրումն է, որ այսօր, որպես երախայրիքն իմ խոսքի,
կամենում եմ ձեզ փոխանցել: Քարոզ չէ, որ խոստում եմ, այլ եռգերուխ ցանկությունս է, որ
տարեվերջյան այս կիրակին դարձնենք խորհրդածության և Աստծո հետ անկեղծ զրույցի
մի առիթ:

Այս տարին ևս դառնում է պարտություն՝ տանելով իր հետ մեր կյանքի բազում պահեր՝
և՛ ուրախություն, և՛ տխրություն, կարող ու երազանք, և՛ մանկան ծիծաղ, և՛ մոր լաց, որ
անցյալ են դառնում...

Եվ կանգնած գալիքի շեմին՝ սպասում ենք... Սպասում ենք, որ ուրախությունը բազմա-
պարկվի, որ տխրությունը խնդության վերածվի, թափառական կարոտն իր խաղաղ օթե-
վանը գտնի, որ երազանքն իրականություն դառնա, մանկան քրքիջը հարաւորի, ու մոր լա-
ցը երջանկության արտասուքի վերափոխվի:

Այսպիսին է մարդկային կյանքը՝ անվերջ սպասում...

Սակայն, սթափվիր, ով մարդ: Դու, որ մոլորվել ես կյանքի փառերում, մի պահ վեր բարձրացիր ժամանակից, մոռացիր ինքդ քեզ ու լուս խորհիր, թե ինչ ես հափուցել Տիրոջն այն ամենի համար, որ Նա է քեզ տվել: Թերևս մտածել ես, թե Աստված քո հափուցման կարիքը չունի, կամ էլ այնքան ես մխրձվել աշխարհային հոգսերի մեջ, որ նույնիսկ Աստվածուն էլ ես մոռացել: Կշտամբանք չեն այս խոսքերը, այլ անկեղծ մի հորդոր, որ Աստված այս սուրբ բնակարանում այսօր քո աղոթքն ուրիշ բաներով սկսես: Գեթ այս անգամ պես-պես խնդրվածքներ չներկայացնես, այլ սիրալիք շնջաս. «Ինչ ես կամենում, Տեր իմ Աստված, որ քեզ ընծայեմ ամանոթի այս շեմին: Կա՛մ մի բան, որ առավել ես սիրում...»:

Ու պիտի լսես մի ծայն, փառքեր բոլոր ծայներից. Աստված պիտի խոսի քեզ հետ. «Սիրելիս, մենությունս փարափելու եկար: Ընծա չէ, որ քեզանից ակնկալում եմ, այլ անկեղծ մի պարասխան. «Ուրախ կլինեիր, երբ հարազատ գավակդ մոռանադ ու լքեր քեզ, երբ գավակներդ իրենք միմյանց հանդեպ անտարբերությամբ ու թշնամանքով լցվեին: Գիտեմ, որ ամենադժբախտը կլինեիր...»

Ես՝ քո Տեր Աստվածն եմ, այդ վշտացյալ ծնողը: Ես ստեղծեցի ու փայփայեցի քեզ, սակայն դու չհիշեցիր ինձ, քեզ եղբայրներ ու քույրեր տվեցի, բայց դու արեցիր երանց...

Ընծա՛ ես կամենում եմ: Տուր ինձ սրբիդ խորքում մի անկյուն, որ քեզ մոտ ինձ օտար չգգամ, որ ինձ դիմելիս հայացքդ անորոշ երկինք չհառես, այլ քո սրտում ինձ հանդիպես: Եվ երբ անտարբեր անցնես մարդկանց ցավերի կողքով, սիրտդ մեղմ բաբախի, և դու հասկանաս, որ քեզ հառված աչքերը սեր են աղերսում...»:

Այս խոհերով ու ապրումներով Ձեզ եմ դիմում, Վեհափառ Տեր.

- Ինչ հափուցում պետք է անեմ Ձեզ այն ամենի համար, որ ինձ եք շնորհել, շնորհակալական երկրորդ արտասանեմ, թե՛ պես-պես խոստումներ տամ: Անկարող եմ բառերի վերածել սիրտս... Ձեր խոնարհ ու երախտագետ որդին եմ:

- Համբաճեմ եմ նաև Ձեր առջև, Սրբազան Հայր, որ փարիներ առաջ ուղղություն տվեցիք վարանոտ քայլերիս ու բացեցիք իմ առջև Հայոց Եկեղեցու հնաբույր դուռը, իսկ 40 օրեր առաջ շնորհներով պսակեցիք ինձ այդ նույն դռնից ներս:

Սրբիս մեջ ձեր կնիքն է, ո՛վ Վազգենյան և Գևորգյան անմար կանթեղներ:

Հոգուս մեջ գիտության կրակը վառեցիք, լույսի սպասավորներ...

Միտ ու անսահման նվիրումի մարմնացում դարձած անձս յուրաքանչյուրիդ շուրթերով այս պահին աղոթք է մրմնջում.

Մեր անուն Ցխուս

Սիրով Զով ճմլեա

Սիրտ իմ քարնդ էն. Ամեն:

(«Առաւօր լուսոյ»)

Տ. ՍՈՂՈՄՈՆ ԲԱՆԱՆԱԿԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՀՈՒՓՍԻՄԵ ՏԱՃԱՐՈՒՄ

(29 դեկտեմբերի 2002 թ.)

*«Առ զյուծ Տեսուն մերոյ Յիսուսի Արիստոսի,
զի լուծ նորա քաղցր է և բռն նորա փոքրոգի»:
(Չեռնադրուրյան Մաշտոց)*

Արիստոս հավիտենական պարզամտ փոքր իր առաքյալներին և նրանց միջոցով՝ ողջ մարդկությանը, որ վերցնելով իր լուծը՝ հեղինակ իրեն, որովհետև Տիրոջ պարզևած քաղցր լուծը և բռնը մեզ արժանացնում է մեծամեծ շնորհների և հավիտենական երջանկության:

Ջառախում օրեր են անցել այն պահից, երբ Արիստոսաեջ Մայր Տաճարում երկու միաբան սարկավագներս ծնկի իջնելով՝ մեր ուխտը կնքեցինք անմնացորդ կիրպով ծառայելու հայ ժողովրդին և Հայոց Եկեղեցուն:

Չեռնադրող Սրբազան Հայրն իր ձեռքը մեր գլխին դրեց՝ աղոթելով, որ արժանի լինենք քահանայական աստիճանն անարար պահելու Տիրոջ Սուրբ Մեղանի առաջ, իսկ Սուրբ Հոգին մաքրագործող և սրբագործող գործություն պարզևեց մեզ: Սրբալույս Մյուռոնով դրոշմվեցին և օծվեցին մեր ճակատներն ու ձեռքերը, և Աստված մեզ նոր մարդ դարձրեց, Սուրբ Հոգին նոր անուններով կոչեց մեզ:

«Փառք Բեզ, Աստուած, փառք Բեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք Բեզ»:

Առիթից օգտվելով իմ երախտագիտությունն եմ հայտնում ազգիս Վեհափառ Հայրապետին, որ օրհնեց և արարեց նրկու օծակից եղբայրներին քահանայական Չեռնադրության և օծման, ինչպես նաև Կուրայքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանին՝ հոգևոր ծնողի պարտականությունը հանձն առնելու համար:

Իմ երախտագիտությունը նաև Գերոգյան Հոգևոր Տննարանի անդամներին, որովհետև այն մեզ համար եղավ իմաստության ակունք և գիտելիքների շարժարան և որը մեզ փուլ առ փուլ կարողացավ հասցնել այս աստիճանին: Իմ շնորհակալությունը նաև Ս. Հովհաննես վանքի վանահայր Տ. Մարթեոս արքեպ. Պողոսյանին և հոգևոր դասին, որ սիրով ընդառաջեցին փափագիս՝ պատարագելու այս սուրբ կամարների ներքո:

Եվ այժմ, սիրելի եղբայրներ և քույրեր, իմ անդրանիկ Պատարագն եմ մատուցում և աղոթում ձեզ համար և խնդրում ձեր աղոթքը իմ և օծակից եղբորս համար, որ ուխտյալ զավակները մնանք մեր Երկնավոր Տիրոջ և հավատարիմ սպասավորները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Այսօր ավետարանական ընթերցվածքով վերստին պարմվեց փառք մնասեների առակը, որը մեզ է ավանդել Ղուկաս ավետարանիչը (Ղուկ. ԺԲ 11-28):

Մի ազնվական մարդ, որ պետք է զնար հեռու մի երկիր՝ իր թագավորությունն սրանալու, մեկնելուց առաջ կանչում է իր երեք ծառաներին և մեկին փառքով փառք, մեկին՝ հինգ, և մյուսին՝ մեկ մնաս, պարգևատրում է արդյունավորել դրանք մինչև իր վերադարձը: Երբ ազնվականը վերադառնում է և պահանջում արդյունքը, առաջինն ասում է. «Տե՛ր, քո մեկ մնասը փառք մնաս բերեց»: Եվ Տերը նրան փառք քաղաքների վրա իշխան է կարգում:

Երկրորդը նույնպես դրական պատասխան է տալիս, և նրան նույնպես իշխան է կարգում հինգ քաղաքների վրա: Վերջինս էլ գալով՝ մնասը թաշկինակի մեջ ծրարած ասում է. «Ահա քո մնասը, վախենում էի քեզանից, որովհետև խիստ մարդ ես, վերցնում ես՝ ինչ չես դրել, և հնձում ինչ չես սերմանել»:

Ի պատասխան այդ խոսքերի, Տերն ասում է. «Տեսց թո բերանով քեզ պետք է դադեմ, անհավատարիմ ծառա, գիտիր, որ ես խիստ մարդ եմ, գիտիր՝ վերցնում եմ՝ ինչ որ չեմ դրել, և հնձում ինչ որ չեմ սերմանել: Հապա ինչու իմ դրամը լուծայափոխներին չբովիր, որպեսզի ես, գալով, փոկոտներով միասին պահանջեմ այն»:

Վերջում, որպես բարոյական խրատ և պատվեր, մեր Տեր Հիսուս Քրիստոսն ասում է. «Ով ունի, նրան պիտի տրվի, իսկ նրանից, որ չունի, պիտի վերցվի այն, ինչ որ ունի»:

Ինչպե՞ս կարելի է այդ արտահայտությունը համալրելով աստվածային գթության, աստվածային բարության և ողորմածության հետ: Ավետարանական մյուս առակների նրման այս առակը ևս ստուգաբանվում է ժամանակի ընդհանուր պարամկան միջավայրում, երբ Հրեաստանի թագավորը պետք է մեկներ Հոռոմ կայսրից ստանալու համար իր թագը որպես Հրեաստանի թագավոր:

Թագադրման այս կարգը նկատի ունեն Հիսուս՝ մնասների մասին առակը պատմեցիս, որն ունի նաև այլաբանական և բարոյական իմաստ: Քրիստոս այս առակը պարմում է Երուսաղեմ մեկնելուց մի քանի օր առաջ, երբ բոլորն սպասում էին, թե Քրիստոս պետք է մտնի Երուսաղեմ և վերականգնի Իսրայելի թագավորությունը:

Քրիստոս սակայն այս առակով այլաբանորեն ցույց է տալիս, որ Ինքը արքայությունն ստանալու համար նախ պետք է հեռանա, խաչի վրա բարձրանա, հարություն առնի, վեր ելնի, Հոր աջ կողմում նստի և հետո միայն վերադառնա՝ որպես Թագավոր և Տեր, ժառանգակից դարձնի ընտրյալների Երկնքի Արքայությանը:

Իսկ այն մեկը, որ իրեն տրվածը ծրարել ու թաքցրել էր վարշամակի մեջ, փարիսեցիներին ու դպիրներին դասն է ներկայացնում, ովքեր հրեական աստվածատուր օրենքը իրապես ծրարել էին թաշկինակի մեջ, չէին կիսում ուրիշի հետ, վախենում էին որն է բան ավելացնել այդ օրենքին՝ պահելով օրենքի միայն փառը: Նրանց մեջ ոչ թե սերն էր իշխում Աստծո նրկատմամբ, այլ՝ երկյուղը, վախը, սարսափը, որովհետև երանք Աստծուն պատկերացնում էին որպես խիստ անձնավորություն, որ պահանջում է այնպեղից, որպեղ ոչինչ չի տվել, և հնձում այնպեղից, որպեղ ոչինչ չի սերմանել:

Միրելի եղբայրներ և քույրեր, բնավ պատահական չէ, որ այս առակն ընթերցվեց այսօր՝ այս կիրակի, որով մենք եզրափակում ենք այս տարին: Մեր Հայրապետների իմաստուն կարգավորությամբ, մենք մեկ անգամ ևս ունենդրեցինք այն, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը խորհրդածի ոչ միայն այս տարի, այլև ընդհանրապես մեր ողջ կյանքում, մեզ տրված պարգևների իրականացման, արդյունավորման և առավել արժեքավորման մասին:

Ինքնաքննության այս պահին մենք պետք է ուշադիր լինենք, որպեսզի ցինի, թե վաղը, երբ Քրիստոս՝ մեր Տերը, մեզանից հաշիվ պահանջի, մեր ունեցած պարգևը թաշկինակի մեջ ծրարված մնա: Աղոթենք և աղոթելուց առավել և աղոթելուց առաջ գոռենք, քարոզենք, և թող այս տարվա վերջին կիրակին մեզ համար լինի մղում, ջանք, ճիգ, որպեսզի Քրիստոսին վկայելու մեր սկսվող քաղաքությունը նոր տարուց կառուցանանք մեզ տրված շնորհներով կրկնապատկել, եռապատկել, բազմապատկել՝ ի փառս Աստծո և ի շինություն մեր Եկեղեցու, ամեն:

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՊԱՏՄԱՎՈՒՆՈՒ «ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ԱՐԱՄԵԱՆՍ ՆԱԿԱՆԳԻ» ԵՐԿՐ

Ողբի ժանրը, ծագելով ցախամաշտոցյան շրջանում, հետագայում գրականացվել և հետաքրքրական դրսևորումներ է ունեցել: Ժողովրդական սգո ծեսի մի քաղկացուցիչ մասը լինելով՝ ցանկագր է տվել պատմական և այլ թեմաներով ողբի ժանրատեսակների առաջացմանը¹: Մասնավորաբար պատմական ողբի յուրահատկությունները պայմանավորված են այս ժանրին բնորոշ թեմաներով, այսպես այն բնութագրելը չափազանց դժվար կլիներ²: Այդ առանձնացումը կատարում են ցախ իրենք՝ հեղինակները՝ որոշ չափով հեշտացնելով ուսումնասիրողի և ընթերցողի գործը:

Երբեմն այն անդրադառնա՞նք առավել հայտնի պատմական ողբերիմ, ապա դրանք ուշագրավ մի շարք կենդանացնեն: Այսպես, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերջին գլուխը (Գ գրքի ԿԸ գլուխը), Դավթյան Քերթովի «Ողբ ի մահն Ջևանջերի...», Գր. Նարեկացու «Մատյան Ողբերգության» պոեմը, Ն. Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոեմը, Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանի (Ողբ հայրենասիրի)» վեպը: Ամշուշտ, թվարկումից դուրս են մնացել քազմաթիվ ու քազմաբնույթ ծիսական նորերը՝ մահերգերը,³ ուշ միջնադարում ստեղծված մեծաթիվ քանաստեղծություն-ողբերը և այլն:

Գրական այս տեսակը սկզբում գրվել է արձակ, իսկ այնուհետև՝ չափածո: Մասնագետները գտնում են, որ չափածոյի վերածումը տեղի է ունեցել 12-րդ դարից սկսած⁴: Նման մոտեցումն ընդհանուր առմամբ ճիշտ է, չնայած Մագիստրոսի (990-1058 թթ.) Ողբը⁵ գրված է չափածոյի սկզբունքներով արդեն 11-րդ դարում և կազմում է Սարգիս Ա-նցի վարդապետին ուղղված թվով ԺԺ (19-րդ) թղթի⁶ մի մասը:

Գրված է 1045 թ. Աճիի Բագրատունյաց վերջին գահակալ Գագիկ II-ի գահազրկման և հայոց թագավորության անկման առնչությամբ: Թեև Գագիկին իշխամը չի համարում, բայց ողբում է հայրենի երկրի կորուստը՝ մշելով. «Կրկին կականումն եմաս կուրացելոյ աչացս, տեսանելով սակաւ իմչի վերայ եկեալ ամեզրական տառապանս»⁷:

Այդ ժանր չարիքից «հեղձամղձուկ» եղած՝ մեղադրում է մեր «Արամյան» անվտանգությունը: Նյութը վերցնելով Խորենացուց⁸ մա Պատմաբոյ պես ման քննադատում է «Արա-

¹ Յեն Պ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), Երևան, 1996, էջ 5-14, 29-30:

² Յեն Մույմ տեղը, էջ 18-20:

³ Յեն Երվանդ Հայրյան, Երկեր, Բ. Ա., Երևան, 1981, էջ 375-378:

⁴ Յեն Պ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր, էջ 45:

⁵ Յեն Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 59-61:

⁶ Յեն Մույմ տեղը, էջ 57-64:

⁷ Յեն Մույմ տեղը, էջ 57:

⁸ Յեն Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 104-105, 108-109:

մեան սեռի հպարտութիւն և ամամոք բնութիւն և խստապարանոց՝ քարքերը: Նրա մորմոքը ծնվում է դեպքերի ողբերգականությունից և անելանելի վիճակից: Ցավում է, որ ոչինչ չի արվել աղետը կանխելու համար, իսկ այժմ իրենք միմեան են նավաթեկյալների, որոնց քշում է սանդաղամետական հողմը:

Խորեմացու հիշատակած անունները Գր. Մազիստրոսն իմաստավորում է, զմահատում և ինքը ևս նրանց հերոսական անցյալը հակադրում ժամանակի թշվառ վիճակին:

Թվարկված անունները, նրանց հերթականությունը որոշ դեպքերում խախտվում են ու ընդմիջարկվում ուրիշներով: Դա խոսում է հեղինակի կողմից լրացուցիչ աղբյուրների գործածության մասին: Հարցի լուսարանման համար օգտակար դիտողություններ է անում մշահավոր հայագետ Կ. Կոստանյանցը⁹:

Այսպիսով՝ Գր. Մազիստրոսի չափածոյին (մասնավորաբար ման չափածո թղթերին) ավելանում է ևս մեկը՝ «Ողբ ի վերայ Արամեանս մահանգի» երկը: Դա գալիս է հաստատելու, որ նրա արձակը ներքին ռիթմով և տաղաչափական որոշակի յուրահատկություններով օժտված հուզական արձակ է: Մազիստրոսի Ողբը շատ հետաքրքիր, անսովոր զարգացում ունեցող ստեղծագործություն է: Ստորև այն ներկայացնում ենք համապատասխան չափածո տողատմամբ:

ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ԱՐԱՄԵԱՆՍ ՆԱՀԱՆԳԻ

Վա՛յ, ի վերայ Հայկեան և Արամեան մահանգի՝
իրև նուիրական ստգտանք,
Զորս ասեալ փութանակի զամփաբատելից
անիծից ինձ քուրծ:

Ո՛ւր Յաքեթ, թեպէտ կրտսեր, կորովի,
Ո՛ւր Յապետոսթեան յարմարութիւն մատանց և քաջութիւն,
Ո՛ւր Թիրասեան թագ և զօրութիւն,
Ո՛ւր Թորգոմեան թևակախութիւն,
Ո՛ւր Հայկեան հանդէս և հիացուցանելի գործառնութիւն,
Ո՛ւր Արամեան արմատ և մեծութիւն,
Ո՛ւր Արամայիսեան արութիւն,
Ո՛ւր Ամասիայն աստանօր տեսութիւն,
Ո՛ւր Գեղամայն գեղեցկութիւն,
Ո՛ւր Հարմայն հոյակապ հիմնարկութիւն,
Ո՛ւր Արամ՝ Արամեան մահապետն,
Ո՛ւր Արայն Գեղեցիկ՝ Այրարատեան կերտացօղ,
Ո՛ւր Անուշաւան՝ անուշակացն կազմիչ
և քարութեան յարդարիչ,

⁹ Տե՛ս Թղթեր, էջ 318-324:

Ո՛ւր Պարէտ՝ պարառաքար պերճացեալ.
 Ո՛ւր Արբակ՝ արքանեակ բարեաց.
 Ո՛ւր Զաւան՝ զօրաւոր զինաւ.
 Ո՛ւր Փառնակ՝ փառացի գեղաշուք.
 Ո՛ւր Սուր՝ սիրելիք սէրուն.
 Ո՛ւր Հաւանակ զիրաճաւան և յստակ.
 Ո՛ւր Վաշտակ. որ ըստ ամուսնի վաշեակ.
 Ո՛ւր Հայկեակ, որ ըստ հատում իւր հակակ.
 որ է հարթակ հաւատար.
 Ո՛ւր Ամբակ, որ միշտ մանուկ պատանեակ.
 Ո՛ւր Առնակ. այսիքն՝ արի այրական.
 Ո՛ւր Ծաւարշ՝ ըստ պարսկականին շարի բաշ՝
 միշտ ուրախ թարգմանեալ.
 Ո՛ւր Նորայր, վասնզի մոր այրութիւն
 ցուցանէր մշտայարմար զօրութեամբ,
 Ո՛ւր Վստամ. սա մեծարու զօրացն
 վեհաստամ կոչեցաւ.
 Ո՛ւր Կար՝ իբրու կարող բոլորին.
 Ո՛ւր Գոռակ. սա խիզախօղ ի մարտի
 և մեծաձայն գոռոս ունէր,
 Ո՛ւր Հրանտ՝ հրատեսակ գեղատիպ.
 Ո՛ւր Ընծաք. սա ընծայեալ ի թագմաց արքայից,
 Ո՛ւր Գղակ. սորա գեղոս թագունս կերտացեալ.
 Ո՛ւր Հօրայ՝ հզօրացեալ հայրենեօք.
 Ո՛ւր Զարմայր՝ զարհուրելի զօրութեամբ,
 ի Հելլենացոց մեռանի,
 Ո՛ւր Պերճ՝ պանծաւոր այր և սէզ
 ի Սանեան ցահանգէ,
 Ո՛ւր Արքուն՝ բնականագոյն զօրութեամբ,
 Ո՛ւր Բագուկ՝ Բզնունեան մահապետ,
 Ո՛ւր Հոյ՝ հրաշակերտն տեսեամբ,
 Ո՛ւր Յուսակ՝ յուսացեալ զօրութեամբ,
 Ո՛ւր Կայպակ՝ իբրու կապտօղ զբագունս,
 Ո՛ւր Սկայորդի, որ և հսկայ էր տեսեամբ.
 Ո՛ւր Պարոյր՝ առաջին մեր պաակաւոր.
 Ո՛ւր Հրաչեայ՝ գեղեցկատեսիլ երեսօք.
 Ո՛ւր Փառնաւան՝ փառացի, փառասէր.
 Ո՛ւր Պաճոյն, որ բոլորովին էր պատշաճ,
 Ո՛ւր Կոնակ, որ թեկն ածէր կոնակաւ
 և մահանջէր մարտուցեալ.

Ո՛ւր Բառս՝ փառացի, և ըստ պարսկականի՝ բազմանի,

Ո՛ւր Հայկակ՝ համանման իւր հաւում,

Ո՛ւր Երուանդ, որ ի մարտին լինէր անդ,

Ո՛ւր Տիգրան, որ ըստ Պարթևին մեծ և ծանր,

Ո՛ւր Բար՝ այսինքն դուռն բարեաց,

Ո՛ւր Տիրամ՝ որպէս Տիգրան, միով պակասեալ

զծիւ կրտսէր գոլ մմա,

Ո՛ւր Վահագն, որ և Երկնէր երկիր, և որ

զկնի առասպելին առումն,

Ո՛ւր Առաւամ, որ աւետէր զբազումս,

Ո՛ւր Ներսէհ, որ և զեւտ յորդ ասացեալ,

Ո՛ւր Զարեհ՝ զարմացման արծանի,

Ո՛ւր Արմօզ՝ Արամեան շառաւիղն,

Ո՛ւր Բազամար, որ զքազինսն յարդարէր,

Ո՛ւր Վամ՝ վանօղն բազմաց,

Ո՛ւր Վահէ՝ վեհն և վախճանեալ:

(Յայսմ վայրի թողից զայնոսիկ, որ զկնի

այսմ մինչև ցայս ընդ յծով ծառայեալ.

որ և ի մեզ հասանէ տողանի, բայց և

առա ոչ թողից չասել զՊարթևացն պարու):

Ո՛ւր և Վաղարշակ՝ քաջ ի քաջացն Բախլայ,

Ո՛ւր Արշակ և Արտաշէս,

Ո՛ւր Տիգրան և Արտաւազդ,

Ո՛ւր Արշամ և Աբգար կամ Սամատրուկ և Երուանդ,

Արտաշէս և միւս Արտաւազդ, Տիրան, Տիգրան, Վաղարշ և Խոսրով

Ո՛ւր մերն Տրդատ, Խոսրով, Տիրան և Տիգրան,

Արշակ, Վարազդատ, Արշակ և վերջին Վաղարշակ:

ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

ՄԻ ԷՋ ՄԵԼՔԻՄԵՂԵԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՂՈՍ ՄՈՒՐԱՂՅԱՆԻ ՆՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Ազգային-Ռոգևոր պառլամենտական ուղղության ներկայացուցիչներից Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրադյանցի (1836-1903) աշխարհական տարիների գրական-Ռապա-րալյախոսական գործունեության մի կարևոր փուլն է Թիֆլիսի «Կոռնկ Հայոց աշխարհի» հանդեսին աշխատակցությունը, որի նրեք Ռիմնադիրներից մեկն էր նա՝ Մարկոս Աղա-բեկյանի և Մատթեոս Մամուրյանի հետ միասին:

Հայ Եկեղեցին ու լուսավորությունը իրեն անքակտելի միասնություն և ազգապա-րանման նախապայման դիտարկող մտավորականի որոնումների, մտորումների, ուսում-նասիրության, քննության այն շրջանակն էր դա: Այս տարիներին Մուրադյանցը տա-գրում է մի շարք Ռողվածներ, որոնք հասուն գրչի արտահայտությունն են և բացահայտում են հեղինակի Ռապաարակախոսական ունակությունները, ընթացիկ կյանքի խնդիրներ խոր գիտակցումը, հայոց պատմության կենսափորձն ու փիլիսոփայությունը ժողովրդի առօրյա Ռոգևորի լուծմանը ծառայեցնելու ձեգտումն ու կարողությունը:

1862 թ. «Կոռնկ»-ի Գ. համարում տպագրվում է Գ. Մուրադյանցի «Պարսիկների Ռինգ կորստաբեր խորհուրդը մեր հայոց ազգի համար» Ռողվածը, որ հեղինակը հետազոտողի նուրբ զգացողությամբ վերլուծում է Եղիշեի պատմության մի դրվագը: Նա վարպետորեն վեր է հանում ու ներկայացնում այն ենթատեքստը, որ հայոց Ռոգևոր ակնառու գործիչնե-րից մեկը պահ էր տվել մատյաններին:

Վկայակոչելով Հին աշխարհի պատմությունը, Ռողվածագիրը նկատում է, թե այն ազ-գերի գոյության ահեղ մի պայքարի ժամանակաշրջան էր, երբ երեկվա հաջողակ «ազա-կույն» կարող է վաղը ինքն անհետանալ պատմության թատերաբեմին. «Մի ազգ կործա-նելը, կամ մարդկության մեծ գերդաստանի մի ցեղը կլանելը և աշխարհին երեսինն անհե-տացնելը եղել է փառք և պարծանք միսի համար: ...հայ ի"նչ են եղել ազգակործանների աւերանաց գործիքները: Նոցա գործիքներն են եղել յայտնապէս Ռուր, սուր, կոտորած, արիւնահեղութիւն, և աւերումը, իսկ ծածկապէս քաղաքական խորամանկ բարեկամու-թիւն, Ռնարք երկպառակութեան և ջանք աղքատացուցանելու»¹: Այո, ցանկացած իրավի-ճակում ազգակործան առերևույթ գործոնները հանդես են գալիս անտեսանելի, խորքային, ավելի ազդու միջոցների հետ, և այդ հանգամանքը ճիշտ է նկատել հեղինակը:

Ռյուզանդիայի ազդեցությունը Անդրկովկասում թուլացնելու, անանցանելի անջրպետ առաջացնելու լավագույն միջոցը հավատափոխությունն էր: Հաշվարկը ճիշտ էր, Ռոգևոր-պաշտամունքային մերձեցումը պիտի հեշտացներ մնացյալ գերխնդիրների արագ լուծու-մը: Վարդանանց ժամանակաշրջանը լավ ուսումնասիրած Դերենիկ Դեմիրճյանը նկա-տում է. «Հագկերտին այս գործում խորհրդատու եղան մոգերը՝ պարսից կրոնավորները,

¹ Կոռնկ Հայոց Աշխարհի, 1862 թ. Գ. էջ 177 (այսուհետ՝ ԿՀԱ):

որոնք հենց նրանով հեղինակություն ունեին նրա մոտ, որ ինքը՝ Հազկերտն էլ միևնույն նպատակին էր ձգտում»²:

Գարեգին Մուրադյանը քննում է Եղիշե պատմիչի նկարագրած այն շրջանը, երբ Հազկերտն իր հավատարիմ ծառաներից մեկին՝ Դեմշապուհին, ուղարկում է Հայաստան: Նա կեղծ բարեկամական ու խաղաղասեր կեցվածքով աշխարհագիր է անցկացնում երկրում. «...ի թողութիւն հարկաց և ի թեթևութիւն ծանրութեան այրուծիոյն»³: Սակայն, նրա բուն նպատակը շատ շուտով պարզ է դառնում: Եվ նրա հինգ գլխավոր ձեռնարկումներն էլ, Մուրադյանի բնորոշմամբ, «կորստաբեր խորհուրդներ» էին հայոց համար: Հողավաճագիրը քննում է դրանք ըստ հերթականության:

«Առաջին, զազատութիւն Եկեղեցւոյն արկամէր ի ծառայութիւն», - գրում է պատմիչը⁴: Սա երևի ցանկացած այլ ազգի դեպքում այն կործանարար ազդեցությունը չէր ունենա, որքան հայի, քանզի գիտեմք, որ հոգևոր կառույցները բացառիկ դեր ունեն մեր ժողովրդի ճակատագրում: «Ազատութիւն հայրենեաց, ազատութիւն թագաւորութեան, ազատութիւն ազգի այնչափ մեծ նշանակութիւն չունէին այս դարումս Հայոց համար, որչափ ազատութիւն Եկեղեցւոյ: Նոյն իսկ ազգի ոխերիմները մեր բովանդակ երկիրը ւաւերելուց յետոյ, թագաւորամիստ քաղաքները փոշիացնելուց յետոյ, տեսնելով, թէ Հայերին չեն կարողանում իրանց ցանկացած վնասը հասցնել, ջանահոգաւ էին լինում նորա ամենամեծ ազատութիւնը, նորա կրօնական ազատութիւնը նուաճել», - նկատում է Գ. Մուրադյանը⁵:

Եկեղեցու ազատությունը դեռ ծառայության տակ, նշանակում է վնասել ազգի կենսարար արմատը, ոգին պահող բոլոր կրակը փորձել համզգնել: Միմչդեռ, դա մեր ամենամուրբ ու ամենամաքուր գործոցն է, թերևս ամենակարևոր կովանը, որն ազգանվեր հոգևոր գործիչների առկայության դեպքում պահպանվում վահան է եղել, բացակայության դեպքում՝ Աքիլեյան գարշապար: Եվ միայն պարսիկները չեն, որ կռաժել ու փորձել են ջարդել այդ ուժը: Հայ գաղթավայրերի պատմությունը ասվածի կենդանի վկան է նաև այսօր: Ու ճիշտ է նկատում հողավաճագիրը՝ ինքնաբոյս մի պողոթնամբ գրելով. «Էլ ի՞նչ էին թողնում մեր ազգի համար պարսիկները, երբոր Եկեղեցին ծառայութեան տակ էին գցում, թագաւորութիւն, պերճութիւն, հարստութիւն, զօրք և զօրականք - ոհ, սոքա վաղուց արդէն ստրկութեան և ծառայութեան մէջ էին: Կորցնել Եկեղեցու ազատութիւնը, նոյնն է, թէ կորցնել հոգու, մտքի ազատութիւն, և ազգին դատապարտել մահուան»⁶:

Երկրորդ ազգակործան «խորհուրդը». «...միայնակեաց քրիստոնեայք, որ քնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրով էարկ»⁷: Մուրադյանը նկատում է, որ «միայնակեաց քրիստոնեա»-ները աշխարհիկ կյանքից հրաժարված, հեռավոր մեծաստաններում ու վանքերում ապաստանած, քրիստոնեական կրթությամբ ու գիտությամբ նվիրված անձինք էին, ուստի ազատ պիտի լինեին հարկերից: Իսկ Հազկերտի հետին նպատակը մեկն

² Գ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու հ. 12, Երևան, 1985, էջ 304:

³ Եղիշե, Վասն վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1989, 2-րդ լեզանակ, էջ 44:

⁴ Անդ:

⁵ ԿՀԱ, նույն տեղում, էջ 179:

⁶ Անդ, էջ 180:

⁷ Եղիշե, Վասն..., էջ 44:

էր. «...հիմնայատակ անի մեծաստանները. որոնք քրիստոնէական ճշմարտութեանց վառարաններն էին. որ դիրքին ինի մրա համար, տարածել մոգական ուսմունքը, և արմատաքանդել էին. որ դիրքին ինի մրա համար, տարածել մոգական ուսմունքը, և արմատաքանդել էին. որ դիրքին ինի մրա համար, տարածել մոգական ուսմունքը, և արմատաքանդել էին... Միշտ այսպիսի խորհուրդներ են յղանում չարասէր տիրապետները, երբ կամենում են մի ազգի գոյութիւնը ջնջել աշխարհիս երեսից»⁸:

«Երրորդ, զհարկ աշխարհին առաել ծանրացոյց».- շարունակում է թվարկել Եղիշե պատմիչը⁹: Այսպիսով հայերը քայլ առ քայլ, թիզ առ թիզ զրկվում էին իրենց իշխանութիւնից: Պատմիչի մշած այս մեկ սեղմ նախադասութիւնը, թե հարկերն առավել ծանրացրեց, հասկանալ է տալիս, որ առանց այն էլ ծանր հարկերն արդեն անտանելի չափերի ու ծանրության հասան:

«Հարկը առաջ առնում էր շէն քաղաքներից, արդիւնաբեր աղբիւրներից, երկրի տարեկան արդիւնքներից և հարուստ տեղերից: Բայց վերջումը հարկ է դրում նաև անապատ դաշտների վերայ, անտառների վերայ, երկրագործական գործիքների վերայ, գերանների վերայ, վառելու փայտի վերայ, այգեստանների ցանկապատների վերայ... Հարկ առնել այն տեղից, ինչ տեղից արդիւնք չէ ստացում, հարկ առնել այն տեղից, ինչ տեղ հարկ տալու կարողութիւն չկայ. մշանակում է ժողովրդին պարտքի տակ ձգել, աղքատութեան մէջ հաջել և մաշել, ճնշել և հարստաճարել...»¹⁰:

Ի դեպ, Եղիշե երեցն էլ է նկատում, թե պարսիկները նույնպէս զարմանում էին, թե որտեղից են հայերը կարողացել գտնել միջոցներն ու չեն սպառվում դրանք. «...ուստի» այս ամենայն գանձ ելանէ՝ զիս՝ որ շէն կայցէ աշխարհն»¹¹:

Կիրառված շրորորդ միջոցը ևս ազդու է և արդիական թուր ժամանակներում. «...զնախարարեանն թանաքակութեամբ արկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խոռվութիւն»¹²:

Այսպիսով կիրառվում է դեռևս անտիկ աշխարհից հայտնի ու փորձված «քաժանիր, որ տիրես» սկզբունքը: Սա մտքը հարց է, և Գարեգին Մուրադյանը շատ ճիշտ նկատում է՝ իշխում է այն թուր կարծիքը, թե հայ ժողովուրդը ամբիաբան է (այս թուրը մթնոլորտ պահպանվում է նաև այսօր): Բայց, առարկում է նա, ամբիաբան են նաև մյուս ժողովուրդները, և վկան է համաշխարհային պատմությունը: Սակայն, ի տարբերություն մրանցից, հայերի մեջ ամբարշտություն, երկպառակություն, ամբիաբանություն սերմանել են միշտ օտարները: Այսինքն՝ ոչ թե ազգային հատկանիշ է դա, այլ դրսից թելադրված վարքագիծ:

Հայոց պատմությանը քաջատեղյակ յուրաքանչյուր ոք կարող է դա ապացուցել, համոզված է հոգվածագիրն ու համապատասխան փաստարկներ է բերում: Հեղինակի համոզմամբ, հայոց միաբանության ամենախոսուն վկան Ափիլոսոփն է, աշխարհափայտ հայն ամենուր իր ազգային դիմագիծը պահում է հենց միաբանության շնորհիվ: Եվ այս տեսակետից դժվար է համաշխարհային պատմության մեջ համեմատության մեկ այլ օրինակ

⁸ ԿՀԱ, Ուղմ տեղում, էջ 182:

⁹ Եղիշէ, Վասմ..., էջ 44:

¹⁰ ԿՀԱ, էջ 183:

¹¹ Եղիշէ, Վասմ..., էջ 46:

¹² Առդ:

գտնել: Իսկ Հազկերտը ամքարշտություն անբմանելու բոլոր միջոցները գիտեր: Նրա սատարացները մեկի տոհմային կալվածքները վերցնում, տալիս էին մյուսին, մեկին իշխանությունը տրվում էր ի հաշիվ մյուսի: Եվ իմշու միայն Հազկերտը:

Բայց, ըստ Եղիշեի, վատթարը Ռիմզերորդ միջոցն էր. «Եւ եւս չարագոյն Ռիմզերորդն. քանզի որ հազարապետն էր աշխարհին, իբրև զհայր վերականգու համարեալ էր աշխարհակամաց քրիստոնէից, գրգռեաց յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա, և հասնալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա Պարսիկ ած յաշխարհն, և մեւս մոգպետ՝ դատաւոր աշխարհին, զի զԵկեղեցւոյն փառսն աղաւաղեսցեն»¹³:

Մոգերը, մոգպետները ամենամոլեռանդ ու նեմզ հակառակորդներն էին քրիստոնեության և նրանց կարգվում էին «դատաւոր աշխարհին», հարյուր հազարներով ցրվում էին նրկի բոլոր կողմերը, միջոցների մեջ խտրություն չդնելով՝ աղծատում, ջլատում էին ժողովրդի ամրակուռ ոգին: Հատկապես այս ուժի հետ էր մեծ հույսեր կապում Հազկերտը: Հակառակ դրան հայ, հոգևորականները զրկվում էին իրենց հոտի հետ շփվելու, քարոզելու, ազգային սովորություններն ու ծիսակարգը ուսուցանելու հնարավորությունից:

«Ազգ կործանելու գլխաւոր հիմքերն են, - ազգային սովորութիւնները փոխել, եկեղեցական կարգերը խանգարել, հայրենի ուսումը և լեզուն արգելել, թէ աղջիկ, թէ տղայ օտար ուսումով կրթել, ընտանեկան սրբութիւնը, որ ազգայնութեան կենդրոնն է, ապականել... Ինչ ազգ կ'ընկնի այս որոգայթների մէջ, ի հարկէ կամաց կամաց կկորչի նորա ազգութիւնը», - եզրակացնում է Ռոդվանդազիը¹⁴:

«Պարսիկների հինգ կորստաքեր խորհուրդը մեր հայոց ազգի համար» Ռոդվանդա՝ կոռունկ Հայոց աշխարհի» ամսօրյայում Մելքիսեդեկ արքեպիսկոպոս (աշխարհական անվամբ՝ Գաբեգին) Մուրադյանցի տպագրած լավագույն Ռոդվանդներից է անկասկած, ուր ակնհայտ են ազգային գործչի, ճշմարիտ մտավորականի, ներհում ուսումնասիրողի բոլոր շնորհները, ինչն էլ հետաքրքիր է դարձնում մատուցվող նյութը, որը ծրագրային է իր տեսակի ու ձևի մեջ:

¹³ Եղիշե, Վասմ... էջ 46:

¹⁴ ԿՀԱ, էջ 190:

ՄԵԼՍ ՍԱՆԹՈՑԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԶԵՆՈՑՆԵՐԸ

«Կյորեն»-ում Ակսել Բակունցը կերպարաստեղծման մոր միջոցներ է կիրառում՝ Ռենվելով Ռառկապետ ազգային Ռին, պատմական-գեղարվեստական քրոնիկոնի ժանրային ավանդների վրա, չնայած քաջածանոթ էր ման մյուս ժողովուրդների միջնադարյան քրոնիկոններին, ամգամ իսպանական միջնադարի Ալֆոնս 10-րդ Գիտնական թագավորի կազմել տված «Խրոնիկա ջեներալին» (13-րդ դար):

Գրողների առաջին համագումարի ելույթում Ակսել Բակունցը զարգացրեց «Լիտերատուրնայա գազետա»-ի Ռարցագրույցում արծարծած իր մի քանի մտքերը: Գրողը առաջարկում էր վերադառնալ դեպի ժողովրդական ստեղծագործության սկզբնաղբյուրները, որը հետագայում, իրենցից հետո, ստացավ գիտական հետևյալ բնորոշումը. «Վերադարձ դեպի ռեալիզմի նախաֆիմքերը»:

Համագումարում Բակունցը նշում է. «Ժամրի Ռարցի կապակցությամբ պետք է ասեմ, որ մեծ հետաքրքրություն է ներկայացնում գեղարվեստական պատմական քրոնիկոնի ժանրը: Հայկական պատմական քրոնիկոնների վիթխարի քանակությունը բոլորովին չի օգտագործված գեղարվեստական գրականության կողմից: Մեր գրողների պարտականությունն է՝ քննել, ուսումնասիրել դրանք, քննադատորեն վերցնել այնտեղից էպիկականությունը, արտահայտման խտությունը, լեզվի գունեղությունը, արտահայտչական Ռարքսությունը, քառերի ժլատ տնտեսումը, որոնք չափազանց բնորոշ են գեղարվեստական քրոնիկոնի համար»¹:

Հայ միջնադարյան գեղարվեստական գրականության էպիկական ազգային գործերը Ռիմնականում զարգացել են այս ժանրի ոլորտում: Բակունցը դրանք նկատի ուներ, ինչպես ման ավարտվող իր «Կյորեն»-ը, որը գեղարվեստական քրոնիկոնի ժանրի «երգիծական» տարատեսակի ամենափայլուն դրսևորումներից մեկն է ո՛չ միայն քրոնիկոններով Ռարուստ Ռայ գրականության մեջ:

Որքանո՞վ է Բակունցի «Կյորեն»-ը շրջանակվում գեղարվեստական քրոնիկոնի ժանրի ընդգրկման շառավիղի մեջ: Նախ՝ երգիծական բնույթը կամ միտումն արդեն «Կյորեն»-ն ուղղակի ձևով Ռեռացնում է պատմական քրոնիկոնի ժանրից: Բայց քանի որ երգիծանքը «Կյորեն»-ում գեղարվեստական միջոց է և ոչ թե գեղարվեստական նպատակ՝ այդպիսին է միջնորդավորված, Ռետեանքային, Ռեռանկար ձևով, Ռետեաքար երգիծանքը չի կարողանում ամբողջովին յախտել երկի ժանրային Ռիմքերը:

«Կյորեն»-ում սուղ են պատմական Ռավաստի թվերն ու փաստերը (թվական երեք փաստ կա ընդամենը), որովհետև Բակունցին հետաքրքրում է ոչ թե ժամանակային Ռա-

¹ Ակսել Բակունց, Երկեր, Ռտ. Բ. Երևան, 1979 թ., էջ 610:

պատկերի դեպքերի ու իրադարձությունների հաջորդականությունը, այլ, ինչպես մեզ հուշում է ստեղծագործության ընթացքը, հեղինակին հետաքրքրում են որոշակի ժամանակահատվածի (19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի) իր հայրենի քաղաքի բարքերն ու կենցաղը, ուստի «Կյոռես»-ում շեշտադրումը կատարված է այդ ժամանակահատվածի հասարակական կյանքի շերտերի վրա: Սակայն սա չի նշանակում, որ նաև Հովհաննես Թումանյանից եկող իր ինքնատիպ ռեալիզմի մեթոդով ստեղծագործող հեղինակը չէր կարող իր պատկերած բարքերի հիմքում ու հետևում չտեսնել սոցիալական քննադատման և հասարակական հնչելություն ունեցող խնդիրներ: Տեսնում է և այն էլ ինչպիսի՞ք:

Բակունցի «Կյոռես»-ը, որպես գեղարվեստական քրոնիկոնի ժանրի նմուշ, ունի մի շարք առանձնահատկություններ: «Կյոռես»-ի պատումը կարծես թե ոչ սիստեմավորված, ոչ պատճառահետևանքային ու «ամտրամաբանական» շարադրանք է: Ոճական ու կոմպոզիցիոն այս յուրահատկությամբ էլ ապահովվում է «Կյոռես»-ի և պատմական քրոնիկոնի ժանրային արտաքին, ձևական նմանությունը: Սակայն պատմական քրոնիկոնից «Կյոռես»-ը շատ է տարբեր: «Կյոռես»-ում ստեղծագործական թեմատիկ հիմնական թիրախը կենցաղն է, և պատմական անցքեր ու իրադարձություններ համարյա չկան: Եթե կան էլ, ապա դրանց հետադարձ արձագանքները սոսկ և ոչ թե բուն իրադարձությունները:

«Կյոռես»-ում Բակունցը մի քառով, փոքրիկ մի դիպվածով ստեղծում է դիմանկարներ՝ երբեմն տիպականի աստիճանից հասցնելով նրանց, ովքեր իրենց էությամբ ներդաշնակ են ու նույնական, բայց կենցաղային վարքագծով առանձնացված են ու տարբեր իրարից: Այս ասպարեզում Ավսել Բակունցը գեղարվեստական աղերսներ ունի մեր էպոսի ու Հակոբ Պարոնյանի կերպարատեղծման արվեստի հետ:

«Կյոռես»-ում Բակունցը կատարում է կերպարների քննադատ, բայց սա ոչ թե ողորմատիկ մի ստեղծագործական մեթոդից հատուկ կերպարային հակադրության դրսևորում է, այլ կերպարների ռեալիստական խմբավորում, ըստ դասակարգային պատկանելության՝ միասնամանկ կենցաղային վարքագծով համապատասխանաբար դասդասված:

«Կյոռես»-ի անհատականությունները կարծես թե ծուլվում են իրար՝ չկորցնելով իրենց անհատականը, և այդ ծուլման հետևանքով ստեղծվում է հավաքականի, իմա՝ դասի, դասակարգի, հասարակական շերտի կերպարը: «Կյոռես»-ում ստեղծվում է հասարակական զանգվածի հավաքական կերպարը՝ երկքննադատով, գոռաբներ ու ումիկներ՝ իհարկե, իրենց համապատասխան ենթաշերտերով: Սա էլ էր դարձյալ գալիս թույլանական ավանդներից:

Բակունցն օգտագործում է երգիծանքի քոյոր տեսակներն ու միջոցները: Կենցաղային հենքի վրա գրողը պատկերում է իր ընդգրկած ժամանակաշրջանի անցքերը և այն ամենով ստեղծում է իր լեռնաշխարհի 19-րդ դարավերջի ու 20-րդ դարասկզբի քաղաքական, հասարակական դրության նուրբ ու կատարյալ համայնապատկերը՝ խտացված կերպարային համակնրգում: Բակունցը ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում փոխվում են առևտրի ձևերն ու դասերը, տիպերը, բայց թալանի օրենքները, աշխատավորին «կլպելու» օրենքները նույնն են մնում:

«Կյոռես»-ում Բակունցն օգտագործում է քնարական շեղում հիշեցնող, մի ինչ-որ գեղարվեստական հավելումի տեսք ստացած, բայց քրոնիկային «չոր ու ցամաք» պատումի

մոնոտոնությունը խախտող, այդ պատճառով ու կերպարներին գեղարվեստական կենսական իրից տվող «նովելներ», որոնցից են Ցուլ Օթանի ֆարսի, ծնակի խաչու և Հայասկան իրից տվող «նովելներ», որոնցից են Ցուլ Օթանի ֆարսի, ծնակի խաչու և Հայասկան իրից տվող «նովելներ», որոնցից են Ցուլ Օթանի ֆարսի, ծնակի խաչու և Հայասկան իրից տվող «նովելներ» իրենց ամբողջականացնող ու կենտրոնական կերպարներով, որոնց հեղինակային չափման արդյունք չի ներկայացնում, մասնաշաղկապային օժանդակ «լրացումներ» հետևանք են:

«Կյոթես»-ի սյուժեն զարգանում է հեղինակային պատումով, իսկ պատումի անցքերի ու դեպքերի, էթիկայի ինքնատիպ «փիլիսոփայական քարոզ» Աթա ապոր կերպարն է, որը հանդես է գալիս և՛ որպես դեպքերի մասնակից, և՛ այդ դեպքերի գնահատման «կատեգորիկ խնայարարով»:

«Կյոթես»-ի կերպարաստեղծման պոետիկայի հիմքային յուրահատկությունը կերպարի կառուցման «բեկորված» կամ քրոնիկ եղանակն է: «Կյոթես»-ի կերպարաստեղծման պոետիկայի առանձնահատկություններին անդրադառնում է գրականագետ Ս. Բողոսյանը «Ժամանակակից հայ արձակը» գիտական աշխատությունների ժողովածուում տեղ գտած իր «Ողբերգաբեմական վեպի ուղղությունը» հոդվածում՝ գրելով, «Երկիր՝ Նաիրի» վեպի ապահերոսականացված «քնակիչների» կերպարային համակարգին առանձին արձագանք ենք Ակսել Բակունցը, բայց՝ յուրովի: «Կյոթես» վիպակը չունի գլխավոր հերոս: Բակունցն իր մկարագրած քաղաքը բնակեցրեց «մտացածին» քաղաքացիներով, որոնք հիշեցնում էին չարենցյան ֆոն և կոլորիտ ստեղծող քնակիչներին: Այսպիսով Բակունցը Չարենցից հետո կատարեց երկրորդ քայլը՝ հրաժարվեց «գլխավոր հերոսից» (էջ 155):

Գրականագետն այսպիսի կարծիք առաջադրելով՝ արդյո՞ք չի անտեսում մի մուրք դիտարկում, որը ժամանակին կատարել է վաստակաշատ գրականագետ, պոֆեսոր Սուրեն Աղաբաբյանը: «Եղիշե Չարենց» երկհատորանոց մոնումենտալ մեմորիայի մեջ, քննելով վեպի ժանրային առանձնահատկությունները և կատարելով ճշտումներ մախիմոսյան հայտնված կարծիքներում (Մ. Շահինյան և այլն), Սուրեն Աղաբաբյանը Չարենցի «Երկիր Նաիրի»-ն համարում է «վեպ գաղափարի վերաբերյալ» և առանց որևէ երկրմտության միջոցով հայտնաբերել Չարենցն այս անգամ ևս գտավ գեղարվեստական առաջադրությանը համապատասխանող մոտ կառուցվածք, ժանրային մոտ ձև»²:

«Երկիր Նաիրի»-ն, իբրև ժանրային ձև, ավանդական-կանոնիկ վեպի ուղղակի հակադրությունն է: Ո՛չ կենսագրական, ո՛չ սոցիալական-հոգեբանական, ո՛չ՝ էլ կենցաղային ու ընտանեկան վեպի ավանդական-սյուժետային ձևերը, որոնցից օգտվում էին Չարենցի մախիմոսյան ու ժամանակակիցները, չէին կարող իրենց կառուցվածքի մեջ տեղադրել Երկիր Նաիրիի գաղափարախոսությունը: Անհրաժեշտ էր վեպի այնպիսի ձև ու կառուցվածք, որ համարժեք լիներ «գաղափարական վեպի» մտահղացմանը: Գրական հնարագիտության միջոցով զարմացնող Չարենցն այս անգամ ևս գտավ գեղարվեստական առաջադրությանը համապատասխանող մոտ կառուցվածք, ժանրային մոտ ձև»²:

Ելնելով այսպիսի հիմնավոր մախադրություններից և առաջադրելով մոտադրող գիտական կովաններ՝ գրականագետը մեկնում է մասնաշաղկապային «կատեգորիկ խնայարար» գլխավոր հերոսի կոնցեպտին:

² Ս. Աղաբաբյան, Եղիշե Չարենց, գիրք Ա, Երևան, 1973, էջ 431:

լիանդիրը. «Նորից հարց է ծագում. ո՞վ է վեպի գլխավոր այն հերոսը, որ համոզես գաղով լիբրն գաղափարակիր՝ արտահայտում է հեղինակի կողմնորոշումն ու մրա դրական իդեալը»:

Այդ հերոսն ինքը՝ հեղինակն է, որ համոզես է գալիս որպես վեպի գլխավոր գործող անձ և կրքոտ ու սուր վեճ է վարում հայ հասարակությանը հուզող մյուսի շուրջը:

«Երկիր Նաիրի»- Չարենցի գաղափարական քանապեհն է»³:

Ի լրացումն Չարենցի, Բակունցը «Կյուրես»-ում գլխավոր հերոս հեղինակին հավելում է մի այնպիսի կերպարային ձև, ինչպիսին է Աթա ապերը:

Ակսել Բակունցի կերպարաստեղծման արվեստում կարևոր դեր է ստանձնում դետալը (մանրամասը): Զանի որ կերպարաստեղծման հարցում ևս քրոնիկոնը, միջոցների կիրառման առումով, դարձյալ ժառ է, ուստի և այդ ժառությունն էլ թելադրում է դետալի գեղարվեստական մեծ բեռն ու տարողությունը:

Կերպարաստեղծ դետալների դերն ու տեղն, իրոք որ, մեծ է մոլելում. գեղարվեստական քրոնիկոնում, իսկ Բակունցի «Կյուրես»-ում պարզապես դետալների առատությունն է: Դետալային քրոնիկոն է «Կյուրես»-ը (Պարան-պարան Ավանեսի համար բարձր տոնայնության ձայնը, Գյուրջի Օթի՝ լեզուն, Ղաթրիմի Աղալո՝ փախչանությունը, մատաղի ծուխը, հայ տերտերի շունն ու ռուսաց եկեղեցու զանգի ձայնը, ֆրանգուլով Բադալ ապոր ձեռքի ափը և այլն): Դետալը անվանակոչման մեջ խտացած՝ ամբարի կատու Սողոմոն, Գորիսի անտեր ու տիրավոր շները, քոծերը, Գորիսի ձայները որպես կերպարաստեղծ դետալներ:

Բակունցն զգտագործում է պատկերավորման միջնորդավորված եղանակը և շների ռոմանտիկ ամբողջացումն է մրանց տերերի կերպարները՝ կիրառելով դետալիզացիոն պորտրետիզացիայի դժվարին միջոցը: Եվ եթե սրան էլ զուսարվում է մահ մետամորֆոզի շրգիծական տեսակը, ապա որքան է բարդանում կերպարաստեղծման բակունցյան արվեստը: Այս ամենի տեղ ու տիրակալը գեղարվեստական քրոնիկոնի հեղինակն է, հեղինակ, որի կարևորագույն հատկանիշն է դառնում իր ստեղծագործական օրենկտիվությունը:

Գրականագետ Ս. Բողոսյանը նկատում է. «Ակսել Բակունցի պատումի մեջ մպատապաբանական ծաղրը արտահայտվեց ոչ միայն հերոսների ընտրության (ազաի, վաճառական, կաշառակեր, վարչարար, միամիտ գյուղացի և այլն), այլև հեղինակի կիրառած ոճականների անցումներով՝ ծաղրական հնչերանգից քմարականի, զավեշտից՝ ողբերգականի: Բակունցը սինթեզի չհասավ, մրա «Կյուրես»-ի մեջ տեղ գտած երգիծական և քմարական եզրափակումն կառուցվածքները գոյակցեցին կողք-կողքի, «ամխառն» վիճակում» (էջ 160): Իմ կարծիքով, Բակունցի «Կյուրես»-ը գեղարվեստական քրոնիկոն է՝ տարեգրություն, ուստի և ուրիշ է մրա լեզուն, ու մման սինթեզի կարիքը չկար:

Գեղարվեստական քրոնիկոնում յուրովի դրսևորում է ստանում հեղինակի կերպարը՝ որպես «բացակայող ներկա»: Որպես գեղարվեստական տարեգիր-պատմիչ, մա պետք է դրսևորի միտումնավոր օրենկտիվություն՝ պատկերվող, գեղարվեստական շրջանառու-

³ Նույն տեղում, էջ 401-402:

յան մեջ դրված դեպքերի ու դեմքերի նկատմամբ: Որպես Ռեդինակ՝ նրա միտումներն ու շահագրգռությունները չպետք է երևան: Այսինքն՝ նա պետք է «թացակայի» ստեղծագործությունից: Իսկ որպես այդ դեմքերի ու դեմքերին ակամատես ու մասնակից, որպես գրող-տարեգիր, նա պետք է դրսևորի նաև իր գեղարվեստական միտումը՝ գեղագիտական իդեալի հրամայականով, այսինքն՝ պիտի որ ներկա լինի իր ստեղծագործության մեջ: Բացակայող ներկա. որը գեղարվեստական քրոնիկոնի Ռեդինակի տեղին ու դերին հաղողում է նոր կշիռ ու ծանրություն, ստեղծում Ռեդինակի ուշագրավ ու բարդ մի կերպար, որը կառուցվում է արդեն կերպարաստեղծման ինքնատիպ ու նոր ինքնաչափով:

Իր «կոդեքս»-ում Ակսել Բակունցը պատվով է լուծել այդ խնդիրը, մտել է նման կերպարի մեջ, ու բակունցյան այդ նվաճումը դարձել է արձակի մարզում գեղարվեստի բարձունքային չափանիշ:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՆ ՄԱՂԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԿՈԹՈՂԱՅԻՆ ՄԻ ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայ հանճարեղ լեզվաբան Հրաչյա Աճառյանի թողած գիտական ժառանգությունն այն-
քան հարուստ ու բազմազան է, որ հեղինակն իր կենդանության օրոք բախտ չի ունեցել այն
ամբողջությամբ հրապարակված տեսնել: Նրա աշխատությունների մի զգալի մասը տպա-
գրվել է իր մահից հետո միայն: Եվ այսօր, երբ Հր. Աճառյանի մահից անցել է ուղիղ կես
դար, նրա մի շարք սովոր հաջորդներ դեռևս սպասում են իրենց լույս աշխարհ գալուն:

Դրանցից մեկն է «Հայ գաղթականության պատմություն» մեծածավալ գիրքը, որը տը-
պագրվել է այս տարի, Երևանի Հրաչյա Աճառյանի անվան համալսարանի կողմից և նրա
հովանավորությամբ: Այն խմբագրել են ճանաչված գիտնականներ, պատմաբան, **Վ. ԳԱՄ**
ակադեմիկոս Հր. Ավետիսյանը և լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆ. Հովհ. Բարսեղյանը, իսկ ձեռագիրը խնամքով հրապարակության է պատրաստել
Մեծանուն գիտնականի դուստրը՝ Զևարիկ Աճառյանը:

Ժամանակակիցների ու իր սաների վկայությամբ մեծ լեզվաբանը ոչ մի օր ու ժամ ան-
նպատակ ու անիմաստ չի անցկացրել: Նա սովորություն է ունեցել իր տնային, կարողացած
լսած լսած ամեն ինչի մասին իր համար գրառումներ կատարել մտքը պահվող փոքրիկ թեր-
թիկների վրա: Աճառյանն այդպես շարունակ գրառել է շատ արժեքավոր մտքեր ու բառեր,
պատմական փաստեր ու վկայություններ՝ հետագայում դրանք վերլուծելու, ի մի բերելու,
ընթացավորելու և գիտական շրջանառության մեջ դնելու նպատակով:

Այդպես է ստեղծվել և այս կոթողային աշխատությունը, որի հակիրճ «Ցառաջաբան»-
ում հեղինակը գրում է. «Հարկ համարեցի նորեւն կարդալ ամբողջ հին հայ մատենագրութիւ-
նը, ինն ձեռագիրներու յիշատակարանները, զանազան արձանագրութեանց և տապանա-
գրերու հաւաքածոները, հին և միջնադարեան հեղինակներու գրած բազմաթիւ տաղերը և
նոր ժամանակի լրագրութիւնը: Իմ բազմաթիւ ճամփորդութեանց ժամանակ օգուտ քաղեցի
երեղական աստվածութիւններէ, լսեցի նոր ժամանակներու պատմական դէպքերը, իսկ նորա-
յայն ժամանակներուն ինքս իսկ ականատես եղայ, և այս բոլորին արդիւնքը ամփոփեցի
աշխատութեանս մէջ»:

Այս ծանր աշխատանքին զուգընթաց հեղինակն սրիպված է եղել ուսումնասիրել նաև
այն երկրների պատմությունը, ուր ստեղծվել են այդ գաղթօջախները, «որովհետև գաղթա-
յանութեան կեանքը սերտ կերպով կապուած է անոնց երկրին կեանքին հետ, տեղ-տեղ
դարկ եղաւ համառօտիւ ուրուագծել նոյն երկրին պատմութիւնը: Ամէն մի երկրին գաղթա-
յանութեան պատմութեան վերջը հարկաւոր համարեցի դնել իր համառօտ վիճակագրու-
թիւնը՝ որ իր ներկայ կացութեան պարկերը կը ներկայացնէ»:

Գիրքը բացվում է այս հրապարակության գլխավոր խմբագիրներից պրոֆ. Տովի. Բարսեղյանի «Երկու խոսք»-ով, որի մեջ հեղինակը հանգամանորեն ներկայացրել է իր տեսակի մեջ եզակի և չափազանց կարևոր այս աշխարհության ստեղծման ու լույս աշխարհ գալու հանգամանքներն ու մանրամասները, բացահայտել նրա արժեքը հայ գաղթօջախների ամբողջական պատմության ստեղծման համար:

Այս հակիրճ, բայց և փարթուրունակ խոսքին հաջորդում են Հր. Աճառյանի արդեն վերջ հիշարակված «Յառաջաբանն» ու «Մուտք»-ը: Վերջինիս մեջ հեղինակը շարադրել է իր տեսակետները գաղթականության և գաղթօջախների ստեղծման խնդիրների վերաբերյալ: «Գաղթականությունն կը կոչուի ազգի մը ամբողջական կամ մասնական հատուածներուն տեղափոխութիւնը՝ մշտական բնակութիւն հաստատելու նպատակով,- գրում է Աճառյանը: - Գաղթականութիւնը ըստ տեղույ, ըստ եղանակի, ըստ պատճառի, ըստ ձևի և ըստ քանակի կը բաժնուի զանազան տեսակներու»:

Նեղինակի հավաստմամբ՝ «Ըստ տեղույ՝ գաղթականութիւնը կ'ըլլայ չորս տեսակ՝ ներսէն ներս, ներսէն դուրս, դուրսէն ներս և դուրսէն դուրս: Ներսէն դուրս կը կոչինք գաղթը, երբ ժողովուրդը մը, իր երկիրը թողնելով, ուրիշ երկիր մը կը հաստատուի, դուրսէն դուրս կը կոչուի, երբ արտաքին գաղթականութիւն մը ուրիշ երկիր կը դիմէ: Ներսէն ներս գաղթը՝ երբ միևնույն երկրին մէջ դեգերել տեղափոխութիւն մը կայ, իսկ դուրսէն ներս կ'ըսուի գաղթը, երբ նախկին հատուածեալ մաս մը՝ պարագաներու բերմամբ իր երկիրը կը դառնայ: Նայերս հարուստը ենք մանաւանդ ներսէն դուրս գաղթականութեամբ, որմէ անբաժան է դուրսէն դուրս գաղթը: Կան նաև շատ ներսէն ներս գաղթեր, բայց դուրսէն ներս գաղթը հագուագիւր նրկայ չ'է մեզ համար: Մեր գաղթականութեան պատմութեան մէջ մենք պիտի գբաղտիինք առաջին, այսինքն՝ բուն գաղթականութեամբ»:

Այսպէս հեղինակը գաղթերը ներկայացնում է ըստ եղանակի, որ լինում են կամավոր կամ բռնի, ըստ փարածման, երբ գաղթականները միշտ կապ են պահպանում հայրենիքի հետ, իսկ սրան հակառակ՝ ըստ անջատման, որ նրանք կտրված են լինում հայրենիքից և դափապարտված կորստյան, ըստ քանակի, որ լինում են անհատական կամ խմբային: Այս ամենին հետևում են հեղինակի հստակ ու սպառնիչ բացատրությունները՝ հայկական կյանքից վերցված բնորոշ օրինակներով:

Մուտքի այս խոսքում փրվում են հայ գաղթականության չորս ուղղությունները, որոնք ունեն չորս գիծ, և, ըստ Հր. Աճառյանի, այդ գծերն են՝ Նյուսիսային, Հարավային-արևելյան, Հարավային-արևմտյան և Արևմտյան: Ներկայումս այդ ուղղություններին՝ նա իր աշխատությունը բաժանել է չորս մասի, որոնց մեջ ներկայացրել է հայ գաղթօջախների պատմությունը փարածական և ժամանակային առումներով:

Տարածական առումով, կարելի է ասել, Աճառյանն իր պատմության մեջ ընդգրկել է գրեթե բոլոր երկրները, իսկ ժամանակային առումով ներկայացրել է հայ գաղթականության անցած պատմական ուղին: Նա իր գրքում, ըստ ժամանակագրության, հյուսում է աշխարհի չորս ծագերի շուրջ 60 երկրներում հայ գաղթօջախների առաջացման պատմությունը, ներկայացնում դեպի այդ երկրները հայերի արտահոսքի սկզբնավորման մանրամասները՝ ցույց տալով նաև դրա հիմնական դրոշմապատճառները:

Աճառյանը չի անտեսել ոչ մի երկիր ու քաղաք, նույնիսկ որևէ աննշան բնակավայր, որ ապրել են մի քանի հայ ընտանիքներ կամ թեկուզև՝ երկու հայ: Նա նույնիսկ նշում է այդ

մարդկանց անուն-ազգանունները: Խորամուխ լինելով գրքում բերված փաստերի մեջ, մեկ անգամ ևս համոզվում եմ, որ մեծանուն լեզվաբանը քաջաբեղյակ է նաև հայոց պատմության, այս պարագայում՝ հայ գաղթականության և գաղթօջախների առաջացման, բարգավաճման, հաճախ նաև դրանց մարման ու ձուլման մանրամասներին:

Շեղինակը եվրոպական մի շարք երկրների օրինակով ցույց է տալիս, որ այդ վայրերում հայ գաղթօջախներ գոյություն են ունեցել դեռևս անհիշելի ժամանակներից, սակայն դրանք դարերի ընթացքում մարել և հեղափոխվել են հիմնվել: Աճառյանը, հայ հին մարենագրությունից ու օտար աղբյուրներից բաղելով հավաստի տեղեկություններ, մեզ համար վերականգնել է այդ անհեփացած գաղթավայրերի երբեմնի ամբողջական պատկերը և միաժամանակ ներկայացրել նոր առաջացածները:

Յուրաքանչյուր գաղթօջախի անդադառնալիս՝ հեղինակը ներկայացրել է նաև այդ երկրի համառոտ պատմությունը, ցույց տալով հայերի խաղաղած նշանակալից դերն իրենց ապրած երկրների առևտրափոխակալան, ռազմաքաղաքական ու գիտամշակութային կյանքում, նրանց մասին հաղորդելով կենսագրական տեղեկություններ:

Հր. Աճառյանն այս գործի վրա աշխատել է երկար տարիներ, գրել է տարբեր վայրերում և հին ու նոր ուղևորություններով, նաև արևմտահայերեն ու արևելահայերեն, տեղ-տեղ՝ նույնիսկ գրաբար, մի բան, որը բնագրային ու գրաբանության տեսակետից գիրքը դարձնում է եզակի երևույթ:

Շեղինակը երբ 1910-ական թվականներին շարադրում էր այս աշխատանքը հայ գաղթօջախների մասին գրեթե ոչ մի ամբողջական գործ չկար, ու, փաստորեն, նա առաջինն է բաղվել հայոց գաղթականության ամբողջական պատմության ստեղծման հարցերով, ստեղծելով մի համապարփակ աշխատանք, որն այսօր էլ, գրվելուց շուրջ մեկ դար անց, չի կորցրել իր կարևորությունը և ունի սկզբնաղբյուրի արժեք:

Անհրաժեշտ է նաև նշել, որ գիրքը լույս է տեսել ակադեմիական պատշաճ տեսքով ու գիտական բարձր մակարդակով, ունի Հր. Աճառյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող հազվագյուտ լուսանկարների ներդիրներ: Սակայն, չենք կարող չնշել սրբագրական բնույթի բազմաթիվ վրիպակների և սխալների, թվագրման անճշտությունների ու վրիպումների մասին, որոնց մի զգալի մասը գոնե պիտի մի վերջին ուշադիր ընթերցումով և գրքին կցված վրիպակների ցանկով կանխվեր: Մի բան, որը, ցավոք, չի արվել:

Ամփոփելով ասենք, որ պետք է ըստ արժանվույն գնահատել Երևանի Հրաչյա Աճառյանի անվան համալսարանի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ավագ խաչատրյանի նախաձեռնությունը՝ Հր. Աճառյանի այս կոթողային աշխատությունը հրատարակելու գործում, որով կորստից փրկվել և գիտական լայն հասարակայնության սեփականությունն է դարձել այս չափազանց կարևոր գիրքը: Հուսով ենք, որ նա առաջիկայում ևս նույն պատրաստակամությամբ կնպաստի մեծանուն հայագետի անփոխ մնացած մյուս աշխատություններին, մասնավորապես «Պարսից լեզվի պատմություն» և «Կիլիկիայի բարբառը» արժեքավոր ու մեծածավալ հատորների տպագրությանը:

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍԻԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԻՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Տիեզերական պատմության» աշխարհաբար թարգմանությունը

Վարդան Արևելյան՝ հայ միջնադարի մեծահռչակ և բանիբուն վարդապետը, թողել է մահ պատմագրական հարուստ ժառանգություն, մասնավորապես «Պատմություն տիեզերական» երկը, որը երկու հրատարակություն է ունեցել 19-րդ դարում (1861 թ. Մոսկվա, 1862 թ. Վենետիկ), իսկ 2001-ին վերջապես թարգմանվեց աշխարհաբար:

Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը ընթերցողի սեղանին դրեց Արևելյան երկի զույգ հրատարակությունը Գ. Բ. Թոսունյանի թարգմանությամբ, ներածությամբ ու մասնակի ծանոթագրություններով, մեկը՝ միայն աշխարհաբար (Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ), մյուսը՝ աշխարհաբար ու գրաբարը միասին (պետական պատվերով), ընդ որում՝ բնագիրը ու թարգմանությունը զուգադիր էջերում չեն, այլ սկզբում ամբողջական թարգմանությունն է, ապա՝ բնագիրը (1862 թ. Վենետիկյան հրատարակությունից): Գրքի խմբագիրն է Ռ. Ա. Ղազարյանը:

Վարդան Արևելյան երկը Անիի պատմության կարևորագույն սկզբնաղբյուրներից է, մանավանդ, որ հեղինակն օգտվել է Մխիթար Անեցու և Վանական Վարդապետի այժմ կորած պատմություններից և մատենագրական այլ արժեքավոր աղբյուրներից: Պատահական չէ, որ Անիի պատմությանը վերաբերող Արևելյան հայտնած որոշ տեղեկություններ եզակի են: Գ. Բ. Թոսունյանը ևս մշտն է այս մասին գրքի առաջաբանում (էջ 10):

Անիագիտական ուսումնասիրությունների ընթացքում բազմիցս անդրադաժել ենք Վարդան Արևելյան հաղորդած տվյալներին (Կ. Մաթևոսյան, Անի, Ս. Էջմիածին, 1997): Բնականաբար, ծանոթացանք մահ պատմության աշխարհաբար թարգմանությանը: Ցավոք, այնտեղ առկա վրիպումներն ու շեղումները բնագրից այնքան շատ են, որ հարկ ենք համարում մատնանշել դրանց մի մասը: Կարծում ենք, որ գրաբարագետ պատմաբանի կողմից գրախոսման կարիք ունի ողջ թարգմանությունը: Իսկ մենք հիմնականում փորձելու ենք պարզաբանել Անիի պատմությանը վերաբերող կամ առնչվող հատվածներում առկա անճշտությունները: Սա կարևոր ենք համարում, քանի որ աշխարհաբար թարգմանությունից օգտվելու են հիմնականում ուսանողները, գրաբարին չտիրապետող ընթերցողները, և ցանկալի չէ, որ Անի քաղաքի ու մրա պատմության շուրջ գոյություն ունեցող հետաքրքրության պայմաններում շրջանառության մեջ մտնեն թարգմանական մեծ ու փոքր վրիպումներից ծագող «տվյալներ»:

Օգտագործում ենք այն հրատարակությունը, ուր աշխարհաբար ու գրաբարը միասին են (Վարդան Արևելյան, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և աստղանիշերով ծանոթագրությունները՝ Գ. Բ. Թոսունյանի, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2001):

Վարդան Արևելյանի միակ հեղինակն է, որ մշտն է, թե Աշոտ Ողորմած թագավորը, Անիի փոքր պարիսպը կառուցելով, պարսպաքուրդների մեջ եկեղեցիներ շինեց (այս իրո-

դուրյունը հաստատվել է քաղաքի պեղումների ժամանակ): Պատմիչը գրում է, որ Աշոտը «գլխոքը պարիսպ քաղաքին Ամույ շինեաց. եւ զամենայն քրգունսն եկեղեցիս յօրհնեաց» (էջ 95): Աշխարհաբարում կարդում ենք. «...շինեց Ամի քաղաքի փոքր պարիսպը և հորինեց եկեղեցիների բոլոր աշտարակները» (էջ 130) (այս և հաջորդ մեջքերումներում կատարված ընդգծումները մերմ են, Կ. Մ.):

Արևելքին, գրելով Դավիթ Կյուրոպաղատի մահվան և կտակի համաձայն մրա տիրությունների՝ վասիլ կայսերն անցնելու մասին, ավելացնում է, որ Հայոց Հովհաննես Ամբաստանազմը, վրաց թագավորից ճնշված ու կայսրից վախեցած, պատվիրում է կաթողիկոսին կտակ գրել (իմչպես Կյուրոպաղատը), Ամին իր մահից հետո տալ հույներին, եթե իրեն պաշտպանեն ճնշողներից, որն ուրախությամբ է լսում վասիլը: «Այլ եւ նեղէր զՅովհաննէս՝ արքայն վրաց. վասն որոյ պատրիարգին պատուիրէ տալ ձեռագրով զԱմի զկնի մահուան իւրոյ ի Հռոմս, որպէս եւ Կիւրապաղատն, եթէ պահէ զնա ի նեղչաց իւրոց. զոր խնդութեամբ լուաւ Վասիլն» (էջ 98): Աշխարհաբար թարգմանությունը՝ «Բացի դրանից, Հովհաննեսին նշանակում էր մահ վրաց արքան: Այդ պատճառով նա պատրիարքին պատվիրում է իր մահից հետո Ամին գրությամբ տալ հույներին, եթե Կյուրոպաղատը այն պահպանի նրան ճնշողներից: Այդ լուրը ուրախությամբ լսեց Վասիլը» (էջ 134): Ամհասկանալի է, թե մտած Կյուրոպաղատն ումից ինչ պիտի «պահպաներ»:

Վարդան Արևելքին կարևորագույն տեղեկություններ է հայտնում Ամիի Ապիրատյան տոհմի մասին, որոնք հավանորեն քաղել է Մխիթար Անեցուց: Տոհմի առաջին նշանավոր անձի՝ Գրիգոր Ապիրատ իշխանի մասին նշում է. «Զսմանէ ասեմ յանճարանից մեծացեալ եւ վասն խելացի եւ առատ ձեռացն՝ մինչ լինել տէր երկոտասան հազար հեծելոց» (էջ 103): «Անճարան» նշանակում է ոչ նշանավոր, շարքային: Հատվածը աշխարհաբար հրատարակությունում՝ «Նրա մասին ասում են: որ խելացի ու առատաձեռն լինելու շնորհիվ նա ոչնչությունից մեծացավ և մինչև անգամ տեր դարձավ տասներկու հազար հեծյալի» (էջ 140):

Շարունակության մեջ ասվում է. «Նա շինեց Կեչառիսի սուրբ վանքը, ինչպես որ Վահրամ իշխանը՝ Մարմաշենը», որից հետո բնագրի հիմ օրինակում նշված է հետևյալը՝ «Զի մի՛ յանցաւորիս միայն իցեն ճոխք, այլ եւ յանմահիցն գաւառ. ուր կանն իսկ զարմիւք իւրեանց ի դամբանի, ակն ունելով վերնոյն» (էջ 140): Թարգմանված է հետևյալ կերպ. «Ուրպեսզի միայն հանցավորներիս համար ճոխ չլինեն, այլ նաև լինի անմահների գավառ, որտեղի դամբարանում կան հենց իրենց ցեղից և սպասում են վերնայինին» (նույն տեղում): Ինչպես տեսնում ենք անցավորները դարձել են հանցավորներ:

Ամիի երկու քաջակորույ և շինարար իշխանների՝ Վահրամ Պահլավունու և Գրիգոր Ապիրատին վերաբերող այս հատվածի համար առաջարկում ենք հետևյալ թարգմանությունը. «Նա (Ապիրատը) շինեց Կեչառիսի սուրբ վանքը, ինչպես որ Վահրամ իշխանը՝ Մարմաշենը, որպեսզի միայն անցավոր բաների մեջ ճոխ չլինեն, այլ նաև՝ անմահների բնակավայրում, ուր հանգչում են իրենց զարմի հետ միասին՝ դամբարանում՝ ակնկալելով վերին կյանքը»:

Երբ Ամին ընկավ Շեղդադյան ամիրաների տիրապետության տակ, հենց Ապիրատյան տոհմն էր, որ քաղաքում ստանձնեց հայ բնակչությանը գլխավորողի դերը: Մահույն ամիրան քաղաք հրավիրեց Ապիրատի թոռ, Վասակի որդի Գրիգոր իշխանին, իսկ նրա եղբայր Բարսեղը (Բարսեղ Ա Անեցի) հետագայում դարձավ Հայոց կաթողիկոս: Վարդան

Ջաջարե ամիրսպասալարը Լոռեում և Անիում ժամանակի ճշանակոր վարդապետների ու վաճառարների երկու ժողով է գումարում. «միանգամ եւ երկիցս արար ժողով՝ կատարեալ արանց՝ ի Լոռե եւ յԱնի» (Էջ 141): Պատմիչի այս համդիսակոր նախադասությունը աշխարհաբարում դարձել է՝ «Լոռեում և Անիում, մեկ-երկու անգամ չափաճաս մարդկանց ժողով է անում» (Էջ 187):

Անիի թագավորության անկումից հետո Կարսի Գագիկ Բագրատունի թագավորը «ճեղեղեալ յերկիրէ Թուրքացմ' տայ գհայրեմիս իւր ի Յոյնս» (էջ 107), աշխարհաբարում «թուրքքերի կողմից ճեղվելով, իր հայրենիքը տալիս է Հունաստանին» (էջ 145): Այստեղ «հույները» դարձել են Հունաստան (յալ է. որ «թուրքերը» Թուրքիա չեն դարձել), «հայրենիքն» էլ այստեղ «տիրույթ» իմաստն ունի:

Մի շարք տեղերում, թարգմանիչը քառեր է ավելացրել բնագրին, որի հետևանքով իմաստային փոփոխություն է առաջացել:

Օրինակ, պատմիչը գրում է, որ Անիից տարագիր Գագիկ Բ-ն ապրում էր «ի մեջ ատեղողացն ազգիս» (էջ 104), ըստ թարգմանության՝ «մեր ժողովրդին ատող ցեղի մեջ» (էջ 142):

Մոնղոլները «...ամթիս կոտորեցին եւ գերեցին գեօղս եւ ագարակս եւ գործեցին խայտառականս ի կանայս ի Հայս, եւ անելի յաշխարհս Վրաց» (էջ 149): Թարգմանված է. «...շատերին կոտորեցին և գերեցին անթիվ գյուղեր ու ագարակներ, հայ կանանց խայտառակեցին Հայաստանում, քայց ավելի շատ վրաստանում» (էջ 197): Հայ քառի ամֆիմ հավելումը միանգամայն փոխել է նախադասության իմաստը: Իսկ պատմիչի նշած «ամթիս»-ը վերաբերում է սպանվածներին ու գերիներին, ոչ թե գյուղերին ու ագարակներին:

Երբեմն էլ հակառակն է, բնագրում եղած քառերն են կորչում աշխարհաբար թարգմանության մեջ: Այսպես, պատմիչը նշում է, որ Փառլուն ամիրան ուզում էր կողոպտել Անիի կաթողիկեի զարդը (խաչը), որ նոր էին հագրել երկնային առագաստին (եկեղեցուն) վաթսունամյա սգից հետո. «կամէր կողոպտել զեկեղեցին ի զարդուն»՝ զոր նոր զգեցեալ էր առագաստն երկնաւոր զկնի վաթսնամեայ սգոյն» (էջ 124): Աշխարհաբարում զարդը (խաչը) սղվել է, և ստացվել է, որ ամիրան «ցանկանում էր կողոպտել եկեղեցին, որին նոր էին հագրել երկնային առագաստը վաթսունամյա սգից հետո» (էջ 166):

Թարգմանության մեջ որոշ անուններ ճիշտ չեն ներկայացվում: Տիգրանի որդի Վահրամ վիպագիրը (էջ 99) դարձել է «վիմագիր Տիգրանի որդի Վահրամ» (էջ 139), որը միգուցե և վրիպակ է, Գող Վասիլ մեծ իշխանին փոխարինած Կամսարական տոհմից սերող Տղա Վասիլ իշխանը դարձել է «երեմիա Վասիլ» (էջ 161):

Ժամանակի նշանավոր վարդապետների թվարկումը Արևելքին սկսում է հռչակավոր Հովհաննես Սարկավագի անվամբ՝ «Զովհաննէս, որ եւ Սարկաւագ...» (էջ 125): Աշխարհաբարում՝ «Հովհաննէսը, որը նաև Սարկավագ էր...» (էջ 166): Պետք է լինի՝ «Հովհաննէսը, նույն ինքը՝ Սարկավագը», ինչպես որ քիչ անց «Երեմիա, որ և Անձրեւիկ» հատվածը թարգմանված է՝ «Երեմիան, նույն ինքը՝ Անձրեւիկը»:

Կան նաև պարզ վրիպակներ. գրված է՝ Արուլեթի որդի Փառլունը (էջ 166), պետք է լինի՝ Ապլսուարի որդի Փառլունը, Անիի երկու պսակները (էջ 104) դարձել են «երկու աթոռներ» (էջ 141) և այլն:

Կարծում ենք, քերված նյութերը քավարար են՝ վարդան Արևելցու Տիեզերական պատմության ներկա աշխարհաբար թարգմանության որակի մասին որոշ պատկերացում կազմելու համար: Հայ միջնադարյան հեղինակների երկերի աշխարհաբար թարգմանությունը չափազանց պատասխանատու գործ է և արժանի է գիտական ամենալուրջ վերաբերմունքի:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՅԻ

ՀԱՅԿ ԴԵՐՁՅԱՆ

իրավաբանական գիտությունների թեկնածու

ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներից և հիմնական, առանցքային մասնաշաղկապներից է ազգային անվտանգության ապահովումը, առանց որի անհնար է պատկերացնել անձի, հասարակության, պետության նորմալ կենսագործունեությունը ու քաղաքական զարգացումը:

Աշխարհի արդի ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև հոգևոր-մշակութային փոփոխությունները պարտադրում են ոչ միայն անվտանգության ժամանակակից համակարգի ստեղծման և գործառնության համար անհրաժեշտ հայեցակարգային մոտեցումներ մշակել, այլև այդ համակարգի առանձին բաղկացուցիչների համաժամանալից ուսումնասիրություններ և դրանց կենսագործունեությունը ապահովող կառուցակարգերի կատարելագործմանը ուղղված կոնկրետ աշխատանքներ կատարել:

Գաղտնիք չէ, որ անվտանգությունը ենթադրում է հասարակական այնպիսի վիճակ, որն ապահովում է անհատի, հասարակության և պետության անվտանգությունը և բազմակողմանի, համաչափ զարգացումը: Սակայն եթե մենք տաճարամատիվ վեց անվտանգության մասն մակերեսային մեկնաբանմամբ, ապա հետազոտությունների առանցքից դուրս կմնա ազգային անվտանգության համակարգը կազմող, վերջինիս էությունը բացահայտող հարաբերությունների համալիրը, որն իր հերթին կարող է հակասական կարծիքների, անվտանգության մասին սխալ պատկերացումների թուրքմբռնման տեղիք տալ:

Իրավաբանական գրականության մեջ ազգային անվտանգությունը հասկացվում է որպես պետության և հասարակության այնպիսի կացություն, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, որը ենթադրում է երկրի տարածքային ամբողջականության, տնտեսության քնակամոց զարգացման, ինքնիշխանության, սահմանադրական կարգի, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

Ծավալին, սակայն, այն է, որ ազգային անվտանգության ինստիտուտը զուտ իրավական տեսանկյունից դիտարկելիս որոշ հեղինակներ ուղղակիորեն անտեսում են հոգևոր հարաբերությունների ողջ համալիրը, որոնք ոչ միայն պայմանավորում են ազգային անվտանգության ապահովվածության վիճակը, այլև որակական առումով ձեռք են բերում անվտանգության ապահովման շարժիչի, մղիչի կարգավիճակ: Փաստորեն, անվտանգության ինստիտուտի էությունը հնարավոր չէ զուտ պոզիտիվիստական դիտարկումնե-

րով քացառախոսել: Նման պարագայում ուսումնասիրությունների առանցքից դուրս են մնում անվտանգության մեղքին կողմը կազմող հոգևոր-արժեքային գործոնները:

Չի կարելի ազգային անվտանգության համակարգի բաղկացուցիչներն ուսումնասիրելիս անտեսել հասարակության հոգևոր արժեքների անվտանգության, վերջիվերջո հասարակության նորմալ կենսազորոնմության համար շարժիչ ուժ հանդիսացող հոգևոր-մշակութային բոլոր գործոնների հանգամանալից հետազոտումը: Շատ դեպքերում հոգեվոր արժեքների անվտանգությունը կախված է վերջիններիս սպառնացող վտանգների կանխատեսումներից և ճիշտ իրավական գնահատականներ տալուց:

Գաղտնիք չէ, որ հոգևոր-արժեքային ճիշտ կողմնորոշում չունեցող, ջլատված և մասնատված, հիվանդ հասարակությունը չի կարող ազգային անվտանգության ապահովմանը նպաստող, օժանդակող գործոն հանդիսանալ: Նման հասարակության պարագայում ազգային անվտանգության ապահովվածությունն ինքնին քացառվում է:

Գաղափարական և հոգևոր առումով միասնական հասարակության առկայության պայմաններում գրեթե քացառվում են կրոնական, դավանանքի, ռասայական կամ այլ սոցիալական հակամարտությունների ծագումն ու զարգացումը: Միմյնդեռ, հակառակ դեպքում, ազգային անվտանգությունը, դեռ ավելին, պետականությունն անխուսափելիորեն վտանգված և դատապարտված են կործանման: Խորհրդային տարիներին քանի որ գերիշխում էր կոմունիստական գաղափարախոսությունը, հոգևոր հարաբերությունները և քրիստոնեական արժեքները մղվել էին Ռետին պլան: Դեռ ավելին, աշխարհիկ պետությունն կառուցելու կոմունիստական հայեցակարգի ելակետային, առանցքային սկզբունք էր համարվում ոչ թե պետության և Եկեղեցու տարանջատումը, այլև գործնականում՝ Եկեղեցու հալածումն ու մեկուսացումը:

Նման պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել գաղափարական այլակարծության, հոգևոր արժեքների քարոզչության, դավանանքի ազատության մասին: Այսինքն, եթե տասնամյակներ շարունակ կոստակցական պարտադրանքով պայմանավորված մեր հասարակական զարգացումներն էին որոշում երկրի քաղաքական, տնտեսական և հոգեվոր-մշակութային համակարգերի բնույթը և զերազանցապես այդ գործոններով էին պայմանավորված արտաքին քաղաքականության ու միջպետական հարաբերությունների ընթացակարգը, ապա մերկայումս վիճակն այլ է՝ տեղի է ունենում ճիշտ հակառակը:

Ինտեգրացիոն գործընթացների ամսիջական ազդեցությամբ ձևավորված մախադրյալների թելադրանքով արտաքին գործոններն են որոշում զարգացող (ՀՀ-ն դասվում է զարգացող պետությունների շարքին) պետությունների քաղաքական, տնտեսական և հոգևոր համակարգերի ստեղծման և զարգացման ուղղությունները: Միմյնդեռ օտարածին նորամուծությունները, օտար հոգևոր արժեքների ղեցեպցիան կարող է կործանարար լինել հասարակության, հետևաբար նաև ազգային անվտանգության համար: Նամանավանդ, մերկայումս ՀՀ-ում տարածվող օտարածին հոգևոր ուսմունքները ոչ միայն ջլատում, քեռացնում են հասարակությանը, այլև իրենց հոգևոր թերարժեքությամբ և թվացյալ քրիստոնեական արժեքաբանությամբ հիվանդացնում են հասարակության հոգևոր արժեքային համակարգը, թուլացնում վերջինիս դիմադրողականությունը:

ՀՀ Սահմանադրության 23 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խղճի և դավանանքի ազատության իրավունք: Աշխարհիկ պետության պայմաններում մարդն ազատ է

կրոնական հայացքներ ունենալու կամ չունենալու հարցում, իրավունք ունի ինչպես մի-
անձնյա (անհատապես), այնպես էլ այլ անձանց հետ համատեղ դավանել ցանկացած
կրոն կամ չդավանել ոչ մեկը, ազատորեն ընտրել, ունենալ ու տարածել կրոնական և այլ
համոզմունքներ և գործել դրանց համապատասխան:

Կրոնի և համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել
միայն օրենքով՝ սահմանադրությամբ նախատեսված ռիսկերով: Մասնավորապես ՀՀ
Սահմանադրության 45-րդ Որդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու առանձին իրա-
վունքներ և ազատություններ կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորա-
պես սահմանափակվել ռազմական դրության ժամանակ կամ սահմանադրական կարգին
սպառնացող անմիջական վտանգի դեպքում (Որդված 55, կետ 14):

Բացի այդ, սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու իմնական իրա-
վունքները և ազատությունները կարող են սահմանափակվել օրենքով, եթե դա անհրա-
ժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հան-
րության առողջության ու քաղաքի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և
քաղի համբավի պաշտպանության համար (ՀՀ Սահմանադրություն, Որդված 44):

Խղճի և դավանանքի ազատության սկզբունքը ենթադրում է նաև, որ անթույլատրելի է
որևէ մեկի, այդ թվում՝ նաև պետության ամօրինական միջամտությունը կրոնի նկատմամբ
քաղաքացիների վերաբերմունքի գործում: Սահմանադրությամբ ամրագրված նորմերը
քավարար են ժողովրդավարական, իրավական պետություն կերտելու համար:

Խնդրին, սակայն, գուտ իրավական տեսանկյունից մայելը կարող է այնպիսի քաջա-
սական հետևանքների առաջացման պատճառ հանդիսանալ, որոնց զարգացումը կործա-
նարար է ՀՀ-ի հասարակության և պետության համար: Հարցին գաղափարական համա-
լիր մոտեցում ցուցաբերելու դեպքում պարզ է դառնում, որ գործնականում ՀՀ հասարա-
կությունը փաստորեն դառնում է կրոնական-գաղափարական կեղծ ուսմունքների ագրե-
սիայի գոհ, որը կարող է նույնիսկ համապետական դրսևորում ստանալ: Նման ուսմունք-
ները ներկայիս հայ իրականությունում դրսևորվում են զանազան աղանդների և աղանդա-
վորական շարժումների ձևով:

Աղանդը մարդկանց այնպիսի մի խումբ է, որոնց համոզմունքը Ռիմնված է որոշակի ա-
ռաջնորդի գերազանցության պատկերացման վրա, ինչն անխուսափելիորեն առաջ է բե-
րում քրիստոնեության գլխավոր սկզբունքների մերժում, որոնք թխում և ուսուցանվում են
Աստվածաշնչում¹: Աղանդներն, այսպիսով, ժխտելով քրիստոնեական ճշմարիտ սկզբ-
ունքները, որոնք քարոզվում են Հայ Եկեղեցու կողմից, մերժում են հենց Հայ Եկեղեցին:
Միմչդեղ Հայոց Եկեղեցու դարերից եկած ազգանպաստ գործունեությունը հավաստվում
է հենց մեր ժողովրդի պատմությամբ: Դարերի ընթացքում պետականության քաջակա-
նության պայմաններում Հայ Եկեղեցին ստանձնել է հայ ժողովրդի միասնականությունն
ապահովելու, հոգևոր-ազգային նկարագիրը պահպանողի դերը:

Այսպիսով, մերժելով Եկեղեցին՝ տվյալ ուսմունքները քարոզող աղանդները ժխտում
են ազգի ինքնությունը և անկախ գոյատևումը, վտանգի տակ են դնում հասարակության

¹ Տե՛ս՝ Զորջ Մաք-Դոուել, Դոն Ստյուարտ «Մոլորեցնողները», 2002 թ., 13 էջ:

միասնությունում ու ամբողջականությունը, որ ազգային անվտանգության համակարգի և հայ պետականության համար կործանարար հետևանքներ է ունենալու:

Ծավալից այն է, որ այս ամենին իրավական համարժեք զննահատական չի տրվում, քանի որ աղանդների այժմյան գործունեությունն առնվազն կարելի է որակել որպես հոգեորսություն: Միմյնդեռ աշխարհի զարգացած գրեթե թուր պետություններում գործում են հոգեորսությունն արգելող բազմաթիվ մորմատիվ ակտեր:

Հետևաբար հայ հասարակական կյանքի մերկա զարգացումներն ընթանում են ոչ թե հասարակության միասնականացման, գաղափարական և կրոնական ամբողջականացման ուղիով, այլ սոցիալական տարբեր խմբերի, հոգևոր-կրոնական անհանդուրժողականության սերմանման ճանապարհով: Իսկ սահմանադրության համապատասխան դրույթների ոչ ճիշտ մեկնաբանումն ու անիրացվելիությունը միայն նպաստում են վերը նշված բացասական գործընթացների զարգացմանը:

Եթե իրավաբանական գրականության մեջ ազգային անվտանգությունը բնորոշվում է որպես անհատի, հասարակության, պետության անվտանգության, իրավունքների ու օրինական շահերի, մորմալ կենսագործունեության ապահովվածությունը ներքին և արտաքին սպառնալիքներից, ապա անհրաժեշտություն է առաջանում նաև պարզել, թե աղանդներն արդյոք կարելի՞ է դասել ազգային անվտանգությանը սպառնացող վտանգների թվին և այն դիտարկել իրավական հարթության վրա:

Ազգային անվտանգության սպառնալիքը քաղաքացու, հասարակության և պետության՝ օրենքով պահպանվող շահերին հնարավոր վտանգ ներկայացնող պայմանների, գործոնների և գործընթացների ամբողջությունն է:

Սպառնալիքները կարող են ծագել ինչպես արտաքին վտանգներից, այնպես էլ պետության ներհասարակական գործընթացների ոչ օրինաչափ և սխալ բնույթից: Ազգային անվտանգության արտաքին սպառնալիքներն իրենց բնույթով կարող են ուղղված լինել ինչպես պետության և հասարակության կենսագործունեության առանձին ոլորտների դեմ, այնպես էլ ընդգրկել այդ թուր ոլորտների ամբողջությունը:

Աղանդների գործունեության վտանգավորությունն առավել բարձրացնում է այն հանգամանքը, որ վերջինների ազդեցության ոլորտն ընդգրկում է հասարակության կենսագործունեության գրեթե թուր ոլորտները: Մասնավորապես նրանց ողջ քաղաքականությունը տարվում է անհատներից մոլորեցնելու, ապակողմնորոշելու ուղղությամբ: Իսկ հասարակության և պետության գործունեությունը հիմնվում է առանձին անձանց վրա: Այդ անհատների ամբողջությունն է հենց ձևավորում հասարակությունը, որը հանդիսանում է պետականության կերտողն ու երաշխավորողը: Միմյնդեռ խեղված հոգևոր-արժեքային կոլմորոշում ունեցող անհատը, հետևաբար նաև պետական մտածելակերպից, ազգային արժեքային համակարգից զուրկ անձը չի կարող առողջ հասարակության, ազգային և պետական անվտանգության հիմնաքար հանդիսանալ:

Գաղտնիք չէ, որ հոգեպես և գաղափարապես միասնական հասարակությունը շատ ավելի քարձր դիմադրողականություն ունի, քան անհանդուրժողականությամբ ջլատված, մասնատված հասարակությունը: Իսկ աղանդները հենց մասնատում են հասարակությունը և ստեղծում անհանդուրժողականության մթնոլորտ: Միմյնդեռ միասնականությամբ և քարձր դիմադրողականությամբ օժտված հասարակությունն առավել դյուրին կարող է դի-

մագրավել և հաղթահարել ազգային անվտանգությանը սպառնացող վտանգները: Արդանդների հակապետական գործունեության ամենավառ օրինակ կարող է հանդիսանալ Եհովայի վկաների զենքի չդիմելու քարոզչությունը:

Ազգային անվտանգությունն ամենից առաջ ենթադրում է պաշտպանության ֆունկցիան (գործառույթը), որը երկրի տարածքային անբողջականությունը, պետության և հասարակության անվտանգությունն ապահովող ամենաառաջնային ֆունկցիան է:

Անվտանգության ճեղքին սպառնալիքները կարող են ծագել ինչպես առանձին անհատների և սոցիալական խմբերի ապակառուցողական գործողությունների, այնպես էլ սխալ հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-արժեքաբանական գործընթացների հետևանքով: Այստեղից էլ անհրաժեշտություն է առաջանում առանձին աղանդների գործունեությանը իրավական ճիշտ գնահատական տալը: Արդյոք կարելի՞ է այն ազգային անվտանգության սպառնալիք համարել:

Բանի որ աղանդներն արտասահմանյան ծագում ունեցող և արտասահմանից ղեկավարվող կազմակերպություններ են, որոնց գործունեությունը շատ դեպքերում կրում է ապազգային, ապակառուցողական, քրիստոնեական իրական արժեքաբանությունից զուրկ բնույթ, ուստի, անվերապահորեն կատարելով կենտրոնականացների և ղեկավար մարմինների ցուցումները, կազմալուծում են հասարակությունը և սպառնալիքի տակ դնում անվտանգության ողջ համակարգը:

Դրանք առավելապես հանդիսանալով արտաքին գործոնների արդյունք՝ հասարակությունը կազմալուծում և մասնատում են ներսից: Վերջիվերջո չպետք է մոռանալ, որ բոլոր ժամանակների ամենահզոր և ամենավտանգավոր զենքը գաղափարականն է, որի ազդեցությունը պատերազմից էլ կործանարար է:

Պետություններում հոգևոր-արժեքային ճգնաժամերն անգամ սոցիալ-տնտեսական վիճակի քարելավման ու զարգացման պայմաններում կարող են փորձել խաղիլելու ազգային անվտանգության ռիսկերը՝ դառնալով անվտանգության ռիսկական սպառնալիքներից մեկը:

Հոգևոր-արժեքային ճգնաժամը ռիսկականում տարածվում է կրոնական-դավանական ասպարեզում, որն ընդգրկում է հասարակական կյանքի թուր ոլորտները: Միայն տնտեսական համակարգի կատարելագործման միջոցով հնարավոր չէ ազգային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ երաշխիքներ ստեղծել:

Հոգևոր-մշակութային ճգնաժամը կարող է կաթվածահար անել ողջ հասարակությունը, իսկ արժեքային սխալ կողմնորոշման տարածումը՝ վտանգել ազգային անվտանգությունը: Ուստի ներկայումս անհրաժեշտ է քրիստոնեական արժեքների քարոզում, ժողովրդի և Եկեղեցու հոգևոր միասնության ամրապնդում, ինչպես նաև ապակողմնորոշող, հասարակությունը մասնատող հոգևոր կեղծ ուսմունքների դեմ գործուն պայքար ծավալել: Միայն այս պայմաններում մենք կարող ենք վստահ լինել, որ հոգևոր-արժեքային ճիշտ կողմնորոշում ունեցող հասարակությունն է կերտում և երաշխավորում ազգային անվտանգության համակարգի գոյությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Телеган В. М., Историко-социологический анализ развития социальной и социологической мысли по проблемам национальной безопасности. Безопасность. Информационный сборник, 1995, N 21 (ст. 105-106).

ՀՀ Միավիճակաբանություն, 05.07.1995 թ., էջ 9, 14-15:

Толстой Л. Н., Право и нравственность. Сочинения, М., 1994 г. (ст. 15).

Фрак С. Л., Человек в поисках смысла. М., 1992 г. (ст. 31-32).

Malier C. S., Peace and security. Studies for, 1990, p. 12.

Национальная безопасность. Интеллектуальный подход, М., 1994 г. (ст. 69-70).

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ՝ ԾՆՎԱԾ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅԶՈՒՄ

ՄԵՐԳԵՑ ՀԱՄԱԲՐՁՈՒՄՅԱՆ

Ակադեմիկոս

20 ՕՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ՀԵՏ



Մերգեյ Համբարձումյանը Վեհափառ Հայրապետի հետ
Սինգապուրի հայոց եկեղեցու առջև

2002 թվականի նոյեմբերի 20-ից մինչև 30-ը Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի՝ Տեոավոր Արևելք (Թաիլանդ, Ավստրալիա և Սինգապուր) կատարած Հայրապետական այցելության ժամանակ պատիվ եմ ունեցել լինելու Վեհափառ Հայրապետի շքախմբում:

Նոյվաճն այս նպատակ չունի ընթերցողին ներկայացնելու այդ ուղևորության մանրամասները: Իմ նպատակը Հայրապետական այցի ժամանակ ծագած և կամ հստակեցված այն մտքերի սեղմ շարադրանքն է, որոնք, ըստ իս, պետք է հետաքրքրեն «Էջմիածին» ամսագրի ընթերցողին:

Ես ինձ համարում եմ այդ մտքերի համահեղինակը, քանզի դրանք ձևավորվել են Վեհափառ Հայրապետի մատուցած Պատարագների, եկեղեցական արարողությունների, հավատացյալ հայորդիներին ուղղված քարոզների և ազդեցների, հասարակական վայրերում հարկապես դպրոցներում ունեցած ելույթների, վերը թվարկած երկրների հոգևոր և աշխարհիկ առաջնորդների հետ ունեցած զրույցների ազդեցությամբ, և կամ ուղղակի Վեհա-

փառ Հայրապետի մոլեքներն են՝ բերված իմ շարադրանքով: Ի դեպ, շատ են կարևորում նաև մեր բազմաժամյա թեմատիկ երկխոսություններն ու ազատ գրույցները:

*
* *
*

Մենք հաճախ ենք խոսում հայոց ազգի և հայ ժողովրդի մասին: Դա բնական է՝ փոքրաթիվ, բայց բարձր ինտելեկտուալ ներուժ ունեցող ազգերի մրավորականությունը հաճախ է խոսում իր ազգի և ժողովրդի մասին: Շեռու լինելով այդ հասկացությունները սահմանելուց՝ կարծում եմ, որ ժողովուրդը ազգ է դառնում, եթե նա ունի դարերից եկած ուրույն գիտություն, կրթական բարձր վարկանիշ և ավանդույթները պահպանող մշակույթ: Բայց այդ բոլորը դեռ քիչ է. նա պետք է ունենա նաև այդ ամենը համախմբող հավաքական մի գաղափար: Ըստ իս, այդ հավաքական գաղափարը հավաքն է: Մեզ՝ հայերիս համար դա քրիստոնեությունն է՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և նրա հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Այս հասկացությունների շուրջն է, որ դարեր ի վեր համախմբվել են աշխարհով մեկ սփռված հայորդիները՝ դառնալով աշխարհում ճանաչված մի ժողովուրդ: Անշուշտ, պետք է հպարտանալ անցյալի նվաճումներով, բայց դրանցով սահմանափակվելը վտանգավոր է: Պետք է հենվել հնի վրա, սրբեղծել նորը և տեսնել ապագան, այլապես մի տխուր օր հին և քաղաքակիրթ ազգից կվերածվենք հնացած ժողովրդի՝ չլինելով ազգ:

*
* *

Հայրենիքի դատարկապարս գովերգանքը քաղաքակիրթ ժողովրդին սազական չէ: Ճարտարախոսական հայրենասիրությունը միայն խոսք է, ժողովրդի կողմից գերապատված գաղափարի սահուն ու գեղեցիկ շարադրանք, լոկ դատարկ խոսք՝ բաժակաճառայի ձևակերպումով: Հայրենասիրությունը բանաձևելու կարիք չունի. նրանով պետք է ապրել գործել և արարել: Մենք՝ բոլոր հայերս, միասին պետք է անցնենք մեր մեծ դժվարություններով լի ճանապարհը, որն, անկասկած, տանելու է մեզ լուսավոր և բարիքներով լի Հայաստան: Երկիր հայրենի, որն անվերապահորեն Մայր Հայրենիքն է բոլոր հայերի:

Մեր ժողովրդի սրբեղծարար ուժը, հանճարեղ միտքն ու կառուցող բազուկը, որոնք քրդված են կենսահաստատ ոգով և հաղթելու կամքով, հույս ու հավատ են ներշնչում մեր լուսավոր ապագայի նկատմամբ: Մենք այսօր ապրում ենք իմաստավորված կյանքով ապրում ենք արարելու համար, քանզի արարիչ կյանքն իմաստավորված անմահություն է: Պետք է ապրել ու արարել անմահության համար: Սա է հաղթող ժողովրդի ճիշտ նշանաբանը:

*
* *

Մենք անցել ենք երկար ու ծանր պատմական ուղի՝ լի կորուստներով ու ձեռքբերումներով: Հասել ենք մեր երազանքի իրականացմանը. ունենք ազատ, անկախ պետություն, պե-

ություն հայոց՝ Հայաստանի Հանրապետություն: Այս պարմական գործնարարում հաղթող է դուրս եկել հայ ժողովուրդը, քանի որ դարերի ընթացքում պահպանել է իր լեզուն, ամրացրել է իր անկախությունը, հավատարմությունը և հաղթելու կոթմը: Հաղթանակը պետք է ամրապնդել, ուրեմն՝ ամրապնդել պետք է սիրենք ու գուրգուրենք մեր հանրապետությունն ու մեր ժողովրդին: Այսօր ամեն մի հայի հոգում պետք է վառ լինի Մայր Հայրենիքը, մտքում մեր Սուրբ հայոց լեզուն, իսկ աչքերում՝ Աստվածաշունչ Սուրբ Էջմիածինը: Մի՛ դավաճանեք այս գաղափարներին, սրանք են մեր ազգի գոյատևման և անվտանգության գրավականները:



Սփյուռքահայությունը Մայր Հայրենիքի առաջնությունը պետք է օգնի համագործակցությամբ: Հայրենիքին ցուցաբերած բարեգործությունը մեծ առաքինություն է և միշտ բարձր է գնահատվում ժողովրդի, եկեղեցու և պետության կողմից: Բայց լույս բարեգործության ժամանակներն անցել են: Այսօր պետք են գործարար կապեր: Այսօր սփյուռքահայերն իրենց քրոհներն ու աղյուսներն պետք է շաղախեն մեր ընդհանուր գործին՝ Հայաստանի Հանրապետության գործին, հայեցի ապրելու գործին, ազգային անվտանգության գործին:



Ամեն մի սփյուռքահայ, որն ապրում է աշխարհի այս կամ այն երկրում մշտական թե՛ ժամանակավոր, ամեն մի հայ, որն ապրում է Մայր Հայրենիքում և մեկնում է արտասահման գործով կամ հյուր, հանդիսանում է Հայաստանի և հայության լիազոր ներկայացուցիչը այդ երկրում: Նա դեսպանն է Մայր Հայրենիքի և մեր ազգի, ուստի նա իր առաքինի կյանքով, մարդկային բարձր հատկություններով ամեն օր պետք է ցույց տա իր շրջապատին, որ հայերը քաղաքակիրթ, աշխատասեր, սրտեղծագործող, օրինապաշտ և աստվածասեր ժողովուրդ են՝ դարերից եկող և դարեր գնացող առաքինություններով և ավանդույթներով: Այս ոգով էլ պետք է մեծանան հայ մանուկները, բանգի ամեն մի հայեցի մեծացած մանուկ մեր աչքում մի Հայաստան է:



Ամեն մի հայ, ուր էլ որ գտնվի, հոգով, սրտով և գործով անընկալելիորեն կապված պետք է լինի Մայր Հայրենիքի հետ: Մենք պետք է լինենք մի ամբողջություն, մի մարմին, մի սիրտ, մի հոգի:

Այսօր հայ ժողովրդի ուժը պետք է փնտրել նրա՝ աշխարհով մեկ սփռված լինելու մեջ՝ համոզված լինելով, որ անհրաժեշտության դեպքում նա ի գործ է համախմբվելու Մայր Հայրենիքի շուրջը: Ի դեպ, այսօր ժամն է նամախմբվելու՝ հենվելով հայոց պետականության, գիտության, կրթության ու մշակույթի ամուր պոլոսների վրա, որոնք լուսավորված են Սուրբ Էջմիածնի անսպառ լույսով: Միայն համագործակցելով մենք կկառուցենք հզոր հայ-

րենիք, որի համար Սուրբ Էջմիածինը խղճի խորհուրդն է, իսկ բիրքիական Մասիսը՝ պերականություն:



Սուրբ Էջմիածինը Մայր Տաճարն է կամ Մայր Աթոռ չէ միայն, լոկ սրբապետի չէ կամ աղոթավայր: Նա հայության սիրտն է, երա աննկուն ոգին, Հայոց միաբանության աստվածաբան պահապանը: Նա Աստծո կողմից ժողովրդին շնորհված հոգևոր արժեքների շարանն է անսպառ: Նա տեսիլք է ամեն մի հայի համար, խորհրդանիշը հայ ժողովրդի:



Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին հայ ժողովրդի պատմության, դարավոր մշակույթի և ավանդույթների կրողն ու պահպանողն է:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Աստծո պարզև հայոց լեզուն պահպանում է որպես մասունք Աստվածային, որպես գորավոր ուժ հայապահպանության:

Հայ Առաքելական Եկեղեցին դարոց է, ուր մարդը հաղորդվում է Աստծու հետ, կերպարանավորվում մոտենալով հոգևոր արժեքների գերապատմության վեհ գաղափարին: Նա մարդուն հանգեցնում է այն բարձր գիտակցությանը, որ Աստվածն ու հավատքն են դառնում կյանքի հույս և ապավեն:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մարդուն հաղորդակից է դարձնում համամարդկային հոգևոր արժեքներին, հասու դարձնում դրանք գիտակցաբար ընկալելու գերաշնորհին և օգնում դրանք ի սպաս դնելու ի գործություն մարդու հոգևոր կյանքի:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին օգնում է ամեն մի հայորդուն ապրելու հայեցի, պայքարելու, ամրապնդելու Հայոց Հանրապետության անկախությունը և բազմապատկելու ձեռք բերած հաջողությունները:



Մեզ պետք են ժողովրդի կողմից սիրված կրթայ ու գիտակ հոգևորականներ: Մեզ պետք են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու այնպիսի սպասավորներ, որոնք ի գործու են հույս, հավատ ու սեր ներշնչելու հայ ժողովրդին առ Աստված. Ավետարանի կենսապարզև խոսքին հավատարիմ պահելու իրենց վստահված Քրիստոսի հուրի հոգին, ճիշտ ճանապարհի բերելու անորոշությունների մեջ մոլորված հայորդիներին:

Ժողովրդին պետք է սպասավորեն միայն ազնվագույն հոգևորականները, որոնք արժանապատմությամբ կկարարեն Աստծո կողմից իրենց վրա դրված պարտականությունները: Այնժամ կրթական այլաձին հոսանքներն ու հիվանդագին գաղափարները չեն խռովի ժողովրդի ազնիվ զավակների հոգիները:



Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկն է. եզակի անձ. Աստծո ընտրյալ: Նա Հայրապետն է ողջ եայության՝ հավատաքյալ և ոչ հավատաքյալ: Կաթողիկոսությունը առաքելություն է. որն Աստված դրել է մի մարդու վրա. որպեսզի նա հույս, հավատ ու սեր սփռի իր ժողովրդին, լուսավորի նրա ճանապարհը՝ հաղթող դուրս բերելով ամեն մի փորձությունից: Նրա սերն անսահման է առ ժողովուրդը, որին նա ուղղորդում է՝ ապրելու Աստծո կողմից սահմանված կանոններով: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն այն հիասքանչ մեծություններն են, որ իրենց ներուժով և Աստվածային խորհրդով ապահովում են ողջ հայության միաբանությունը:



Հսկայական է էկոմենական շարժման դերն ու նշանակությունը խաղաղության և ժողովուրդների բարեկամության գործում: Այդ շարժմանը ակտիվորեն մասնակցում են Հայ Առաքելական Եկեղեցին և Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն՝ ընդամին պահպանելով մեր Եկեղեցու անկախությունն ու դարերից եկող ավանդույթները: Այս առումով հիանալի էին էկոմենիկ ժամերգությունները Սիդնեյի և Մելբուռնի կաթոլիկ եկեղեցիներում, ուր հնչեցին Հոմիփասն ու Եկմալյանը, ուր «Հայր մեր»-ն արտասանվեց նաև հայերեն մեկ ընդհանուր եկեղեցական արարողության ընթացքում, ուր հավաքվել էին ավստրալացի և հայ հավատաքյալները:

Ջույր Եկեղեցիների բարեկամության և համագործակցության մի հիանալի օրինակ էր նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի «Պահպանիչ» աղոթքը և «Ամեն հայի սըրտից բխած» Հայրապետական մաղթերգը, որոնց հնչեցին Մոսկվայի Քրիստոս Ամենափրկիչ տաճարի (Храм Христа Спасителя) կամարների տակ՝ ի ապաքինում Ռուսիո Պապրիարք Ալեքսի Բ-ի:

Արարողությունը գեղեցիկ էր և հուզիչ: Հայ դասական հոգևոր երգը, որ կատարեցին Եզրաս Եպիսկոպոս Ներսիսյանը, Վազգեն վարդապետ Միրզախանյանը, Գեղարզ աբեղա Վահունին և Զագոթսկի հոգևոր ակադեմիայի սան երկու երիտասարդ հայ հոգևորականները, անհրեակայելի կերպով գրավեց տաճարում գտնվողների ուշադրությունը, իսկ մենք՝ հայերս, մոռացած ամեն ինչ, դարձել էինք այդ հրաշագեղ արարողության մի մասնիկը:

20 օր անց ապաքինված Ռուսիո Պապրիարքը Բարվիխայում ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ընդունելության մասին հաղորդեց Մոսկվյան հեռուստատեսությունը. ի դեպ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը հաղորդվեց հայերեն՝ համապատասխան բացառություններով: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն առաջին հոգևոր առաջնորդն էր, որին Ալեքսի Բ-ն ընդունեց ապաքինվելուց հետո:

Եվ պատահական չէր, որ Սիեզապուրի օդանավակայանում Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեց և հաջորդ օրը ճանապարհեց Ռուսաստանի Դաշնության դեսպան պրն Ս. Կիսեյովը:

Մեծ է Եկեղեցու դերը ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում:



Քանգկոկի, Սիդնեյի, Մելբուռնի, Սինգապուրի հայության և Հեռավոր Արևելքի այլ բնակավայրերում ապրող այն հայերի համար, որոնք ժամանել էին վերոնշյալ քաղաքներ՝ Վեհափառ Հայրապետի հետ հանդիպելու, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի Հայրապետական այցը Հեռավոր Արևելք, հիրավի, տոն էր: Դա ժողովրդի մի նոր հոգևոր լիցքավորում էր, ազգային զգացմունքների գարթոնք: Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական ուղևորություններն Աստվածային խորհուրդ են պարունակում:



Հանդիպումներից մեկի ընթացքում հետևյալ հարցը ծագեց՝ պատկազրության ժամանակ քահանայի հարցը ապագա ամուսնուն՝ «Տե՛ր ես», և ապագա կնոջը՝ «Հնազա՛նդ ես», արդյոք չեն նսեմացնում կնոջ դերը ապագա ընտանիքում: Պատասխանը միակն էր՝ ո՛չ, իհարկե՝ ո՛չ: Չէ՛ որ դա միայն դարերից եկող ծիսակատարության պայմանական ձևն է և ոչնչով չի նսեմացնում կնոջը: Հայկական առողջ ընտանիքում թե՛ ամուսինը և թե՛ կինն իրենց ողջ կյանքում պետք է իրար «տեր» լինեն ու «հնազանդ»: Եկեղեցու կողմից օրինված ամուսնությունը կոչված է դառնալու ամուր և երջանիկ ընտանիքի փոխադարձ սիրտ, հարգանքի ու հավատի Աստվածային երաշխիքը:

Հարց ծագեց նաև միասնականության մասին: Այս դեպքում ևս պատասխանը միակշանակ էր: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին միասեռ «սերը» չի ընդունում: Այն չեն ընդունում նաև Ավետարանը մեր և Աստված: Այլապես Աստված կստեղծեր երկու Ադամ և երկու Եվա:




Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դարավոր պատմության ընթացքում հայ մտավորականները՝ մեծանուն աշխարհական հայ գիտնականներ, ճարտարապետության, արվեստի և գրականության գործիչներ, իրենց մասնագիտական և հասարակական գործունեությամբ սերտորեն կապված են եղել Հայ Եկեղեցու հետ: Շատերն իրենց կրթությունը ստացել են Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանում: Հայ ճարտարապետների նախագծերով են կառուցվել մեր հոյակապ եկեղեցիները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տապարանում են տպագրվել մեր մի շարք անվանի գիտնականների և գրողների անդրանիկ գործերը: Ուրույն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պարկերասրահը: Մեր երգչախմբերն են աշխարհով մեկ տարածել հայ հոգևոր երաժշտության գանձերը: Հայ մրավորականները միշտ մասնակցել են Համազգային եկեղեցական ժողովի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր խորհրդի աշխատանքներին: Եվ այս ամենը մեծ սիրով՝ ի փառս հայ ժողովրդի և նրա հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:



Այսպիսով, հակիրճ և խորացած ձևով շարադրվեց այդ 20 գեղեցիկ օրերի ընթացքում ծագած կամ հստակեցված բազում մտքերի լույս մի մասը և հուշագրական մի քանի պատահիկ:

Ընթերցողին թող չզարմացնի շարադրանքի վերամբարձ ոճը. այն թելադրված է շարադրված մտքերի բովանդակությամբ: Տեղին էլ է լինի այրժարժված հարցերի մասին հրապարակախոսական հողվածում խոսելի ակադեմիական ոճով: Ի դեպ, նպատակ էլ էր դրված տալու շարադրված մտքերի գիտական հիմնավորումները:



Ս. ԹԱԴԵՈՍ ԵՎ Ս. ԲԱՐԴՈՒԴՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՏՈՂԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Նոյեմբերի 30-ին Նայ Առաքելական Ս. Եկեղեցին տոնեց Նայաստանում քրիստոնեության առաջին քարոզիչների Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը:

Տարիներ առաջ երջանակահիշարակ Գարեգին Ս Կաթողիկոսը հայոց առաջին լուսավորիչների այս տոնը հռչակեց նաև կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների և քրիստոնեական դաստիարակության օր՝ իբրև քարոզչության և առաքելության խորհրդի ոգեկոչում:

Ձևավորված ավանդույթով, այդ օրը Նայաստանի տարբեր թեմերից Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին ժամանել կրոնի ուսուցիչներ: Մայրավանքում նրանք մասնակցեցին Ս. Պապարագի արարողությանը, հետո Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի նախաձեռնությամբ Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ հանդիսություն:

Բազման խոսքում Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը նշեց, որ մերօրյա ուսուցիչներն առաջին լուսավորիչների առաքելությամբ քրիստոնեական հավատի լույսն են տարածում մաքառ սերնդի հոգիներում: Լավեցին նաև բանախոսություններ «Նայ Եկեղեցին և դպրոցը», «Նայ հոգևոր երգը» թեմաներով:

Հանդիսության ավարտին գեղարվեստական գեղեցիկ հայտագրով ելույթներ ունեցան կիրակնօրյա դպրոցների սաները, ԶԴԿ-ի «Նավասարդ» երգչախումբը և ջութակահարների խումբը:

*
* *
*

Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը Արագածոտնի թեմի առաջնորդակնիստ Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում սկսվեց Պապարագի արարողությամբ:

Տոնը շարունակվեց «Ս. Մեսրոպ Մաշտոց» դպրատանը, ուր տեղի ունեցավ փոքրիկ գիտաժողով՝ թեմի կրոնի ուսուցիչների մասնակցությամբ: Նրանց թիվն այսօր հասնում է 180-ի, որոնք քրիստոնեական ուսմունք ու պատմություն են դասավանդում թեմի տարածքում գործող բոլոր դպրոցներում:

Բացելով գիտաժողովը՝ Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Բազրապ վրդ. Գալստյանյանը շնորհավորեց ուսուցիչներին՝ համեմատելով նրանց առաքյալների հետ:

Ապա գիտաժողովի բանախոսները՝ պրոֆեսորներ Բաբկեն Հարությունյանը, Էդուարդ Դանիելյանը և աստվածաբանության դոկտոր Պետրոս Մալաքյանը, հանդես եկան առաջ-
յալների՝ Հայաստանում քաղաքության պատմական վավերականության ապացույցներով:

Գիտաժողովից հետո ներկաներն ունենդրեցին Արագածոտնի արվեստի դպրոցի երգչա-
խմբի համերգը:

**ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՇԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

**ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ
«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ
21-ՐԴ ԴԱՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ**

Դեկտեմբերի 23-ին «Թեքեյան» մշակութային կենտրոնում ՀՌԱԿ հանրապետական վարչությունը կազմակերպել էր կյոթ սեզան՝ «Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին 21-րդ դարում» թեմայով:

Ջննարկումներին հրավիրված էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը հանդես եկավ այս հարցին նվիրված բանախոսությամբ:

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայ Եկեղեցու կողմից գերակայություններ նկատվող խնդիրներին՝ որպես այդպիսիք ներկայացնելով համայնքային կյանքի ձևավորման և եկեղեցաշինության, քրիստոնեական դաստիարակության, սոցիալական ծառայության ոլորտները: Հայոց Հայրապետը գերակա խնդիրների շարքում դասեց նաև Հայ Եկեղեցու կանոնադրության հաստատումը, որի մշակման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են: Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Եկեղեցի-պետություն հարաբերություններին, ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների հետ ներկայիս հարաբերությունները:

Հավարտ բանախոսության Վեհափառ Հայրապետը պատասխանեց ներկաների հարցերին:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌԱՄԲ ՕԾՎԵՑ ՄԱՐՄԱՐԱՇԵՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 4-ին Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Արարա-
րի մարզի Մարմարաշեն գյուղ՝ կատարելու նորակառույց Ս. Գևորգ եկեղեցու օծումը:

Վեհափառին ուղեկցող շքախմբին, որի մեջ էին բարձրաստիճան եկեղեցականներ և
Մայր Աթոռի միաբաններ, եկեղեցու մուտքի մոտ դիմավորեցին Արարադյան Հայրապե-
տական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ եպս. Կճոյանը, թեմի հոգևոր
դասը, թեմական խորհրդի անդամները, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ,
ինչպես նաև հավատացյալների խումբերում բազմությունը:

Հանդիսավոր թափորը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի, ուր, Նավասարդ
Սրբազանի ողջույնի և բարիգալստյան խոսքից հետո, Ամենայն Հայոց Հայրապետը, իբրեւ
ընթերակներ տնենալով Տ. Շահան արքեպս. Սվաճյանի և Ս. Նավասարդ եպս. Կճոյա-
նին, Սրբալույս Մյուռնոնով օծեց նորակառույց եկեղեցու Սուրբ Սեղանը, իսկ այոներն ու
Մկրտության Ս. Ավագանը օծեցին ընթերակա Սրբազանները:

Օծման արարողությունից հետո Նորին Սրբությունը Հայրապետական սրբալուստ Կոն-
դակով եկեղեցու բարերար, մոսկվաբնակ Մերգեյ Կազարյանին շնորհեց Հայ Առաքելական
Սուրբ Եկեղեցու բարձրագույն պարգևը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան: Ապա Վեհա-
փառ Հայրապետն իր շնորհավորանքի խոսքը և հայրապետական պարգամը հղեց ներկա
հյուրերին և եկեղեցում հավաքված մեծաթիվ հավատացյալներին՝ բարձր գնահատանքի
արժանացնելով Ս. Նավասարդ եպս. Կճոյանին, բարերարին և եկեղեցու կառուցմանը
նպաստած բոլոր անձանց: «Մենք հավատում ենք, որ հավատքով կառուցված այս եկեղե-
ցու սրբազան խորանից պիտի օրհնություն և լույս սփռվի Մարմարաշեն գյուղի մեր հավա-
տացելոց կյանքից և օջախներից ներս», - նշեց Հայոց Հայրապետն իր խոսքում:

Ի նշան օրհնության, Նորին Սրբությունը նորած եկեղեցուն նվիրեց Ս. Հաղորդության
սկիծ:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

ՔԱՆՄԱՅԱԿԱՆ ՉԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

2002 թ. նոյեմբերի 16-ին, Անդրեաս և Փիլիպպոս առաքյալների փոխին, երեկոյան, հավարտ կիրականավոր ժամերգության, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Իջման Ս. Մեղանի առջև, կատարվեց Կարեն սարկավազ Քարամյանի և Արդյոմ սարկավազ Ավետիսյանի քահանայական ընծայման կարգը՝ «Տերեկոյէ կոչումն քահանայութեան» արարողությունը՝ ըստ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ձեռնադրության Մաշտոցի: Նվիրյալները ծնրադիր մոլորեցան ձեռնադրության խորհրդակատար պաշտոնյային՝ Կուրալի թեմի առաջնորդ Ս. Առաքել եպս. Քարամյանին:

Արարողության խաղաղավիյակ Ս. Արդյակ վրդ Տիգրանյանը, ըստ ձեռնադրության Մաշտոցի, հայցում է. «Նայր Սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր սուրբ Եկեղեցի, զի ձեռնադրեսցես զսարկաազունս, զոր ընծայէ քեզ յաստիճան քահանայութեան»: Այնուհետև Նայր Սուրբը վկայեց նորընծաների հոգևոր-իմացական պատրաստվածության մասին նրանց ներկայացնելով արժանի ձեռնադրության: «Կոչումն քահանայութեան» ավարտին Կարեն և Արդյոմ սարկավազները հանդիսավորությամբ ասացին Ս. Գրիգոր Տաթևացու «Նավարտ խոստովանությունը»:

Նոյեմբերի 17-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր Ս. Պատարագ: Պատարագիչն էր Կուրալի թեմի առաջնորդ Ս. Առաքել եպս. Քարամյանը: Սրբազան Հայրը մատուցած այս Պատարագի ժամանակ կատարեց իր անդրանիկ քահանայական ձեռնադրությունը: «Զի ողորմած ու մարդասէր ես, Աստուած» աղոթքի ժամանակ խաղաղավիյակ Ս. Արդյակ վրդ. Տիգրանյանը ծնրադիր տարկավազներին առաջնորդեց դեպի Ավագ Ս. Մեղան: Երկու տարկավազները ծնրադիր մոլորեցան են ձեռնադրող Սրբազանին: Արդյոմ տարկավազն իր ուխտն է կապում որպես ամուսնացյալ քահանա, Կարեն տարկավազը՝ որպես կուսակրոն քահանա: Ս. Առաքել եպիսկոպոսն իր ձեռքը դնում է յուրաքանչյուրի գլխին ու հանդիսավոր արտասանում ձեռնադրության աղոթքը. «Ես դնեմ զձեռս ի վերա տրայ, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք»:

Սրացած ձեռնադրությամբ և օծմամբ Արդյոմ տարկավազ Ավետիսյանը վերանվանվում է Տեր Սողոմոն, իսկ Կարեն տարկավազ Քարամյանը՝ Տեր Դավիթ: Նորընծաները դառնալով դեպի ժողովուրդը՝ Սուրբ Խորանից տալիս են իրենց անդրանիկ քահանայական օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Շնորհավորելով նորընծաներին՝ պատարագիչ Սրբազան Հայրը ձեռնադրության առթիվ խոսված քարոզում նորընծաներին հորդորեց օրինակ լինել հավատարացյալներին «խոսքով, վարմունքով, սիրով, հավատով ու սրբությամբ» (Ա Տիմ. Դ 12)՝ ասելով.

«Միեկի հավատավոր ու հավատակից քույրեր և եղբայրներ.

Այսօր նվիրական և հիշարժան օր է մեզանից յուրաքանչյուրի համար: Նախ ուրախությամբ ու հոգեկան բերկրանքի պահ է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության ու մեր հավատացյալ ժողովրդի համար:

Այսօր վերապայծառացել է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, քանի որ Մայր Աթոռի հոգևոր ալյուր՝ հոգևոր պարտեզում րնկած երկու ծառեր ծաղկել են և շուրով իրենց պարզաբերութլամբ պելոք է յցնեն մեր Եկեղեցու հոգևոր անդաստանը:

Մեր ժողովուրդն այսօր առավել քան երբևէ թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում և թե՛ ի սիլյուստ աշխարհի կարիքն ունի մեր Եկեղեցու անդաստանում թխված հացի, մի հացի, որ հոգևոր է, մի հացի, որ սնունդ է հոգու, մի հացի, որից որքան շատ ես ճաշակում, այնքան շատ ես փափագում:

Ահա մեր նորած ջահանա եղբայրներն այսօրվանից կոչվելու են մեր Եկեղեցու անդաստանում հոգևոր մատակարարները դառնալու մեր ժողովրդի:

Մեր նորընծա ձեռնադրյալների՝ Ասրծուն ընծայման աստվածահաճո ոխսրի առիթով ես գոհություն և փառաբանություն եմ վերառաքում առ Բարձրյալն Աստված՝ ասելով. «Փառք քեզ, ՏՀՐ, փառք քեզ, յաղագս ամենայնի, փառք քեզ, ՏՀՐ», որ արժանի արեցիր ինձ քո Սուրբ Սեղանին պատարագելու և ձեռնադրության այս կարգը կատարելու:

Միքելի հավատարմոր ժողովուրդ, եկեք մեկ անգամ ևս շնորհավորենք մեր նորած հոգևոր եղբայրներին, նրանց ծնողներին, հարազատներին և, ինչո՞ւ չե՞ նաև մեկս մյուսին և միասնաբար աղոթենք առ Բարձրյալն Աստված՝ հայցելով Ամենակարողից, որ Հայր Դավիթը և Տեր Սողոմոնն առանց փորձության, աղոթքով և աստվածաշարությանմբ անցկացնեն իրենց 40-օրյա պահոց շրջանը և ցկյանս հաստատու ու անսայթաք մնան իրենց ոխսրի մեջ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Հավարտ Ս. Պատարագի, նոր ձեռնադրված ջահանաներին մուրենալով, շնորհավորեցին և նրանց նորած մյուսնաբույր ձեռքերը համբուրեցին արարողությանը ներկա գտնրվողները:

Ս. Պատարագին ներկա էին նաև Անդրկովկասում պապական նվիրակ Կատողիո Գուգերտրին և Հայաստան այցելած մի խումբ կաթոլիկ հոգևորականներ:

Նույն օրը, երեկոյան, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում տեղի ունեցավ Տ. Դավիթ արեղա Զարամյանի վեղարի տվչության արարողությունը:

ՄԵԴԱ ՀԱՐՈՒԹԹՈՒՆՅԱՆ



Տ. ԴԱՎԻԹ ԱՔԵՂԱ ՔԱՐԱՄՅԱՆ

(ավագանի անունը՝ Կարեն)

Ծնվել է 1979 թ. հուլիսի 18-ին Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղում:

1986-1996 թթ. սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1996-2001 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թ. մարտ-մայիս ամիսներին Ռումինիայում մասնակցել է Յաշ քաղաքի «Ս. Նիկոլա» համալսարանում ԵՀԽ-ի կողմից կազմակերպված անգլերեն լեզվի համալսյա դասընթացներին:

2001-2002 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ավարտելուց հետո, աշխատել է Նախ Մայր Աթոռի Միջնկերեցական հարաբերությունների բաժնում, ապա՝ Կաթողիկոսարանում:

2002 թ. հոկտեմբերի 31-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Մայր Աթոռը և Շահամիրյանները» թեմայով:

2002 թ. նոյեմբերի 17-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Ջարամյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



Տ. ՍՈԳՈՄՈՆ ՔԱՇԱՏՐԻԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
(ավազանի անունը՝ Արտյոմ)

Ծնվել է 1977 թ. հոկտեմբերի 22-ին Գյումրի քաղաքում:

1984-1994 թթ. սովորել է Վանաձորի թիվ 11 միջնակարգ դպրոցում:

1994-2000 թթ. ուսանել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանում:

2000-2001 թթ. աշխատել է Մայր Տաճարի թանգարանում միաժամանակ Հայաստանի Ամերիկյան համալսարանում հետևելով բիզնես-մենեջմենթի դասընթացին:

2001 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:


2002 թ. փետրվարի 11-ից ծառայության է անցել Հայաստանի Հանրապետության գին-ված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

2002 թ. հոկտեմբերի 31-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Ղարաքիլիսայի Ս. Աստվածածին եկեղեցին և ծխական դպրոցը» թեմայով:

2002 թ. նոյեմբերի 17-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:



ՍԻ ՊԱՆԶԵՆԱՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԿՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ





ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ԶԵՌՆԱԴՐՎԵՑԻՆ 12 ՆՈՐ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐ

«Եկեղեցին և ժողովուրդը ձեզ են սպասում»:

(Գարեգին Բ)

Դեկտեմբերի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիսավորապես նշվեց Ս. Սրբեփանեսոս Նախավկայի և առաջին մարտիրոսի փոխը:

Մուրբ Սրբեփանեսոս Զրիստոսի Եկեղեցու առաջին 7 սարկավագներից մեկն էր, որ եղավ հանուն Զրիստոսի նահատակված առաջին քրիստոնյան:

Տոնի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տաճարում, Ս. Սրբեփանեսոսի Խորանի առջև, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը:

Սրբեփանեսոս Նախավկայի հիշատակության օրը Հայ Եկեղեցում համարվում է նաև սարկավագների փոխ և ավանդաբար կատարվում սարկավագական ձեռնադրություն: Հընթացս Ս. Պատարագի ձեռամբ Սրբազան Հոր սարկավագական աստիճան ստացան Գևորգյան Հոգևոր ճեմարանի ու Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի 12 սաներ, ովքեր հաջողությամբ հանձնել էին սարկավագական ցնությունները:

«Սարկավագությունը փառքի աստիճան չէ, այլ խոնարհության, ծառայության ու նվիրումի աստիճան է»,- շնորհավորելով նորընծա սարկավագներին՝ ասաց Ներսես Սրբազանը:

Ս. Պատարագից հետո Վեհարանում նորընծա սարկավագներին իր օրհնությունը տվեց նաև Ամենայն Հայոց Հայրապետը:

«Եկեղեցին և ժողովուրդը ձեզ են սպասում... Սիրեցե՛ք Ս. Էջմիածինը և արժանիորեն կրե՛ք այն սքե՛նը, որ երկյուղածություն, սեր և հարգանք է ձևում յուրաքանչյուր հայոդդու հոգում»,- ասաց Նորին Սրբությունը՝ մաղթելով սարկավագներին հավատքի ամրություն ու նվիրյալ ծառայություն:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ծառայում են շուրջ 50 սարկավագներ: Նրանցից 27-ին, ովքեր այս փառվա ընթացքում պաշտպանել են ավարտաճառեր, Վեհափառ Հայրապետը հանձնեց նաև Գևորգյան Հոգևոր ճեմարանի ավարտական վկայականներ:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, Մայրավանքում տեղի ունեցավ ղրպակա ձեռնադրություն և ուրարների փվչություն:

**ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

Արման սարկավազ Հակոբյան.

Ծնվել է 1977 թ. մայիսի 12-ին, Էջմիածին քաղաքում:

1984-1992 թթ. սովորել է Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի անվան № 3 միջնակարգ դպրոցում:

1992-1994 թթ. ուսանել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում:

1995 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան և 2000 թ. ավարտել այն:

2000 թվականից ցայսօր աշխատում է կաթողիկոսարանում որպես քարտուղար:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, Ս. Սյրեփաննոս Նախասարկավազի տոնին, ձեռամբ Ս. Ներսես արքեպս. Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավազ:

Խորեն սարկավազ Մանուկյան.

Ծնվել է 1977 թ. դեկտեմբերի 18-ին, Վրաստանի Հանրապետության Ախալցխայի շրջանի Փոքր Պամաճ գյուղում:

1984-95 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1997 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, Ս. Սյրեփաննոս Նախասարկավազի տոնին, ձեռամբ Ս. Ներսես արքեպս. Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավազ:

Արթուր սարկավազ Հակոբյան.

Ծնվել է 1978 թ. մարտի 4-ին, Գյումրի քաղաքում:

1985-93 թթ. սովորել է տեղի Պետրոս Դուրյանի անվան միջնակարգ դպրոցում:

1993-97 թթ. ուսանել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

1997 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, Ս. Սյրեփաննոս Նախասարկավազի տոնին, ձեռամբ Ս. Ներսես արքեպս. Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավազ:

Հովհաննես սարկավազ Հակոբյան.

Ծնվել է 1978 թ. դեկտեմբերի 3-ին, Գյումրի քաղաքում:

1985-94 թթ. սովորել է տեղի Պետրոս Դուրյանի անվան միջնակարգ դպրոցում:

1994-97 թթ. ուսանել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

1997 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, Ս. Սյրեփաննոս Նախասարկավազի տոնին, ձեռամբ Ս. Ներսես արքեպս. Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավազ:

Աշոտ սարկավազ Վարդանյան.

Ծնվել է 1978 թ. օգոստոսի 7-ին, Էջմիածին քաղաքում:

1985-93 թթ. սովորել է տեղի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1993-97 թթ. ուսանել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

1997 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, Ս. Ստեփաննոս Եախասարկավազի փոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալանի, ձեռնադրվել է սարկավազ:

Էդգար սարկավազ Հակոբյան.

Ծնվել է 1979 թ. հուլիսի 23-ին, Գյումրի քաղաքում:

1986-94 թթ. սովորել է Կեդի Պետրոս Ռուդյանի անվան միջնակարգ դպրոցում:

1994-97 թթ. ուսանել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

1997 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, Ս. Ստեփաննոս Եախասարկավազի փոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալանի, ձեռնադրվել է սարկավազ:

Արմեն սարկավազ Արսենյան.

Ծնվել է 1979 թ., Էջմիածին քաղաքում:

1986-96 թթ. սովորել է Կեդի Վահան Ռշտունու անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում:

1997 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

2002 թ. սեպտեմբերից, որպես Զ լսարանի ուսանող, ուսումը շարունակում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, Ս. Ստեփաննոս Եախասարկավազի փոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալանի, ձեռնադրվել է սարկավազ:

Վարդան սարկավազ Մելքոնյան.

Ծնվել է 1980 թ. սեպտեմբերի 15-ին, Էջմիածին քաղաքում:

1987-97 թթ. սովորել է Կեդի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1997 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

2002 թ. սեպտեմբերից, որպես Զ լսարանի ուսանող, ուսումը շարունակում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, Ս. Ստեփաննոս Եախասարկավազի փոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալանի, ձեռնադրվել է սարկավազ:

Արարատ սարկավազ Նուրիջանյան.

Ծնվել է 1980 թ. ապրիլի 28-ին, Արարատի մարզի Մխչյան գյուղում:

1986-97 թթ. սովորել է Կեդի Քր. Ալավերդյանի անվան միջնակարգ դպրոցում:

1997 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

2002 թ. սեպտեմբերից, որպես Զ լսարանի ուսանող, ուսումը շարունակում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, Ս. Ստեփաննոս Եախասարկավազի փոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալանի, ձեռնադրվել է սարկավազ:

Արման սարկավագ Մարուքյան.

Ծնվել է 1980 թ. մարտի 31-ին, Երևան քաղաքում:

1987-97 թթ. սովորել է տեղի Վ. Վ. Մայակովսկու անվան ռուսական միջնակարգ դպրոցում:

1997 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, Ս. Սյրեփաննոս նախասարկավագի տոնին, ձեռամբ Ս. Ներսես արքեպս. Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Արման սարկավագ Շահնազարյան.

Ծնվել է 1981 թ. մայիսի 24-ին, Երևան քաղաքում:

1987 թ. սովորել է Հրազդան քաղաքի № 1 դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել է Երևանի «Զվանդ» վարժարանում, 1997 թ. ավարտելով այն:

1997 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, Ս. Սյրեփաննոս նախասարկավագի տոնին, ձեռամբ Ս. Ներսես արքեպս. Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Արամ սարկավագ Միմոնյան.

Ծնվել է 1981 թ. ապրիլի 8-ին, Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղում:

1988-98 թթ. սովորել է նախ գյուղի միջնակարգ դպրոցում, ապա՝ Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:

1998 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, Ս. Սյրեփաննոս նախասարկավագի տոնին, ձեռամբ Ս. Ներսես արքեպս. Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

ՆԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԴԱՍԱՍՐԱԿԻ ԲԱՅՈՒՄ ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

Դեկտեմբերի 2-ը հիշարժան էր Շիրակի թեմի Եկեղեցասիրաց նրիպասարդների միության անդամների, ինչպես նաև առաջնորդարանում գործող փարբեր խմբակների սաների համար: Եկեղեցիների Տամաշխարհային խորհրդի Կյոռ Սեղանի գրասենյակի Տայասփանյան մասնաճյուղի նախաձեռնությամբ, ինչպես նաև Գերմանական «Diakonisches Werk der EKD» կազմակերպության անմիջական աջակցությամբ ու ֆինանսական օգնությամբ առաջնորդարանում բացվեց համակարգչային սրահ, որն իր նախօրինակներն արդեն ունի Տայասփանի ներքին մի շարք թեմերում:

Բացման հանդիսությանը ներկա էին Կյոռ Սեղանի Տայասփանյան գրասենյակի կոորդինատոր դոկտոր Կարեն Նազարյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջափառյանը, Արթիկի փարածաշրջանի հոգևոր հովիվ Տ. Սմբատ արևդա Պողոսյանը, թեմի հոգևորականաց, սարկավագաց դասերը, սաների ծնողներ, այլ հրավիրյալներ, նաև փարբեր լրափվամիջոցների ներկայացուցիչներ:

Առաջնորդ Սրբազան Տայրը բացման խոսքում շնորհակալություն հայտնելով աջակից կազմակերպություններին՝ նշեց, որ այս ծրագիրը կյանքի են կոչել նախ մեկ համակարգչով, սակայն այսօր ունեն հինգը: Ապա հավելեց. «Սրահն իր գոյության կարճ ժամանակահատվածում կարողացել է մեկ հարկի փակ հավաքել մեծաթիվ սաների: Այսօրեղ գալիս են ուսանելու փարբեր փարիքի երեխաներ, մոծելով խորհրդանշական մի գումար: Ուսման փոողությունը երեք ամիս է, իսկ վերջում լավագույն սաներին փրվում են ավարփական վկայականներ»:

Սրբազան Տայրը նաև ասաց, որ ծրագրի կազմակերպիչ ու նախաձեռող պարոն Կարեն Նազարյանն այս դասսարահին խոսփացել է նվիրել դարձյալ հինգ համակարգիչ:

Կարեն Նազարյանը նս իր խոսքում ասաց. «Այ՛, ինչպես Սրբազան Տայրը նշեց, մոփ ժամանակներս պեփք է հինգ համակարգիչ ևս փրամաղրվի թեմին: Մենք մշակել ենք մի նոր ծրագիր նույնպես, որն ավելի մեծ ու ընդգրկուն է, քան այս մեկը, և մոփ ապագայում դուր կունենաք ավելի մեծ սրահ՝ ավելի շափ ու ժամանակակից համակարգիչներով:

Եթե համակարգչային այս սրահ հաճախողները կարողանան սովորել, այսպես ասած, համակարգչային «այբուբենը», այսինքն՝ պարգ շարվածք կափարել, ապա նրանք կկարողանան աշխափանք գրնել և վասփակել օրվա ապրոսփը»:

Այնուհնմիս Կ. Նազարյանը փարբեր հարցերի միջօցով փորձեց սփուզել, թե այս կարճ ժամանակահատվածում աշակերփները ինչ են հասցրել սովորել, և խոսփացավ պարբերափար այցելել առաջնորդարան՝ սփուզելու, թե ինչպես են սաները փիրապեփում համակարգչային փեխնիկային:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԱՎԱՔ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Համաձայն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի և ՀՀ վարչապետի միջև այս փառքի կնքված համաձայնագրի, 2003 թվականի եռեկամյա 1-ից հանրակրթական դպրոցներում պետք է դասավանդվի հայ Եկեղեցու պատմություն առարկան, ինչն աշակերտներին հնարավորություն կտա առավել մոտիկից ծանոթանալու հայրենի երկրի, հաքազար Եկեղեցու և սեփական ժողովրդի իրար միահյուսված պատմությանը:

Դպրոցներում այս առարկայի դասավանդման աշխատանքների շրջանակներում դեկտեմբերի 3-ին Շիրակի թեմի առաջնորդ Ս. Միքայել եպս. Աջապահյանն առաջնորդարան էր երավիրել Գյումրի քաղաքի, ինչպես նաև փարածաշրջանի հանրակրթական դպրոցներին:

Հանդիպմանը մասնակցելու էին եկել հայաստանի Աստվածաշնչյան Ընկերության ներկայացուցիչներ Ս. Շահե քին. հայրապետյանը, ինչպես նաև հայաստանի թեմերի գաղգաման ծրագրի փնթին և հայաստանի Աստվածաշնչյան Ընկերության հոգաբարձուների խորհրդի քարտուղար պրն Արշավիր Գաբուշյանը:

Ներկա էին նաև Շիրակի մարզի կրթության բաժնի պետ Սահակ Մինասյանը, հայ Կաթողիկե Եկեղեցու հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի առաջնորդ Գերապայծա Ս. Ներսես արքեպս. Տեր-Ներսեսյանը, Ավետարանական Եկեղեցու վերապալվելի Ռնն Լևոնյանը:

Ինչպես իր խոսքում նշեց պարոն Ա. Գաբուշյանը, իրենք մի գեղեցիկ ավանդույթ են որդեգրել, ըստ որի՝ ուր գնում են, Աստվածաշունչ Մապյանից մի հալված են ընթերցում և ապա՝ մեկնաբանում: Այս անգամ Ս. Շահե քահանան կարողաց Մապրեթոսի Ավետարանի ԻԸ գլխի 16-20 համարները և մեկնեց այն ներկաների համար:

Շիրակի մարզի կրթության բաժնի պետ Սահակ Մինասյանը նախ ողջունեց հյուրերին և ապա գնահատանքի խոսքեր ուղղեց առաջնորդ Սրբազան հորը՝ նման հավաք կազմակերպելու համար, ի սրտե շնորհակալություն հայտնելով կրթական այս նախագիծ-ծրագրի հեղինակներին, ապա շեշտեց, որ հայ Եկեղեցու պատմությունը կօգնի այսօրվա աշակերտությանը՝ բացել իրենց համար դեռևս փակ շար դռներ:

Աստվածաշնչյան Ընկերության ներկայացուցիչը պարոն Սահակ Մինասյանին նվիրեց Աստվածաշունչ Մապյան և այն մեկնաբանող ևս հիևց հատորյակ օժանդակ գրականություն, որոնք միասին կազմում են մեկ ամբողջություն և Աստվածաշնչյան Ընկերության կողմից սրացել են «Վեցհապորդյակ» անվանումը:

Եզրափակելով հավաքը, առաջնորդ Սրբազան հայրը նախ ողջունեց հյուրերին, ողջունի առանձնահատուկ խոսք հղեց վերապալվելի Ռնն Լևոնյանին, որն առաջին անգամ էր առաջնորդարանում, ապա նշեց, որ եթե որևէ կրոնական կազմակերպություն ուզում է թեմից եերս ինչ-որ օգնություն ցուցաբերել, պետք է ոչ թե այդ հարկի պատուհանով մտնի, այլ՝ դուրսից, որը փվյալ դեպքում առաջնորդարանն է:

Հավաքի վերջում «Վեցհապորդյակ» գրքեր նվիրվեցին նաև մասնակից փնթիններին:

«ՎԱԶԳԵՆՑԱՆՑԻՆԵՐԻՍ ՀԱՄԱՐ ԴՊՐԱՆՈՑԸ ՄԵՐ ՏՈՒՆՆ Է»

Վերջերս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական փնտրիչությամբ Տ. Բագրատ վրդ. Գալստրանյանը նշանակվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արագածոտնի թեմի առաջնորդ: Այս նոր պաշտոնին զուգահեռ Հայր Սուրբը շարունակում է նաև կատարել տեսչի պարտականությունները Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում: Սույն հարցազրույցը, որ արվել է մինչ Հայր Բագրատի նոր նշանակումը, փնտչական եռամյա գործունեության յուրօրինակ հաշվետվություն է:



Ամեն օր, վաղ առավոտյան, երբ Սևանի գյուղերում գրեթե լույս չի երևում, Սևանա կղզու բարձունքից՝ Ս. Առաքելոց եկեղեցուց լսվում է առավոտյան ժամերգության հոգեպարար աղոթքը: Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաներն աղոթք են եղում առ Աստված, ու թվում է, թե մի ողջ ժողովրդի աղոթք է հնչում այդ պահին:

«Երբ բարձրանում ենք Ս. Առաքելոց, իմ մտքում մի հարցադրում է՝ ինչու: Եվ այն մտածումն եմ ունենում, որ յուրաքանչյուր մարդ այդ պահին իր փանն է: Եվ, սակայն, ուսանողներն էլ ձգտում են դնել իրենց փուն, այն փունը, ուր մշտապես ներկա է Աստված», - ասում է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Տ. Բագրատ վրդ. Գալստրանյանը:

12 փարի առաջ երջանկափառական Վազգեն Ա Հայրապետի օրինությամբ ու այն ժամանակ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, այժմ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի համարձակ նախաձեռնությամբ Սևանա կղզում հիմնադրվեց Վազգենյան Հոգևոր Դպրանոցը: Ինչպես վերիիշում են առաջին սերնդի ուսանողները, սկիզբը չափազանց դժվար էր: Ավելի քան հարյուրամյակ առաջ Սևանա կղզում Խրիմյան Հայրիկի կողմից կառուցված հոգևոր ընծայարանի շենքը ծառայում էր և՛ որպես դպրանոց, և՛ որպես կացարան՝ գուրկ կենցաղային փարրական պայմաններից: Եվ սակայն նման պայմաններում դպրանոցը 1996 թ. տվեց իր առաջին 9 շրջանավարտները:

Այսօր արդեն հաղթահարված են ոչ վաղ անցյալի դժվարությունները, և Վազգենյան Հոգևոր Դպրանոցը Գևորգյան Հոգևոր Ճեմարանի կողքին դարձել է Հայ Եկեղեցու կարևոր կրթօջախներից մեկը: Գարեգին Բ Կաթողիկոսի ընդարձակումից հետո այն գործում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի փնտրիչության ներքո: Հնգամյա դպրանոցի կրթական ծրագիրն ամբողջությամբ՝ համապատասխանեցված է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի առաջին 5 լսարանների հետ: Ավարտելով դպրանոցը՝ վազգենյանցիներն ամբողջացնում են իրենց ուսումը Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 6-րդ լսարանում և ապա՝ համալրում Հայ Եկեղեցու սպասավորների շարքերը:

Այս փարի դպրանոցում ուսանում է ավելի քան հինգ փասնյակ ուսանող:

«Այսօր այլևս ականափեսը չենք անցյալի դժվարությունների և ուսումնական ու հոգեվարձարժեքի և կյանքի և, որ ցանկանում ենք հիմնավոր կերպով զարգացնել Սևանա անապատում»,- ասում է դպրանոցի տնօրենը:

Այս տարի, շնորհիվ Հայ Եկեղեցու նվիրյալ բարերարների, բացվեց դպրանոցի կացարանային նոր մասնաշենքը՝ 110 ուսանողի համար: Առաջիկայում կսրբագործվի նաև նորակառույց Ս. Հակոբ մատուռը:

Դպրանոցի ներկայիս կյանքի ու առաջիկա ծրագրերի մասին է հարցազրույցը Հայր Բագրատի հետ:

- Հայր Սուրբ, ի՞նչ հիմնական պահանջներ են դրվում Վազգենյան Հոգևոր Դպրանոցի ուսանողության առջև: Ինչպիսի՞ն պետք է լինի դպրանոցի ուսանողը:

- Չէի ցանկանա բառեր շռայլել: Այդ մասին Պողոս առաքյալն է ասում պարկեշտ, խոնարհ, ուսումնասիրենք, աղոթական: Բնականաբար, դպրանոցն իր տեղանքով լինելով անապատացված, հատկապես երկարափն ծածկն ամփսններին, ավելի շարժվելով է որպես վանական հաստատություն: Եվ լինելով այդպիսին՝ այն ունի իր ուրույն ներքին կյանքը: Ծրագրային առարկաների դասավանդման կողքին առաջնային ենք նկատում նաև հարակից գրականության ուսումնասիրությամբ ուսանողի վերլուծական մտքի զարգացումը և, անպայմանորեն, դրան գուցաե՛տ ու համառոտաբար՝ ներքին աղոթական կյանքը:

Սևանա վանքը, որ ժամանակին հռչակված է եղել մեր Եկեղեցու կյանքում, լեցուն է անառն վարդապետների, վանականների աղոթքով: Այդ մթնոլորտը մեր կամքից անկախ ու մեր գիտակցությունից դուրս ներազդում է բոլորիս մտքերի ու հոգիների վրա: Եվ վազգենյանցին էլ, ինչպիսին որ եղած լինի մինչ դպրանոց գալը, վստահ եմ, որ, ապրելով նման մթնոլորտում, շարժվելով ժամանակում իր մտածողությամբ, իր վարք ու բարքով վերափոխվում և դառնում է այնպիսին, ինչպիսին պետք է լինի յուրաքանչյուր հոգևոր հաստատության սան՝ այն ըմբռնումով, որ դպրանոցը, առկա ուսումնական հաստատություն լինելուց զատ, ավելին է մեզ համար. վազգենյանցիներին համար մեր դպրանոցը մեր տունն է:

- Այս տարի դպրանոցի 5-րդ լսարանն ավարտեց 8 ուսանող: Մինչդեռ ընդունվողների թիվը շատ ավելին է: Տպավորություն է ստեղծվում, որ մի մասը չի կարողանում հարմարվել դպրանոցի կյանքին:

- Բնականաբար, ուսման ընթացքում, հատկապես առաջին 1-2 ամսում, ոմանք չկարողանալով հարմարվել հոգևոր դպրանոցի պահանջներին՝ հեռանում են: Ցավոք սրտի, լինում են նաև դեպքեր, երբ ուսանողը հեռացվում է տեսչության կողմից: Մենք դրան չենք անվանում հեռացում, այլ՝ ազատ կարգավիճակի շնորհում, ըստ որի ցանկանում ենք փոխառնակ ուսանողին տեսնել ազատության մեջ, այն պայմաններում, ինչպիսին ինքն է ցանկանում:

- Նկատի ունենալով, որ դպրանոցի կրթական ծրագիրն ամբողջությամբ համապատասխանում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի առաջին 5 լսարանների ծրագրին, նախափորձվում է արդյոք դպրանոցում քաջել 6-րդ լսարան և դրանով այն ամբողջապես դարձնել քաղաքացույն ուսումնական հաստատություն:

- Վազգենյան Հոգևոր Դպրանոցի շրջանավարտների ուսումնասիրությունը Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 6-րդ լսարանում մեկ նպատակ ունի. որպեսզի ավարտական տարում ուսանողը կարողանա ապրել Ս. Էջմիածնի շնչով և իր հարազատությունն ու կապվածությամբ:

յունը զգա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ: Այս առումով է, որ Սևանա վանքում 6-րդ լսարան բացելու անհրաժեշտություն չկա:

- Լինելով Գևորգյան Հոգևոր ճեմարանի նախկին սան և այսօր՝ Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ, ի՞նչ տարրերություն եք զգում երկու հոգևոր կրթօջախների միջև:

- Մթնոլորտների տարբերություն կա: Գևորգյան Հոգևոր ճեմարանի մեծագույն առավելությունն այն է, որ գտնվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, և ուսանողությունը մշտապես հոգևորականների և ուսուցիչների միջավայրում է, Մայր Տաճարը տեսնելու ամենօրյա հրաՆՆԵՂԻ ՎԻՃԱԿՈՒՄ: Եվ սա թելադրական է, եթե գնահատականը և արժեքը ճիշտ է ընկալված: Սևանա վանքում ուսանողներն ամբողջությամբ առանձնության մեջ են և մեծ հնարավորություն ունեն անհատապես իրենք իրենց հետ լինելու, որն ինչ-որ իմաստով շարկարևոր է ուսանողի կամ ապագա հոգևորականի հոգևոր ինքնության ձևավորման համար: Անշուշտ երկու դեպքում էլ մեծ է տեսչության ու դասախոսական կազմի դերը, որպեսզի կարողանան նպաստել ուսանողների հոգևոր նկարագրի ձևավորմանը:

- Հայր Սուրբ, Հայաստանում Մևանի Ս. Առաքելոց եկեղեցին, թերևս, միակ եկեղեցին է, որտեղ ամեն կիրակի հնչում է միայն կոմիտասյան Պատարագը՝ դպրանոցի «Լուսավորիչ» երգչախմբի երգեցողությամբ: Այս տարի երգչախումբն առաջին անգամ բարձրագավ նաև պրոֆեսիոնալ բեմ՝ Կոմիտասի անվան կամերային երաժշտության սրահում: Ինչպե՞ս է ստեղծվել երգչախումբը և ի՞նչ հետագա ծրագրեր կան:

- Երկու տարի առաջ, նշանակվելով Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ, երբ առաջին անգամ եկեղեցում լսեցի տղաների երգեցողությունը, կոչեցի նրանց բազմաձայն երգչախումբ կազմելու: Առաջին պայմանը, որ եղավ՝ կարճ ժամանակում սովորել Կոմիտասի «Պատարագ»-ը: Եվ, փառք Տիրոջը, ուսանողությունն ընդամառ գնաց մեր կոչին, և ցայսօր Ս. Առաքելոց եկեղեցում հնչում է միայն եռաձայն կոմիտասյան Պատարագ: Այս գործում իրենց մեծ նպաստը բերեցին մեր ավագ լսարաններից Արթուր (հիմա արդեն սարկավագ) Պետրոսյանը և իրենից հետո՝ ավելի կրտսեր երկու ուսանողներ:

Այսինքն, դպրանոցի սաների մասնակցությամբ ու նրանց ջանքերով էր, որ «Լուսավորիչ»-ը կյանքի կոչվեց: Ասել, թե «Լուսավորիչ»-ը պրոֆեսիոնալ երգչախումբ է, ճիշտ չի լինի: Ես կասեի պրոֆեսիոնալ ոչ թե արհեստավարժ, այլ՝ մասնագետ իմաստով, եթե այդպես կարելի է ասել: Որովհետև այդ տղաները հոգևոր երգի կրողներ են:

Այսինքն, նրանց երգը, բացի համերգային կամ սկավառակային տեսք ունենալուց, մշտապես հնչում է եկեղեցում: Եվ երգչախումբն էլ, ըստ էության, կոչված չէ առկա երգչախումբ լինելու համար, այլ ներքին կյանքի բարեփոխման մեծ խթան է: Դրանում համոզվում եմ, երբ ամեն օր, ուշ երեկոյան, տեսնում եմ նրանց համարքեղ փորձը: Այսպես, մեկ տարվա ընթացքում կարողացանք թողարկել լազերային սկավառակ՝ Կոմիտասի «Պատարագ»-ը, որը ձայնագրվեց Մայր Տաճարում Կանադահայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոսի հովանավորությամբ: Ձայնագրել ենք նաև շարականների ընդհանուր, որի հրապարակմանը դեռ սպասում ենք: Աստուծո կամքը սա էլ դուրս կգա, և մտածում ենք՝ այս գործը շարունակական դարձնելու մասին:

- Հայր Սուրբ, թերևս պատմե՞նք նաև դպրանոցին կից օժանդակ փնտրելու մասին:

- 2000 թ. դպրանոցին կից Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կոորդինացիայի գրասենյակի գործուն մասնակցությամբ հաստատվեց մասնաճյուղերի և կաթնամթերքների օժանդակ փնտրելու մասին համաձայնագրեր, որի նպատակն էր սեփական արտադրանքով բավարարել սննդի որոշ մասը: Այսօր փորձում ենք զարգացնել այդ փնտրելությունը և դարձյալ Կոորդինացիայի աջակցությամբ ցանկանում ենք օժանդակ փնտրելությունը դարձնել մոդելային հատկություն: Մենք չենք ուզում, սակայն, սոսկ սպառողական իմաստով մոտենալ այս գործին: Այդ փոքրիկ օջախը՝ օժանդակ փնտրելությունը, լավագույն առիթ է գործնական կերպով արտահայտելու արարչագործության հանդեպ մեր պատասխանատվությունը: Եվ մեզ համար այն առաջին երթին այդ նշանակությունն ունի և նոր միայն հանապազօրյա հացի ապահովման խնդիր է: Ուսանողությունը մասնակցում է փնտրելու աշխատանքներին, ինչն առավել ազնվացնում է նրանց: Այս պարի դպրանոցի դասավանդման ցանկում մտցված է նաև պայմանականորեն «կանաչ աստվածաբանություն» անվանված առարկան, որն իր բովանդակությամբ նշանակում է մարդու պատասխանատվությունը բնության, արարչագործության հանդեպ:

Հայր Սուրբ, առաջիկա ի՞նչ այլ ծրագրեր ունեք:

- Օգտվելով առիթից, ցանկանում են ընդգծել, որ մեր բոլոր ծրագրերն իրականացվել ու իրականացվում են դպրանոցի իմնադիր Հոր՝ Վեհափառ Հայրապետի օրենությամբ: Կուցարանային նոր մասնաշենքի գործարկմամբ սկսվել է գրադարանն ընդարձակելու ենարավորություն, և բնականաբար մեր ծրագրերից մեկն է՝ հնարավորության սահմաններում վերականգնել Սևանի հռչակված մարտնչադարանն ու փորձել ինչ-որ կերպ վերահաստատել այն բարի ավանդույթը, որ եղել է Սևանի վանքում իբրև գրքության միջնադարյան կարևոր կենտրոն: Կարծում եմ, սա մեծ լիցք, մեծ մղում ու նպաստ կլինի ուսանողության մրավորության ձևավորման համար:

Անցած տարի լույս տեսավ դպրանոցի «Ս. Առաքելոց» տարեգիրքը, որն իր մեջ բովանդակում է բացառապես ուսանողների գրվածքները՝ ուսումնասիրություններ, թարգմանություններ, տեղեկություններ դպրանոցի ներքին կյանքի մասին և այլն: Կառնում ենք տարեգրքի հրապարակումը դարձնել շարունակական, և արդեն երկրորդ համարը առաջիկայում լույս կտեսնի: Հրապարակել ենք նաև դպրանոցի մասին պարզեղ երկվեզվյան (հայերեն, անգլերեն) բուկետ: Ցանկանում ենք այլ հրապարակություններ ևս իրականացնել, եթե մեկ նաև հրապարակություն «Ս. Կարապետ» անունով: Եվ Աստծու կամքը դա էլ կլինի:

ՆԵՂԻՆԵ ՄԿՐՏՁՅԱՆ

ՎԱԶԳԵՆՅԱՆՑԻՆԵՐԻ «ԱՐԵՎԱԳԱԼ ԳԵՂԱՐԴՈՒՄ» ԼԱԶԵՐԱՅԻՆ ՄԿԱՎԱԶՄԿՆ ԱՐԺԱՆԱՅԵԼ Է «ԱՆՈՒՇ» ՄՐՅԱՆԱԿԻ

Լոս Անջելեսում կազմակերպվող Հայ երգի ամենամյա մրցույթում (Armenian Music Awards) հոգևոր երաժշտության այս տարվա լավագույն ալբոմ է ճանաչվել Մևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի «Լուսավորիչ» երգչախմբի «Արևազալը Գեղարդում» լավերային սկավառակը: Այսուհետև դպրանոցի սաներին իրենց հաղթանակի մասին մշտապես կհիշեցնի մրցանակաբաշխության գլխավոր պարգևը՝ «Անուշ» արձանիկը:

«Արևազալը Գեղարդում» սկավառակը «Լուսավորիչ»-ի երկրորդ ալբոմն է: Առաջինը Կոմիտասի «Պատարագ»-ն էր: Այս անգամ երգչախմբի կատարմամբ ձայնագրվել են Ներսես Շնորհալու Արևազալի ժամերգության երգերը, ինչպես նաև տարբեր տոների շարականներ: Շարականների ձայնագրությունն իրականացրել է Հայաստանի կոմպոզիտորների միության «Բրևիս» ձայնագրման ստուդիան:

Վազգենյան Հոգևոր Դպրանոցի եռաձայն երգչախումբը ստեղծվել է երկու տարի առաջ՝ դպրանոցի տեսուչ Տ. Բազրապի վրդ. Գալստյանյանի անմիջական նախաձեռնությամբ: Գեղարվեստական ղեկավար Շոթա Վարդանյանի և դպրանոցի Ե լսարանի սան Արթուր սարկավազ Պետրոսյանի ղեկավարությամբ երգչախումբն այս տարի առաջին անգամ բարձրացել է նաև պրոֆեսիոնալ բեմ:



**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԾՆ ԿՈՄՍԿԱՐԳ**

ՆԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԷՍՏՈՆԻԱՅՈՒՄ

Ֆիննական ծոցի ափերին տարածվող էստոնական երկրում հայերը հաստատվել են 19-րդ դարի 30-ական թվականներին: Նրանք բալթյան այդ երկիր են եկել բացառապես ուսանելու նպատակով և թվապես շատ քիչ լինելով ի վիճակի չէին եկեղեցի ունենալու: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և հատկապես վերջին տարիներին էստոնիայի հայերի թիվն ավելացավ և հասավ 2000 հոգու: Նրանք հիմնականում ապրում են մայրաքաղաք Տալլինում, ինչպես նաև Տարպու, Պայդե, Վալգե, Էլվա և Պուխյա քաղաքներում:

1988 թ. Տալլինում ստեղծվել էր հայկական մշակութային ընկերություն (նախագահ՝ Ա. Դավիդյանը), որի նպատակն էր նպաստել էստոնիայի հայերի հայապատկանության գործին, ինչպես նաև տարածելու էստոնական մշակույթը, զարգացնելու հայ-էստոնական բարեկամական կապերը: 1989 թ. ձմռանը նման կազմակերպություն ստեղծվել էր Տարպու քաղաքում (նախագահ՝ Ռ. Գրիգորյան): Տալլինի մշակութային ընկերության նախաձեռնությամբ առաջին անգամ էստոնիայում լույս ընծայվեց հայերեն լրագիր՝ «Վաեագն» անունով, որի տպագրանակը 1500 էր և տարածվում էր ոչ միայն էստոնիայում, այլև Հայաստանում ու այլ երկրներում: Այդ լրագրի առաջին համարում տպագրված Ա. Դավիդյանցի հաշվետվությունում ասվում էր, որ Տալլինում ստեղծվել է հայկական եկեղեցական համայնք:


1993 թ. նոյեմբերի 11-ին էստոնիայի ներքին գործոց մինիստրությունը գրանցեց հայկական եկեղեցական համայնքը: Ստեղծվեց ութ հոգուց բաղկացած համայնքային խորհուրդ, որի նախագահ ընտրվեց Գարիկ Իկնոյանը: Նրան հետո փոխարինեց Կարեն Տեր-Հովհաննիսյանը: Գ. Իկնոյանն այժմ Հայաստանի Հանրապետության պարավար էյուպատոս է էստոնիայում: Հոգևոր խորհրդի իրավասության ներքո անցավ 1998 թ. հիմնադրված Տալլինի հայկական մշակութային ընկերությունը: Կար եկեղեցական համայնք, բայց չկար եկեղեցի, որի բացակայությունը զգալի էր մասնատված և հոգևոր սննդից զրոկված էստոնահայ գաղութի կյանքում:

Անա այս պայմաններում հայերին օգնության ձեռք մեկնեցին էստոնացիները: 1994 թ. մայիսի 10-ին էստոնական ավիադառնական-լուսերական Եկեղեցու վարչությունը, առանց փոխադրացման, 99 տարով հայերին վարձով տվեց Տալլինի կենտրոնում գտնվող Աուրե Ցասանի հիմնավորը եկեղեցին: Ըստ գրավոր տեղեկությունների, այդ եկեղեցին կառուցվել է մոտավորապես 1237 թվականին: Խորհրդային իշխանության տարիներին եկեղեցին վերածվել էր պահեստի և բնականաբար գտնվելիս է եղել շատ վատ վիճակում:

Եկեղեցական խորհրդի առջև ծառացավ եկեղեցու հիմնովին վերականգնման ոչ դյուրին խնդիրը: Ի պատիվ եկեղեցական խորհրդի և, ընդհանրապես, Տալլինի հավատացյալ հայերի, պեպք է ասել, որ նրանք կարողացան վերականգնել եկեղեցին և հարակից փոքրիկ բակը: Եկեղեցին վերանվանվեց Ս. Գրիգոր Լուսավորիչ: Շրջակա տարածքը (շուրջ 900 քառակուսի մետր), որը նույնպես տրվել էր հայերին, նախատեսվում է կիրականության դպրոցի և մշակույթի տան շինարարության համար: Տարփուի համալսարանի պրոֆեսոր Ռաֆիկ Գրիգորյանը էստոնիայի հայ գաղութի պատմությանը նվիրված իր գրքույկում, որը



საქართველოს რესპუბლიკის დედაქალაქი თბილისი, სახელწოდება: თბილისი





ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԽԱՉԶԱՐԸ

լույս է տեսել Նարվա քաղաքում էստոներեն ու ռուսերեն լեզուներով, մանրամասն գրել է եկեղեցու վերանորոգման մասին:

1997 թ. Տալլինի հայկական եկեղեցու համար Էջմիածնից ուղարկվեց քահանա, բայց նյութական միջոցների չգոյության և տեղում չգրանցվելու պատճառով նա ստիպված եղավ ելք վերադառնալ: Հոգևոր հովվի պարտականությունները հանձնվեցին դպիր Արմեն Անդրեասյանին, որի հոգևոր գործունեության շրջանակը բնականաբար սահմանափակված էր իր ունեցած հոգևոր աստիճանի շրջանակում: Փաստորեն եկեղեցական ծառայություններն իրականացվում էին այն ժամանակ Ս. Պետրերբուրգի հայոց հոգևոր հովիվ Եզրաս արքեպիսկոպոսի (այժմ՝ Եզրաս եպիսկոպոս) միջոցով, որն, ի դեպ, մշտապես մեծ օգնություն է ցույց տալիս նորաբաց եկեղեցուն: Այժմ եկեղեցու հովիվն է Ս. Էջմիածնից ուղարկված Գառնիկ քահանա Լուսինյանը:

Ստորև անհրաժեշտ ենք համարում համառոտ տեղեկություններ տալ Հայոսնիայի հայ գաղութի վերաբերյալ: Գաղութի պատմությունը սկսվում է 1830 թվականից, երբ հայ մեծ լուսավորիչ խաչատուր Աբովյանը Ռուսաստանի համալսարանի ռեկտոր պրոֆ. Ֆ. Պարրոտի հրավերով ժամանեց այդ քաղաք (այժմ՝ Տարուս) և վեց տարի ափսոսանքով աշխատեց: Երկու տարի անց Ռուսաստանի Սուրբառնոս Նազարյանը՝ «Հյուսիսափայլի» ապագա խմբագիրը: Նրանցից հետո Տարուս են գալիս շատ հայ երիտասարդներ: 19-րդ դարի կեսերին նրանց թիվը հասնում է 25 հոգու, և նրանց ստեղծում են մի փոքրիկ հայրենակցական միություն:

Տարուսի համալսարանի հայ շրջանավարտները, որոնց թվում են Գ. Ալիմյանը, Բ. Ավագյանը, Ա. Ափստուրյանը, Գ. Խաչիսյանը, Գ. Բարխուդարյանը, Քերովյան և Ռաֆայել Պարկանյանները և շատ ուրիշներ, մեծ գործ կատարեցին հայ ժողովրդի գրական, մշակութային կյանքում: 1848 թ. հայերը Հայոսնիայում ստեղծում են հայրենակցական միություն, որի 130-ամյակի առթիվ (1978 թ.) Հայաստանում (Գյումրիում) պատրաստվել և Հայոսնիա է տարվել տոմարակառույց մի խաչքար (քանդակագործ՝ Հակոբ Ջիվանյան), որի վրա հայերեն, էստոներեն և ռուսերեն գրված է, որ այն նվիրվում է հայ-էստոնական բարեկամությանը:

19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում Հայոսնիայի ուսումնական հաստատություններում սովորում էին 200-ից ավելի հայ ուսանողներ, որոնք 1909 թ. ստեղծում են Անդրկովկասի հայկական հայրենակցական միություն, իսկ ավելի ուշ՝ հայ ուսանողների «Հայաստան» կազմակերպությունը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ուսանողները վերադարձան հայրենիք:

Հայերի թիվը Հայոսնիայում սկսեց ավելանալ Երկրորդ համաշխարհային պատերազմից և հատկապես ԽՍՀՄ-ի բալթայումից հետո: 1989 թ. Տալլինում և Տարուսում կազմակերպվեցին հայկական մշակութային ընկերություններ, որոնք բացեցին կիրակնօրյա հայկական դպրոցներ: 1992 թ. մայիսի 28-ին եթեր հեռարձակվեց «Միժեռակ» ռադիոընկերությունը, որը գործում է մինչ օրս:

Տալլինի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Հայոսնիայի հայության համար ոչ միայն հոգևոր պահանջմունքները բավարարող մի աղոթավայր է, այլև նրանց համախմբող և հայապահպանության գործին իր նպաստը բերող ազգային կարևոր մի հաստատություն:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



«ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԾԱՐԿԱԶՈՐՈՒՄ (11-13 նոյեմբերի 2002 թ.)

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջհեղեցական հարաբերությունների բաժնի և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կոորդինացիայի նախաձեռնությամբ սույն թվականի նոյեմբերի 11-13-ը Շաղկաձորում փոփոխաբերական մի խորհրդաժողով, որի թեման էր «Եկեղեցին և երիտասարդությունը Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրներում»:

Խորհրդաժողովի նպատակն էր համախմբել երիտասարդներ Հայ Առաքելական, Հայ Կաթոլիկ, Հայ Ավետարանական Եկեղեցիներից, ինչպես նաև այլ երկրներից՝ քննարկելու այն հիմնախնդիրները, որոնց դիմագրավում են երիտասարդները հետխորհրդային նոր իրականության մեջ, և փոխըմբռնման ու համագործակցության միջոցով լուծումներ գտնելու:

Ժողովը, Հայաստանում լինելով առաջինը իր տեսակի մեջ, ուներ նաև մեկ այլ նպատակ, այն է՝ Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրներից եկած և փոքրեր հարանվանությունների պատկանող երիտասարդներին փոխանցելու էկոմենիկ շարժման և այս ուղղության վերջին զարգացումների, հաղթանակներ «Քարտա Էկոմենիկա» փաստաթղթի մասին՝ համապետական քննարկումների միջոցով, որը մասնակիցներին փայլուն էր միմյանց առավել լավ ճանաչելու և միմյանցից սովորելու հնարավորություն:

Արևելյան Եվրոպայի երկրների փորձառությանը հաղորդակից լինելու համար ներկայացուցիչներ էին հրավիրվել Վրաստանից, Ռուսաստանից, Լատվիայից, Չեխիայից և Բուլղարիայից: Ներկա էին նաև Սառա Նոմիկոն՝ Շվեյցարիայից, և Թիմո Անթիլան՝ Ֆինլանդիայից: Ժողովին հրավիրված էին 57 մասնակիցներ Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության հետևյալ եկեղեցիներից և հեղեցական կազմակերպություններից. Հայ Առաքելական Եկեղեցի, Հայ Կաթոլիկ Եկեղեցի, Հայ Ավետարանական Եկեղեցի, Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետ, Կաթոլիկ Օգնության ծառայություն, Եվրոպայի Եպիսկոպոսների Կոնֆերանսների Խորհուրդ, Երիտասարդ Մարդկանց Հրիստոնեական Ասոցիացիա, Չեխիայի և Սլովակիայի Ուղղափառ Եկեղեցի, Բուլղարիայի Արևելաձեն Կաթոլիկ Եկեղեցի, Ռուս Ուղղափառ Եկեղեցի, Լատվիայի Ավե-

փարանական-Լյութերական Եկեղեցու Երիտասարդության բաժին և Սինդեսմոս (Ռուդավառ Երիտասարդների Համաշխարհային Ընկերություն):

Բացման խոսքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատրասխանաբու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը կարևորեց ժողովի նշանակությունը՝ բացատրելով, որ դրա նպատակն է հնարավորություն տալ Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր թեմերի, ինչպես նաև Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական Եկեղեցիների երիտասարդներին մտքեր փոխանակել միմյանց հետ և սովորել երիտասարդներին Եկեղեցու կյանքում ներգրավելու արտերկրի փորձառությունից: Վերապատվելի Ռենն Լևոնյանը՝ Ամերիկայի Հայ Ավետարանական Ընկերակցության Հայաստանյան ներկայացուցիչը, կարևորեց նման հավաքույթների կազմակերպումը:

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կտր Սեղանի կոորդինատոր դոկտոր Կարեն Նազարյանն իր ողջույնի խոսքում ցանկություն արտահայտեց հաճախակի կազմակերպել նման հավաքներ, որպեսզի հնարավոր լինի երիտասարդության ուժերը կենտրոնացնել հասարակական ոլորտի աշխատանքներում:

Երեք օր շարունակ ընթերցվեցին տարբեր գեկուցումներ հեղինակ թեմաներով: Էկումենիզմը Եվրոպայում, Եկեղեցին և երիտասարդությունը Նախկին Խորհրդային Միության երկրներում, երիտասարդության մասնակցությունը Հայաստանի Եկեղեցիների տարբեր ծրագրերում և գործունեության մեջ:

Հանգամանակից ներկայացվեց «Քարտա Էկումենիկա»-ն, որը համագործակցության ուղեցույց է Եվրոպայի Եկեղեցիների համար: Այն ընդունվել է 2001 թ. ապրիլին, Ստրասբուրգում, Եվրոպայի Եպիսկոպոսների Կոնֆերանսների Խորհրդի (ԵԵԿԽ) և Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) կողմից:

Չնայած որոշ Եկեղեցիներ, այդ թվում նաև Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, վերապահումներ ունեն այդ փաստաթղթի որոշ հարվածների վերաբերյալ, և թեև որոշ երկրներ և Եկեղեցիներ քաջաժանող չեն այդ փաստաթղթին, այն համարվում է հնարավոր միջոց Եկեղեցիների միջև հեղինակ համագործակցության և երկխոսության համար:

Զեկույցներից հետո առաջադրվում էին թեմաներ՝ խմբային բնարկումների համար:

Երեկոյան ջերմ և մտերմիկ մթնոլորտում քննարկվեցին ինչպես նաև ինչպես ոչ պաշտոնական ծանոթություններ, երգեցողություն, երեկույթներ և միասնական աղոթք:

Մասնակիցների հավաստմամբ այսպիսի ժողովների առավել հաճախակի կազմակերպումը հնարավորություն կտա լավ ճանաչել Եկեղեցիներն ու նրանց ավանդույթները՝ անկեղծ երկխոսության և գործնական հարցերում սերտ համագործակցության միջոցով:

**ԱՆԳԼԻԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ
ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՄՆՈՒՄ
(5-10 նոյեմբերի 2002 թ.)**

2001 թ. հուլիսի 27-30-ը Դանֆորդ Հաուսում (Անգլիա) Կրեդի և ունեցիլ Անգլիկան-Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների մի հանդիպում, որը նպատակ ուներ նախապարաստական աշխարհաբաններ կատարել Անգլիկան-Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև երկխոսություն սկսելու համար: Այդ հանդիպմանը Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում էր Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պարասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Այս նախապարաստական հանդիպման ընթացքում նշվել էր, որ Անգլիկան և Արևելյան Ուղղափառ Եկեղեցիներն աշխարհի փարբեր մասերում ունեն ներկարաժյա ջերմ հարաբերությունների և հովվական կապերի պարմություն: Նրանք իստարարեցին, որ այժմ ճիշտ ժամանակն է համաձայնության գալու մի շարք աստվածաբանական հարցերում: Պատվիրակները հաստարարեցին նաև օրակարգը և լուսաբանեցին նոր հանձնախմբին անդամակցության գործընթացի, մեթոդաբանության և ժամանակացույցի հետ կապված խնդիրներ: Որոշվեց առաջին հանդիպումը կազմակերպել Հայաստանում Ամենայն Հայոց Կաթողիկոսության հրավերով:

2002 թ. նոյեմբերի 5-10-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կրեդի ունեցավ Անգլիկան-Արևելյան Ուղղափառ Միջազգային Հանձնախմբի առաջին հանդիպումը, որի նպատակն էր երստակեցնել մի շարք հարցեր Զրիտոսաբանության վերաբերյալ:

Այդ երկխոսության ընթացքում Անգլիկան Եկեղեցին ներկայացնում էին Ջիբրալթարի եպիսկոպոս Ջեֆրի Ռոուելը, Կիպրոսի և Գալֆի եպիսկոպոս Ջորջ Քլիվ Հենդֆորդը, Կոլումբոյի եպիսկոպոս Դուլիսի դե Չիկերան, կանոնիկոս Հարոլդ Ջ. Նաեապետյանը, Դոկտոր Վիլյամ Թեյլորը, Էկումենիկ բաժնի պարասխանատու եպիսկոպոս Ջոն Բեյքերոֆթը, Քենթերբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչ կանոնիկոս Ջոնաթան Գուդը և Քլոգերի եպիսկոպոս Մայքլ Ջեքսոնը:

Իսկ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչներն էին Դամիեոյի միտրոպոլիտ Ամրա Բիշոյը (Հայրի Ուղղափառ Եկեղեցի), Ջագիրայի և Եփրատի միտրոպոլիտ Մար Եվստաթիոս Մաթթա Ռոհամը (Ասորի Ուղղափառ Եկեղեցի), Անգելոս եպիսկոպոսը (Հայրի Ուղղափառ Եկեղեցի), Մումբայի միտրոպոլիտ Գիվարգեղ Մար Կուրիլոսը (Հրեդիկ Մալանկարոս Եկեղեցի), Տ. Նարեկ եպս. Ալեմեզյանը (Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն), Տ. Գեղամ եպս. Խաչերյանը (Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն), Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը (Մայր Աթոռ Ս. Էջմիածին) և Տ. Միքայել եպս. Աջապետյանը (Մայր Աթոռ Ս. Էջմիածին):

Փորձելով պաշտոնապես հռչակել մի ընդհանուր շարադրանք մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարդեղության վերաբերյալ՝ հանձնախմբի անդամները պատրաստեցին մի տեքստ, որը ստորագրվեց երկու կողմերի համանախագահների՝ Դամիսիոսի միտրոպոլիտ Գերաշնորի Անբա Բիշոյի և Զիբրալթարի եպիսկոպոս Զեֆրի Ռոուելի կողմից:

Անգլիկան-Արևելյան Ուղղափառ Միջազգային Հանձնախմբի հաջորդ հանդիպումը տեղի կունենա Իռլանդիայում, 2003 թ. նոյեմբերի 28-ից նոյեմբերի 2-ը, որտեղ կքննարկվեն՝ Սուրբ Հոգու բխմանը և Եկեղեցում Սուրբ Հոգու ներգործությանը վերաբերող հարցեր:

ԳՄՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆԹԱՆ *Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*

ԻՐԵՆՅՑ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՒԾ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂԱՔՓԱԹ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԵՎ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ

Ի՞նչ կլիկան շփումները Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների և Անգլիկան Եկեղեցու միջև և ինչպիսի՞ն է երկխոսության մասնակիցների վերաբերմունքն այս եռվաքի նկատմամբ, այս հարցին են պատասխանում ըննարկման մասնակիցները:

Տ. Եզնիկ եպս. Պեդրոսյան

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու

Արևելյան Եկեղեցիները նման երկխոսության փասնյակ տարիներին փորձ ունեն: Հետեւաբար, ըննարկված նյութն ուսումնասիրված էր: Բայց անշուշտ եղան նաև նոր գաղափարներ և նոր մոտեցումներ: Արևելյան քրիստոսաբանական հարցերի նկատմամբ ավելի բարյացակամ վերաբերմունք դրսևորվեց անգլիկանների կողմից և հաջողվեց առաջին այս երկխոսության ընթացքում ստորագրել համաձայնագիր: Մա չի նշանակում, թե մենք վերջնական համաձայնության ենք եկել քրիստոսաբանական հարցում Անգլիկան Եկեղեցու ետք: Դա բավական դժվարին և բարդ խնդիր է, որ կարող է տևել փասնյակ կամ հարյուրավոր տարիներ, և հնարավոր է անգամ ընդհանրապես համաձայնության չգալ:

Պարզապես սա մի համաձայնագիր է երկխոսությանը ներկա անդամների միջև, որը ևս շատ կարևոր է: Այն պետք է առաքվի բոլոր Եկեղեցիների գաղապաններին և սինոդներին, և յուրաքանչյուր Եկեղեցի իր վերաբերմունքը պետք է ցուցաբերի այս փաստաթղթի նկատմամբ: Եվ միայն այն դեպքում, երբ համաձայնագիրը կընդունվի բոլոր Եկեղեցիների կողմից, այն ժամանակ կարող ենք խոսել վերջնական արդյունքի մասին:

Անրա Բիշոյ

Ղալփի Ուղղափառ Եկեղեցու միտրոպոլիտ

Անգլիկան Եկեղեցու հետ մենք երկխոսության մեջ ենք ոչ այն պարճառով, որ մենք համաձայնության մեջ ենք, այլ որովհետև անհամաձայն ենք: Երկխոսությունն սկսել ենք քրիստոնեության Մատթեոսյան Որդու մարմնացյալ բնության խնդրի ըննարկմամբ: Անգլիկանների ամբողջական պարկերը: Օրինակ՝ ըննարկման նյութ են նաեւ անգլիկանների թույլատրելի կանանց քահանայության, միասնականների, նրանց ձեռնադրության, ոչ քրիստոնյաների հետ խառն ամուսնությունների խնդիրները, ինչպես նաև անհավատների փրկության հարցը: Հաղորդության շաղկապի խնդիրներ կան, անգամ առաքելական հաջորդականության և Եկեղեցում եպիսկոպոսական աստիճանների շուրջ:

Այսպիսով, եթե մենք աշխատում ենք հասնել որևէ համաձայնության, ապա պիտի հայտարարենք, որ գոյություն ունեն նաև մի շարք տարաձայնություններ, որոնց ըննարկման կարիքը կա, քանզի Եկեղեցիների միության և Ղալփաբան ժամանակ միասնական Ս. Հաղորդության վերականգնման միակ ճանապարհը դավանանքի միությունն է: Օրինակ՝ նույնաբան Ղալփի Ուղղափառ Եկեղեցին և Հայ Առաքելական Եկեղեցին Հաղորդության մեջ միասին են, որովհետև նույն հավատքն ունեն: Ուրեմն, միության հասնելու համար պետք է ունենալ հավատքի հանդեպ միասնական մոտեցում: Այս է խնդիրը:

Ի պատրաստան ձեր այն հարցի, թե ինչ կրա այս երկխոսությունը, ես կասեմ, որ մենք փորձում ենք մնացյալ քրիստոնյա աշխարհի առաջ վկայել ուղղափառ ճշմարիտ հավատքը: Համենայն դեպս մենք ցույց ենք տալիս, թե որն է ճիշտը և որն է սխալը: Եթե նրանց ընդունում են, լավ է, իսկ եթե ոչ, ապա մենք արել ենք մեր կարելին, ցուցաբերել բարեկամական վերաբերմունք և սեր՝ անկախ այն բանից, որ նրանք մեզանից տարբեր են: Ուստի, երկխոսությունը նշանակում է բարեկամական հարաբերությունների ստեղծում և միաժամանակ անկեղծ գրառում:

Քլայվ Հենդֆորդ

Անգլիկան Եկեղեցու Երուսաղեմի և Միջին Արևելքի եպիսկոպոս

Ես մեծ բավականություն ստացա հայոց սրբավայրում կայացած երկխոսությունից և ուրախ եմ, որ ներկա եղա դրան: Կարծում եմ, կարևոր է տարբեր երկրների ներկայացուցիչների այս հանդիպումը: Մենք լուրջ ըննարկումների կարիք ունենք աստվածաբանության և այն խնդիրների շուրջ, որոնք բաժանում են մեզ իրարից: Այդպես կհասնենք բաժանումից դեպի միություն փառալու ճանապարհին:

Ինչպես արդեն գիտեք, առաջին երկխոսությունը նվիրված էր քրիստոնեությանը: Եվ մենք վերստին հասկացանք, որ նույն տեսակետն ունենք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մասին, և որ հիմնական հարցերում միաբան ենք: Իհարկե, այս ժողովի ընթացքում մենք չէինք կարող ամեն ինչ ըննարկել: Հնարավորում, երբ մեկս մյուսին սովելի լավ կճանաչենք, կարող ենք ըննարկել նաև այլ խնդիրներ, ինչպես, օրինակ, մեր տեսակետները Ս. Գրքի

վերաբերյալ, կամ արդյո՞ք ճիշտ է կանանց ձեռնադրությունը: Դուք ծիծաղեցիք, և ես շատ լավ եմ հասկանում ձեզ, բայց մենք՝ անգլիկաններս կարծում ենք, որ դա ճիշտ է:

Հնարավոր է, մենք տարբեր ենք մեր ավանդույթներով, աստվածաշարժության մեջ, մեր լեզուներով ու մտածելակերպով, սակայն կարծում եմ, որ մենք պիտի գիտակցենք, որ եհմանական հարցերում մենք համամիտ ենք իրար հետ և երբեմն ավելի, քան մենք կարծում ենք և ցանկանում:

Մար Եվստրաթիոս Մաթթա Ռոնհամ

Ասորի Ուղղափառ Եկեղեցու միությունպոլիս

Մենք, իբրև Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ընդհանիք, երկխոսության մեջ ենք տարբեր Եկեղեցիների հետ և եհմա էլ՝ անգլիկանների հետ, որպեսզի հասնենք Եկեղեցու միության, որ մեր Տեր Հիսուս Քրիստոս է պատվիրել:

Միասնական լինելը կտրիպի մեզ ավելի ուժեղ լինել, պարզորոշ կդարձնի դժվարությունները և կկանխի ենթադրականության աստճացումը Եկեղեցիների ներսում:

451 թ. Քաղկեդոնի ժողովից ի վեր մեծ բաժանում և փոխադարձ մեղադրանքներ կան Քրիստոսի Եկեղեցուց ներս: Ուստի երկխոսությունը շատ կարևոր միջոց է՝ տարբերությունները, դրանց պարճառները, հավաքի սկզբունքներն ու դրույթները պարզելու համար: Որպեսզի չնչն մեղադրանքներ, մենք պետք է ինքներս մեզ ներկայացնենք պարզ ու հստակ կերպով: Եվ եթե տարակարծիք ենք, ապա անհրաժեշտ է զգնել այն մեկ ընդհանուր չափանիշը, որը կօգնի սխալ զաղափարից հասնելու ճշմարտին:

Եպիսկոպոս Գիվարգեզ Մար Կուրիլոս

Հնդիկ Մալաբար Եկեղեցի

Սա Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների և Անգլիկան Եկեղեցու միջև ընթացող առաջին պաշտոնական ժողովն է: Ջննարկման նյութը քրիստոսաբանությունն է: Քրիստոսաբանության մեջ՝ դեռևս ոչինչ, բայց մյուս մարզերում մենք լուրջ խնդիրներ ունենք: Սակայն մենք քայլ առ քայլ մոտենալու ենք նաև այդ խնդիրների բննարկմանը:

Մենք չգիտենք, թե ինչպիսին կլինի վերջնական արդյունքը: Թող Ս. Հոգին առաջնորդող լինի մեզ, քանզի աստվածաբանորեն մենք չենք կարող փոխզիջման գնալ, բայց, միաժամանակ, թե մենք բաց ենք Ս. Հոգու առաջնորդության առաջ, ապա Նա կօգնի մեզ համաձայնության գալ ինչ-որ հարցերում: Բայց դա պիտի լինի երկուսերն:

Ջոն Բեյքրովի

Անգլիկան Եկեղեցու Էկումենիկ բաժնի պատասխանատու

Սա շարունակական երկխոսություն է: Առաջին մեր երկխոսության նպատակն է՝ համաձայնության գալ քրիստոսաբանության հարցում: Գիտեք, որ մենք տարբեր ենք, բայց այդ տարբերությունները քննարկումները դարձնում են առավել հեղաքրքիր: Սակայն ինչո՞

կենտրոնական տարբերությունների վրա, երբ ընդհանրություններն ավելի շար են: Մենք պետք է գտնենք մեկ Եկեղեցի լինելու ճանապարհը, քանզի մեզ միավորում է մեր ընդհանուր առաքելությունը: Ավետարանը մեկ է, և մեկ է Քրիստոս: Իսկ տարբերություններն ավանդությունների մեջ են: Ամեն մի Եկեղեցի պետք է Ավետարանը ուսուցանելու ուղին գտնի իր մշակույթի մեջ, որով ապրում է: Եթե սխալ կա, ապա պետք է որոնել ճշմարիտը:

Տ. Նարեկ եպս. Ալեմեզյան

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն

Շատ ուրախ ենք, որ պաշտոնական առաջին այս երկխոսությունը փեղի կունենա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ: Դավանաբանության մեջ քրիստոսաբանությունը կենտրոնական տեղ կգտավ, որովհետև մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի անձին, բնության, փրկագործական առաքելության հարցերը կարևոր են և պետք է որ անոնք ճիշտ ձևով ըմբռնվին, ճիշտ ձևով բանաձևվեն: Մեկ խոսքով՝ պետք է ուղղափառ ըմբռնում ունենանք այս բոլորին հանդեպ, որպեսզի մենք կարենանք այլ հարցերու մասին խոսիլ, ինչպես քահանայությունը Եկեղեցւոյ կյանքին մեջ, Աստվածաշնչի փեղն ու դերը հավաքագրալներու կյանքին մեջ և այլն: Ուրեմն մեր այս պաշտոնական աստվածաբանական երկխոսությունը չի սահմանափակվիր միայն այս օրերու նիստերով:

Բնականաբար, յուրաքանչյուր կողմ պետք է ներկայացնե իր տեսակետը: Մենք պետք է կարողանանք համադրել տեսակետները՝ ուղղակի մարտահրավերի ձևով: Եվ քրիստոսաբանության առաջին խմբագրումը ունենալով՝ բոլորիս համար առավել հստակ կլինի, թե փոխադարձորեն ինչ կմտածենք քրիստոսաբանության մասին: Այսինքն՝ մենք տակավին քննարկման շրջանի մեջ ենք:

Բոլորս ալ կընդունինք, թե ունինք մեկ Տեղ՝ որ Հիսուս Քրիստոս է: Բոլորս ալ կընդունինք Սուրբ Երրորդությունը և աստվածաբանական, քրիստոսաբանական, քրիստոնեական հիմնական դրույթները: Այլապես մենք երկխոսություն չէինք ունենար Անգլիկան Եկեղեցւոյ հետ, զայն նկատելով որպէս հերձվածող կամ հերետիկոս: Այս քրիստոսաբանական համաձայնությունները, աստվածաբանական երկխոսությունները կդուրացնեն իրականցելու այն տեսիլը, այն իդեալը, որ Քրիստոսի Եկեղեցու միությունն է երկրի վրա:

Պատրաստեցին՝

ՆԵՂԻՆԵ ՄԿՐՏՉԵԱՆ

ՏԻԳՐԱՆ ՍՐԿ. ԲԱՂՈՒՄՅԱՆ

ՈՒԹԵՐՈՐԴ ԲՅՈՒՋԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՄՊՈԶԻՈՒՄԸ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ

(2002 թ. 7-9 նոյեմբերի)

Ֆրանսիայի Սպրասբուրգ բաղաքի Մարկ Բյոկ համալսարանի կամարների ներքո, սկսած 1960-ական թթ., հինգ տարին մեկ անգամ տեղի են ունենում բյուզանդագետների գիտաժողովներ՝ նվիրված Արևելահռոմեական կայսրության պատմության և մշակույթի կարևորագույն հարցերին: Այս համալսարանը Ֆրանսիայում հայտնի է իր միջնադարագիտական ուղղվածությամբ և հետազոտություններով՝ շարունակելով վառ պահել Մարկ Բյոկ հասարակագետի պայծառ անունը: Ի դարի առաջին կեսին Սպրասբուրգը նաև հայագիտության կարևորագույն կենտրոններից մեկն էր Եվրոպայում, ուր աշխատում էր հայտնի հայագետ-վրացագետ Նովսիկ Կարստը: Քաղաքն ունի չափազանց հարուստ գրադարան, ուր պահպանվում են նաև բազմաթիվ ձեռագրեր ու հնարիչ գրքեր:

2002 թ. նոյեմբերի 7-ին Սպրասբուրգի համալսարանական պալատում իր աշխատանքները սկսեց «Եկեղեցին Բյուզանդիայում Դ խաչակրաց ռազմադավիթ մինչև Կ. Պոլսի զրավումը (1204-1453 թթ.)» բյուզանդագետների հավաքը, որն իր առջև նպատակ էր դրել վեր հանել այդ դարաշրջանի պատմության և մշակույթի մի շարք կարևորագույն խնդիրներ, լուծել դեռևս իրենց լուսաբանությանը սպասող որոշ հարցեր: Կոնֆերանսը նախապատրաստել էր Սպրասբուրգի Մարկ Բյոկ համալսարանի պատմության ֆակուլտետի միջնադարագիտության և միջնրկաժողովյան մշակույթի ուսումնասիրության ամբիոնը՝ պրոֆեսորներ Աստերիոս Արգիրոսի և Կատերին Օպենի ղեկավարությամբ:

Գիտաժողովի կազմակերպիչները Եվրոպայի տարբեր երկրների (Իսպանիա, Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա, Նոնախտան, Բուլղարիա, Ռումինիա, Հունգարիա, Հայաստան) համալսարաններից և գիտական կենտրոններից հրավիրել էին այս թեմայի շուրջ ուրույն ասելիք ունեցող մասնագետների՝ իրենց առջև խնդիր դնելով հետազոտության նյութ դարձնել 1204 թ. լավրինական թագավորության սպեղծումից հետո Բալկաններում և Փոքր Ասիայում ստեղծված քաղաքական իրավիճակը, Բյուզանդական կայսրության տրամադրում ձևավորված պետությունների քաղաքական փոխհարաբերությունները, մահմեդական աշխարհի և քրիստոնյա երկրների հակամարտության արմատները, արեմտաեվրոպական նվաճողների և տեղական ժողովուրդների (եռյուներ, բուլղարներ, հունգարներ, ռումինացիներ, հայեր) մշակութային և քաղաքական առնչությունները, ու շրջանի բյուզանդական եռամսկիզմի հետազոտության սկզբնաղբյուրները և մեթոդաբանական սկզբունքները:

Գիտաժողովի նիստերից մեկն անվանված էր «Օրթոդոքս Եկեղեցին և Իսլամը»: Երեք զեկուցում նվիրված էր քրիստոնեության և իսլամի համադրող հետազոտության խնդիրներին: Այքս-ան-Պրովանսի համալսարանի պրոֆ. Միշել Բալիվիի զեկուցման թեման էր «Բյուզանդական Եկեղեցին և վանականությունը թուրքերի տեսանկյունից»: Հետազոտողը, հիմք ընդունելով ԺԳ-ԺԵ դդ. պարսկական, արաբական, թուրքական և օսմանյան սկզբնաղբյուրները, փորձել էր դուրս բերել դրանց մեջ Եկեղեցուն և վանականությանը վե-

րաբերող վկայությունները՝ համախմբելով դրանք իր զեկուցման համապատասխան բաժիններում: Անդրադառնալով այդ տեղեկությունները հաղորդող սկզբնաղբյուրների ժանրային առանձնահատկություններին (Էպոս, պատմություն, վկայաբանություններ, վավերագրեր), հեղինակն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում օգտագործված տերմիններին (քեշիշ, ճախիբ, փափազ, քենիս, քիլիս, մանաստիր, պարոնիկ, մարտապոլիս): Զեկուցումն ավելի կշռեին, եթե ելույթ ունեցողը նաև փորձեր միմյանցից զարել ջրիստոնյա քույր Եկեղեցիներից ամեն մեկին վերաբերող վկայությունները և ֆիքսեր սկզբնաղբյուրներից յուրաքանչյուրի վերաբերմունքը նրանց նկատմամբ: Ջենարկմանը ներկա էր նաև Դանիշմանդնամեի երաբարակիչ, Սյրապուրոգի համալսարանի պրոֆ. Իրեն Ռումանովը:

Գերմանացի եեղագուրող Էրիխ Տրապը (Բոնն) իր զեկուցումն անվանել էր «Ջրիստոնեության և Իսլամի փոխհարաբերությունները լուսաբանող ԺԳ-ԺԵ դդ. քիչ ծանոթ մի շարք երկեր», ուր անդրադարձավ Նովիանենս Կանտակուզենի և նրա որդի Մանուել Բ-ի, Նովիանենս Վրիենոսի և Մակար Մակրեսի և այլոց մատենագրական ստեղծագործություններին: Ավանդական բանասիրական դասակարգման ենթարկելով մեզ հասած երկերը, որոնք հակաճառություններ են Իսլամի դեմ, զեկուցման հեղինակը մեզ հասած ստեղծագործությունները բաժանեց՝ ա) դավանաբանական և հակաճառական, բ) վարքագրական և ճառագրական, գ) պատմական, դ) նամակագրական, ե) հեեարական և զ) փիլիսոփայական երկերի:

Պրոֆ. Աստերիոս Արգիրոս, շաբունակելով վերոհիշյալ թեման, իր զեկուցման մեջ անդրադարձավ ԺԴ դարի Ռեսալոնիկյան մարավորականներ Իսիդոր Գլաբասի, Միմնոնի և Մակար Մակրեսի հակամատուցմանական կեցվածքին և գրվածքներին: Կատանայի համալսարանի պրոֆ. Ռեմատա Ժանսիլ Մեսինայի զեկուցումը նվիրված էր Կ. Պոլսի պարրիարքների եեղինակության և կայսերական իշխանության դինաստիանականության խընդիրներին ու Արսեն Օպորանոսի ճակատագրին: Խնդրի կարևորությունն ընդգծվում է հարկապես նրանով, թե ինչ միջոցներով էր բյուզանդական աշխարհում ապահովվում կայսերական իշխանության օրինականացումը:

Միմագիտմի հաջորդ նիստը նվիրված էր բյուզանդական Եկեղեցու փոխհարաբերություններին: Էկոլ դե Ֆրանսի բյուզանդագիտական ինստիտուտի տնօրեն Ժան-Կոլո Շենեն, հիմնվելով Դ խաչկրաց ռազմաշրջավի նախօրյակին և անմիջապես դրանից հետո գրված երկերի վրա, փորձում էր քարտեզի վրա արձանագրել «Կ. Պոլսի լարին Եկեղեցու ունեցվածքը Փոքր Ասիայում»: Մարկ Բլոկ համալսարանի պարվո պրոֆ. Պիեռ Ռասինի զեկուցումը անվանված էր «Արևելքի և Արևմտքի Եկեղեցիների միության անհնարինությունը», ուր հեղինակը մեթոդաբանական եզրակացություններով փորձեց վերարծարծել խնդիրը: Նույն նիստի հաջորդ երեք զեկուցումները նվիրված էին կաթոլիկ և օրթոդոքս Եկեղեցիների ներսում սկսված միարարական շարժման խնդիրներին: Ամինեի համալսարանի պրոֆ. Կոլդին Դելակրուա-Բեսնիեի ելույթը նվիրված էր Կ. Պոլսի Բերա թաղամասի դոմինիկյան վանքի կրոնավոր Ֆիլիպ Բերացու 1358/59 թ. գրած «De oboedientia Ecclesie Romane debita» (Վասն հնազանդության թուլացած Նոմնական Եկեղեցուն) երկին, որը մի ժամանակագրություն է Պեդրոս պաբալից մինչև 1320 թ., ուր հեղինակը անդրադառնում է Նոմնի և Կ. Պոլսի եկեղեցական փոխհարաբերություններին՝ քաղումներ կատարելով Կեղծիսի-

դրոյան գրոյթունից և Գրապրայանի ապոկրիֆ հրովարտակից, որոնցում միջնադարյան հեղինակն օգտագործել է նաև բազմաթիվ հունարեն սկզբնաղբյուրներ, որոնցով փորձում է ապացուցել պապական իշխանութեան առաջնությունը: Այս նյութը կարևորվում է նաև հայագիտութեան փոստակցութեան, քանի որ նույն դարաշրջանում կիլիկյան Հայաստանում ևս հայտնվում են ժամանակագրութեաններ և պատմական աշխարհութեաններ, որոնց նյութը սերտորեն առնչվում է բննարկվող մատենագրական երկի լուսանկարութեան և սկզբնաղբյուրների հետ:

Կ. Պոլսի և Հռոմի Եկեղեցիների փոխհարաբերութեանների պատմութեանը և հատկապես Ֆորենցիայի եկեղեցական ժողովին առնչվող խնդիրների պարզաբանումն էին իրենց առջև դրել Փարիզ Ա համալսարանի դոկտորանտ Մարի-Նելեն Բլանշեն («Պատակարման կողմնակիցների ընդդիմութիւն Բյուզանդական Եկեղեցու ներսում Ֆորենցիայի միութեանից հետո (1440-1445)») և Թուլուզի համալսարանի դոկտորանտ Թիերի Գանշուն («Բյուզանդական ազնվականութեան դիրքորոշումը պապութեան նկատմամբ Ֆորենցիայի ժողովի նախօրյակին»):

Գիտաժողովի հաջորդ նիստը նվիրված էր Բյուզանդական Արևելքի տարածքներում գործող եկեղեցական կազմակերպութեաններին: Այստեղ երկու զեկուցումներով հատկապես շեշտվեց հայկական տարրի և Եկեղեցու ակտիվ գործունեութիւնը Փոքր Ասիայում և Բալկաններում Դ խաչակրաց ռազմաբռնական դարաշրջանում: ՀՀ ԳԱԱ Արևելագիտութեան ինստիտուտի բաժնի վարիչ, պատմական գիտութեանների դոկտոր Ա. Ա. Բոգդյանի զեկուցումը վերնագրված էր «Հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերութեանները ԺԳ դարի առաջին կեսին», ուր ներկայացվում էին վերջին տարիներին բյուզանագետների (հատկապես ակադ. Հր. Բարթիկյանի) կողմից շրջանառութեան մեջ դրված վավերագրերը՝ ծանրանալով Կոստանդին Ա Բարձրաբերդցու Հռոմ և Կ. Պոլիս առաջված Հավատո Հանգանակի վրա: Դ խաչակրաց ռազմաբռնական նկատմամբ հայ բնակչութեան վերաբերմունքին էր նվիրված Մոնպելիեի համալսարանի պրոֆ. Ժ. Դեղեյանի «Նյուսիս-արևմտյան Փոքր Ասիայի և Բալկանների հայկական համայնքները Դ խաչակրաց ռազմաբռնական նախօրյակին» ելույթը: Զննարկումների ժամանակ շեշտվեց այս խնդիրների հետագա հետազոտութեան կարևորութիւնը:

Առանձնակի հետաքրքրութեան նյութ էր դարձել նաև արևմտաեվրոպական ազնվականութեան և ֆինանսական շրջանների ու օրթոդոքս Եկեղեցու փոխհարաբերութեանները: Վենետիկի բյուզանդական և ուշ բյուզանդական հելլենական հետազոտութեանների ինստիտուտի փնտրեն, Աթենքի համալսարանի պրոֆ. Ջրիսա Մալտեզուս իր զեկուցումն անվանել էր «Վենետիկի տիրապետութեան դարաշրջանի օրթոդոքս Եկեղեցու պատմութեան վավերագիր մասնաբաժինը», ուր անդրադառնում էր Կ. Պոլսի առումից հետո բյուզանդական եկեղեցիների պահոցներում պահպանված վենետիկյան վավերագրերին և դրանց նշանակութեանը: Ռուսների համալսարանի պրոֆ. Ժիլ Գրիվոն անդրադարձավ չափազանց հետաքրքիր մի խնդրի. «Լուսինյանները հունական Եկեղեցու պատրոններ», ուր անդրադարձ կատարեց լատին իշխանավորների կողմից հունական եկեղեցիների ֆինանսական և բարոյական հովանավորման քաղաքական դրդապատճառներին:

Բալկանների բազմազգ տարածաշրջանում Դ խաչակրության քաղաքական, եկեղեցական և մշակութային ազդեցությունների հետազոտությանն էին նվիրել իրենց գեկուցումները դր. Բասիլ Յորգուսկուն («Վաղր եայրնի կանոնական մի կրճիմի նոր բացատրություն. ԺԴ դարի վերջին հունգարովալախիայի Աթոռին ձեռնադրված երկու մեքորայուրներ»), Բուխարեստի համալսարանի պրոֆ. Էմիլիան Պուպեսկուն («Դ խաչակրությունը և նրա հետևանքները Վերին Դանաբի տարածաշրջանում կաթոլիկության տարածման վրա»), Մոֆիայի համալսարանի պրոֆ. Վասիլկա Տապկովա-Ցայմովան («Օխրիդայի ինքնագլխի արքեպիսկոպոսությունը. նրա փոխհարաբերությունները Կ. Պոլսի պատրիարքության և Բալկանների մյուս Եկեղեցիների հետ»), Ռումինիայի ԳԱ աշխատակից Զամֆիրու Միխայելը («Արևմտյան մատենագրական երկերի յուրացումը ԺԳ-ԺԴ դդ. օրթոդոքս վանքերում»), իսկ Մադրիդի Բանասիրության ինստիտուտի հունալատինական բաժնի աշխատակից Պեդրո Բադենաս դելա Պենան ունկնդիրների ուշադրությունը հրավիրեց «Օրթոդոքսությունը և ազգային ինքնագիտակցությունը Բալկաններում միջնադարի վերջում» հարցադրման վրա: Պալամիզմի և պատկերապաշտության աստվածաբանության խնդիրների վրա էր կառուցել իր գեկուցումը դր. Միխայել Բրադյուն:

Գիտաժողովի նախաՎերջին նիստն ամփոփվեց նվիրված էր արվեստի և հնագիտության հարցերին: Առանձնապես հետաքրքրությամբ լսվեց Ֆրանսիայի ազգային գիտական հետազոտությունների կենտրոնի աշխատակից Ստավրիդոս Լազարիսի («Եկեղեցին և մշակույթի նորացումը Պալեստինայի դարաշրջանում. պատկերագրության և բնագիտական սկզբնաղբյուրների կապը») գեկուցումը. պարզվեց, որ ԺԵ դարում արաբերենից հունարենի է փոխադրվել նույն դարաշրջանում հայերեն թարգմանված Զիաբուժարանը:

Յանինայի համալսարանի պրոֆ. Նանո Խաղիկադիսի («Պատկերագրության արվեստը լատինական գավթման դարաշրջանի Հունաստանում») և Իվան Դույչևի հետազոտական կենտրոնի տնօրեն, պրոֆ. Ալեքսիա Ջուրովայի («Նոր տեղեկություններ Ստրասբուրգի գրադարանի ձեռագրական ֆոնդի պատկերագրող հունարեն ձեռագրերի մասին») ելույթները նվիրված էին մանրակարգությանը, իսկ պրոֆ. Լյուդմիլա Խրուշկովան (Մոսկվա) ներկայացրեց «Եկեղեցական և արվեստաբանական փոխհարաբերությունները Պալեստինայի դարաշրջանում, Արևմտյան Վրաստանի և Կոստանդնուպոլսի միջև» գեկուցումը, ուր հիմնականում անդրադարձավ Աբխազիայի և Մերձսևծովյան տարածաշրջանի ԺԴ-ԺԵ դդ. եկեղեցաշինությանը:

Ամփոփելով գիտաժողովը, մասնակիցները շնորհակալություն հայտնեցին սպեղծված ջերմ մթնոլորտի համար, նշեցին քննարկված հարցերի այժմեականությունը և հետազոտողների կողմից առաջարկվող լուծումների բազմազանությունը՝ հույս հայտնելով, որ ապագայում լույս կտեսնեն գիտաժողովի նյութերը:

ԱՋԱՏ ԲՈՋՈՑԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՆՈՐԵԼՅԱՆ

ԳԵՐԱՇՆՈՐՎ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 70-ԱՄԵԱԿԻ ԵՒ ԱԲՍՏՐԻՈՅ ՄԷՋ ՆՈՎՈՒԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿԻ ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐԸ

Աննյարտական Երոպիոյ եւ Ականդինաիոյ Հայ-րապետական Պատրիարկ Գերշ. Տ. Մեսրոպ արքեպս. Գ. Գրիգորեանի ծննդեան 70-ամեակի եւ Աստուծոյ մէջ հովուական-առաջնորդական գործունէութեան 40-ամեակի զոյգ յօբելեանները հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն արժանաւայել կերպով պօսախմբուեցան Վիեննայի մէջ: Այս ուրախ առիթներով Ամենայն Հայոց Ընդհանրական եւ Սրբազնագոյն Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. շնորհազարդ Հայրապետը 6 Օգոստոսի 2002 թուակիր սրբապատ կոնդակով «Սուրբ Ներսէս Շնորհալի» պատուով բարձր շքանշանը շնորհեց Սրբազան Հօր (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, Ը, էջ 25): Շնորհատրական հեռագիր եւ նամակ ուղարկեցին՝ Աստուծոյ Հանրապետութեան մեծարգոյ նախագահ Դր. Թոմաս Կոնստանտին, Վարչապետ Դր. Վոլֆգանգ Շխալը եւ Կրթութեան նախարարուհի Տիկ. Դր. Էլիզաբեթ Գերշը:



Առաջին հանդիսութիւնը, որ միջեկեղեցական երեկոյեան ժամերգութիւն մըն էր, տեղի ունեցաւ Շաբաթ 12 հոկտ. 2002 թ. ժամը 18-ին՝ հայ առաքելական Ս. Հովսիսմէ եկեղեցոյ մէջ: Սոյն աղօթքի ժամուն մասնակցեցան Վիեննայի բոլոր քրիստոնէական եկեղեցիներու եւ Համայնքներու ներկայացուցիչները:

Օրուան զլխատր քարոզիչն էր Դր. Նկմուշ Բրեցըլ, հռովմէական-կաթողիկէ Օժանդակ Եպիսկոպոսը Վիեննայի Կաթողիկոս Դր. Բրիսպոֆ Շէօնբրոնի, որ խօսեցաւ եկեղեցոյ միութեան եւ եկեղեցիներու գորակցութեան մասին եւ դրուարեց Մեսրոպ արքեպիսկոպոսի միջեկեղեցական գործունէութիւնը ի նպաստ եկեղեցիներու միութեան: Անտարանական եկեղեցոյ կողմանէ յատուր պաշտօնի խօսքեր արտասանեցին՝ պատուելի Պրոֆ. Վերնըր Հոռն եւ Դր. Միքայէլ Բիւնքըր: Վերջինս ներկայացուց նաեւ Մեսրոպ Սրբազանի 1999 թուին գրած արդիական «Հաւատքի Հանգանակ»-ը եւ հրաւիրեց հաւատացելոց բազմութիւնը՝ որպէսզի միասնաբար արտասանեն զայն:

Յոբելեար Սրբազանը իր խօսքին մեջ ողջունեց հիւրերը, պատմեց իր Աստրիդ մեջ 40 տարուան հովուական գործունեութեան մասին, փառք տուաւ Ամենակալին Աստուծոյ՝ որ իրեն առիթ ընծայեց Վիեննայի մեջ հռովմէական-կաթոլիկէ աստուածաբաններու հերձուրդաստաբանական երկխօսութեան ձեռնարկելու եւ լաւ արդիւնքներու հասնելու:

Յիշատի 1971-1988 թուականներուն՝ հռովմէական-կաթոլիկէ Եկեղեցին եւ Հին Արեւելեան Եկեղեցիները 5 միջազգային աստուածաբանական խորհրդակցութիւններ կատարելու համար յանձնարեցին երկու ապենապետներէն մին ինքն էր եւ գեղեցկայարմար կերպով ղեկավարեց քննարկումները, որոնց ընթացքին, առաջին իսկ նիստին, երկու կողմերու աստուածաբանները խմբագրեցին համաձայնական քրիստոսաբանական բանաձեւ մը:

Երեկոյեան Էքիմենիք պաշտամունքի սկիզբը եւ աւարտին՝ յանուն Հայ Առաքելական Համայնքի եւ Եկեղեցական Վարչութեան ողջոյնի եւ շնորհակալութեան խօսք արտասանեց՝ Դր. Արմենակ Իւթիւճեան, Փոխապետապետ Վարչութեան:

Յաարութիւն հանդիսատիս արարողութեան ներկաները համախմբուեցան Ս. Հովիսիմէ եկեղեցոյ մեծ սրահին մեջ, ուր եփրասիքուեցան հայկական ճոխ ճաշասեղանով, պատրաստուած Վեննահայ ժրագան Տիկնանց Յանձնախումբի կողմանէ: Այստեղ եւս գնահատական խօսքեր արտասանեցին Յունաց Մետրոպոլիտ Միքայէլ Ստայքոս եւ Տիկ. Պրոֆ. Զրիստի-նէ Գալլքսնըր, որ Ապենապետիին է Աստրիդ Եկեղեցիներու Էքիմենիք Խորհուրդի:

Հաւատացնող խանդավառութիւնը իր գագաթնակէտին հասաւ՝ երբ անակնկալօրէն սրահ մուտք գործեց Վեննաշուք Կարդինալ Դր. Ֆրանց Զեօնիկ, Վիեննայի նախորդ Արքեպիսկոպոսը, 97 տարեկան, որ այս տարի նշեց իր եպիսկոպոսական ձեռնադրութեան 50-ամեակը: Յոբելեար Սրբազանը եւ Կարդինալ Զեօնիկ միասնաբար կտրեցին տարեդարձի քաղցրահամ կարկանդակը, զոր պատրաստած էր Տիկ. Սուրենեանի կողմանէ:

Երկրորդ հանդիսութիւնը տեղի ունեցաւ հոկտ. 24-ի գիշերը, երբ Մետրոպոլիտ արքեպիսկոպոսի ծննդեան 70-ամեակի առթիւ շուրջ 70 բարեկամներ համապնդուեցան Մատիթ Պանդոկը եւ վայելուչ ընթրիքով մը փոխախմբեցին զոյգ յոբելանները: Ընթրիքին կը մասնակցէին նաեւ Էքիմենիք եփրեր, դարձեալ Յունաց Մետրոպոլիտը, Անկարայի Եկեղեցոյ Եպիսկոպոս պատուելի Հերութիգ Շարուրմ, անկարայի պատուելի Պրոֆ. Վերնըր Հոմ, Տիկ. Պրոֆ. Զրիստիին Գալլքսնըր, Հայաստանի Հանրապետութեան Աստրիդ եւ Հունգարիոյ լիագոր Դեպան Դր. Զիվան Թապիպեան եւ բարերար Դր. Վադիմիր Արտիստեան:

Եկեղեցական Վարչութեան արեւապետ ինժ. Գեորգ Անտոնեան կուտ խօսքերով դրուարեց Սրբազան Հօր 50 տարուան ծառայութիւնը ընդհանրապէս Հայ Եկեղեցոյ եւ 40 տարուան հովուական-առաջնորդական գործունեութիւնը Աստրիդ մեջ եւ առ այդ սրտազին շնորհակալութիւն յայտնեց յանուն հայ առաքելական Համայնքին: Արեւապետին խօսքը գերմաներէնի թարգմանեց փոխ-արեւապետ Դր. Արմենակ Իւթիւճեան եւ միաժամանակ կարդաց գերմաներէն լեզուով Վենսփառ Հայրապետին սրբապառ լոնդակը եւ նախագահ Դր. Թոմաս Զիստիի շնորհատրական հեռագիրը:

Բոսփորնէն անուանի «բարիպոն» եւ սարկաւագ Արմէն Տիլան երգեց մի քանի հայկական երգեր եւ իրաւական երաժշտական գործեր: Գնահատական խօսքերով ելոյթ ունեցան՝ Յունաց Մեքորոպոլիսը, Անթարառական Եպիսկոպոսը եւ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանը: Հանդիսութիւնը աւարտուեցաւ փարեղարձի շքեղ կարկանդակով եւ Սրբազան Հօր փակման խօսքով: Սրբազանը բացատրեց եւ կարեւորեց մարդկային կեանքի մէջ նպատակի մը կամ գործի մը իրականացումը: Նա յիշեց Յովհաննէս Թումանեանի «Մահը մերն է, մենք մահինը, մարդու գործն է միշտ անմահ» եւ Վահան Թեքեանի «Ինչ մնաց, կեանքէն ինծի ի՞նչ մնաց, ինչ որ րոպի ուրիշին՝ փարօրինակ այն միայն» իմաստուն խօսքերը:

Ուշ գիշերին՝ շնորհաւորական խօսքերով եւ նուէրներու մատուցմամբ՝ հանդիսականները բաժնուեցան Մեսրոպ արքեպիսկոպոսէն: Եկեղեցական Վարչութիւնը Սրբազան Հօր նուիրեց ոսկեայ գեղեցիկ ժամացոյց՝ յատուկ արձանագրութեամբ:

Երրորդ եւ վերջին հանդիսութիւնը կազմակերպուած էր Վիեննայի հռովմէական-կաթոլիկէ «Փրօ Օրիէնթ» Հաստատութեան կողմանէ՝ Բշ. 11 Նոյմբ. 2002 թ. երեկոյեան, Դիւսնագիտական Ակադեմիայի մէջ: Այս Կազմակերպութեան 1966 թուին հիմնադրուեցին ի վեր, յարկապէս 1969 թուականէն սկսեալ՝ Սրբազան Հայրը եղած է կարեւոր գործակից մը եւ բարեկամ: Օրուան հանդիսութեան նախագահն էր՝ Վիեննայի Արքեպիսկոպոս Կարդինալ Դր. Քրիստֆ Շէօնբոն, որ նաեւ կատարեց փակման խօսքը՝ դրուարելով Մեսրոպ արքեպիսկոպոսի էջիմննիք գործունէութիւնը եւ Հայ ժողովուրդի քրիստոնէական հզօր հաւաքը:

Հիմնարկութեան նախագահ Դր. Յովհաննէս Մարթէ ողջունեց հիւրերը, որոնք մեծ բազմութեամբ լեցուցած էին հանդիսասրահը, ներկայացուց Յոբելեարի կենսագրականը եւ գնահատեց անոր գործունէութիւնը աստուածաբանական երկխօսութեան մէջ:

Պրոֆ. Ֆիլիպ Կառնտեքոր ունկնդիրներուն մանրամասնօրէն ներկայացուց Սրբազան Հօր Հայ Եկեղեցոյ նուիրեալ 300 էջանոց գերմաներէն գիրքը եւ գովաբանեց գործին գիտական բարձր որակը եւ էքլամենիք ոգին:

Պրոֆ. Պեպրը Հոֆրիխթըր նկարագրեց Վիեննայի հինգ միջազգային աստուածաբանական խորհրդակցութիւնները (1971-1988) եւ Յոբելեարի կարեւոր նպաստը այդ ժողովներուն: Արեւնապետ ինժ. Գեորգ Անտոնեան կարճ խօսքով շնորհաւորեց Սրբազան Հօր զոյգ յոբելեանները եւ շնորհակալութիւն յայտնեց Աստրիոյ մէջ իր 40 փարուան բեղմնատր գործունէութեան համար:

Բեռլինէն պատուեցի Մագիստրոս Մանֆրէդ Ռիխտըր Լեփսիտսի հետեւողութեամբ խօսեցաւ Հայ ժողովուրդի խաչելութեան եւ տառապանաց մասին եւ յանուն Անթարառական Եկեղեցոյ առաջարկեց յետ այստրիկ Յոբելեարը կոչել «Մեսրոպ Շնորհալի» պատուանունով: Հանդիսութիւնը աւարտեցաւ Սրբազան Հօր ընդարձակ բանախօսութեամբ՝ նուիրեալ Հայ Եկեղեցոյ առանձնապատկութիւններուն: Ընդերկար ծափահարութեամբ հանրութիւնը գնահատեց դասախօսութիւնը եւ դասախօսը:

Ղուկա. Մեսրոպ արքեպս. Գ. Գրիգորեանի ծննդեան 70-ամեակի եւ Աստուծոյ մէջ եռվա-
ռական-ստաջնորդական գործունեութեան 40-ամեակի զոյգ յոբելաններու առթիւ Սրբա-
զան Հօր ի սրբիւ կը մատենենք կենաց արեւշաքութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

ԻՐԱԶԵԿ

Վիեննա, 26 Նոյեմբ. 2002 թ.



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱԴԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒՄԱՍՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԻՒԱՅԻՆ ԿԱՍՅԱՆՈՎԻՆ

Նոյեմբերի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ կառավարության նախագահ Միխայիլ Կապսանովին և նրա գլխավորած պարզվորակությանը:

Նորին Սրբությունը, ողջունելով մեծարգո հյուրին, ուրախություն հայտնեց, որ պատմական դարավոր հենքի վրա խարսխված երկու ժողովուրդների բարեկամությունն այսօր արդեն օրեցօր զարգանում է նաև պետական մակարդակներով, ինչը կարևոր նպաստ է բերում երկու երկրների առաջընթացին: Վեհափառ հայրապետը նշեց նաև, որ նման այցելությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածին նպաստում են հայ և ռուս ժողովուրդների հոգևոր կապերի սերտացմանը:

Իր հերթին պրն Կապսանովը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար՝ կարևորելով Եկեղեցու դերը հայ և ռուս ժողովուրդների բարեկամության պահպանման և գորացման գործում:

Վեհափառ հայրապետը նաև իր ցավակցությունը հայտնեց պրն Կապսանովին՝ ՌԴ մայրաքաղաքի Մշակույթի Տանը կադադրված սոսկալի ահաբեկչության զոհերի համար՝ աղոթելով նրանց հոգիների խաղաղության և հանգստության համար:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը պրն Կապսանովին նվիրեց 1700-ամյակին նվիրված հոբելյանական հուշամեդալ և հայ Եկեղեցու գանձերին նվիրված նկարազարդ ալբոմ: Պրն Կապսանովն ու տիկ. Կապսանովան եղան նաև Վեհաքառնի թանգարանում:

ՎԵՆՔՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱՐՈՆՈՒՄԻ ՔԵՐՈՒԱՅՆ ՔՈՔՄԻ ՎԼԽԱՎՈՐԱՄԵ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաև Մեծ Բրիտանիայի և Նյուսիտային Իռլանդիայի Միացյալ Թագավորության խորհրդարանի Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Ջերոլայն Ջոքսին և նրա գլխավորած «Հայաստան-Մեծ Բրիտանիա բարեկամություն» պարզամավորական խմբի պարավիրակությանը՝ ՀՀ ԱԺ փոխխոսնակ Տիգրան Թորոսյանի և Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Թիմոթի Էյդան Ջոնսի ընկերակցությամբ:

